

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

3 (72)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,
290 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ
**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն,
ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ),
ՅՈՒՐԻԵՎԱ Տատյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈՎՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия
**АГАСЯН Арарат, АВETИСЯН Павел, АРЗУМАНЯН Лилит, АСПАТЯН Мурад,
ГАСПАРЯН Седя, ЗАКАРЯН Анушаван, КАЗАРЯН Виген, МЕЛКОНЯН Ашот,
МКРТЧЯН Мане (заместитель главного редактора), НЕРСИСЯН Ашот,
ОГАННЕСЯН Генрик, ОГАНЯН Каджик, ПОКРОВСКАЯ Надежда, СААКЯН Армен,
САՐԳՏԻԱՆ Լեւոն, ՄԱՐԿՍԻԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council
**AGHASYAN Ararat, ARZUMANYAN Lilit, AVETISYAN Pavel, GASPARYAN Seda,
GHAZARYAN Vigen, HASRATYAN Murad, HOVHANNISYAN Henrik, KHARATYAN Albert,
MELKONYAN Ashot, MKRTCHYAN Mane (Deputy Editor-in-Chief), NERSISYAN Ashot,
OHANYAN Kadjik, POKROVSKAYA Nadejda, SAHAKYAN Armen, SARGSYAN Levon,
YURIEVA Tatiana, ZAKARYAN Anoushavan**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ԻՄ ԲԱՆԴԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ԴՐՈՇԱԿԻ» ԳՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ

ԱՐՈՒՄՅԱԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1912թ. ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակում» տպագրվում է Ա. Ահարոնյանի (Տարագիր) «Իմ բանդը» հուշագրությունը, որտեղ գրողը պատմում է բանտում անցկացրած օրերի մասին: Նկարագրում է Նովոչերկասկի բանտը որպես անարդարության, մարդկային դաժանության խորհրդանիշ:

Բանալի բաներ – հուշագրություն, Նովոչերկասկի բանտ, քաղբանտարկյալ, ծանր հոգեվիճակ, ազատություն գտնելու ձգտում:

Ռուսական առաջին հեղափոխությունից հետո (1905-1907թթ.) ցարական կառավարության կողմից ձեռնարկված հակահարվածի հետևանքով հալածանքներ սկսվեցին նաև Անդրկովկասի հայ առաջադեմ մտավորականների, հատկապես ՀՅԴ աջի ընկնող անդամների նկատմամբ¹: Հետապնդումներից չի խուսափում և Դաշնակցության կուսակցության ականավոր դեմքերից մեկը՝ գրող Ավետիս Ահարոնյանը: 1909թ. ապրիլի 23-ի գիշերը խուզարկվում են նրա բնակարանը և Ներսիսյան դպրոցը (1907-1909թթ. Ահարոնյանը պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում որպես տեսուչ): Թեև կասկածելի որևէ բան չեն գտնում, նրան կալանավորում ու տանում են բանտ: Արդեն մայիսին երաշխավորավճարով կալանքից պետք է ազատվեին մի քանի ձերբակալվածներ, այդ թվում՝ Հովի. Թումանյանը և Ավ. Իսահակյանը: Սակայն Ահարոնյանը նույն թվականի ամռանը Թիֆլիսից՝ Մետեխի բանտից, տեղափոխվեց Բաքվի բանտը, որպեսզի այնտեղից ուղարկվեր Նովոչերկասկ: Նա միայն 1911թ. փետրվարին 20 000 ռուբլի երաշխավորությամբ ազատվեց Նովոչերկասկի բանտից: Ազատվելուց հետո էլ, սակայն, շարունակվում էին հետապնդումները²:

¹ Խաչիկյան Գ., Ավետիս Ահարոնյանի գեղարվեստական արձակը, Գյումրի, 2013, էջ 123:

² Այդ մասին են վկայում Թիֆլիսի պահնորդական բաժնի պետի կողմից ժանդարմական

Ահարոնյանն ստիպված հեռանում է երկրից, անցնում Կարին, Տրապիզոն, Պոլիս, այնտեղից՝ Եվրոպա. «Գրեթե հինգ տարի Եվրոպայի մէջ աքսորականի մը կյանքը ապրած է ան...»³: Չնայած Եվրոպայում Ահարոնյանի անցկացրած տարիների այսպիսի բնութագրմանը՝ կարծում ենք, որ նա ունեցել է ստեղծագործական ներշնչանքի պահեր և գրականությամբ զբաղվելու հնարավորություն, հատկապես «Դաշնակցության» պաշտոնաթերթ «Դրոշակին» աշխատակցելու տարիներին⁴:

1912թ. «Դրոշակը» տպագրում է Ա. Ահարոնյանի «Իմ բանդը» խորագրով հուշագրությունը՝ «Տարագիր» ստորագրությամբ, որտեղ գրողը պատմում է բանտում անցկացրած օրերի մասին: Նա գրում է, որ կատարված ձերբակալությունները սովորաբար անհեթեթ էին, բայց և կանխատեսելի: Ամիսներ շարունակ ձգվող հետապնդումները, կանխորոշելով սպասվելիք օրերի ընթացքը, անտանելի էին դարձնում գրողի կյանքը: Նա նողկանք էր զգում դրանք իրականացնողների հանդեպ և չթաքցնելով զայրույթը՝ արտահայտում է իր ծայրահեղ մերժողական վերաբերմունքը. «...չորս-հինգ ամիսից ի վեր իմ սպրտի պէս ինձ հետևող զոյգ լրիբեսներն էին ...նողկանքից ու ցատուկից հոգիս է պայթում... մարդասպանի ձեռքը կը համբուրեմ, ավազակի առաջ ծունկի կգամ, բորենու հետ որջը կբաժանեմ, քաղցած գայլերի հետ անապատներում կթափառեմ, միայն թե լրիբես չլրիբեսեմ... Լրիբեսը մա՞րդ է... ապա մարդն ի՞նչ է, գազա՞ն...»⁵:

վարչությանը տրամադրած բազմաթիվ հաղորդագրություններ, ինչպես՝ 1911թ. մայիսի 15-ին Թումանյանի բնակարանում կայացած ժողովի մասնակիցների՝ 8 հոգուց բաղկացած մի ցուցակ՝ յուրաքանչյուր անվան դիմաց նշելով կեղծանունը, զբաղմունքը, տարիքը. 1. Ահարոնյան Ավ. («Грибной»): 2. Հովի. Թումանյան («Жокей»), писатель, 40 лет: 3. Իսահակյան Ավետիք («Малаш»), безопредел. занятияй, 33 лет... կամ մայիսի 22-ին Ավ. Ահարոնյանի տանը (Бебутовская No 60) կայացած ժողովի մասնակիցների ցուցակը, որտեղ նշված են հայր և որդի Ահարոնյանների, Թումանյանի, Դեմիրճյանի (Костяной), Գևորգ Խատիսյանի և ուրիշների անունները: Տե՛ս Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909-1914), Երևան, 2016, էջ 27:

³ **Մկրտիչ Պարսամյան**, Ավետիս Ահարոնյան, իր կյանքը և գրականությունը, Փարիզ, 1930, էջ 16:

⁴ Ժնևում Քր. Միքայելյանի նախաձեռնությամբ Ավ. Ահարոնյանը ստանձնում է «Դրոշակի» «Թերթոն» գրական բաժնի պատասխանատվությունը: Տե՛ս **Ահարոնյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 5, Բոստոն, 1948, էջ 332:

⁵ «Դրոշակ», 1913, թիվ 2-3, էջ 47:

Որքան էլ այդ ծանր օրերին հիասթափությունն ու հուսալքումը մշտապես ուղեկցում էին Ահարոնյանին, և երբեմն բանտը հավերժական մղձավանջ էր թվում, այնուամենայնիվ չպարփակվեց իր ապրումների ու խոհերի մեջ. նրան խորապես հուզում էր համամարդկայինը: Բանտարկյալ գրողը հանդես է գալիս որպես օբյեկտիվ դիտորդ⁶ խորազնին քննության ենթարկելով բանտային միջավայրն ու այնտեղ ապրող մարդկանց կյանքը:

Ահարոնյանը ելել էր այն համոզման, որ այդ «բանդ» կոչվածը նույնքան վաղնջական է, որքան մարդկային տառապանքը, և որ բոլոր ժամանակներում այն եղել է մարդու ստեղծած չարիքներից, թերևս, ամենաամոթալիս: Այս միտքն էլ հուշագրության լեյտամոտիվն է, որի սևեռումների մեջ ձևավորվում են հեղինակի փիլիսոփայական ընդհանրացումները, գեղագիտական իդեալի որոնումները:

«Քեզ չեմ անիծում, բանդ իմ»⁷ արտահայտությամբ է Ահարոնյանը սկսում իր կրած տառապանքների և ապրած դառնությունների պատմությունը: Սակայն նա չնչին է համարում իր անգոր անեծքի մարմաջը այն հազարավոր այրիների ու որբերի ծով վշտի, այն «որդեզուրկ մայրերի հառաչանքի հանդէպ, որ ամեն գիշեր հեռու խրճիթներից բարձրանում է, մրրիկի պէս ծեծում աշտարակներդ անիծակուռ: Ո՛հ, քեզ չեմ անիծում բա՛նդ իմ, վասն զի դու մարդկային հոգու հարազատ պատկերն ես, նրա ամենէն զազիր, ամենէն հրեշտոր յղացումը»: Բոլորովին իրական դժոխքի միջով անցած գրողի համար այս ծանր ճշմարտությունը հնչում է որպես նախատինք, ստեղծագործ մարդու երևակայությունից դուրս երևույթ, ինչը և, ինչպես երևում է, չէր կարողանում մարսել նույնիսկ սառը բանականությունը: Կարծում ենք՝ դիպուկ է Պոլ Վալերիի խոսքը, թե «Ոգու ճգնաժամին խորություն ու լրջություն հաղորդում է այն վիճակը, որի մեջ այդ ճգնաժամը գտել է իր հիվանդին»⁸:

Երկփեղկվել էր ընդվզումը Ահարոնյանի ներսում մարդու և Տիրոջ դեմ. այդ պատճառով էլ նա չի վարանում ասել. «...ինչ հաճոյքով կը չանգռէի այն աստուծու աչքերը, որ մարդկային հոգու մէջ տեղ տեց բանդի նողկալի յղացումին»: Նկատելի է, որ Ահարոնյանի հիշողությունները նրան մղել էին զգացական դաշտ, և որքան էլ ջանում է, միևնույն է, չի կարողանում ամբողջովին

⁶ Литература XX века (1871-1917). Хрестоматия. Москва, 1981, стр. 71.

⁷ «Դրոշակ», 1913, թիվ 2-3, էջ 46:

⁸ Պոլ Վալերի, Ոգու քաղաքականություն, Երևան, 2005, էջ 15:

դուրս գալ այնտեղից: Հիշողությունը միշտ ցանկացած մտքի սուբստանցն է⁹, այնպես որ լիովին հասկանալի է ու բնական այն ներքին կատաղի մոլուցքը, որով գրվել է «Իմ բանդը» հուշագրությունը:

Ահարոնյանի տեսածի ու ապրածի նատուրալիստական նկարագրությունները երբեմն ֆանտաստիկ են թվում, սակայն գրողի պատկերացմամբ՝ չափազանց իրական: Նովոչերկասկի բանտում իրենց պատիժն էին կրելու «հայկական Մեծ Քաղաքական Դատի» բոլոր մեղադրյալները. «Շորջս նայեցի՝ բախտակից ընկերներիս, չորս հոգի էինք և չորսս էլ ողջ-ողջ մի դագաղի մէջ: Այո՛, այս գնդանը իրօք մի քար է դագաղ էր» («Իմ բանդը», մասն Բ¹⁰): Նշենք, որ հուշագրության մեջ ռեալիստական պատկերներով նկարագրությունների պակաս չի զգացվում՝ սկսած կայարանից, երկաթապատ լուսամուտներով վագոններից, Ռոստովի բանտից դեպի Նովոչերկասկի բանտ տանող ճանապարհի ահավորության մանրամասներից մինչև գարշահոտ բանտախցերը, մարդկային կերպարանքից զրկված բանտարկյալներն ու «անասնացած սպաները»:

Կար զգայական հիշողություն, որն առավել քան իրական էր և թույլ չէր տալիս ամբողջովին հյուծված Ահարոնյանին ապաքինել իր բզկտված ներաշխարհը. «Բայց այն, ինչ զգայություն է, ըստ էության ներկա է: Չկա ներկայի այլ բնորոշում զգայությունից բացի՝ թերևս լրացված գործողության մղումով ...Եվ ընդհակառակը, այն, ինչ զուր միտք է, պատկեր, զգացմունք, ինչ-որ ձևով միշտ բացակա իրողությունների արդյունք է»¹¹: Հենց պատրանքն այդ բացակա իրողությունների և մարդկայնորեն լիարժեք իրականության բացակայությունն ավելի են սաստկացնում բանտային մղձավանջի նկարագիրը, խտացնում դաժան իրականության գույները, առաջացնում զգացումների ու հույզերի հոսք, որը զուցեն խաթարում է գեղարվեստական համակարգը, բայց ինչպես Գ. Խաչիկյանն է նշում. «...գրողի երկերում զգացմունքայնությունը դիպվում է մարդկայնության և մարդկային բնական կապերի պահպանման չափանիշ»¹²:

Եվ քանի որ հուշագրությունը պատմություն է այն մասին, ինչն արդեն կատարվել է, և ինչն այժմ պատմվում է ըստ էքսպոզիցիայի ու նկարագրու-

⁹ Նույն տեղում, էջ 167:

¹⁰ «Դրոշակ», 1913, թիվ 4, էջ 66:

¹¹ **Պոլ Վալերի**, նշվ. աշխ., էջ 167:

¹² **Խաչիկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 20:

թյան օրենքների¹³, հետևաբար ունի ժամանակի շատ էական խնդիրների լուսաբանման հնարավորություն: Այս իմաստով էլ նշանակալից է Ահարոնյանի «Իմ բանդը»: Հեղինակը, պահպանելով իրականության նկատմամբ օբյեկտիվ մոտեցումը, անթաքույց պատկերում է այդ քարե պարիսպներից ներս ապրող շղթայակապ մարդկանց կյանքը, այսպիսով լիարժեք պատկերացում տալիս մի ամբողջ ժամանակաշրջանի բարոյաքաղաքական նկարագրի մասին:

Գրականագիտության մեջ կա այսպիսի տեսակետ, որ օբյեկտիվիստական տեսության համաձայն՝ հեղինակը երբեք չպետք է առաջ ընկնի պատմվող իրադարձություններից. նա պետք է աստիճանաբար բացի իր կծիկը, որպեսզի մենք միանգամից չտեսնենք մեկ տողից ավելի¹⁴: Պետք է ասել, որ Ահարոնյանին հաջողվել է քայլ առ քայլ բացահայտել բանտային քաղաքականության արտաքին և ներքին կողմերը, ցույց տալ դրա իրական դեմքը, մարդասպան բնույթը և ցավալիորեն խոստովանել, որ այդ ամբողջի կիզակետում մարդն է՝ մեղավոր թե անմեղ. «*Homo homoni lupus // Մարդը մարդուն գայլ է՝* («Լրտեսը»¹⁵):

Չմոռանանք՝ պատմողական մեթոդի հիմնական խնդիրներից է նաև հեղինակի վերաբերմունքն իր ստեղծագործության նկատմամբ¹⁶, և սխալված չենք լինի, եթե ասենք, որ հուշագրությունը գրեթե ամբողջովին կրում է գրողի թե՛ մտավոր և թե՛ հոգևոր նկարագրի ազդեցությունը: Այն գրվել է գրեթե չերևացող ներքին ցավով, որն էլ խոր հուզականություն է հաղորդել գրվածքին: Ահարոնյանը նրբորեն վերլուծում է բանտարկյալի խելացնոր հոգեվիճակը, որից, ավա՛ղ, քչերն էին կարողանում ազատվել: Այս դեպքում նա սոսկ նկարագրող կամ պատմող չէ. գրողը հավասարապես կրում է և՛ իր, և՛ ճանաչած կամ անձանոթ բանտարկյալների գրկանքներն ու տառապանքները, նրանց մասին մտածելով ու նրանց արարքները հասկանալով՝ սրտացավ է ու կարեկից («Նախկին մարդը»¹⁷):

Ո՞րն է բացատրությունը կյանքի բնականոն ընթացքը խաթարող երևույթների: Գրողի պատկերացմամբ սա լուրջ խորհրդածությունների խնդիր

¹³ **Ռընե Ուելեք, Օստին Ուորրեն**, Գրականագիտության տեսություն, Երևան, 2008, էջ 333:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ «Դրոշակ», 1913, թիվ 7-8, էջ 140:

¹⁶ **Ռընե Ուելեք, Օստին Ուորրեն**, նշվ. աշխ., էջ 330:

¹⁷ «Դրոշակ», 1913, թիվ 7-8, էջ 141:

է, մինչդեռ մարդկությունը կարծես մոռացության է մատնել այն, և վերահաս չարիքը մարդու դեմ թվում է սովորական, օրինաչափ մի բան: Բոլորովին պատանի Բիջոն («Բիջո՛, բիջո՛»¹⁸)՝ կայտառ, «ինչպես ձիու մարտը քուռակ, որ դեռ չի ճանաչում սանձ ու թամբ, ասպանդակ ու բեռ և ազատության մեջ սլանում է խենթ հողմի պէս», շղթայված էր, իսկ նրա «աչքերի մէջ շող ու ցուրի ծով կար ու ամբողջ այդ մանկական, այդ անուշ դէմքից արշալոյս էր կաթկաթում»: Այս գեղեցիկ փոխաբերությամբ ու շղթաների հակադրությամբ Ահարոնյանն էլ ավելի զարհուրելի է դարձնում պատմությունը: Ընդ որում հեղինակը հաճախ է դիմում հակադրության մեթոդին, հատկապես բնապատկերների առկայությամբ, որոնք երբեմն գեղագիտական ընդհանրացումների արժեք են ստանում («Էտապ»¹⁹):

Ահարոնյանը հիվանդության պատճառով, թվում է, որոշ ժամանակ խուսափում է բանտային կյանքի տառապանքներից, սակայն բանտի հիվանդանոցը առավել զարհուրելի էր: Բանտի բժիշկը՝ ազնվահոգի մի վրացի, բարեկամաբար խորհուրդ է տալիս նրան հիվանդանոց չգնալ՝ ասելով, որ «բանդային հիւանդանոցը կատարեալ սպանդանոց է... և այնտեղ գնում են մեռնելու համար: ...Բանդը ինքնին սարսափն է, անէծքն է, բայց բանդի հիւանդանոցը դա անուն չունի, դա մարդկութեան երեսի թուքն է: Դժբախտ, լկտի ու պիղծ, որպէս մարդն ինքը» («Հիւանդանոցում»²⁰): Ահարոնյանը խտացնում է իր զգվանքն ու հիասթափությունը «մարդու արարչագործությունից»՝ համոզվելով, որ հրեշտակա մարդն է չարիքը: Բայց հումանիստական գաղափարներով ներշնչված գրողը շարունակ հետևում է անազատության մեջ ապրող մարդկանց, փորձում հասկանալ նրանց գիտակցված կամ չգիտակցված արարքները: Նա պատկերում է, թե ինչպես է շարունակական դաժանությունը գազան դարձնում մարդուն:

Խորացող հիասթափությունը հոռետեսության է մղում գրողին, կյանքի գույները դարձնում իրենց ապրած օրերի նման մեռելային: Սակայն հուշագրության հերոսների՝ ապրելու տենչը չկորցնելու անհույս ջանքերը հաճախ ունենում էին մի վերջին պոռթկում, որից ներշնչվում կամ հուսալքվում էին մյուսները, իսկ հուսալքումը բանտում հավասարազոր է մահվան դատավճռի: Ներքին խռովքը երբեմն մոլեգնում ու ստիպում էր բղավել՝ Կա՛նգ առ, օրէ՛նք

¹⁸ «Դրոշակ», 1913, թիվ 6, էջ 117:

¹⁹ «Դրոշակ», 1913, թիվ 5, էջ 90:

²⁰ «Դրոշակ», 1913, թիվ 9-10, էջ 166:

(«Կա՛նգ առ, օրէ՛նք»²¹): Սովորաբար և՛ գրողը, և՛ իր հերոսները լուռ են. այս դեպքում խոսում են նրանց հոգեկան աշխարհում կատարվող փոփոխությունների նկարագրությունները: Մի դեպքում նրանք վեհանում են, ազնվանում, մյուս դեպքում՝ չարանում, գազանանում: Ահարոնյանը խոստովանում է՝ նույն սպանիչ հոգեվիճակում է գտնվում և ինքը, որ ցասումի և վշտի մի անծայր աղաղակ կուտակվել է կրծքի տակ: Նա խորը ցավով է հիշում այն պահերը, երբ սկսել է ասել մարդուն, ինչպես ինքն է ասում, հոգու ամենաբուռն զորությամբ:

Հուշագրության մեջ հատկապես ընդգծված է գրողի խիստ բացասական վերաբերմունքը ցարական իշխանավորների կամայական, քմահաճ արարքների, ինչպես նաև այլ ժողովուրդների նկատմամբ ցուցաբերած անօրենությունների, անարդարությունների հանդեպ: Սպանիչ հեգնանքով է նա խոսում բանտում իրենց գործն իրականացնող ռուս սպաների մասին, երբեմն էլ «ռուսական» բառով ամբողջացնում է ասվածը, ինչպես՝ «ցարի՛ ռուսական բատիւկայ», «ռուսական սև թանձր ցեխը» և այլն: «Էտապ», «կալանավոր», «բանդ» հասկացությունները ևս «ռուսականի» տարրերն են կազմում՝ դառնալով բռնությունն ու չարիքը մարմնավորող խորհրդանիշներ: Այս և մարդկանց ազատությունը բանտող նման շատ երևույթների գոյության անհրաժեշտությունը գրողն այդպես էլ չհասկացավ. «Մեծ անիրավությունը միշտ նաև մեծ բթամտություն է...»²², – այսպիսի եզրահանգման էր եկել նա իր շուրջը կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Ի դեպ, հուշագրությունը հաճախ խորհրդրաճություն է, փիլիսոփայական խտացումներ անելու հնարավորություն: Այս մոտեցումը հարազատ է Ահարոնյանին. նա սիրում է բանտային իրականության ծանր, սաստկատեսիլ նկարագրություններն ընդմիջել՝ գեղագիտական ընդհանրացումներ անելով. «Տանջանքը միշտ կենդանի է, միշտ խոհուն ու զգայուն», «Բանդն էլ իր ցնծութեան ժամերն ունի», «ողջ աշխարհը տանջանքի անծայր հովիտ», «Մարդկային հոգին մութ անդունդ է» և այլն:

Բանտը կոչված էր բացահայտելու կյանքի այլանդակ կողմերը: Այնտեղ նա շատ մոտ զգաց ու տեսավ բոլորովին անօգնական թշվառների ու խելջերի տառապանքը, սովորեց լսել լուռ տանջանքի աղաղակը: Նրա հերոսներն այդ տանջանքի մեջ մի վերջին հույսի սպասող հոգիներն են:

²¹ «Դրոշակ», 1914, թիվ 2-3, էջ 43:

²² «Դրոշակ», 1913, թիվ 5, էջ 93:

Նեոռոմանտիզմի փիլիսոփայությամբ ներշնչված Ահարոնյանի ուշադրության կենտրոնում մարդն է իր ներքին և արտաքին աշխարհի տարաբնույթ ու հակասական հարաբերությունների հոլովոյթում: Գոյի ներդաշնակության ուղիներ փնտրող գրողը հասկացել էր, որ *«բանդում ամենէն մոռացված, աննշան արարածներ իսկ երբեմն կարող են «ազատ» աշխարհից շատ ավելի վեր բարձրանալ»*: Ինչպես տեսնում ենք, գրողը դեռևս հավատում է մարդու վեհացմանը, դեպի ճշմարիտ ու գեղեցիկը նրա ձգտմանը, այլապես անհնար կլիներ այդ աղտոտ ու ախտածին միջավայրում կենդանի մնալը:

Հուշագրության մեջ բոլոր այն երևույթներն ու խնդիրները, որոնց անդրադառնում է գրողն իր մերժողական վերաբերմունքով, անձնական կամ ազգային լինելուց զատ խիստ համամարդկային են բոլոր ժամանակների համար: Եվ եթե *«...ամեն մի աննշան կյանք ճշմարտացի պատմվելու դեպքում արժանի է հեղաքրքրության»*²³, ապա «Իմ բանդը» ներկայացնում է տվյալ դարաշրջանի բնութագիրը կազմող էական շատ կողմերի իրական նկարագիրը, հասարակական կյանքի պատկերը:

МЕМУАРЫ АВETИСА АГАРОНЯНА " МОЯ ТЮРЬМА" В ЛИТЕРАТУРНОМ РАЗДЕЛЕ ГАЗЕТЫ "ДРОШАК"

АРУСЯК АБРААМЯН

В 1912г. в литературном разделе газеты АРФД "Дрошак" были опубликованы мемуары А. Агароняна (Изгнанник) "Моя тюрьма". Писатель рассказывает о днях проведенных в Новочеркасской тюрьме, которую он описывает как символ несправедливости и человеческой жестокости.

Ключевые слова – мемуары, тюрьма Новочеркаска, политический заключенный, тяжелое душевное состояние, стремление обрести свободу.

²³ Ռընե Ուելք, Օստին Ուորրեն, նշվ. աշխ., էջ 101:

**MEMOIRS OF AV. AHARONIAN "MY PRISON" IN THE LITERARY SECTION OF
"DROSHAK" NEWSPAPER**

ARUSYAAK ABRAHAMYAN

In 1912 the memoirs of Av. Aharonian (Exile) "My prison" were published in the literary section of " Droshak " newspaper. Aharonian writes about the days spent in Novocherkassk prison, which he describes as a symbol of injustice and human cruelty.

Key words – memoirs, Novocherkassk prison, political prisoner, emotional overwhelm, desire for freedom.

ԳՈԹԱԿԱՆ ՎԵՊԻ ՆՄԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԾԱՂԴԱՆՄԱՆԱԿՈՒՄԸ ԷԴԳԱՐ ՊՈՅԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

ԱՆԻ ԳԱԼՍՅԱՆ

Հոդվածում խոսվում է Պոյի «սարսափի նովելների»՝ գոթական վեպից կրած ազդեցությունների մասին: Ցույց է տրվում, որ հեղինակի վաղ շրջանի նովելներում այդ ազդեցությունները դեռ հաղթահարված չեն. Պոն ուղղակիորեն նմանակում է գոթական վեպը. նրա նովելները խնդիր են հետամտում պատկերելու ոչ թե ամերիկյան իրականությունը, այլ գրողի «հոգու սեփական սարսափները»: Վաղ շրջանի այլ նովելներում Պոն ոչ թե նմանակում, այլ ծաղրանմանակում է գոթական վեպը, ինչը, որքան էլ գոթական վեպի պարոդիայի նմանակում է, մենք դիտարկում ենք իբրև գոթական վեպի ազդեցությունը հաղթահարելու էական փորձ. ավելի ուշ գրված սարսափի նովելներում գոթական վեպի ազդեցությունները «հաղթահարված» են դրանց իմաստավորմամբ՝ գոթական վեպերի անգիտակցական սիմվոլների գիտակցված մետաֆորների փոխակերպմամբ ու բազմաթիվ հնարքներով:

Բանալի բառեր – նմանակում, պարոդիա, գոթական վեպ, «սև հումոր», գրոտեսկ, ավանդույթ, գրական ազդեցություն, արքայազն, թաքնված մեջքերում:

Էդգար Պոյի նամակներն ու ստեղծագործության անուղղակի հղումները վկայում են, որ նա «սարսափի գրականության» բացառիկ գիտակ է եղել՝ քաջատեղյակ գոթական վեպի նշանավոր բոլոր հեղինակներին: Այսպես. Ուիլյամ Գոդվինի «Մանդևիլ»-ից նա թաքնված մեջքերում է կատարում իր «Անշունչը» պատմվածքում, «Քալեբ Ուիլյամսից»՝ «Հորինման փոխտախտի» մեջ, Մեթյուրիի «Աստանդական Մեյմոթի» մասին խոսում է «Ք. Բ»-ին հասցեագրված նամակում, Էնն Ռադքլիֆի անունը հիշատակում է «Աշըրի տան անկունը» պատմվածքում, մի քանի անգամ հիշատակում է «գոթական արձակի» օրինետալիստական ուղղության հիմնադիր Ուիլյամ Բեքֆորդի անունը, և այլն: Պոյին ժամանակին հաճախ էին մեղադրում սարսափի գրականության նմանակման մեջ¹, չկռահելով անգամ, որ հարյուրամյակ անց սարսափի գրականության նշված հեղինակների ստեղծագործություններից շատերը գրականության պատմության սոսկ փաստ են դառնալու, իսկ Պոյի գրականությունն իր ազդեցությամբ շարունակելու է կենդանի գրական ընթացքին մասնակից երևույթ մնալ: Իրեն ուղղված էպիգոնության մեղադրանքներից Պոն

¹ Krutch J. W. Edgar Allan Poe. A Study in Genius. New York, 1926, p. 116.

պաշտպանվում էր՝ նշելով, թե իր սարսափները «դուրս են հորդել սեփական հոգուց»²: Սա խորհմաստ դիտարկում է, որ մեկ հարվածով մեկընդմիջտ լուծում է գրական ազդեցության խնդիրը: «Շատ ուսումնասիրություններում,- գրում է ռուս տեսաբան Վադիմ Կոժինովը,- ավանդույթը հանդես է գալիս, վերջին հաշվով, իբրև չարաբաստիկ «ուսումնառություն դասականներից», գրողը կարդում է, յուրացնում է, ուսումնասիրում է իր նախորդների գրքերը և ի վերջո դառնում է նրանց ժառանգորդն ու շարունակողը: Ես համոզված եմ, որ այդ ուղին ինքնին իր «մաքուր» տեսքով չի կարող հանգեցնել այլ բանի, քան էպիգոնության ու գրքայնության: Գրական ավանդույթը կենդանանում է միայն այն ժամանակ, երբ շարունակողը նրա ենթահիմքը, նրա խորքային բազան գտնում է նույն այն կյանքում, որն ինքը գեղարվեստորեն յուրացնում է»³: Իհարկե, այստեղ այլ խնդիր է առաջանում՝ «կյանքի» և «սեփական հոգու սարսափների» հարաբերման խնդիրը: Անշուշտ Հեմինգուեյի այն դիտարկումը, թե Պոյի պատմվածքները որքան էլ անթերի, այնուամենայնիվ անկենդան են⁴, Ֆոլքների այն նկատումը, թե Պոն ամերիկյան գրականության հեղինակ չէ⁵, վերաբերում են հենց վերոհիշյալ խնդրին: Եվ իրոք, Պոն հիանալի յուրացրել է արևմտաեվրոպական, հատկապես անգլիական գոթական վեպի հարուստ ավանդույթը, բայց մի կողմից՝ գոթական մշակույթը ամերիկյան իրականությանը բնորոշ իրողություն չէ, իսկ մյուս կողմից՝ նա այդ ավանդույթին դիմել է. սա չափազանց կարևոր դիտարկում է ոչ թե ամերիկյան իրականությունն ու կյանքը պատկերելու, այլ «սեփական հոգու սարսափներն» արտահայտելու միտումով, ուստի նրա նովելներն ավելի շուտ հետաքրքրություն են ներկայացնում ոչ թե ամերիկյան իրականության ճանաչողության, այլ ժանրի ավանդական հնարքների զարգացման ու կատարելագործման տեսանկյունից: Եվ այդուհանդերձ Պոն դուրս է նսև ոչ միայն «սարսափի գրականության» մասնակի դրսևորման՝ գոթական վեպի ավանդույթի մեխանիկական վերարտադրությունից, այլև իր երգիծանքի ու գոթական գրականության փոխաձևման շնորհիվ, նաև՝ «սարսափի գրականության» սահմաններից: Նրա վաղ շրջանի նովելներում, սակայն, գոթական վեպի ազդեցությունը դեռ հաղթահարված չէ: «Մետցենգերշտայն» պատմվածքը, օրինակ, գոթական վեպի իսկական նմանակում է: «Մետցենգերշտայնը», հիրավի, հեղինակի՝ գոթական

² Նույն տեղում:

³ Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը, Երևան, 1976, էջ 57:

⁴ Hemingway E. Green hills of Africa. London, 2013, p. 27.

⁵ Фолкнер У. Статьи, речи, интервью, письма. Москва, 1985, стр. 149.

վեպերին ամենից մոտ պատմվածքն է, որի շատ պատկերներ, ինչպես օրինակ՝ տոհմական ամրոցում շարժվող նախնիների նկարը, ուղղակիորեն հիշեցնում են Ուոլփոլի «Օթթանթոն», Ռադքլիֆի «Ուոլֆոլի առեղծվածները» կամ Մեթյուրինի «Աստանդական Մելմորը», թեև «գերբնականի առավել սուր զգացումի» շնորհիվ դիմանկարի անձնավորման հնարքը Պոյի պատմվածքում առավել համոզիչ է, հետևապես ավելի սարսափազդու, քան, օրինակ, Ուոլփոլի վեպում, որտեղ անհամոզիչ ու պարզունակ էր երկնքից ընկած վիթխարի սաղավարտը, որ դառնում էր վեպի հերոսի մահվան պատճառ: «Մետցենգերշտայնի» հեղինակը ևս՝ իբրև պատկերաստեղծման հիմնական հնարք, կիրառել է նույն հիպերբոլան՝ պատկերի չափերի անհավանական խոշորացումը: Մետցենգերշտայնի մահվան պատճառն ամրոցի առջև հայտնված վիթխարի չափերի ձին է, որը հեծած՝ իշխանը նետվում է հրդեհվող ամրոցի կրակների մեջ: Մի կողմից այն հնարքները, որ փոխառված են Ուոլփոլից կամ Մեթյուրինից, Պոյի նովելում առավել ճշմարտանման ու համոզիչ են և առավել նպատակային են օժանդակում սարսափի միտումին, մյուս կողմից՝ գոթական վեպերի պատկերավորման հնարքների նմանակման շնորհիվ Պոյի վաղ շրջանի նովելներում արդեն տեսնում ենք գոթական վեպերի անգիտակցական սիմվոլների (սիմվոլի և անգիտակցականի հարաբերության խնդիրը հանգամանորեն ուսումնասիրվել է Կարլ Յունգի և նրա հետևորդների կողմից, հատկապես Յունգի խմբագրած «Մարդը և իր սիմվոլները» ուսումնասիրության մեջ) փոխակերպումը գիտակցված մետաֆորների: Այսպես. կրակի մեջ սուրացող վիթխարի ձին և նրան հեծած ձիավոր Մետցենգերշտայնը Պոյի պատմվածքում ակնհայտորեն Հայտնության փոխաբերությունն են, այնինչ գոթական վեպերը, հատկապես Ուոլփոլի պարզունակ շարադրանքը հեռու են նման փոխաբերություններից (իսկ եթե դրանցում կա սիմվոլիկա, ապա՝ կոլեկտիվ անգիտակցական) և միջտեքստային հղումներից:

XVIII դարի երկրորդ կեսին ձևավորված գոթական վեպը շարունակում էր ասպետական վեպի ավանդույթները, և դժվար չէ տեսնել ասպետական վեպի անմիջական «փոխակերպումը» գոթականի: Ի վերջո, գոթական վեպի հետ կատարվում է նույնը, ինչ ասպետականի: Ինչպես միշտ սխեմատիզմը՝ կրկնվող մոտիվները, միակողմանի կերպարներն ու կանխատեսելի սյուժեն, «գոթական վեպի» պարագայում նաև անհավանական պատմություններն ուրվականների մասին, հրաշքները, կանխատեսող երազները, կախարդանքները, ոչ ճշմարտանմանը ճշմարտանմանության ջատագովների կողմից ծնունդ են տալիս գոթական վեպի պարողիայի ժանրին, որի հեղինակները

դիմում են միտումնավոր հիպերբոլայի՝ արճատելու, արսուրդի հասցնելու «գոթական վեպի» բնորոշ գծերը: Այստեղ տիրապետող ոչ այնքան գերբնականի սարսափն է, որքան սարսափ ազդող երևույթների ծաղրանմանակումը: Գոթական վեպի պարողիաներից կարելի է առանձնացնել միևնույն ժամանակ հրատարակված Թոմաս Փիքոքի «Մղձավանջների արբայությունը» («Nightmare abbey», 1818) ու Ջեյն Օսթինի «Նորթենգերյան արբայությունը» («Northanger abbey», 1818):

Ի տարբերություն ուշ շրջանի երգիծական գործերի («Ինչու է վիրակապված ֆրանսիացու ձեռքը», «Խաբեությունն իբրև ճշգրիտ գիտություն», «Երեք կիրակի մեկ շաբաթվա մեջ», «Ակնոցը»), որոնցում սարսափի տարրն իսպառ բացակայում է, Պոյի վաղ շրջանի երգիծական պատմվածքները գրված են «սև հումորի» և գոթական վեպի պարողիաներին բնորոշ գրոտեսկի, արսուրդի և հումորի միախառնումով: Իհարկե, «սև հումորի» տարրեր կարելի է գտնել դեռ անտիկ գրականության մեջ, մասնավորապես Ապուլեոսի «Ոսկե էջը» վեպում, իսկ XIX դարի «սև հումորի» քրեստոմատիկ օրինակ կարելի է համարել Ուիլյամ Թեքերեյի «Սատանայի գրազը» («Devil's Wager», 1833) պատմվածքը:

Պոյի վաղ շրջանի «սև» հումորի պատմվածքների մեծ մասի հերոսը ևս ռոմանտիզմի գրականության մեջ տարածված կերպարն է: Հերոզ դե լ'Օմելթը (համանուն պատմվածքում) մահից անմիջապես հետո աչքերը բացում է տարօրինակ ապարանքում, հմայվում կահավորման ու հարդարանքի պերճությամբ ու նրբագեղությամբ, ապա փորձում չենթարկվել տիրոջ՝ սատանայի հրամաններին, քանի որ ինքն ազնվական է, փորձում է սրամարտի բռնվել, և քանի որ սատանան սրամարտ չի սիրում, թղթախաղ է խաղում ու տանուկ տալիս: Մեկ այլ՝ «Երեք չվստահես գլուխդ Սատանային» պատմվածքում, երկու ընկեր գրազ են գալիս: Նրանցից մեկը հայտարարում է, թե կարող է և անպայման պիտի թռչի մի բարձր ցանկապատի վրայով, «թեկուզ և Սատանան տանի իր գլուխը»: Այդ խոսքը նրա համար ճակատագրական նշանակություն է ստանում, չգիտես որտեղից հայտնված տարօրինակ, կաղ (հիշենք բանահյուսական պատումներն ու լեգենդները, որտեղ սատանան կաղ է պատկերվում կամ, օրինակ, Լըսաժի «Կաղ սատանան») և տարեց պարոնն առաջարկում է միասին ցատկել: Իսկ հետո ընկերը մոտենում ու տեսնում է, որ երկաթգծի վրա փռված ընկերոջ գլուխը չկա. տարեց պարոնը, գլուխը թևի տակ առած, վազում է երկաթուղով: Ջարմանալի է, թե Պոյի վաղ շրջանի այս նովելներն իրենց պատկերներով ու երգիծանքի բնույթով որքան են հիշեցնում Միխայիլ

Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան», որի ազդեցությունների թվում բազմաթիվ ստեղծագործություններ են հիշատակվում, այդ թվում և Հերման Մելվիլի «Դիմակահանդեսը» վեպը: Ուսումնասիրողներից մեկը նկատում է, որ համանման հանգամանքներում է գլուխը կորցնում նաև Բուլգակովի հերոսը, ըստ որում՝ Սատանան այդ գործում նույն մասնակցությունն է ունենում: «Անկասկած Բուլգակովը,- գրում է Է. Օսիպովան,- շարունակում է Պոյի ֆանտաստիկ ռեալիզմի ավանդույթները, որի օրինակը մենք տեսնում ենք քննվող պատմվածքներում»⁶: Եվ իրոք Պոյին, թեև ոչ այս շարքի պատմվածքներով, պետք է համարել հենց «ֆանտաստիկ ռեալիզմի» հիմնադիր և ռեալիզմի ու ֆանտաստիկայի համադրումը գուցե նրա մեծագույն նորարարությունն է ֆանտաստիկայի մեջ:

Պոյի «դիվապատումներում» կարելի է նկատել նաև պիկարոյական վեպերի, Հոֆմանի «Սատանայի էլեքսիրի», Մեթյուրինի «անմահ գլուխգործոցի», Ֆրեդերիկ Սուլիեի «Սատանայի հուշերի», Հանս Յակոբ Բրիստոֆ ֆոն Գրիմելսհաուզենի «Սիմպլիցիսմուս»-ի, Վաշինթոն Իրվինգի «Ճանապարհորդի պատմությունների» («Սատանան և Թոմ Վոլքերը» օրինակ) ազդեցությունները: Սատանան, որ, ինչպես նկատեցինք, ռոմանտիզմի նախասիրած կերպարներից է և գրականության է մտել բանահյուսության տարածանք պատումներից, հետաքրքրել է սարսափի գրականության շատ ու շատ հեղինակների, նրանցից շատերը, ինչպես Կլոդ Սենյոլը կամ «արծաթե դարի» արձակագիր Միխայիլ Ամֆիտեատրովը, նույնիսկ սատանայի վերաբերյալ բանահյուսական պատումներ են ժողովել ու հրատարակել: Այդ կերպարը, ըստ որում, հիմնականում երգիծանքով հանդիպում է նաև XIX դարի Ամերիկյան Հարավի բանահյուսական պատումներում, ինչպես օրինակ, «Սատանան ու պառավը» բալլադում⁷: Եվ ահա Պոն իր ոճով, իրեն բնորոշ երգիծանքով ու անցյալի գրականության մեջբերումներով շարունակում է այդ ավանդույթը: «Սև հումորի» այլ պատմվածքներում նա փորձում է երգիծել ժամանակի գրականության նորածն ժանրերից մեկը՝ սարսափի պատմվածքը: «Ինչպես գրել «Բլեքվուդի» համար» պատմվածքում, օրինակ, Պոն ծաղրում է գրական այդ ամսագրում հրատարակվող պատմվածքների ոճը: «Բլեքվուդի» ուղղվածությունը հենց սարսափի գրականությունն է եղել: Ամսագրի խմբագիրը իբր, իր հեղինակներից մեկին՝ ոմն միսս Զենոբիային, որի կերպարի տակ ենթադրվում է

⁶ **Осипова Э. Ф.** Загадки Эдгара По. Санкт-Петербург, 2004, стр. 141.

⁷ **Народ, Да!**, Из американского фольклора. Москва, 1983, стр. 289.

Ժամանակի ամերիկյան գրականության անվանի դեմքերից մեկը՝ Մարգրեթ Ֆուլլերը (1810-1850), բացատրում է սարսափի պատմվածք գրելու կանոնները: Եվ նա գրում է «Կենդանի մեռյալը» վերնագրով մի պատմվածք, որն ամբողջությամբ համապատասխանում է «Բլեքվուդի» պահանջներին, բայց որտեղ իհարկե ծաղրի են ենթարկվում սարսափի գրականության պարզունակ ու նույնանման հնարքները: Հետաքրքիր է, որ «կենդանի մեռյալի» թեման Պոյին լրջորեն հետաքրքրող թեմաներից է եղել, և այն սկզբում երգիծական, հետագայում մաքուր սարսափի ոճով է գրվել: Սա Պոյի աշխարհայացքի ամենահակասական կողմերից է: Նրա վաղ շրջանի երկերից շատերը «սարսափի» սեփական ստեղծագործությունների նմանակումներ են հիշեցնում. մահն ու մահվան սարսափն այդ ստեղծագործություններում գրոտեսկային բնույթ ունեն արդեն: Եվ իրոք, «որոշ պահից սկսած, Պոն կարծես խախտում է խաղի՝ իր իսկ սահմանած կանոնները և արդեն անհնար է որոշել՝ ինչն է ասված երգիծանքով, ինչը՝ միանգամայն լուրջ»,- գրում է «Վախ ու սարսափի նշանագիտությունը է. Ա. Պոյի «Ճոճանակն ու հորը» պատմվածքում» հոդվածի հեղինակ Ա. Ահարոնյանը՝ մեջբերելով Ֆ. Օ. Մաթթիսենի խոսքերը, թե «իր հումորին Պոն վերաբերվում էր ամենայն լրջությամբ. վտանգավոր մի հակում, որն ակնհայտորեն երբեք էլ առանձնակի հիացմունք չէր առաջացնում շրջապատում»: Թեև վերոհիշյալ պատմվածքներում նա օգտագործում է ամերիկյան երգիծաբանության մեջ լայնորեն տարածված հնարներից շատերը, սակայն դրանց մեծ մասը զուրկ է այն «փրկող ջերմությունից, որ պարզևում է լիաթոք ծիծաղը»⁸: Մաթթիսենի բնորոշումը հենց «սև հումորի» առանձնահատկությանն է վերաբերում⁹:

«Սև հումորով» գրված մեկ այլ ստեղծագործության՝ «Անշունչը» նովելի երգիծական բնույթը էապես պայմանավորված է պատումի առաջին դեմքով, քանի որ պատմողը շունչը կորցրած անձնավորություն է՝ մարդ, որ միաժամանակ «ողջ, բայց հանգուցյալին բնորոշ բոլոր հատկանիշներով՝ հանգուցյալ», «բայց ողջերին բնորոշ բոլոր հակումներով», «ինչ-որ անբնական երևույթ մարդկանց աշխարհում, չափազանց հանգիստ, բայց շնչից զուրկ»: Նովելը

⁸ Տե՛ս «Էդգար Ալան Պոն և արդիականությունը», Երևան, 2010, էջ 92:

⁹ Պոյի նովելների «սև հումորի» առանձնահատկությունների վերաբերյալ հետաքրքրական դիտարկումներ ունեն նաև գրականագետներ Վան Վիք Բրուքսն ու Կոնստանս Ռուբլը: Տե՛ս **Brooks V. W.** Poe in the South, The World of Washington Irving. Kingsport, 1944, p. 279; **Пурк К.** Американский юмор, Исследование национального характера. Краснодар, 1994, стр. 151.

շունչը կորցրած մարդու (տեղին է գուցե հիշել Ադալբեր ֆոն Շամիսսոյի ստվերը կորցրած մարդու մասին պատմող «Պետեր Շլեմիլի զարմանալի պատմությունը»(1813)) զարմանահարաշարկածների մասին է, որին հանգուցյալի տեղ դնելով փորձում են դիտարկել, նույնիսկ կախաղան են հանում, և ոչ մի կերպ նա չի մահանում: «Անշունչը» պատմվածքում Պոն պարզապես անցնում է աբսուրդի սահմանները. երևոյթը, որը սարսափ պիտի ազդեր, իրականում ծիծաղ է առաջացնում: Հետագայում սյուրռեալիստները յուրացրին «սև հումորի» այս առանձնահատկությունը, և անշուշտ անհիմն չէ Ս. Լ. Մունիի կարծիքը, թե Պոն կանխում է XX դարի սյուրռեալիզմը (թեև նրա դիտարկումը վերաբերում է ոչ թե «սև հումորի», այլ ռեալության և իռեալի համադրությանը)¹⁰:

Նամակներից մեկում իր «սև հումորի» պատմվածքների վերաբերյալ Պոն այսպիսի մի գրառում ունի. «Դուք ինձ հարցնում եք, թե որն է նրանց բնորոշ առանձնահատկությունը: Գրոտեսկի հասցված աբսուրդը, սոսկումի հասցրած վախը, բուրլեսկի հասցրած սրամտությունը, տարօրինակության և խորհրդավորության հասցրած անսովորը»¹¹:

Միևնույն ժամանակ Պոյի այս պատմվածքները թաքնված մեջբերումների և գրական այլուզիաների իրենց մշակույթով հիշեցնում են գոթական վեպի պարողիայի ժանրը: Փիքոքի վեպում, օրինակ, գոթական ամրոցում հավաքված մի խումբ մտավորականներ բանավիճում, երկխոսում են կեցության հավերժական հարցերի շուրջ՝ անընդհատ մեջբերելով անցյալի փիլիսոփաներին ու գրողներին: Պոն վաղ շրջանի՝ հատկապես ֆրանսերեն և լատիներեն ցիտատներով գերհագեցած պատմվածքներում դեռ չի խզել կապը նախորդ դարերի անտիկ մշակույթի, փիլիսոփայության և գրականության հետ, անընդհատ դիմում է մեջբերումների՝ հաճախ տեքստը ծանրաբեռնելով ինտելեկտուալ անհարկի հղումներով: Փիքոքը նույնպես կիրառում էր այդ հնարքները: Նրա հերոսները, որ դիմում են մեջբերումների լեզվին, փորձում են պսակազերծել ժամանակի ճանաչված գրական հեղինակությունների, հատկապես Քոլրիջի, Բայրոնի և Շելլիի ինտելեկտուալ հետաքրքրությունները: Եվ հետաքրքիր է, որ Պոն վաղ շրջանի սարսափն ու երգիծանքը միախառնող մի քանի պատմվածքներում ևս իր ժամանակի գրողների ծաղրական դիմանկարներն է կերտում՝ Փիքոքի նման ծաղրելով հենց Քոլրիջին (թեև, մեր կար-

¹⁰ **Mooney S. L.** Poe's Gothic Waste Land // The Sewance Review, 1962, spring, vol. 70, N 2, p. 271-272.

¹¹ **Poe E. A.** The Letters. Ed. by J. W. Ostrom. Cambridge (Mass.), 1948, Vol. I, p. 57-58.

ծիքով, վերջինիս հետ բազմաթիվ ընդհանրություններ ուներ) և Բայրոնին: Նամակներից մեկում¹² և տարբեր պատմվածքներում Պոն հեգնում է Քոլրիջի տրանսցենդենտալիզմը, իսկ վաղ շրջանի «Հանդիպում» պատմվածքում Բայրոնին ներկայացնում որպես սեփական արտաքին բարեմասնությունների ու գեղագիտական վեի ճաշակի հետ նույնացած սնապարծ ազնվականի ու ինքնակոչ փրկչի կերպար: Վենետիկի ջրանցքներից մեկի մեջ խեղդվող մանկան՝ սև թիկնոցով փաթաթված ամենահաս փրկչի գեղեցկությամբ ապշած մայրը՝ չքնաղ մարկիզուհին, իսկույն մոռանում է ջրահեղձ մանկանը՝ ապշած իր առջև կանգնած տղամարդու անսովոր գեղեցկությունից: Ռիալտոյի կամրջի մոտ գտնվող ապարանքում բանաստեղծին (հասկանալի է, որ Բայրոնն իր անունով հանդես չի գալիս) հյուրընկալված հերոսը գեղանկարչության և քանդակագործության բազմաթիվ հայտնի գլուխգործոցների բնօրինակների թվում տեսնում է նաև մարկիզուհու դիմանկարը, իսկ քիչ անց լուր են բերում, թե մարկիզուհին թունավորվել է (երկրային կյանքի վաղանցության և արվեստի հավերժության այս թեման կրկնվում է նաև Պոյի «Ձվածն դիմանկարը» պատմվածքում): Այսպես. Պոյի ոչ միայն վաղ, այլև ուշ շրջանի շատ պատմվածքների հերոսը մռայլ ու պերճաշուք ապարանքներում փակված ազնվականն է, նույն գոթական վեպերի հերոսը:

Այսպիսով, վաղ շրջանում Պոն ոչ միայն ուղղակիորեն նմանակում, այլև ծաղրանմանակում է գոթական վեպը, ինչը, որքան էլ գոթական վեպի պարողիայի նմանակում, գոթական վեպի ազդեցությունը հաղթահարելու փորձ է. ավելի ուշ գրված սարսափի նովելներում գոթական վեպի ազդեցությունները «հաղթահարված» են դրանց իմաստավորմամբ՝ գոթական վեպերի անգիտակցական սիմվոլների՝ գիտակցված մետաֆորների փոխակերպմամբ ու բազմաթիվ հնարքներով:

ПОДРАЖАНИЕ ГОТИЧЕСКОМУ РОМАНУ И ПАРОДИЯ НА НЕГО В НОВЕЛЛАХ ЭДГАРА ПО

АНИ ГАЛСТЯН

В статье говорится о влияниях готического романа на «новеллы ужасов» По. Отмечается, что в новеллах автора раннего периода это влияние еще не преодолено. По напрямую подражает готическому роману, его новеллы пре-

¹² Эстетика американского романтизма. Москва, 1977, стр. 87-93.

следуют цель изображать не американскую реальность, а «ужасы собственной души». В других новеллах раннего периода По не подражает, а пародирует готический роман, именно это мы рассматриваем как существенную попытку преодоления влияния готического романа. В «новеллах ужасов», написанных позже, влияние готического романа «преодолено» их осмыслением, заменой бессознательных символов готического романа осознанными метаморфозами и разнообразными выдумками.

Ключевые слова – подражание, пародия, готический роман, «черный юмор», гротеск, традиция, литературное влияние, абсурд, скрытая ссылка.

IMITATION AND MOCK-IMITATION OF THE GOTHIC NOVEL IN EDGAR POE'S NOVELS

ANI GALSTYAN

Ani Galstyan in this paper explicates the influence of Gothic novels that bear the first “horror novels” of Poe. Galstyan further demonstrates how in his first novels, Poe having not overcome the influence of the Gothic novel yet imitates them. His intent has here been the depiction of the “horrors of his own soul” rather than the horrors of the American reality. In other early novels Poe makes fun of the Gothic novel by parodying it. Galstyan considers this an attempt to get over the influence of the Gothic novel. However, Galstyan shows that in his later novels these influences are ‘defeated’ by giving essence and significance to them that is by transforming the unconscious symbols of the Gothic novel into conscious metaphors and by many other contrivances as well.

Key words – imitation, parody, Gothic novel, “black humor”, grotesque, tradition, literary influence, absurd, hidden quotation.

ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍԵՐՈ ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ՍԵՂՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Հոդվածում քննարկվում են անվանի գրող Սերո Խանզադյանի պատմվածքներն ու «Վեց գիշեր», «Մեռածները հիշում են», «Արաքսը պղտորվում է» վիպակները:

Այս ստեղծագործությունները մեր օրերում ևս չեն կորցրել իրենց դաստիարակչական նշանակությունն ու գեղագիտական արժեքը: Դրանք կարևոր դեր կարող են խաղալ մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության, անձի ձևավորման և աշխարհայացքի ընդլայնման գործում:

Բանալի բառեր – եղեռն, պատմության դասեր, պայքար, վրեժ:

Սերո Խանզադյանի գրական հարուստ ժառանգության մեջ նշանակալի տեղ են գրավում ինչպես մանուկների ու պատանիների համար գրված, այնպես էլ նրանց ընթերցանության շրջանակները մտած պատմվածքներն ու վիպակները, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը, գեղարվեստական արժանիքները և կարևոր դեր կարող են ունենալ մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման, անհատականության ձևավորման, աշխարհայացքի ընդլայնման գործընթացներում:

Սերո Խանզադյանի ամբողջ ստեղծագործությունն ընդհանրապես նվիրված է մարդու հայ տեսակին, նրա ստեղծագործ աշխատանքին, հոգսերին ու մտահոգություններին, հերոսական պայքարին, հոգևոր մաքառումներին: Այդ ստեղծագործություններից շատերն ունեն կենսագրական հիմք և գեղարվեստական տարբեր միջոցներով ներկայացնում են կոլեկտիվացման շրջանի, Հայրենական մեծ պատերազմի, ստալինյան դժնդակ տարիների, 1960-ականներից սկսած «գիտատեխնիկական հեղափոխության», գյուղի «սոցիալիստական վերափոխման» ժամանակների հայ ժողովրդի կյանքի տարեգրությունը, հայ մարդու հոգեկան դրաման: Գրողի ուշադրության կենտրոնում այդ ստեղծագործությունների մեջ նաև մանուկներն են, բազմաթիվ փորձությունների միջով անցած, որբության դառնությունները ճաշակած, մանկություն չտեսած, միանգամից հատունացած մանուկ ու պատանի հերոսները, որոնցից շատերն այսօր իրենց բարոյականության որակներով, դժվարություն-

ներին դիմակայելու ունակություններով հիանալի օրինակ կարող են հանդիսանալ այսօրվա մեր երեխաների համար:

Հատկապես «...ուշագրավ են պատերազմի ու հետպատերազմյան տարիների կյանքը ներկայացնող պատմվածքների փոքրիկ հերոսները, ովքեր փոխարինում են ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին ու եղբայրներին: Անվանի գրողը հոգեբանական նուրբ դիտարկումներով է ներկայացնում իր փոքրիկ հերոսների ներաշխարհը, նրանց ծանր ապրումները, հոգեկան դրաման: Դժվարություններն օգնում են նրանց ճիշտ ապրել, ընտրել կյանքի օրինավոր ուղի, գնահատել աշխատանքը, սեփական քրտինքով օրվա հացը վաստակելու հաճույքն ու բերկրանքը»¹:

Մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման համար հույժ արդիական նշանակություն ունեն Խանգաղյանի՝ պատմական թեմայով գրված ստեղծագործությունները («Վեց գիշեր», «Մեռածները հիշում են», «Արաքսը պղտորվում է» վիպակները ու «Վարք հարանց» շարքի պատմվածքները, բանասիրական թեմաների մշակումները):

Ս. Խանգաղյանը յուրահատուկ կամուրջ է ստեղծում հեռավոր անցյալի ու ներկայի միջև՝ իր պատանի ընթերցողին տալով ողջ կյանքի համար հույժ կարևոր դասեր: Նա ներկայացնում է «...պատմական անցյալի այն դրվագներն ու երևույթները, որոնցում պահված պատմամշակութային և բարոյահոգեբանական արժեքները, անցյալում իրենց համար ճանապարհի հարթելով, աշխատում են այսօրվա համար»²:

Պատմական թեմայով գրված ստեղծագործություններն ունեն տարածաժամանակային ընդգրկումների բավականին լայն սահմաններ՝ հայոց պատմության վաղնջական ժամանակներ, XVIII դարի ազգային-ազատագրական պայքար, Հայոց մեծ եղեռն, Արցախյան ազատամարտ: Այդ ստեղծագործությունները հիանալի միջոց կարող են հանդիսանալ մանուկ ընթերցողների իմացությունների ընդլայնման, ազգային ոգու ամրապնդման, բարոյականային որակների մշակման համար:

«Վարք հարանց» շարքի պատմվածքների հիմնական մասը նվիրված է Մեսրոպ Մաշտոցին, նրա առաքելությանը, մեր պատմության մեջ նրա ունեցած դերին: Դրանք ուշագրավ են այն առումով, որ Մեսրոպ Մաշտոցը ներկայացվում է առաջին հերթին որպես մարդ իր կենսագրության տարբեր

¹ ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2014, էջ 90:

² **Եփրեմյան Վ.**, Չգրված գրքի ծանոթագրություններ, Երևան, 2008, էջ 9:

հանգրվաններում, հասարակական տարբեր շերտերի հետ ունեցած հարաբերությունների համատեքստում:

Մանուկ ընթերցողների համար մեծ հետաքրքրություն կարող են առաջ բերել պատմվածքների այն դրվագները, որտեղ Մաշտոցն իր աշակերտներին ոչ թե բարոյախոսական խրատներ է տալիս, այլ նրանց համար պարզ, հասկանալի, մատչելի միջոցներով ներկայացնում է գրի ու գրականության, մտքի ու գիտության, հատկապես դպրոցի դերն ու նշանակությունը: Պատահական չէ, որ գրերի գյուտից հետո Մաշտոցն առաջին դպրոցները բացեց սահմանեզրերին: Նրա խորին համոզմամբ այդ դպրոցները սահմանապահ բերդեր են, ուսուցիչներն ու աշակերտները՝ սահմանապահ զինվորներ: Մարգարեական մտքեր էին դրանք, հեռահար, ռազմավարական նշանակության մտքեր, որովհետև հետմաշտոցյան շրջանի մեր պատմությունը ցույց տվեց, որ այն բնակավայրերը, որտեղ փակվում են դպրոցները, ժամանակի ընթացքում ամայանում ու վերանում են աշխարհագրական քարտեզներից:

Ս. Խանզադյանը Մաշտոցին ներկայացնում է ոչ միայն որպես գիտնական ու մեծ ուսուցչապետ, այլև որպես զինվոր, որ իր աշակերտների հետ զենքը ձեռքին պաշտպանում է երկրի սահմանները, մշակութային արժեքները:

Պատմական թեմայով գրված ստեղծագործություններում Ս. Խանզադյանն օգտագործում է գեղարվեստական տարբեր հնարքներ, որոնք ավելի հետաքրքիր և ուշագրավ են դարձնում պատումի ընթացքը: Այդ ստեղծագործություններում շատ հաճախ հանդիպադրվում են պատմական անցյալն ու ներկան, միմյանց լրացնում են առասպելն ու միջը, իրականն ու երևակայականը: Հաճախ, ճիշտ է, անվանի գրողը «հավատարիմ չի մնում» պատմական դեպքերի ճշմարտացիությանը, բայց դա չի խանգարում նրան մշակելու պատմության փիլիսոփայության արդիական ընկալումներ:

Հայրենասիրական դաստիարակության հիանալի դասեր կարող են տալ մանուկ ու պատանի ընթերցողներին «Արաքսը պղտորվում է» , «Վեց գիշեր» , «Մեռածները հիշում են» վիպակները, որտեղ հանդիպադրվում են անցյալը, ներկան ու ապագան:

«Արաքսը պղտորվում է» վիպակի հերոսը՝ Առաքելը, մեր մանկապատանեկան գրականության այն հերոսներից է, որոնք հիանալի օրինակ կարող են հանդիսանալ մեր մանուկ ընթերցողների համար, որոնցից շատերը, ցավիք սրտի, աստիճանաբար կտրվում են արմատներից, մեծանում բուրձովին այլ հոգեբանությամբ, հետևում այլ արժեհամակարգերի:

Վիպակում Ս. Խանզադյանն իր հերոսների միջոցով ընթերցողի առջև բացում է պատմության խորհրդավոր դռները, նրան տանում տարբեր հանգրվաններ, թերթում անցյալի բազմաթիվ հերոսական ու ողբերգական էջեր: Մանուկ ընթերցողին նա հետաքրքիր միջոցներով հասու է դարձնում այն ճշմարտությունը, որ պատմության քառուղիներում սրի պես զորավոր են եղել մեր մագաղաթյա մատյանները, որոնք սերունդներին են ավանդել մաքառման ոգին, պատմության լույսն ու ստվերը:

Այդպիսի առաքելություն է Ս. Խանզադյանը վերագրում Առաքել Դավրիժեցու «Պատմությանը»: Նա դիմում է գրական հետաքրքիր հնարքի. կազմակերպում է երկու Առաքելների՝ Առաքել Դավրիժեցի պապի և Առաքել անունով նրա թոռան խորհրդանշական «հանդիպումը»: «Մի օր պապիկը, որ երկար ժամանակ արկողնային հիվանդ էր, ինձ կանչեց իր մոտ: -Դու, թոռնիկս, - ասաց,- գիտե՞ս, թե քո անունն ինչո՞ւ է Առաքել: Բարձիս տակ գիրք կա, հանիր: Երբ ես չեմ լինի, իսկ դա անխուսափելի է, քանի որ ես իննսունմեկ տարեկան եմ, դու կկարդաս այդ գիրքը: Կրկնում եմ՝ կկարդաս միայն իմ չլինելուց հետո: Այս գիրքը գրել է մեր ազգատոհմի նախնի Առաքել պատմագիր Դավրիժեցին: Քո անունն էլ նրանից է: Ահա արդեն երեք հարյուր տարուց ավելի է, ինչ մեր ազգատոհմի մեջ կրկնվում է Առաքել անունը...Մի քանի օր անց պապս վախճանվեց: Նրան թաղելուց հետո միայն սկսեցի կարդալ նրա նվիրած գիրքը: Դա կոչվում էր այսպես. «Պատմությունն անցից հատվածոց, որք եկին ի վեր աշխարհիս հայոց...Ի թագավորեն Շահաբաս կոչեցելու, ի նորին ազգի, որք են պարսիկք»³:

Առաքել Դավրիժեցի պապը թոռանը տանում է պատմության ուղիներով: Այդ ճանապարհին պատանի Առաքելը հանդիպում է մեր հերոսական անցյալի շատ ու շատ նշանավոր դեմքերի, լսում պատմություններ նրանց հերոսական կյանքի մասին: Վիպակում ուշագրավ է Թուփսձամի՝ հայ գեղանի աղջկա կերպարը: Վերջինս Առաքելի հասակակիցն է և նրան զարմացնում է ոչ միայն իր ոչ երկրային գեղեցկությամբ, այլև զինվորին յուրահատուկ քաջությամբ, անկոտորում կամքով: Թուփսձամի համար կարևորը ազգային ներուժի համախմբումն է, պայքարի ոգու ամրապնդումը: «Մարդը պետք է ուժ ունենա», բայց ուժը պետք է ի չարս չգործադրի: Ասել է՝ թե մարդը պիտի առաջին հերթին լինի բարի, իսկ «բարությունը անկարող ոչինչ բան է, եթե հզոր ուժ չունենա»⁴:

³ Խանզադյան Ս., Արաքսը աղտոտվում է, Երևան, 1985, էջ 3, 4:

⁴ Նույն տեղում:

Թուխձամը Առաքելին արհուրյան դասեր է տալիս՝ «Արի եղիր: Արի, եղբայրս,- քրքջում էր երեսս ի վեր, իսկ ես բնավ չէի վիրավորվում: Նա շատ անկեղծ էր» :

Թուխձամն անչափ կարևորում է հոգևոր մաքառումների դերը, բայց միայն դրանցով ազգը չի կարող գոյատևել. «Անշուշտ, կոյր ու դժբախտ է այն ազգը, որ մտքի բարձր թռիչք չունի, սեփական մտածելու կերպի գիտություն և ուսում չունի, որ չի կարողանում առնչվել ուրիշ ազգերի հոգու լույսի հետ: Սակայն...Մեզ նախ և առաջ զենք է պետք: Առաջ զենքն ու զինական ուժը, հետո չզիտեմ, թե ինչը...»⁵:

Այս ոգով են պատմության դասերն իրենց պատանի ընթերցողին մատուցում եղեռնի ահասարսուտ դեպքերին նվիրված «Վեց գիշեր» և «Մեռածները հիշում են» վիպակները:

Յոթ տարի Ալիզոն լեռան անտառներում պատսպարված հայ ֆիդայիներն անհավասար պայքար են մղում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Նրանց մեջ է նաև պատանի Սերոբն իր հասակակից ընկերներով: Սերոբը դաստիարակվել է այն ոգով (ի տարբերություն մեծահարուստ ընտանիքների իր հասակակիցների), որ երբեք չի կարելի վստահել թուրքին, հավատալ նրա շողոքորթ խոսքերին, որովհետև թուրքի համար մանկուց մշակվել է մի համոզմունք, որ հային թալանելը, բռնաբարելը, սպանելը հանցագործություն, մեղք չէ, այլ աստվածահաճո արարք, դրախտում տեղ գտնելու ուղիղ ճանապարհ:

Սերոբն իր ընկերների հետ մասնակցում է բազմաթիվ մարտերի, սկանառես է լինում բազմաթիվ ահասարսուտ դեպքերի. հիմնահատակ թալանված ու այրված բնակավայրեր, լլկված, բռնաբարված դիակներ, անթաղ ծերեր ու մանուկներ ու զարմանում է, որ մեր զինվորներից շատերը երբեմն խղճահարությամբ են լցվում թուրք վիրավոր զինվորների նկատմամբ: «Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման, սա պիտի լինի մեր կարգախոսը», - իր հասակակիցներին բազմիցս ասում է Սերոբը՝ քաջ գիտակցելով, որ ուժին պետք է ուժ հակադրել, բարությանն ու մարդասիրությանը՝ համարժեք պատասխաններ:

«Պետք է ձեզ վարժեցնեմ թշնամու արյուն թափելուն, տղաներ, իրենք են մեզ ստիպում այդպես վարվել» :

Սերոբը խոսում է հայ մարդու արժանապատվության գիտակցումով,

⁵ Նույն տեղում, էջ 142, 143:

այնպիսի ըմբռնումով, որ պետք է ջարդել այն կարծրատիպերը, թե հայերը չունեն դիմադրության ոգի:

Ճիշտ է, Ս. Խանզադյանի՝ եղեռնի թեմայով գրված ստեղծագործություններն ուղղակիորեն հասցեագրված չեն մանուկ ու պատանի ընթերցողներին, սակայն նրանց մեջ ներկայացված պատանիների կերպարները հիանալի օրինակ կարող են լինել մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում:

Պատանի վրիժառուների մի ամբողջ պատկերասրահ է ներկայացված «Խոսեք Հայաստանի լեռներ» վեպում՝ Բենիամին, Ձյունիկ, Ուլիկ, Կուրբան-Ալի Մանուկ և ուրիշներ, ովքեր, Երզնկայի Կաթակն գյուղի բնակչության հետ բարձրանալով Ակնահովիտի լեռները, հերոսականության իսկական օրինակներ են ցուցաբերում թուրքական կանոնավոր զորագնդերի դեմ մղվող անհավասար մարտերում: Առանձնապես տպավորիչ է Կուրբան-Ալի Մանուկի կերպարը: Նրա հորը թուրքերը մորթել են երեխայի աջքի առջև: Մանուկը հրաշքով կենդանի է մնացել, անվանափոխվել ու ծառայության է անցել ոստիկանությունում, որտեղ ծառայելու ընթացքում խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում թուրքերի նպատակների, ծրագրերի և այլնի մասին:

Նա հայ վրիժառուի տիպական կերպար է, որի կյանքի ամբողջ նպատակն ազգի թշնամիներից վրեժ լուծելն է: Գաղթականների խմբի հետ Արաքսի մյուս ափն անցած Մանուկը ծառայության է անցնում Միջինասիական անապատներում բասմաչների դեմ կռվող խորհրդային զորամասում: Ամեն օր նա իր դառը մղձավանջների մեջ է. հիշում է «Ամառինեի հրապարակի խարույկը, ողջակիզվող Գեղամի խրոխտ ձայնը: Նա հիշում է, թե ինչպես գնդակահարեց գերմանացի գնդապետ Կուրտ ֆոն Բայցին: - Չեմ կարող չսպանել Ձեզ, հեր գնդապետ: Սակայն ուզում եմ իմանաք, որ ես Ձեր գանձերը կողոպտելու մտքով չեմ սպանում Ձեզ, ինչպես անում է հետին ավազակը: Այլ ուզում եմ իմանաք, որ ես հայ եմ ու իմ արդար վրեժն եմ լուծում»⁶:

Մեկուկես միլիոն անմեղ զոհերի արյան վրեժը նա լուծում է Էնվերի սպանությամբ. Մանուկի ոտքերի տակ թավալվող թուրք փաշան խնդրում է.

«Մի սպանիր ինձ: Ես քեզ կհանձնեմ Բեռլինի բանկերում ունեցածս ողջ դրամը: Դա մեկուկես միլիոն դոլար է:

-Բարի, սակայն ասացեք, Էնվեր փաշա, ես ի՞նչ պատասխան տամ մեկուկես հայրենակիցներիս անթաղ ոսկորներին, որ դու ևս քո ատամներով

⁶ Խանզադյան Ս., Խոսեք Հայաստանի լեռներ, Երևան, 1978, էջ 531:

կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքերով ևս խոշտանգված Հայաստան հայրենիքին, պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա էնվեր փաշա, դու պիտի սատկես»⁷:

Պատմական թեմայով գրված Ս. Խանզադյանի պատմվածքներն ու վիպակներն արժարժում են մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության այնպիսի խնդիրներ, որոնք խիստ առօրեական են մեր օրերում, երբ համարյա ամեն օր մեր հարևան ազերիները նորանոր սադրանքների են դիմում սահմանամերձ գոտիներում՝ ոչնչով չտարբերվելով իրենց բարբարոս նախնիներից:

Մեր մատաղ սերունդը «...պիտի դաստիարակվի մեր գրողների լավագույն ստեղծագործությունների ոգով, պիտի պատրաստ լինի Սերոբի, նրա մարտական պատանի զինակիցների օրինակով համարժեք պատասխան տալու յուրաքանչյուր սադրանքի ու ոտնձգության:

Դա է մեր մեծերի պատգամը»⁸:

ВОПРОСЫ ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ МОЛОДОГО ПОКОЛЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ СЕРО ХАНЗАДЯНА

МЕЛИНЕ ГИЛАВЯН

В настоящей статье рассматриваются рассказы видного армянского писателя, написанные для детей или вошедшие в круг их чтения, а также повести “Шесть ночей”, “Мертвые вспоминают”, “Аракс мутнеет”.

Эти произведения и в наши дни не утратили своего познавательного и воспитательного значения и эстетическую ценность. Они могут сыграть важную роль для патриотического воспитания, в процессах формирования личности и расширения мировоззрения подрастающего поколения.

Ключевые слова – геноцид, уроки истории, месть, борьба.

⁷ Նույն տեղում, էջ 535:

⁸ ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2014, էջ 94:

PATRIOTIC EDUCATIONAL ISSUES IN THE WORKS OF SERO KHANZADYAN

MELINE GILAVYAN

Gilavyan in this article reviews some of the short stories of renowned writer Sero Khanzadyan and in particular the novellas, "Six nights", "The Dead Remember" and "Araks is Blurry" as well.

Gilavyan is of the opinion that these works even today feature a great pedagogical significance and aesthetic value. They can play a crucial role in the patriotic education of the children, the formation of their individuality and values in general and the enlargement of their world view.

Key words – genocide, lessons of history, revange, struggle.

А.ГРИН – МАСТЕР ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПРОЗЫ

ЮЛИЯ ХОДЖОЯН, АШХЕН АТАНЕСЯН

Неповторимый художественный мир А.Грина, органично вобравший в себя реалистические и романтические тенденции, тонкий психологизм и выраженную дидактику, и в XXI веке приковывает к себе научный и читательский интерес. В статье показано, что в основе многих рассказов и новелл А.Грина – психологические этюды, зарисовки, наблюдения, эксперименты, в которых главной сферой анализа являются подсознательные состояния и настроения, сложный и таинственный аппарат человеческих восприятий.

Ключевые слова – реалистические и романтические тенденции, гриновский психологизм, психологический эксперимент, эмоции, самоанализ.

Неповторимый художественный мир А.Грина, органично вобравший в себя реалистические и романтические тенденции, тонкий психологизм и выраженную дидактику, и в XXI веке приковывает к себе читательский и научный интерес. Литературная судьба писателя складывалась драматично. В дореволюционной критике А.Грина, как правило, обвиняли в подражательстве представителям приключенческой западноевропейской литературы, стилизаторству (В.Львов-Рогачевский и др.); после революции – в оторванности от жизни, идеализме; с выходом же “Алых парусов”(1923г.) стали упрекать в космополитизме (В.Важдаев, В.Смирнова). Сам А.Грин в одном из писем от 1914г. к редактору В.Миролюбову писал: “Мне трудно. Нехотя признают меня российские журналы и критики; чужд я им, странен и непривычен...”¹. Всплеск интереса к произведениям А.Грина приходится на 1930-е годы: большую роль в популяризации творчества писателя сыграли статьи Ц.Вольпе, М.Шагинян, К.Паустовского, Д.Роскина, и др. В конце 1950-х годов к анализу творчества оригинального русского писателя обращаются и зарубежные исследователи (С.Поллак, К.Фриу и др.) Отметим, что если в течение нескольких десятилетий (30 – 80-е гг.) в критике формировалось представление о Грине как о писа-

¹ См.: Грин Н.Н. Воспоминания об А.Грине. Коктебель, 2005, стр. 67.

теле, творчество которого укладывается в рамки определенного направления – либо реализма, либо романтизма, то в современном литературоведении, как правило, исследуются пограничные формы, идущие от разных творческих методов (отсюда и определения “реалистический романтизм”, “фантастический реализм”, “психологический романтизм” и т.д.) (См. работы Н.Кобзевой, Т.Диковой, Т.Загвоздкиной). В последние годы творчество А.Грина начинает интенсивно включаться в мировой литературный процесс. В ряде работ (К.Пастен, Н.Майер) осуществляется попытка выявить параллели между произведениями А.Грина и западноевропейским экзистенциализмом. Важное место среди современных исследований занимает книга В.Ковского “Реалисты и романтики”, в которой автор исследует своеобразие художественного мира писателя, специфику его творческого метода и поэтики, проблему гриновского психологизма; стремится вписать творчество А.Грина в культурный контекст современной ему эпохи. Несомненно, малая проза художника (в частности, психологические рассказы и новеллы 20-х годов) является недостаточно исследованной и требует дальнейшего изучения.

В основе многих рассказов и новелл А.Грина – психологические этюды, зарисовки, наблюдения, эксперименты, в которых главной сферой анализа являются подсознательные состояния и настроения, сложный и таинственный аппарат человеческих восприятий, интеллектуальная рефлексия. Часто ярко выраженные психологические состояния в рассказах А.Грина перерастают в широкую метафору, позволяющую писателю, с одной стороны, привлечь внимание к необъятному романтическому миру человеческого воображения, с другой – показать вполне реальный, драматический поиск человеком самого себя... Примечательно, что, говоря о своих литературных пристрастиях, А.Грин уже в 1910 году подчеркивал: “Произведения мои, художественные по существу, содержат общие психологические концепции и символы”². Как видим, автору на заре своей деятельности удалось не только емко охарактеризовать, но и предугадать основную направленность своего зрелого творчества...

Тонким психологизмом пронизаны события, описанные в одном из известных гриновских рассказов “Крысолов”. На мрачном фоне Петрограда 1920-го года (автором показаны голод, разруха, неустроенность человеческого бытия) разворачивается мистический по своей сути сюжет. Чувство страха,

² См.: **Ковский В.** Реалисты и романтики. Москва, 1990, стр. 272.

отчаяния, безысходности переживает главный герой рассказа, бездомный молодой человек, нашедший себе временный приют от хаоса реального мира в огромном пустующем здании Банка на Мойке. Параллельная реальность также представляла собой бесконечно дисгармоничный мир с разбитыми кассами, перекошенными столами, разбросанными повсюду бумагами, мир покинутый и всеми забытый. Однако именно эта сюрреалистическая картина, где земное, обыденное соседствует с мистическим, астральным, становится источником новых, неожиданных эмоций, парадоксальных выводов. Герою приходится констатировать, что “соблазн разрушения начинает звучать” для него “поэтическими наитиями”. (“Передо мной развертывался своеобразный пейзаж, местность, даже страна”)³. Используя фантазмагорические формы, абсурдные ситуации, непредсказуемые последствия, с помощью странного сопоставления событий автор стремится разорвать обыденный ход жизненных событий и, фактически, запечатлеть сам путь духовного возвышения. Ведь живя в окружении людей, в первой части рассказа герой показан одиноким, отринутым от общества, но страстно ищущим даже искорки духовного соучастия в его судьбе. Испытывая чувство отчуждения от общества, не ощущая и не слыша самого себя, герой, можно сказать, и в реальной жизни и аллегорически проваливается в пустоту, в которой живут и действуют остатки его воли и душевных импульсов (примечательна история с мистическим звонком к незнакомке при наличии оборванных проводов и т.д.)

В результате экспериментирования с душой А.Грин аллегорически показывает путь освобождения от бессознательного и прихода к самому себе. На всех этапах этого нелегкого пути ощущается предчувствие взлета, подъема к чему-то высшему, важному. Все эти страдания и переживания герою были жизненно необходимы, чтобы не задохнуться в противоречиях, не погибнуть в сомнениях и отчаянии. Интересно, что именно полумистический герой, Крысолов, пытается рассказать запутавшемуся молодому человеку о реальной жизни; он зачитывает отрывок из книги несуществующего автора Эрта Эртруса, где говорилось о “коварных и мрачных существах, давно завладевших человеческими умами” – о крысах, которым “благоприятствует мор, голод, война, наводнение и нашествие”. “Они крадут и продают с пользой, удивительной для честного труженика, и обманывают блеском своих надежд и мягкостью

³ Грин А. Крысолов // А.Грин. Психологические новеллы. Москва, 1988, стр. 250.

речи. Они убивают и жгут, мошенничают и подстерегают. Золото и серебро их любимейшая добыча: вы были окружены крысами”, – говорилось в книге⁴. В финале рассказа мы видим новое рождение человека. Очнувшись от сна (бреда), герой остро ощущает потребность в искреннем, человеческом общении, в чистой любви, в духовной поддержке. А.Грин дарит надежду: с новым, зародившимся чувством душа героя может спастись, воскреснуть, достигнув новой гармонии.

Наблюдения героя в рассказе всецело направлены на деятельность его собственного ума. Обращаясь к своеобразному психологическому эксперименту, автор выявляет потенциальные возможности человеческого духа, пытается разгадать загадки разума, распутать “паутину сознания”. В произведении ярко вырисовываются черты экзистенциальной традиции с ее идеей преодоления личностью собственной сущности и значительным акцентом на глубине эмоциональных переживаний. Герой А.Грина, оказавшись в фантастических обстоятельствах, в любой момент грозящих ему гибелью, на всех этапах этого странного приключения стремится оставаться самим собой. На пути своеобразного самопостижения автором фиксируется непрерывный, беспорядочный поток мыслей героя: перед читателем проходит сливающаяся, многообразная последовательность образов, идей, чувств, воспоминаний, мыслей. Все это, во многом, – результат высокой психической мобилизации организма, обостренного внимания, восприятия. Причудлива игра подсознания – с ее дьявольскими видениями, мистическими предчувствиями, чудесами телепатии и воображения.

В рассказах А.Грина-психолога благодаря неожиданным сюжетным коллизиям, необычным обстоятельствам, загадочным происшествиям приоткрываются разные грани человеческой природы, зачастую обостренный драматизм повествования подчеркивает интеллектуальные возможности героев.

Многие герои Грина, стремясь к духовной гармонии, пытаются проникнуть в суть разных психологических актов сознания: их интересуют все человеческие чувства (удивление, колебание, уверенность, неуверенность и т.д.) Часто ими движет безудержное желание преодолеть противоречия в своих суждениях и все систематизировать. Ярко выписан психологический портрет журналиста Галиена Марка (рассказ “Возвращенный ад”), терзаемого “болез-

⁴ Там же, стр. 274.

ненным напряжением мысли, порожденной нестерпимой насыщенностью и остротой переживаний современного человека”. Жизнь журналиста далека от “механического существования”: человеческая активность заставляет его остро переживать как “далекие, незначительные, так и колоссальные события”. Сознание героя изнурено непосильной работой. А.Грин пишет: “Наука, искусство, преступность, промышленность, любовь, общественность, крайне утончив и изошрив формы своих явлений, ринулись неисчислимой армией фактов на осаду рассудка, обложив духовный горизонт тучами”⁵. Неиндифферентная позиция гражданина и просто человека требует от Галиена Марка максимальной физической и психической активности.

Отметим, что концептуально значимым в творчестве писателя является представление о “живой” и “мертвой” жизни. Быстрота, легкость, бессодержательность бытия автором противопоставляются мучительным размышлениям, самоанализу, волевым проявлениям, поиску возможностей созидательного творчества. По убеждению А.Грина, “истинное существование человека” открывается только активно постигающему мир разуму. А.Грин каждый раз тонко схватывает то, что возбуждает, волнует, потрясает по-настоящему жизнедеятельного человека. Грин показывает мучительный выбор активного героя, его стремление постичь феномен “свободы духа”, “свободы выбора”, ощущая при этом ответственность перед всем человечеством.

Повествование А.Грина–психолога насыщено загадками. Так, в рассказе “Возвращенный ад” читателю остается неясным: является ли трансформация личности героя результатом психологического эксперимента автора (ведь журналист в завязке рассказа мечтает о безмятежном “бестолковом” существовании, не отягощенном драматизмом прошлого и настоящего), или же она является результатом случайных совпадений, неожиданного “наложения обстоятельств”. В финале рассказа провозглашается ценность богатого, насыщенного внутреннего мира с широким диапазоном “умозрительных и чувствительных впечатлений”, и все это для героя Грина – Галиена Марка – “возвращенный ад”, столь необходимый для его естественного, полнокровного существования.

В изображении психологических состояний у А.Грина в основном преобладает “крупный план”; его герои, как правило, показаны в сложном пе-

⁵ Там же, стр. 334.

реживании кризиса: тревога, отчаяние, повышенная эмоциональная возбудимость, разочарование, распад личности – все это остро воздействует на читателя, побуждая его к напряженной духовной работе. К тому же А.Грин был убежден: обыденное существование чревато загадками и катастрофами, а сам читатель, кем бы он ни был, может в любой момент стать героем удивительной истории.

Наблюдая за поведением человека в экстремальных условиях (рассказы “Огонь и вода”, “Загадка предвиденной смерти”), автор–психолог фиксирует свое внимание на разных проявлениях человеческого сознания. Поражает натурализм в описании переживаний Леона Штриха, героя рассказа “Огонь и вода”, – сильного человека, выступившего против беспредела диктатора власти. За активную гражданскую позицию он оказывается удаленным от родного дома, молодой жены и детей. Автор показывает, как тяжелая эмоциональная травма, сильнейшее потрясение – известие о пожаре и гибели его родных способствует фантастической мобилизации всех ресурсов организма, и прежде всего, физических. В состоянии дикого возбуждения Леон Штрих за короткое время преодолевает немислимо огромное расстояние и застаёт последний вздох любимой жены. Герой сходит с ума... Остается неизвестным: мог ли Леон Штрих за невероятно короткий срок домчаться до города или вся финальная сцена – лишь бред, галлюцинация пораженного горем рассудка. Рассказ в целом уподобляется метафоре человеческого отчаяния и одиночества... Очевидно: скептицизм, рационализм, бытовой цинизм – не могут являться ключом к прочтению сложно нюансированных психологических рассказов А.Грина.

В “Загадке предвиденной смерти” показаны муки, которые испытывает осужденный в ожидании исполнения приговора. Автор достаточно откровенен в своей обращенности к читательским эмоциям. Грин внимательно наблюдает за поведением заключенного, за малейшими проявлениями его психики. Автор фиксируются все его ощущения: чувства тревоги, страха; навязчивые мысли о топоре и смерти. Как видим, повышенная эмоциональная возбудимость беспрестанно рождает в сознании заключенного картину казни с “мучительной остановкой сердца, спазмой дыхательных путей, судорожным,

страшным глотком в момент удара, ощущением взрыва мозга, параличом отделенных от головы, но чувствуемых еще некоторое время конечностей...”⁶.

Писатель выявляет скрытый от человеческого взгляда пласт действительности. Рассказ ярко демонстрирует стремление А.Грина к правдоподобию деталей, к перенесению научных методов наблюдения и анализа в область художественного творчества. Очевидно: автор опирался на изучение клинических отчетов, медицинских трудов. Казнь отменяется, но голова несчастного Эбергайля все же падает с эшафота. “Очевидность часто говорит то, что хотят от нее слышать... А Эбергайль – был великий стигматик”, – заключает автор⁷. Отметим, что стигматизм в науке связывается с психологическим заболеванием, в основе которого – внушение и самовнушение (стигмы – самопроизвольно кровоточащие на теле раны). Воображаемые же страдания часто действуют столь сильно, что могут отразиться на работе внутренних органов...⁸. В рассказе автор вновь ставит вопросы о непознаваемости тайн души человека, о безграничной ее бездне.

В рассказе “Пропавшее солнце” внимание автора приковано к антигуманному, шокирующему психологическому эксперименту. Перед читателем разворачивается драматичнейшая история жизни несчастного ребенка, оказавшегося сначала в приюте, а затем ставшего “игрушкой в руках страшного и злобного богача – “мистификатора” Авеля Хоггея. “Злодейства” этого человека были “безмерными и утонченными”, – читаем у А.Грина⁹. В основе его опытов, экспериментов, своеобразных игр лежало желание причинить своей жертве как можно больше боли и страдания. До четырнадцати лет мальчика содержали в искусственных условиях, в помещении, куда не проникало ни одного солнечного луча. Когда ребенку исполнилось четырнадцать, страшный экспериментатор решил открыть нежному юношескому сердцу совершенно иной мир – мир, освещенный солнцем, мир, который и есть жизнь и счастье. “Увидев необычайное зрелище, Роберт Эльгрев почувствовал, что пол исчез и он валится в сверкающую зеленую пропасть с голубым дном...” “Обычное зрелище дня – солнечное пространство – было для него потрясением, превос-

⁶ Там же, стр. 175.

⁷ Там же, стр. 181.

⁸ См.: Словарь основных психологических понятий // www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/nemow.

⁹ Грин А. Крысолов, стр. 361.

ходящим все человеческие слова”¹⁰. Несмотря на ожидания извращенных вседозволенностью богачей, ребенок остался жив, а эксперимент, обещавший быть зрелищным (с неминуемой сценой смерти), был объявлен неудавшимся.

Автор пристально наблюдает за проявлениями детской психики в состоянии стресса; выразительно показывает весь спектр психологических состояний, охвативших героя: напряжение, волнение, безумную остроту чувств, страх, отчаяние. Можно лишь предполагать, какими тяжкими психологическими последствиями отзовется этот чудовищный эксперимент во взрослой жизни несчастного Роберта Эльгрева. Важна в повествовании и этическая сторона. Наблюдая за психологией жертвы (ребенка, оказавшегося в определенных обстоятельствах, в конкретной роли), А.Грин пытается увидеть и понять: способен ли человек в условиях жесточайшего террора выжить физически, не сломаться духовно; может ли он чистотой своей души и помыслов, лучшими сторонами своей человеческой природы противостоять социальной несправедливости, бесчеловечным теориям и экспериментам.

Интерес А.Грина – писателя к психологии и психиатрии очевиден. Мысль автора проникает в скрытые, неопознанные пласты человеческих эмоций, загадки психологии личности. Говоря о рассказах писателя 20-х годов, В.Ковский замечал: “Перед нами – экспериментальное поле наблюдений литератора, самой своей профессией поставленного перед необходимостью заглядывать в “тайное тайных” человека и не просто сотрудничающего здесь с наукой, но нередко и помогающего ей в решении ее собственных задач”¹¹. В жанре “загадочных историй” описано у А.Грина множество необъяснимых человеческих реакций, темных предчувствий, эмоциональных тяготений. Рассказ “Мат в три хода” – о необъяснимом психологическом феномене: интуитивном прогнозировании наступления смерти. Все произведение основано на рассказе – полубреде пациента, находящегося на приеме у психиатра и обеспокоенного новой, открывшейся для него истиной о себе, жизни, смерти, вселенной. Так, на первый план повествования автором выдвинуто “инобытие”, “ино-состояние” личности, “ино-форма” существования реальности. И эта параллельная реальность, как видим, существует по своим собственным,

¹⁰ Там же, стр. 363.

¹¹ **Ковский В.** Реалисты и романтики: из творческого опыта русской советской классики. Москва, 1990, стр. 260.

внутренним законам. Пациента, например, по его уверению, в самый сложный, психологически напряженный для него момент могут спасти от смерти лишь определенные фразы, произнесенные друг за другом: “Лейпциг”, “Международный турнир”, “Мат в три хода”. Эти магические формулы, знаки, “словесные оболочки” становятся специфическим оружием в борьбе с душевной болью, сильными эмоциями, болезненными предчувствиями, разными маниями, навязчивыми мыслями. Перед нами своеобразная попытка выразить что-то очень важное, донести до кого-то (возможно, и до самого себя) те чувства, которые не облакаются в логические мысли. Однако несмотря ни на что, весь рассказ “чудика” – это своеобразный, не очень стандартный способ говорить, рассказывать о себе...

Исследуя разные психологические состояния, “загадки поведения”, А.Грин особое внимание уделяет “скрытым” мотивам необычных, неординарных поступков; пытается понять, какое воздействие на героев могли иметь мимолетные впечатления; размышляет над процессом самоанализа, самонаблюдения; следит за борьбой в человеке разных внутренних влечений; психическими проявлениями бессознательного.

Рассказ “Лошадиная голова” ярко отражает путь самопознания и одновременно самоуничтожения Фицроя – человека, ставшего жертвой демонических подсознательных сил, собственных неконтролируемых эмоций. Из-за неразделенной любви герой полностью теряет волевой контроль над собой, что впоследствии становится причиной неспланированного самоубийства. Одна из драматических сцен рассказа – признание героем своего отношения к трагически погибшему (сорвавшемуся со скалы) мужу своей возлюбленной Конхиты, бывшему приятелю Доббу. (“Смерть Добба – мое черное счастье, его цвет будет носить Конхита. Я зол, зол, зол; его смерть сладка”, – со всей очевидностью признает он¹²). Однако злость, зависть, ненависть и презрение к сопернику заставляют Фицроя болезненно ощутить свой собственный позор, чувство вины, безграничное одиночество. Психологическая травма приводит героя к неосознанному, подсознательному желанию растоптать, уничтожить, наказать самого себя. Встав на опасную тропу, в страстном желании в точности представить последние минуты жизни Добба, Фицрой признается самому себе, что “никто никогда не постигнет той смеси презрения и вызова

¹² Грин А. Крысолов, стр. 374.

по отношению к самому себе”, которые поглотили всю его душу. Причиняя себе необыкновенную душевную боль, герой хладнокровно, со зловещим спокойствием проходит все те же круги ада, которые привели Добба к гибели... Продолжая нацарапанные на скале неоконченные строки любовного признания Добба, Фицрой ставит финальную точку в своей собственной истории любви... “Думаю и люблю. И умираю – потому что носил зло”, – пишет он¹³. Герой А.Грина до последней минуты остается верен своей натуре, своим переживаниям, но он непоправимо одинок, далек от людей...

В рассказах А.Грина, как правило, преобладает атмосфера поиска того стержня, который позволит человеку выстоять в “деформированной”, “сломанной реальности”. В своих произведениях автор часто показывает борьбу между чувством и мыслью, между твердыми моральными установками и инстинктивными, подсознательными влечениями. В “Искателе приключений” А.Грин обращается к психологическому анализу работы творческого сознания. Герой рассказа – талантливый художник Доггер сумел отважно заглянуть в самого себя, в глубины собственного подсознания. С ужасом он выявляет “темные стороны” своего существования, то неизведанное и таинственное, что беспрестанно тревожит его ум и воображение и, в конце концов, заставляет окончательно отказаться от занятий живописью. Как в гоголевском художнике, во многих гофмановских творцах, в образе Доггера соединились две судьбы, два таланта с различным мировоззрением, с противоположным пониманием задач искусства. Творческая личность оказывается раздираема вопросами: можно ли слишком приближаться к реальности, позволительно ли творцу “уступить темным инстинктам души”, толкающим его к “злему искусству?” Доггер, впусив зло в этот мир, стал отчаянно бороться с ним. Очевидно: художник никогда не забывал об ответственности, которую должен нести автор за свое творение, и в глубине души был убежден, что истинный шедевр должен возвышать душу, озарять ее светом и радостью.

В повествовании видное место занимает фигура путешественника Аммона Кута – человека, находящегося в потенциальном поиске “пути к себе”. “Путь же к себе” для него простирается через многочисленные страны, в которых он побывал; героя отличает потребность к духовной гармонии, желание систематизировать свои порой противоречивые суждения.

¹³ Там же, стр. 379.

Таким образом, в психологических рассказах и новеллах А.Грина автором исследуются разные проявления человеческой психики, акцент ставится на внутреннем мире личности, на отражении живой жизни с ее инстинктивными, подсознательными началами. Рассказы и новеллы А.Грина 1920-х годов пронизаны особой смысловой атмосферой пребывания человека в “катастрофическом мире” и поиска идеального духовного начала.

Ա. ԳՐԻՆԸ՝ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՎԱՐՊԵՏ

ՅՈՒԼՅԱ ԽՈՋՈՅԱՆ, ԱՇԽԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ա. Գրինի անկրկնելի գեղարվեստական աշխարհը, որը ներդաշնակորեն ներառում է իրատեսական և ռոմանտիկ միտումներ, նույր հոգեբանություն և արտահայտված դիդակտիկա, և XXI դարում իրեն է գամում գիտական և ընթերցողական հետաքրքրությունը: Հոդվածում ցուցադրված է, որ Ա. Գրինի բազմաթիվ պատմվածքներում և նովելների հիմքում ընկած են հոգեբանական էտյուդներ, ուրվագծեր, դիտումներ, էքսպերիմենտներ, որտեղ վերլուծության գլխավոր ոլորտն են ենթագիտակցական վիճակներն ու տրամադրությունները, մարդկային ընկալումների բարդ և տարօրինակ ապարատը:

Բանալի բառեր – իրատեսական և ռոմանտիկ միտումներ, գրինյան հոգեբանություն, հոգեբանական փորձաքննություն, էմոցիաներ, ինքնավերլուծություն:

A. GRIN – MASTER OF PSYCHOLOGICAL PROSE

YULIA KHOJOYAN, ASHKHEN ATANESYAN

The unique art world of A. Grin, which harmoniously incorporates both realistic and romantic tendencies, subtle psychology and marked didactics attract the interest of both scientists and readers of the XXI century toward itself. This article elucidates that the basis of many of the stories and novels of A. Grin is psychological etudes, sketches, observations and experiments in which the subconscious states and moods, complicated and mysterious apparatus of human perceptions are the main areas of study.

Key words – realistic and romantic tendencies, Grin’s psychology, psychological experiments, emotions, self-analysis.

**ԵՐԿԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՏԸ Ռ.Լ. ՍԹԻՎԵՆՍՈՆԻ ԵՎ
Խ. Լ. ԲՈՐԽԵՍԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՐՅԱՆ

Արգենտինացի արձակագիր Խորխե Լուիս Բորխեսն իր մի շարք գործերում անդրադառնում է XIX դարի շոտլանդացի նեոռոմանտիկ գրող Ռոբերտ Լուիս Սթիվենսոնին: Բորխեսը հատկապես առանձնացնում է մարդու երկակի բնույթին վերաբերող թեման: Եվ դա ոչ թե պարզապես հոգեբանական երևույթ է, այլ հենց անձի ֆիզիկական պառակտում, բաժանում: Սթիվենսոնի ստեղծագործություններում գլխավոր դերում է հայտնվում չարագործ «ես»-ը: Բորխեսյան երկնմանակները չեն հակադրվում միմյանց, դրանք միախառնվում են և այդպիսով ճանաչում մեկը մյուսին: Այսպիսով, Բորխեսը երկու «ես»-երի միջև պարտադիր պայքար չի ենթադրում, իսկ ահա Սթիվենսոնի փոքր արձակում երկատումը հենց դառնում է չարագործ «ես»-ի, երկնմանակի բաժանում, առանձնացում անձից:

Քանալի բաներ – հայելիներ, անձի երկատում, լաբիրինթոս, կերպարանափոխություն, երկակի բնույթ, չարիք, քիմիական բաղադրություն, ինքնություն, alter ego:

Մարդը, ով Վոլտերի ուզածի պես պարտեզ է մշակում:

Նա, ով շնորհակալ է, որ երկրագնդում երաժշտություն կա...

Նա, ով քնած կենդանու է շոյում:

Նա, ով արդարացնում է կամ ուզում է արդարացնել իրեն պատճառած
չարիքը:

Նա, ով շնորհակալ է, որ երկրագնդում Սթիվենսոն կա:

Նա, ով նախընտրում է, որ մյուսներն իրավացի լինեն:

Այս մարդիկ, իրար չճանաչելով, փրկում են աշխարհը:

Խ. Լ. Բորխես

Մեծանուն արգենտինացի գրող Խորխե Լուիս Բորխեսի տարբեր ստեղծագործություններում հիշատակվում է XIX դարի շոտլանդացի նեոռոմանտիկ Ռոբերտ Լուիս Սթիվենսոնը, և Բորխեսը բազմաթիվ առիթներ է օգտագործում՝ արտահայտելու Սթիվենսոնի հանդեպ իր խորունկ հիացմունքը թե՛ էսսեներում, թե՛ պատմվածքներում: «Ես խոստովանեցի, որ Սթիվենսոնի և Հյունի հանդեպ սիրո շնորհիվ եմ սիրում Շոտլանդիան»¹: Շոտլանդացի

¹ **Borges J. L.** “ObrasCompletas”, T. III. Barcelona, 1999, p. 70.

գրողի արձակին նվիրված էսսեում Բորխեսը պատմում է, որ մի անձանոթ իրեն շնորհակալություն է հայտնել Սթիվենսոնի արձակին ծանոթացրած լինելու համար, և ինքը մեծ բավականություն է ստացել:

Սթիվենսոնի ստեղծագործական գործունեությանն անդրադառնալիս Բորխեսը հատուկ տեղ է հատկացրել անձի երկատման թեմային. «Երկրորդ «ես»-ի գաղափարը, որ ապակու և ջրի հայելիները ներշնչել են սերունդներին, միշտ մտահոգել է Սթիվենսոնին»²: Հարկ է նշել, որ հայելիների միջոցով ինչպես անձի, այնպես էլ աշխարհի երկատման այլաբանությունը կենտրոնական է նաև Բորխեսի ստեղծագործության մեջ: «Յոթ երեկո» շարքի «Մղձավանջ» էսսեում նա գրում է. «Երկու հանդիպակաց հայելիները բավական են լաբիրինթոս կառուցելու համար»³: Ըստ Բորխեսի՝ երազում տեսած հայելին կրկնակի պատրանք է դառնում, քանի որ այն ստեղծում է առարկայական աշխարհի տեսողական կրկնօրինակը՝ միաժամանակ խորհրդանշելով երկրորդ «ես»-ի գոյությունը: Սթիվենսոնն էլ ասում էր, որ երբ ինքը քնում է, ոգիներն իրեն ներշնչում են ֆանտաստիկ պատմություններ. «օրինակ, բժիշկ Ջեքիլի զարմանահրաշ կերպարանափոխությունը սատանայական Հայդի»⁴:

Անհրաժեշտ է նշել, որ երկատում հասկացությունն ինչպես Սթիվենսոնի, այնպես էլ Բորխեսի պարագայում արտահայտված է ոչ թե սուկ հոգեկան պառակտմամբ, այլ անձի ամբողջական, այդ թվում նաև ֆիզիկական երկփեղկմամբ: Սթիվենսոնի ստեղծագործության մեջ մասնավորապես կենտրոնական է մարդու չարագործ «ես»-ի առանձնացումը, որը հաճախ հանդես է գալիս սատանայի, դևի տեսքով («Մարկիեյմ», «Նզովյալ Ջենեթը»): «Մարկիեյմ» պատմվածքի մեջ սպանություն գործած հերոսն ի դեմս սատանայի ինքն իրեն է ճանաչում. «...և մերթ թվում էր իրեն, թե ճանաչում է նրան, մերթ նմանեցնում էր ինքն իրեն»⁵: Այս պատմվածքը նվիրված է մարդկային բնույթի մեջ ապրող, մարդուն հավասարապես ձգող չարի և բարու մշտնջենական պայքարին, որի տրամաբանական շարունակությունն է համարվում 1886 թվականին լույս տեսած «Դոկտոր Ջեքիլի և միստեր Հայդի տարօրինակ պատմությունը» ֆանտաստիկ պատմվածքը, որտեղ նկարագրված է բժիշկ Ջեքիլի կերպարանափոխությունը: Ինչպես և Մարկիեյմը, այնպես էլ բժիշկ Ջեքիլը

² Նույն տեղում, էջ 505:

³ **Խորխե Լուիս Բորխես**, «Մղձավանջ», Երևան, «Գարուն», 9-10, 2009, էջ 32:

⁴ **Борхес Х. Л.** Собр. Соч в 4-х томах. Санкт-Петербург, 2001, стр. 139.

⁵ **Стивенсон Р.Л.** Собрание сочинений в пяти томах. Москва, 1981, стр. 345.

փորձում է գտնել տարբերակներ՝ իր հոգում անընդհատ պայքարի մեջ գտնվող բարի և չար կողմերը տարանջատելու համար:

Ռիչարդ Սթերնին տված հարցազրույցում Բորխեսը գրում է. «Կարծում եմ՝ մենք բոլորս ինչ-որ իմաստով դոկտոր Ջեքիլ ենք և միստեր Հայդ, որոշ չափով Ջեքիլ, որոշ չափով՝ Հայդ, և այդ ընթացքում էլի շատ ուրիշներ»⁶: Այդ կերպարների փոխհարաբերություններին է նվիրված Բորխեսի «Դոկտոր Ջեքիլի և Էդվարդ Հայդի հերթական կերպարանափոխությունը» հոդվածը, որտեղ նա քննադատում է Սթիվենսոնի ստեղծագործության հիման վրա նկարահանված «Մարդն ու գազանը» ֆիլմը, որի ռեժիսորն է Ռոբերտ Ֆլեմինգը: Ուշագրավ է Սթիվենսոնի պատմվածքի արդիական բնույթը. դրանում արձարձված նյութը ծնունդ է տվել ավելի քան քսան էկրանավորման: Հոդվածում Բորխեսը նշում է, որ ի տարբերություն Սթիվենսոնի ստեղծագործության բարոյապես երկատված մարդու՝ ֆիլմում անառարկելի չարագործ Հայդի կողքին հանդես է գալիս անարատ Ջեքիլը, ինչն աղավաղում է շտուանդացի հեղինակի դուալիստական մտահղացումը: Եթե ֆիլմի Հայդը հերոսից գատված չարիքի մարմնացումն է, ապա գրքում Ջեքիլը չարագործի կերպար է ընդունում՝ իր մեջ արմատացած ցանկություններին ազատ հագուրդ տալու և իր կրքերին համապատասխանող սանձարձակ կյանքը թաքցնելու համար: Բացի դրանից, Սթիվենսոնի ստեղծագործության մեջ հերոսների նույնության բացահայտումը վերջում է տեղի ունենում, մինչդեռ ֆիլմում հենց առաջին կերպարանափոխության պահից գաղտնիքը բացվում է:

Ներքին պառակտումն ընդգծելու միջոցով մարդու ամբողջական նկարագիր ստանալու ձգտումը բնորոշ է Սթիվենսոնին՝ իբրև նեոռոմանտիզմի ներկայացուցիչ: Վերջինս, հակադրվելով ռոմանտիզմին հատուկ լավ և վատ կերպարների միանշանակ տարանջատմանը, նպատակ ուներ ցույց տալու, որ նույն մարդու մեջ բազմաթիվ «ես»-եր են համատեղվում, ընդ որում՝ դրանք ոչ միայն տարբեր են, այլև իրարամերժ: Սակայն Սթիվենսոնի նկարագրած երկատումը կերպարին վերլուծելու միջոց է, ոչ թե հոգեբանական շեղման բնութագիր: Անձի հոգեբանական երկատման դեպքում ի հայտ են գալիս հետևյալ առանձնահատկությունները.

1. «կերպարանափոխությունը» տեղի է ունենում առանց արտաքին խթանիչների ազդեցության, մինչդեռ Սթիվենսոնի հերոսը միայն հատուկ քիմիական բաղադրության միջոցով է կարողանում փոխել կերպարանքը. «...»

⁶ Borges J. L. "Conversations". USA, 1998, p. 3.

և ահա մի անիծված գիշեր ես խառնեցի տարրերը, տեսա՝ ինչպես դրանք բաժակի մեջ եռացին և սկսեցին ծխել, իսկ երբ ռեակցիան ավարտվեց, ես, մոռանալով վախի մասին, խմեցի ամբողջ նյութը»⁷:

2. Հիվանդ մարդը չի գիտակցում երկվորյակ «ես»-ի նույնությունն իր հետ, մինչդեռ Ջեքիլը նույնիսկ Հայդի կերպարանքով շարունակում է գիտակցել իր ինքնությունը. «Տեսնելով հայելու մեջ այդ այլանդակ արձանը՝ ես ոչ թե զզվանք ապրեցի, այլ անակնկալ ուրախություն: Չէ՞ որ դա նույնպես ես էի»⁸:

Իր հերթին Բորխեսը սթիվենսոնյան թեման շարունակում ու զարգացնում է «Մյուսը», «1983 թվի օգոստոսի 25-ը» և «Բորխեսը և ես» պատմվածքներում: Երեք պատմվածքի ընդհանրությունն այն է, որ դրանք գրված են առաջին դեմքով, այսինքն՝ միտում ունեն ներկայացնելու Խորխե Լուիս Բորխես մարդու մեջ համագոյակցող տարբեր «ես»-երը, ընդ որում՝ եթե առաջին երկու պատմվածքում Բորխեսներին առանձնացնում է տարիքային տարբերությունը, ապա երրորդ պատմվածքը զատում է Բորխես-երևույթին՝ համաշխարհային համբավ վայելող գրողին այն մարդուց, որպիսին ճանաչում էր իրեն ինքը՝ Բորխեսը: Անկախ երկատման չափանիշից՝ Բորխեսի alter ego-ները ոչ այնքան հակադրվում են, որքան շփոթվում մեկը մյուսի հետ և միմյանց մեջ ճանաչում իրենց: Դրանք ոչ թե իրարամերժ են, այլ միևնույն անձի տարբեր դրսևորումներն են: Բորխեսը ցույց է տալիս, որ մարդկային էությունն այնքան հարուստ է ու բազմաբովանդակ, որ չի կարող սահմանափակվել պարտադիր միմյանց հակադրվող երկու սպեկտրով: Հիշատակելով Հերակլիտեսի իր գերադասած մեջբերումը («նույն գետը երկու անգամ մտնել չի կարելի»)՝ Բորխեսն ընդգծում է, որ մարդը փոխվում է յուրաքանչյուր վայրկյան, և ժամանակի որոշակի հատված ապրելուց հետո նա նույնը չէ, ինչ այդ հատվածից առաջ էր, քանի որ յուրաքանչյուր պահ անկրկնելի է⁹:

Բորխեսը Սթիվենսոնի և իր օրինակով արտահայտում է, որ մարդկային հոգու հակադիր դրսևորումները համատեղելի են և իրար չեն բացառում: Սակայն եթե Սթիվենսոնի արձակում երկատումը ենթադրում է չարիքի խտացման առանձնացումը դուալիստական անձնավորությունից, ապա Բորխեսն առհասարակ անտեսում է բնավորության որևէ կողմի բացարձակացումը. նրա alter ego-ները նման են, հարազատ և բնավ իրար չեն ընդդիմանում:

⁷ Стивенсон Р.Л. Собрание сочинений в пяти томах, стр. 446.

⁸ Նույն տեղում:

⁹ Խորխե Լուիս Բորխես, «Պոեզիա», Երևան, «Գարուն», 1-2, 2010, էջ 16:

Սթիվենսոնը խաղում է ժամանակի հետ՝ մերթ կանգնեցնելով այն, մերթ ստիպելով վազել անողոք արագությամբ, երկակի մուտքերով, հայելիներով՝ ստեղծելով տարածական լաբիրինթոսներ, որոնք էլ ապահովում են հիմնական՝ երկվության թեման գրողի արձակում, ինչի շնորհիվ Սթիվենսոնը դարձել է մշակութաբան Բորխեսի սիրելի գրողը, իսկ նրա ստեղծագործությունը՝ ժամանակակից հոգեբանության գրական ուղենիշներից մեկը:

КОНЦЕПЦИЯ РАЗДВОЕНИЯ ЛИЧНОСТИ В РАССКАЗАХ Р.Л. СТИВЕНСОНА И Х.Л. БОРХЕСА

АНАИТ АКОПЯН

Во многих своих работах аргентинский прозаик Хорхе Луис Борхес ссылается на шотландского неоромантического писателя 19-го века Роберта Луиса Стивенсона. Борхес особенно выделяет тему двойственного человека. И это не просто психологическое, а именно физическое расщепление личности. В работах Стивенсона на главный план выходит злодей alter ego. Борхесовские двойники не противостоят один другому, они смешиваются и так познают себя в друг друге. Таким образом, Борхес не подразумевает обязательную борьбу с alter ego, а в малой прозе Стивенсона расщепление предполагает отделение злого двойника от личности.

Ключевые слова – зеркала, раздвоение личности, лабиринт, метаморфоза, дуалистический, зло, химический состав, личность, alter ego.

THE DIVIDED SELF IN THE SHORT STORIES OF R.L. STEVENSON AND J.L. BORGES

АНАИТ НАКОБЯН

The Argentine writer Jorge Luis Borges in a few of his works refers to Robert Louis Stevenson, the 19th century Scottish neoromantic author. Speaking about Stevenson's works Borges specially focuses on the phenomenon of the divided self, which he regards not as a mere psychological curiosity but as in reality the physical split of the self. In Stevenson's works the main hero is the villain 'self' or 'alter ego' while in the writings of Borges, the alter egos are not in

conflict. They bond with each other and recognize one another. Consequently, Borges does not presume an imposed struggle between the alter egos while in Stevenson's works the splitting itself of the 'evil' self becomes the alter ego and thus the breakup from the person.

Key words – mirrors, split of personality, maze, metamorphosis, dualistic, evil, chemical composition, identity, alter ego.

ՍԻՓԱՆԱ ՔԱՋԵՐԸ ԸՆԴԴԵՄ ՆԱՀԱՆՋԻ

ԳՈՒՄՆԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոգվածը նվիրված է լիբանանահայ գրող Սիմոն Սիմոնյանի «Սիփանայ քաջեր» պատմվածաշարին, որի հերոսները եղեռնազարկ տարագիր հայեր են՝ հայրենիքի կարոտի ցավով տառապող մարդիկ: Հոգվածում անդրադարձել ենք «Սիփանայ քաջերի» հիմնական թեմաներին՝ հայրենադարձությանը, դրա հակառակ երևույթներին՝ նահանջին և օտարացմանը: «Սիփանայ քաջերում» Սիմոն Սիմոնյանը կերտել է ոչ միայն իսկական հայրենասեր հերոսների, այլև նահանջողների կերպարներ, որոնք, սակայն, ավելի տեսանելի են դարձնում պատմվածաշարի հիմնական ասելիքը՝ պայքարի, արմատներն ամեն գնով պահպանելու, հայրենիքն ու նրա գաղափարը չկորցնելու կոչը:

Քանայի բառեր – Սիփան լեռ, ներգաղթ, հույս, պայքար, վերադարձ արմատներին, կոչ, օտարացում, անորոշություն, կարոտ:

Սիյուռքահայ նշանավոր գրող, բանասեր, հրատարակիչ ու խմբագիր Սիմոն Սիմոնյանի (1914-1986) ստեղծագործությունները քաղաքական հանգամանքների բերումով այնքան էլ ծանոթ չէին խորհրդահայ, ժառանգաբար նաև՝ նորանկախ Հայաստանի ընթերցողին: Մինչդեռ այդ ստեղծագործություններն իրավամբ ունեն ինչպես զուտ գեղարվեստական, այնպես էլ ճանաչողական և պատմական մեծ արժեք: Օտար երկրներում ապաստան գտած, եղեռնից մազապուրծ հայն է Սիմոնյանի գրականության հիմնական առանցքն ու թեման:

1967 թ. «Սիփանայ քաջեր» խորագրով գրքում Սիմոնյանն ամփոփեց ու լույս ընծայեց տարբեր ժամանակներում գրած իր մի քանի պատմվածքներ և «Խմբապետ Ասլանին աղջիկը» վիպակը, իսկ 1972 - ին լույս ընծայած «Լեռ և ճակատագիր» գրքում գրողը «Սիփանայ քաջերն» առանձնացրեց իբրև պատմվածաշար՝ որոշ կրճատումներով և հավելումներով:

Ինչու՞ այս խորագիրը. գրքի սկզբում հեղինակը տվել է պատասխանը. «Հայ - քրտական ասանդութեան մը համաձայն Սիփանայ լեռան գագաթը կը բնակի Ֆալաքը (ճակատագիր): Ֆալաքին անարդարութիւններու դէմ կռուելու կոչուած են Սիփանայ քաջերը: Այս հատորի բոլոր գրութիւններուն հերոսները կը կռուին Ֆալաքին դէմ, որ անարդար եղաւ հայոց հանդէպ: Ուստի այս

գիրքին խորագիրը կրնար կոչուիլ Սիփանայ քաջեր»:¹ Եվ, իսկապես, Սիմոնյանը կերտում է իրական՝ դաժանորեն հալածված, սակայն երբեք իրենց մարդկային նկարագիրը, արժանապատվության ու բարոյականության բարձր զգացումը չկորցրած հերոսներ: Ըստ որում՝ այդ հերոսներն ապրում են խիստ տարբեր հանգամանքներում, պատկանում են սոցիալական միանգամայն տարբեր շերտերի, բայց նրանց մեծամասնությունը միավորվում է մեկ ընդհանուր հատկանիշով՝ հավատարմությամբ արյանն ու արմատներին:

Խորհրդային Հայաստան ներգաղթելու թեման շատ է արժարժվել սփյուռքահայ գրականության մեջ՝ սկսած 1920-ական թվականներից: Այն առանցքային խնդիր է դարձել նաև Սիմոնյանի մի շարք պատմվածքներում: «Սափրիչ Սարգիս, ներգաղթ եւ ածելի» պատմվածքի հերոսը՝ սափրիչ Սարգիսը, սրտի տրոփյունով, ինչպես հեղինակի մեկ այլ՝ «Սահմանային վեճ»² պատմվածքի հերոսները, հետևում է Հայրենական պատերազմի ընթացքին՝ մեծ հույսեր կապելով Ստալին «պապային» հետ, որ, ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանը վերադարձնելու խոստում էր տվել: Դժբախտաբար, համայն հայությունը խաբվելու էր ևս մեկ անգամ: Սիմոն Սիմոնյանի հերոսները, սակայն, Օվեն, Ավեն, սափրիչ Սարգիսը և մյուսները, դեռևս ապրում են երջանիկ անտեղյակության մեջ՝ փայփայելով կորսված հայրենիքի ազատագրման հույսը:

Սափրիչ Սարգիսը Սիմոնյանի կերտած այն կերպարներից է, ովքեր, թեև իրականում հասարակ արհեստավորներ, սակայն իրենց էությանբ իսկական մարտիկներ են՝ համառ ու անզիջում, և ովքեր ամեն ռուպե պայքարում են իրենց և իրենց զավակների ազգային նկարագիրը պահպանելու համար՝ սարսափելի դժբախտություն համարելով օտարամուտ ցանկացած տարրի ներմուծումը հայկական կենցաղ: Եվ այս ամենօրյա ու չընդհատվող, համառ ու ջլատիչ պայքարի մեջ նրանք տառապում են չհասկացված լինելուց, երբեմն հասնում ծայրահեղության, և իրականում ողբերգականը ծիծաղի շեշտեր է ստանում ակամա:

«Սափրիչ Սարգիս, ներգաղթ և ածելի» պատմվածքում զուգահեռվում են երկխոսության երկու շերտեր՝ կենցաղայինը և հայրենիքի կորստի, հերոսական, բայց ապարդյուն պայքարի, կարոտի թախիժն ու Խորհրդային Հայաստանում ինքնությունը գտնելու հույսը: Իսկ ներգաղթը նրանց համար

¹ Սիմոն Սիմոնյան, Սիփանայ քաջեր, Պէյրուֆ, 1967, էջ 5:

² Տե՛ս Սիմոն Սիմոնյան, Լեռնականներու վերջալույսը, Պէյրուֆ, 1968:

պարզապես ինչ - որ փոփոխություն, տեղից տեղ գնալ չէ, այլ սեփական էությունը վերագտնելու, հայրենագրկման ահռելի ցավին դիմանալու միակ ու վերջին հնարավորություն:

«Սիփանայ քաջեր» շարքում Սիմոնյանը կերտում է հերոսներ, ովքեր ինքնաճանաչման բարդ, բայց անհրաժեշտ ուղի են անցնում՝ փորձելով բացահայտել իրենց նախ՝ իբրև անհատ, ապա որպես մասնիկն այն ամբողջության, որ ազգ ու ժողովուրդ է կոչվում: Եվ ինքնավերաճնման այդ ճանապարհին նրանք դատապարտվում են հոգևոր մեկուսացման, մենության ու լռության, այնուամենայնիվ, իրենց բնօրրանից ու ժողովրդից կտրված, պատմական անհեթեթ ճակատագրով «օտար» կյանքով ապրող մարդիկ փորձում են ի վերջո հասկանալ սեփական էությունը, գտնել այն աներևույթ թելերի ծայրը, որոնցով իրենց կապված են զգում ինչ - որ անձանոթ, բայց հարազատ ու հզոր ուժի: Ոմանք հաղթահարում են պատնեշը, վերագտնում իրենց, իսկ մյուսները, չկարողանալով ազատվել թեև արհեստական, բայց ոչ պակաս զորեղ ուժերից, մնում են մշտական կասկածանքի և անորոշության մեջ:

«Մենք փոքր ժողովուրդ ենք, և երբ մերոնցից երկու հոգի հանդիպում են, արդեն իրադարձություն է»³. Սարոյանի այս խոսքերն ասես իրենց հաստատումն են գտնում Սիմոն Սիմոնյանի «Հայ մը» պատմվածքում:

Հանս Նալբանդյան. տարօրինակ, թվում է՝ անհամատեղելի անուն - ազգանուն ունեցող այս մարդը Պոլսի Կեդրոնական վարժարանի տեսուչ Մարտիրոս Նալբանդյանի որդին է: Նա՝ «Դանիոյ թերես միակ հայը»՝ դանիական արքունիքում բարձր դիրքի հասած, իսկական ազնվական ու ազնիվ մի մարդ, Կոպենհագենի փողոցներից մեկում պատահաբար հանդիպելով բժիշկ Երկանյանին և ավելի մտերմորեն ծանոթանալով նրա հետ, վերջապես ասես վերագտնում է իր կորսված հայությունը, իր հայկական հիշողությունը. երևույթներ, որոնց կարիքն ու կարոտը նա զգացել է ամբողջ կյանքում: Բժիշկ Երկանյանն այն առաջին մարդն է, ում շուրթերից նա պետք է հայերեն բառեր լսեր, լսեր իր սպանված հոր լեզուն ու հաղորդակցվեր դրան, չհասկանար բառերի նշանակությունը, բայց զգար դրանք իր ողջ էությանմբ. «Հանս Նալպանտեանը կուլար: Ես երգեցի Ծիրանի ծառը Կոմիտասի, Կոունկին համար ոյժ չունէի... Կու լար Հանս Նալպանտեանը»⁴:

³ Վիլյամ Սարոյան, Ընտիր երկեր, հատոր 1, Երևան, 1988, էջ 23:

⁴ Սիմոն Սիմոնեան, Սիփանայ քաջեր, էջ 35: Այս գրքից կատարվելիք հետագա մեջբերումների էջը կնշվի շարադրանքում:

Պատմությունը կարող է դաժան գտնվել, ոճրագործները կարող են սպանել միլիոնավոր մարդկանց, բայց ճշմարտությունը չի մեռնում. այն ապրում է որպես կարոտ ու հիշողություն, չմեռնող ցավ ու ցասում, իսկ դրանք արյան միջից քերելն անհնար է. ոչինչ չի կարող սպանել դրանց՝ ո՛չ ժամանակը, ո՛չ տարածությունը, ո՛չ մարդիկ, ո՛չ նրանց օրենքները: «Հայ մը» պատմվածքի հերոսի համար արդեն անդառնալիորեն կորած է շքեղ, անհոգ, բայց, համենայն դեպս, օտար կյանքի հրապույրը, որովհետև նա դառնալու է այդ նոր՝ հոգևոր կամ նյութական Հայաստանը կառուցողներից մեկը, ոչ թե օտար մի եվրոպացի, այլ պարզապես «հայ մը»:

1972 թ. լույս տեսած «Լեռ և ճակատագիր» գրքում Սիմոնյանը «Սիփանայ քաջեր» շարքի մեջ է զետեղում նաև «Աթաթիրքին աղջիկը» և «Երեցկի՞նը մեղավոր էր» պատմվածքները՝ նման թե՛ իրենց բովանդակությամբ, թե՛ ներքին տրամաբանությամբ և ոչ պատահական ընտրված հաջորդականությամբ:

«Ալյօս» շաբաթաթերթի 2004 թ. փետրվարի 6 - ի համարում Հրանտ Դինքը հրապարակեց «Սաբիհա - Խաթունի գաղտնիքը» վերտառությամբ հոդվածը, որով ապացուցում էր, որ թուրք առաջին կին օդաչու, աշխարհում առաջին կին ռազմական փորձարկող - օդաչու Սաբիհա Գյուլչենը՝ Քեմալ Աթաթուրքի որդեգրած ութ աղջիկներից մեկը, իրականում հայուհի է՝ Այնթապում հայտնի Սեբիջյանների տոհմից: Սաբիհա Գյուլչենը Եղեռնից մազապուրծ հայ որբերից մեկն էր:

Այս պատմությունը, որ շատերին հայտնի դարձավ միայն 2004թ., տասնամյակներ առաջ Սիմոն Սիմոնյանին հնարավորություն է տվել ստեղծելու թեև փոքրածավալ, բայց հոգեբանական խտացումներով, մարդկային ապրումների հուզիչ նրբերանգներով հագեցած մի ստեղծագործություն:

Զարմանալի զավեշտ. թուրք առաջին կին օդաչուն ... հայ է: Թալանվում են, կողոպտվում են ոչ միայն գյուղերն ու քաղաքները, մշակույթն ու հոգևոր արժեքները, գողացվում են նաև արյունն ու ուղեղը, ու դրա պատճառով էլ «թուրք» առաջին կին օդաչուն հայ է:

Պատմվածքը Սաբիհայի ներքին պայքարի, ինքնախաբեության ու ինքնախոստովանանքի, գաղտնի տառապանքի խտացումն է: Թվում է՝ տառապելու պատճառ չկա, թվում է՝ Սաբիհան ունի այն ամենը, ինչ անհրաժեշտ է երջանկության համար: Բայց հեշտ չէ լռեցնել, խեղդել արյան կանչը, փոխել սիրտը:

Քսան միլիոն թուրքեր չգիտեն Սաբիհայի տառապանքի մասին, քսան միլիոն թուրքեր հավատում են նրան: Բայց Սաբիհան Աթենաս Պալլասը չէ, նա ընդամենը թույլ մահկանացու է՝ դատապարտված անվերջ երկրնտրանքի ու տառապանքի: Սաբիհան երբեք որոշում չի կայացնելու և չի կարողանալու փոխել անփոփոխելին՝ իր հայ լինելը: Նա պետք է տառապի «հայկական» կոչվող հիվանդությամբ՝ թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես և լսի իր սիրելի «հոր» վերջին՝ «պարտված» խոսքերը. «Դուն պիտի չազատիս այդ հիւանդութենէդ...»: (410)

Աթաթուրքը պարտված է. հոգու ինչ - որ հեռավոր անկյունում Սաբիհան միշտ հիշելու է, որ ինքը հայ է, բայց նա ևս պարտված է, որովհետև չի ազատվելու իր «հիվանդությունից», բայց ապրելու է իր համար չնախատեսված կյանքով:

Անտոն Դոնչևի նշանավոր՝ «Երբ ժամ էր ընտրության» վեպում՝ որպես բուլղարացուն տրվող բարձրագույն օրհնություն, ասվում է. «Բուլղարացի ծնվեցիր, բուլղարացի՛ թող մեռնես»⁵: Հայ ծնված, բայց իբրև հայ մեռնելու հնարավորությունից զրկված, իր ժողովրդի հանդեպ թշնամացած, նոր ժամանակների «ենիչերի» դարձած մարդու մասին է Սիմոնյանի «Երեցկի»-նը մեղավոր էր» («Թուրք գնդապետի մը հետ») ենթախորագիրն ունեցող պատմվածքը:

Այնքան հարուստ, բազմաշերտ, գրեթե ճշգրտության հասնող դիտարկումներով, ավելի շատ պատմական ակնարկ հիշեցնող, միևնույն ժամանակ գեղարվեստական կատարյալ լուծումներով երկ է «Երեցկի»-նը մեղավոր էր» պատմվածքը, որ գրեթե անհնար է մի քանի տողով մեկնաբանել գրողի ողջ ասելիքը: Այս պատմվածքում ևս, ինչպես շարքի «Հայ մը» և «20.000 - էն» մեկը պատմվածքներում, կերպավորվում է պատմողը՝ իբրև կապող օղակ նյութի և հեղինակի միջև՝ ստեղծելով պատմվածք պատմվածքի մեջ: Պատումի լարված բնույթը, սուր ու կենդանի երկխոսությունները ստիպում են ընթերցողին մինչև վերջին տողն ուշադիր հետևել սյուժեի զարգացմանը:

Բեռլինահայ պատմաբանն իր բարեկամի՝ գերմանացի նշանավոր գանգաբան Ռիխարդ Օբենհայմի հետ ճամփորդում է Թուրքիայով, ավելի ճիշտ՝ Արևմտյան Հայաստանով: Վերջինս զբաղվում է հատկապես արմենոիդ տիպի գանգերի ուսումնասիրությամբ: Պարզվում է, որ Թուրքիայում... շատ են, հազարավոր են արմենոիդ տիպի «գանգերը», ինչն էլ ստիպում է գերմանացի

⁵ Անտոն Դոնչև, Երբ ժամ էր ընտրության, Երևան, 1982, էջ 480:

հետազոտողին ասել. «Դու՛ք, Հայե՛րդ, չէք տարագրուած այս հողերեն, դուք կապրիք ձեր հողերուն վրայ»: (417)

Գրողը ցույց է տալիս ոչ միայն այն, թե որքան սարսափելիորեն թշնամացած, այլև, ըստ էության, հակասական, բարդ ու խճճված են հայ և թուրք հարաբերությունները: Բեռլինահայ պատմաբանի և դեպի էրզրում շարժվող գնացքում նրան հանդիպած եվրոպացու արտաքինով թուրքի և թրքացած հայ գնդապետի երկխոսությունները դրա ևս մեկ վկայությունն են:

Եվրոպական շարժումների և ֆրանսերենին կատարելապես տիրապետող թուրքն իրեն բարդույթներից զերծ մարդ է համարում, ով ազատորեն կարող է խոսել թուրքերի ծագման ու ցեղագրության մասին՝ չվախենալով լույս նետել պատմության այն կետերի վրա, որոնք այնքան էլ շահեկան չեն խաբեությունն ու կեղծիքը նախընտրողների դիրքերից: Իր հանգստությամբ հանդերձ, որով առաջարկում է հայերին գնել, այո՛, պարզապես գնել թուրքերից իրենց պատմական հողերը, նա արժանի է հարգանքի, որովհետև, նախևառաջ, ազնիվ է ինքն իր հանդեպ և մի կողմ դնելով ցեղային թշնամանքը՝ փորձում է անկողմնակալ հայացք նետել պատմությանը, ելք գտնել հայ – թուրքական հարաբերություններից. «Այս հողերը ձե՛զ կը կանչեն: Ո՛չ միայն ձեր ձգած գերեզմանները, խաչքարերը, յուշարձանները, աւերակները, այլև այդ դատարկութունը Ձեզ կը կանչեն: Ու դուք, Հայերդ, չէք լսեր այդ կանչը... Այդ հողերուն վրայ ձեր իրավունքը կու գայ և պիտի գայ ո՛չ թէ ձեր նախահայրերէն, ձեր հոն երբեմն բնակած ըլլաէն, Սեւրի կամ այլ դաշնագիրներէն, այլ անոնց դատարկութենէն ու ամայութենէն»: (437)

Սիմոնյանն ազատախոհ և լայն մտահորիզոն ունեցող այս թուրքին համեմատում է քեմալական կեղծ գաղափարախոսությամբ սնված թուրքացած գնդապետի հետ, որն աշխարհում ամենից շատ ատում է հայերին՝ իր արյունակիցներին: Գնացքի վագոնում, չկասկածելով անգամ, որ իր զրուցակիցը հայ է, գնդապետն անկեղծանում է՝ պատմելով իր կյանքի պատմությունը:

Սովորական պատմություն այն օրերի իրականության մեջ. եղեռնի արդյունքում որբացած հայ երեխային որդեգրում է թուրք մի կին: Դպրոցում տղան բնական խելքի շնորհիվ առանձնանում է հասակակիցներից, դառնում Աթաթուրքի որդեգիրը, հասնում մինչև գնդապետի աստիճանի: Բայց այն կասկածը, որ ինքը հայ ծնողների զավակ է, երբեք հանգիստ չի տալիս նրան: Գնացքի վագոնում բեռլինահայ պատմաբանն իր սուր ու չզիջող հարցապնդումներով ստիպում է գնդապետին հիշել մանկության դրվագները. «Գնդապետը գրեթե լավ կիիշեր իր հի՛ն, առաջի՛ն, թերևս շատ քաղցր տունը... բայց

երկիւղը, ժամանակին հետ աճած ունակութիւնները, ինքզինք թիրք կարծելու ինքնապաշտպանութիւնը, թրքութեամբ բնագործին իր որբութիւնը յենակելու ապահովութեան զգացումը, այլ կրկնութիւններ՝ խաւեր բարդած էին իր մատաղ հիշողութեան վրայ, իր մտքին առաջին որմնանկարներուն վրայ, և զանոնք ճզմած ու անհետացուցած ըլլալու պատրաստութիւնը թէ համոզումը պատուաստած էին իրեն»։ (453)

Գնդապետը սրտի տրոփյունով սպասում է իր գանգի հետազոտության արդյունքներին՝ հուսալով, որ ինքը, այնուամենայնիվ, թուրք է։ Եվ չնայած այդ հետազոտությունից պարզվում է, որ գնդապետի գլուխը ձևով նման է ուրալ - ալթայական, այսինքն՝ թուրքական տեսակին, պատմաբանը նրա մեջ հային արթնացնելու նպատակով ասում է, թե գանգը զուտ արմենոիդ տիպի է։ Գնդապետը խորտակված է. նրան տանջող կասկածները հաստատվել են, բայց նա ուժ չունի նորից հայ դառնալու։

Ո՞վ է մեղավոր, «երեցկի՞նը», ասել է թե՛ հայը, թե՛ նա, ով, ինչպես հենց ինքն է խոստովանում, սարսափելիորեն դատարկեց մի երկիր, որ իրեն չէր պատկանում, և իրեն ազնվացնելու համար խորամանկ ենթագիտակցությամբ սեփականեց ոչ միայն հողը, այլև այդ հողի տերերի արյունը, ուղեղը, գեները։

Իր պատմվածքներում Սիմոնյանն ուղղակիորեն և անուղղակի անդրադառնում է Սփյուռքի համար հավերժական՝ նահանջի թեմային։ «Լեռ և ճակատագիր» գրքում նա հաստատապես ոչ պատահականորեն է «Սփյանայ քաջեր» շարքը բացում «Մայրի՛կ, մայրի՛կ» պատմվածքով՝ ևս մեկ անգամ բարձրաձայնելով նահանջի, «սպիտակ ջարդի», ասել է թե՛ օտարացման թեման։

«Մայրի՛կ, մայրի՛կ»-ը եղեռնից մազապուրծ մի կնոջ ողբերգական պատմությունն է՝ մեկը հազարավոր նման պատմություններից։ Պատմվածքի վաթսունհինգամյա տարեց հերոսուհին հեղինակին պատմում է Ամերիկայում՝ հարազատ որդու տանն անցկացրած իր կյանքի ութ ամիսների պատմությունը, որ, թերևս, ավելի ողբերգական ու ցավալի է, քան ծննդավայրից մինչև Դեր - Ջոր ու այնտեղից մինչև Հալեպ նրա ողիսականը։

Ամերիկյան սարսափեցնում է Հաճի Եղսային. ավանդապահ հայ կնոջ՝ տարիներով սրբագործված սովորույթներն ու համոզմունքներն ամեն բոպե ոտնակոխ են արվում այդ երկրում, որտեղ ամեն ինչ ասես կեղծ է ու մեքենայացված, մտածված ու հաշվարկված։ Ու այդ պատճառով էլ այդ երկիրը, չնայած իր քթեղությանն ու կյանքի համար ստեղծված բոլոր հարմարություններին, իսկական չարիք է թվում Հաճի Եղսային։

Լիբանանահայ գրող Կարո Սասունին իր «Երբ մօր սիրտն է, որ կը խոսի»⁶ պատմվածքում նկարագրում է որդու մոտ՝ Ամերիկա մեկնել գանկացող կնոջ ապրումները և այն անհուն ուրախությունը, որ նա զգում է՝ վերջապես ստանալով մուտքի բաղձալի թույլտվությունը: Սասունու հերոսուհուն Ամերիկան ազատության և հաղթանակի ակունք է թվում, բայց պատմվածքը հենց այդտեղ էլ ավարտվում է, և մենք չգիտենք՝ ինչ կպատահի հետո: Կարո Սասունու այս պատմվածքը, թերևս, կարող էր «Մայրի՛կ, մայրի՛կ»-ի նախաբանը լինել: Սիմոն Սիմոնյանի հերոսուհին ապրում է այն հիասթափությունն ու հուսահատությունը, որ բազմաթիվ մայրեր են ապրել:

Ի վերջո միականի մայրիկը եզրակացնում է, որ իր մեկ հատիկ ծառին ու նրա ճյուղերը խլած Ամերիկան ավելի վատն է, քան Դեր - Ջորը, որովհետև իր որդին Դեր - Ջորից փրկվեց, բայց ընդմիջտ Ամերիկայի «գերին է» մնալու:

«Լեռ և ճակատագիր» գրքում Սիմոնյանը «Սիփանայ քաջեր» շարքը եզրափակում է «Սասունցի Դափթը՝ ձիարշավարանի մէջ» պատմվածքով՝ իբրև բողոք, դիմում և կոչ իր ժողովրդին՝ վերջապես վերջ տալու անտարբերությանը, պայքարելու ապրելու իրավունքի համար:

Սիմոն Սիմոնյանին ուղղած նամակներից մեկում, որ հետո հրապարակվեց «Սփյուռք» հանդեսում, Պարույր Սևակը գրում է. «Ո՛րջ եղիր, եղբայր, չմոռանալով, որ մենք պարտավոր ենք ավելին անելու»⁷: Ո՛չ իր գործունեության, ո՛չ էլ գրականության մեջ Սիմոն Սիմոնյանը չմոռացավ, որ ինքը պարտավոր է անելու ավելին, և նույնը խնդրեց, պահանջեց բոլորից՝ համայն հայությունից՝ չհանձնվել, չմոռանալ պատմական անցյալը, լինել կորսված հայրենիքի պահանջատերը, անաղարտ պահել հայի էությունը: Այս է նաև «Սիփանայ քաջերի» ասելիքը:

ХРАБРЕЦЫ СИПАНА ПРОТИВ ОТСТУПЛЕНИЯ

ГОАР АРУТЮНЯН

Эта статья посвящена книге армянского писателя из Ливана Симона Симоняна – “Храбрецы Сипана”. Героями книги являются армянские эмигранты, которые страдают от боли Геноцида и от тоски к своей потерянной родине. В этой статье мы обратились к вопросам репатриации и отчуждения,

⁶ Տե՛ս Կարո Սասունի, Կեսանքի յորձանուտին մէջ, Պէյրուփ, 1962:

⁷ «Սփյուռք», 1972, թիվ 24:

которые являются ключевыми темами этой книги. Автор создал не только образы настоящих патриотов, но и образы отступающих от своих корней. Несмотря на это, главными темами этой книги являются призыв к борьбе и идея родины.

Ключевые слова – гора Сипан, репатриация, вера, борьба, возвращение к корням, призыв, отчуждение, неопределённость, тоска.

THE BRAVES OF SIPAN ANTI RETREAT

GOHAR HARUTYNYAN

This article is a review of the Lebanese-Armenian writer Simon Simonyan's collection of short stories “The Braves Of Sipan”. The heroes of the stories are Armenian immigrants, victims of the Genocide, suffering people yearning for their deserted homeland. Harutyntyan has considered the main themes of this work, repatriation and alienation. She points out to how Simonyan designs not only real patriotic heroes but also retreating ones. This highlights the main appeal of the book, fight integration, preserve cultural and ethnic foundation, at all costs retain their own ethnic identity, and conserve their own homeland.

Key words – Mount Sipan, repatriation, hope, struggle, return to the roots, call, alienation, uncertainty, yearning.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ԱՍՏՎԱԾ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ)

ՀԱՄՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՆՆԱ ԿՈՒԲԱՆՅԱՆ

Հոդվածը նվիրված է համընդհանուրի և առանձինի քննությանը «աստված» բաղադրիչով կազմված դարձվածային միավորներում՝ հիմնվելով հայերենի և իսպաներենի հարուստ փաստական նյութի վրա: Այս դարձվածքները պատկանում են դարձվածապաշարի այն շերտին, որտեղ ներդաշնակորեն միահյուսվում են ազգային ու համընդհանուրը: Նշված դարձվածքների իմաստների հիմնանշանակային և զուգորդական-պատկերային բաղադրիչների փոխհարաբերակցության քննությունը թույլ է տալիս առանձնացնել իմաստային տարբեր խմբեր, որտեղ իրենց դարձվածակազմական արդյունավետությամբ երկու լեզվամշակույթներում հատկապես առանձնանում են մարդափոխաբերական դարձվածային միավորները:

Բանալի բառեր – համընդհանուր, ազգային, «աստված» բաղադրիչով դարձվածք, իմաստային դաշտ:

Ինչպես հայտնի է, աշխարհի լեզվական պատկերն արտացոլում է այն իրողությունները, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն տվյալ ժողովրդի համար: Սակայն աշխարհի լեզվական պատկերում արտացոլվում է ոչ միայն օբյեկտիվ աշխարհը՝ արտալեզվական իրականությունը, այլ նաև վերջինիս վերաբերյալ տվյալ լեզվական համայնքի պատկերացումները, նրա աշխարհընկալման առանձնահատկությունները, ինչպես նաև անհատի սուբյեկտիվ վերաբերմունքը, որոնք իրենց լեզվական արտացոլումն են գտնում յուրաքանչյուր լեզվին ներհատուկ արտահայտչամիջոցներում: Վերջիններիս շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում դարձվածքները:

Դարձվածային միավորն ազգային ուրույն առանձնահատկությամբ օժտված լեզվական միավոր է, որը կուտակում և սերնդեսերունդ փոխանցում է ժողովրդի մշակութային ներուժը. դարձվածքներում ամփոփված են ամեն մի լեզվի ազգային ոգին և ինքնատիպությունը:

Դարձվածքներում պատկերավոր արտացոլվում է լեզվական համայնքի պատմական դարավոր փորձը: Ըստ Վ. Տելիայի՝ լեզվի դարձվածային ֆոնդը

մի հայելի է, որում լեզվամշակութային համայնքն արտացոլում է ազգային ինքնագիտակցությունը¹: Տեխիան կարծում է, որ դարձվածքների հիմքում ընկած պատկերները «թափանցիկ» են տվյալ լեզվամշակութային համայնքի համար, քանի որ արտահայտում են վերջինիս աշխարհընկալման առանձնահատկությունները:

Այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ ոչ բոլոր դարձվածային միավորներն են ազգամշակութային տեղեկույթի կրող: Եթե այլ լեզուներում չի բացահայտվում որևէ դարձվածքի համարժեքը, հաճախ պատճառը ոչ թե ազգային ինքնատիպությունն է, այլ տարբեր լեզուներում երկրորդային անվանման միջոցների անհամապատասխանությունը: Հաճախ միևնույն դարձվածային միավորը տարբեր լեզուներում արտահայտվում է տարբեր կերպ՝ այլ ներքին ձևով, բառային կազմով և այլն: Օրինակ՝ Dios nos tenga de su mano-Աստված ձեռքը մեր գլխից անպակաս անի; En amaneciendo Dios-լուսաբացին: Նման դեպքերում կարելի է խոսել ձևական ազգամշակութային նշույթավորվածություն ունեցող դարձվածքների մասին, որոնց ազգային բնույթն արտահայտման ձևի, պատկերի և ոչ թե հասկացության մեջ է:

Վ. Տեխիան գտնում է, որ դարձվածքներն օժտված են ազգամշակութային հարանշանակությամբ, քանի որ նրանց հատուկ է պատկերավոր պատճառաբանվածությունը, որն ուղղակիորեն փոխկապակցված է տվյալ ժողովրդի՝ լեզվակիրների աշխարհայացքի հետ²:

Լեզվի դարձվածային ֆոնդը մշակույթի և ազգային մտածելակերպի արտացոլման կարևոր աղբյուր է, որում ներկայացված են առասպելների, ավանդույթների, կրոնական ծիսակարգերի, սովորույթների, բարոյականության, վարք ու բարքի վերաբերյալ ազգային պատկերացումները: Իսկ ինչպես նշում է Բ. Ա. Լարինը, դարձվածային միավորները միշտ անուղղակի արտացոլում են ազգային մտածելակերպը, տվյալ հասարակարգի և դարաշրջանի առանձնահատկություններն ու գաղափարախոսությունը³:

Դարձվածքի ազգային նշույթավորվածությունը կարող է արտահայտվել.

¹ **Телия В. Н.** Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. Москва, 1996, стр. 9.

² **Телия В. Н.** Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты, стр. 214-215.

³ **Ларин Б. А.** Эстетика слова и языка писателя. Избранные статьи. Ленинград, 1974, стр. 167.

ա) դարձվածքի ամբողջական իմաստով, քանի որ բաղադրիչների իմաստները երբեմն մթագնած են,

բ) դարձվածքի կազմի մեջ մտնող առանձին բառ-բաղադրիչների իմաստներով, հատկապես տարբեր իրակություններով (ռեալիա),

գ) դարձվածքի նախատիպերի իմաստներով (վերջիններս ազատ կապակցություններ են, որոնք, հետագայում վերաիմաստավորվելով, դարձել են դարձվածք և նկարագրում են ազգային ավանդույթներ ու սովորույթներ, առօրյա և մշակութային կյանքի առանձնահատկություններ, պատմական իրադարձություններ և այլն):

Յուրաքանչյուր լեզվի դարձվածային ֆոնդում կարելի է առանձնացնել և՛ համընդհանուր գծեր, և՛ ազգային առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ինչպես արտահայտության, այնպես էլ բովանդակության պլանում և տարբեր դարձվածային համակարգերի տիպաբանական-զուգահրայական ուսումնասիրության կարևոր չափանիշ են:

Ամեն մի լեզվի դարձվածային ֆոնդում ընդհանրույթները բնորոշվում են ներլեզվական և արտալեզվական տարբեր գործոններով.

ա) ընդհանրույթներ, որոնք ունեն մեկ ընդհանուր աղբյուր, օրինակ՝ համաշխարհային մշակութային ժառանգությունը, որն ընդհանուր է տարբեր լեզուների համար (Աստվածաշունչ, առասպելաբանություն, Հին աշխարհի պատմություն և գրականություն և այլն): Օրինակ՝ *Dar a Dios lo que es de Dios y dar a César lo que es de César* - Աստծունը՝ աստծուն, կայսրինը՝ կայսրին (Ավետարան ըստ Մաթևոսի 22: 15-22, 23: 1-5),

բ) ընդհանրույթներ, որոնք այլ լեզվից կատարած փոխառություն կամ պատճենում են՝ պայմանավորված տարբեր ժողովուրդների պատմաքաղաքական, հասարակական և մշակութային փոխհարաբերություններով կամ էլ պարզապես պայմանավորված են տարբեր ժողովուրդների մտածողության ընդհանրությամբ, նրանց կենսափոխաբանությամբ: Օրինակ՝ *Dios delante* - Աստված առաջ, *Dios sabe/ sabe Dios* - Աստված գիտի, *Dios guarde* - Աստված պահպան:

Դարձվածքների ազգամշակութային նշույթավորվածությունը կարող է արտահայտվել ինչպես մենաբառույթներով՝ իրակություններով, այնպես էլ ամբողջական բառակապակցություններով, որոնք դարձվածային պատկերի հիմքն են կազմում: Սրանք մի կողմից վերաբերում են արտալեզվական առարկայական աշխարհին, մյուս կողմից՝ արտացոլում էթնոսի ազգամշակութային առանձնահատկությունները, նրա բարոյախրատական նորմերը:

Այսպիսով, համընդհանուրն ու ազգայինը դարձվածքներում միշտ հանդես են գալիս սերտորեն փոխկապակցված՝ կազմելով դիալեկտիկական միասնություն: Ընդհանուրն արտահայտվում է բովանդակության պլանում, իսկ ազգայինը՝ արտահայտության պլանում՝ դարձվածքի ներքին ձևում:

«Աստված» հասկացությունը կարևորագույն մշակութային ընդհանրույթ է, որը եղել է գիտական տարբեր ոլորտների ուսումնասիրության առարկան: Յուրաքանչյուր լեզվամշակույթում, ելնելով կրոնական առանձնահատկություններից, աստծո վերաբերյալ գաղափարները տարբերվում են, քանի որ յուրաքանչյուր էթնոս Երկնային արքայի՝ Արարչի վերաբերյալ ստեղծում է իր ուրույն պատկերը: Աստվածադավանների (թեիստ) պատկերացմամբ աստված ամենակարող է, բազմաստվածություն դավանողները հավատում են մեկից ավելի աստվածների գոյությանը, որոնք իրավագոր են, պանթեիստների համար աստված տիեզերքն է, տիեզերքն էլ՝ աստված, աթեիստները մերժում են աստծո գոյությունը և այլն⁴:

Աստված՝ որպես առասպելական, աստվածաշնչյան կերպար, մեծ չափով արտացոլված է դարձվածային միավորներում: Առհասարակ քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ազդեցությունն ակնհայտ է տարբեր լեզուների դարձվածային համակարգերում, որտեղ մեր քննության առարկա դարձվածային միավորները հանդես են գալիս որպես աշխարհընկալման ազգամշակութային կարծրատիպեր:

Հետաքրքիր է նշել, որ իսպանացիների կողմից Քրիստոսը երբեմն ընկալվում է որպես հասարակ մարդ (օժտված մարդկային բոլոր հատկանիշներով), և նրա անունը հաճախ է հանդիպում առօրյա խոսակցական տարբեր դարձվածային միավորներում (օրինակ՝ *Como a un cristo dos pistolas* – շատ վատ, ոչ տեղին): Նման դեպքերում այն այլևս չի ընդգծում աստծո գաղափարը, վերաճվում է հասարակ անվան (նաև «խաչելություն» իմաստով) և նույնիսկ գրվում է փոքրատառով: Օրինակ՝ *Ni cristo padre* (ոչ ոք), *Ni cristo lo apea* (նրան չես կարող համոզել):

Իսպաներենում «Cristo» բաղադրիչով կազմված դարձվածային միավորները երբեմն կիրառվում են նաև բացասական հարանշանակությամբ: Օրինակ՝ *Dejar/poner a alguien hecho como un cristo* – վատ վերաբերվել; *Ponerse hecho/ como un Cristo* – կեղտոտվել; *Poner a uno como un cristo* – նախատել,

⁴ **Арутюнян Н. Л.** Лингвокультурологический анализ трансцендентных сверхконцептов. Ереван, 2008, стр. 115.

վարկաբեկել, դաժան ծեծի ենթարկել: Երբեմն տվյալ բաղադրիչով դարձվածային միավորները կատարում են ժխտական դերանվան գործառույթ, օրինակ՝ *Ni Cristo/ Ni cristo padre* (ոչ ոք): Հանդիպում են նաև դեպքեր, երբ վերջիններս հանդես են գալիս տեղի պարագայի գործառույթով, օրինակ՝ *Donde Cristo dio las tres voces* (շատ հեռու), *A todo Cristo* (ամենուրեք) և այլն:

Հայ իրականության մեջ, իհարկե, Քրիստոսը նախ և առաջ ընկալվում է որպես աստծո որդի՝ աստված, օրինակ՝ «Ի սեր Քրիստոսի» (ի սեր աստծո), «Քրիստոս գիտենալ» (աստված վկա), «Քրիստոսի սիրուն» (աստծո սիրուն), Քրիստոսի/աստծու քով ուղարկել (սպանել՝ երկինք ուղարկել) և այլն, սակայն կան նաև այնպիսի դարձվածքներ, որտեղ չի մատնանշվում աստվածայինը: Օրինակ՝ «Մարդ Քրիստոսի/ աստծու» (հասարակ մարդ), «Քրիստոս կփսփսա» (բացարձակ լռություն է): Հայերենում հազվադեպ են հանդիպում նաև բացասական հարանշանակությամբ կիրառություններ, օրինակ՝ Քրիստոսի քով ուղարկել - սպանել:

Որոշ լեզուներում «Քրիստոս», «աստված» բաղադրիչները համարվում են տաբու, և լեզվական համայնքը խիստ սահմանափակում է վերջիններիս հաճախակի կիրառությունը: Ուսումնասիրվող երկու լեզուներում վերոհիշյալ հասկացությունը՝ աստված, քրիստոնեական աշխարհընկալման մեջ իր մեծ կարևորության շնորհիվ առանձնահատուկ դեր ունի իսպանացի և հայ ժողովուրդների ազգային գաղափարախոսության և աշխարհաճանաչողության մեջ: Տվյալ բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային կառուցվածքի հիմնանշանակային և զուգորդական-պատկերային բաղադրիչների փոխհարաբերակցությունը թույլ է տալիս նաև բացահայտել քրիստոնեական մշակույթին վերաբերող տարբեր պատկերներ, խորհրդանիշների ոչ բացահայտ՝ ներակա իմակներն ու մշակութային հարանշանակությունները:

«Աստված» բաղադրիչով արտահայտություններին հատուկ է փոխաբերական կիրառությունը, որը խոսքը դարձնում է ավելի պատկերավոր՝ հաղորդելով հուզարտահայտչական տարբեր երանգավորումներ: Ինչպես նշում է Վ. Ա Մասլովան. «...հենց փոխաբերությունն է վերացականը դարձնում դյուրըմբռնելի և հասկանալի»⁵: Եվ այդ է պատճառը, որ «աստված» բաղադրիչով կազմված դարձվածային միավորները երկու լեզվամշակույթում էլ հաճախ հանդես են գալիս այլաբանական իմաստներով:

⁵ **Маслова В. А.** Лингвокультуроология. Москва, 2001, стр. 91.

Արարիչ, Ամենաստեղծ կամ Երկնային արքա լինելուց բացի, այս իմաստային դաշտում ի ցույց է դրվում նաև աստծո՝ հասարակ մարդ լինելու գաղափարը՝ օժտված մարդկային բոլոր հատկանիշներով: Այսինքն՝ աստիճանաբար աստծուն վերագրվում են հասարակ մարդուն բնորոշ գծերն ու հատկանիշները: Մարդը դառնում է պաշտամունքի առարկա, ամենակարող և ամենակալ:

Դեռևս հնուց ակնհայտ է բնության երևույթների նկատմամբ մարդափոխաբերականացման (անտրոպոմորֆիզացիա) միտում, որը հետագայում կիրառվեց նաև գերբնական, աստվածային էակների նկատմամբ⁶: Մեր փաստական նյութի (565 իսպաներեն դարձվածք, 481՝ հայերեն) վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ հայերենում, և՛ իսպաներենում «աստված» բաղադրիչով դարձվածային միավորները նույնպես կարելի է դասակարգել ըստ աստծուն բնորոշ մարդկային հատկանիշների: Ինչպես կարելի է տեսնել ստորև ներկայացված աղյուսակում, երկու լեզուներն էլ հարուստ են «աստված» բաղադրիչով կազմված մարդափոխաբերական դարձվածային միավորներով, որոնք ընդգծում են աստծուն վերագրվող մարդկային հատկանիշների կարևորությունը երկու լեզվամշակույթներում⁷.

Հատկանիշ Իսպաներեն Հայերեն

լսողություն	++
տեսողություն	++
ձայն, խոսք	++
հիշողություն	_ +
կամք	++
դաժանություն	++
անխելքություն	++
անարդարություն	+ _
արդարություն	++
շռայլություն	++

Հայերենում տվյալ հատկանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ լեզվամշակույթի ներկայացուցիչները կյանքի տարբեր իրադրություն-

⁶ **Арутюнян Н. Л.** Лингвокультурологический анализ трансцендентных сверхконцептов, стр. 135-142.

⁷ Ներկայացված աղյուսակում (+) նշանը ենթադրում է նշված մարդկային հատկանիշների առկայությունը տվյալ լեզվի դարձվածապաշարում, իսկ (-) նշանը՝ վերջիններիս բացակայությունը:

ներում հաճախ հույսը դնում են աստծո վրա՝ որպես գերբնական էակի՝ ամենակարող և ամենաստեղծ, նրա գթասրտության, առատածեղձության վրա: Թերևս, սա քրիստոնեության մեծագույն ազդեցությունն է հայ լեզվամշակույթի վրա, որը քարոզում է անսահման հավատ առ աստված, աստվածավախություն, հնազանդություն և այլն:

Իսպաներենի լեզվամշակույթում նույնպես ակնհայտ է նույն երևույթի՝ Ամենաբարձրյալի պաշտամունքը: Տվյալ լեզվամշակույթի ներկայացուցիչների մոտ «dios» (աստված) հասկացությունը որոշ դարձվածքներում հարաբերակցվում է նաև հոր գաղափարի հետ՝ Como Dios/ Cristo es su padre, A la de Dios que es mi padre:

Երկու լեզվամշակույթում առանձնահատուկ ընդգծվում է նաև աստծո որդու՝ աստված լինելու գաղափարը, որն էլ, թերևս, կարող է պատճառաբանվել Սուրբ Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու եռամիասնության դավանանքով. Hijo de Dios, Varón de Dios, Աստծո որդի:

Ինչպես իսպաներենում, այնպես էլ հայերենում «dios» (աստված) բաղադրիչով դարձվածքները հաճախ օգտագործվում են որպես սաստկական-հուզարտահայտչական երանգավորում ունեցող կայուն կապակցություններ, որոնք արտահայտում են *խնդրանք (ներողամտություն, փրկություն հայցելու նպատակով)* կամ *ցանկություն*՝ Fuera sea de dios, Así dios te dé gloria, Dios me perdone, Mi padre es dios, Por el amor de dios, Աստծու անվանը մեռնեմ, Աստծու անունը տալ, Աստված ազատի, Աստված այն օրը չցուցանե, Աստված ավելի բեթարից ազատե, Աստված ավելի վատից ազատի/թափի, Առ Աստված հասնի, Աստված փրկի և այլն, ընդ որում այս իմաստային դաշտը հայերենում ավելի ծավալուն է, քան իսպաներենում: Նույն խմբում կարելի է առանձնացնել հիմնականում *բարեմաղթանք* արտահայտող դարձվածքներ՝ նկատի առնելով, որ նման դարձվածքների արտահայտած իմաստային երանգները բազմազան են. Que es una bendición de dios, Que de Dios goce, Que de Dios haya, Dios delante, Dios mediante, Աստված առաջ, Աստված երկու բարին մեկը տա, Աստված ընդ քեզ, Աստված թող հաջողություն տա, Աստված թուրը կտրուկ անի, Աստված իմ կյանքից կտրե, ձերի վրա ավելացնե, Աստծո լույսը հասնի, Աստծո լույսը մեկի վրա իջնի և այլն:

Անեծք, սպառնալիք արտահայտող իմաստային դաշտը շատ ծավալուն է հայերենում՝ Աստված անիծի, Աստված անունդ կտրի, Աստված արևդ սպանի, Աստված այսինչի դուռը բերի, Աստված այսինչին վերու, Աստված բելեդ տա, Աստված դիվանդ անի/տեսնի և այլն, մինչդեռ իսպաներենում արձանագրվել

են երկու օրինակ՝ *Cuerpo de dios, Voto a Cristo*: Իսկ *մահական գույժը, երդում և մեծ զարմանք* արտահայտող իմաստային դաշտերն առանձնանում են և՛ հայերենում, և՛ իսպաներենում:

Իսպաներենում «dios» բաղադրիչով դարձվածքները զուգակցվում են նաև կլիմայական երևույթների հետ (երկարատև հորդ անձրևներ). *Amaneció agua dios, Agua dios, Lluve de dios, Agua dios y venga mayo*:

Այսպիսով, յուրաքանչյուր լեզվական համայնք Արարչի վերաբերյալ ունի իր ուրույն պատկերացումները: Սակայն աստծու կերպարը, ինչպես և քրիստոնեության ողջ փիլիսոփայությունը խորապես ամրակայված է երկու լեզուների լեզվամշակույթում, մասնավորապես դարձվածապաշարում, որտեղ «աստված» բաղադրիչով դարձվածքներում առանձնանում են հետևյալ գաղափարները. Աստված Արարիչ է, Աստված ամենակարող է, Աստված ամենագետ է, Աստված գթասիրտ է, Աստված է պարզևս հավերժական կյանք և մխիթարում մեզ, Աստված մեր Տերն է, Աստված արդար է, Աստված է սահմանում բարոյականության օրենքները: Երկու լեզվամշակույթում էլ «աստված» բաղադրիչով դարձվածքները հաճախ օգտագործվում են որպես սաստկական-հուզարտահայտչական երանգավորում ունեցող կայուն կապակցություններ, որոնք արտահայտում են խնդրանք, ցանկություն, բարեմաղթանք, նաև անեծք, սպառնալիք և այլն:

ПРОЯВЛЕНИЕ УНИВЕРСАЛЬНОГО И НАЦИОНАЛЬНОГО В ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦАХ С КОМПОНЕНТОМ “БОГ” (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ В АРМЯНСКОМ И ИСПАНСКОМ ЯЗЫКАХ)

АСМИК БАГДАСАРЯН, АННА КУБАНИЯН

Статья посвящена изучению универсального и особенного в фразеологических единицах с компонентом “бог” на основе богатого фактического материала в армянском и испанском языках. Эти фразеологизмы относятся к той сфере фразеологии, где гармонично переплетаются национальное и универсальное. Анализ взаимоотношений денотативных и ассоциативно-образных компонентов значений этих фразеологизмов позволяет определить разные семантические группы, где наивысшей фразообразовательной продуктивностью в двух лингвокультурах особенно выделяются антропоморфические фразеологические единицы.

Ключевые слова – универсальное, национальное, фразеологизмы с компонентом «бог», семантическое поле.

THE MANIFESTATION OF THE UNIVERSAL AND THE PARTICULAR IN PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENT «GOD» (COMPARATIVE ANALYSIS OF SPANISH AND ARMENIAN)

HASMIK BAGHDASARYAN, ANNA KUBANYAN

The paper is concerned with the study of the universal and the particular in the phraseological units with the component «god». The study is based on the rich material found in both the Armenian and Spanish languages. These phraseological units belong to that layer of the phraseological fund where the national and the universal are harmoniously interwoven. The study of the interrelation between the denotative and associative-figurative meanings of the components of the given phraseological units permits us to isolate different semantic groups, where the anthropomorphic phraseological units are distinguished by their phraseological structural productivity in the linguocultures.

Key words – universal, national, phraseological unit with the component «god», semantic field.

ՀԱՋԵՐԱՆՉՐ՝ ՈՐՊԵՍ ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ՉՆՇՈՒՅԹԱՎՈՐՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

Հնչերանգը՝ որպես նախադասության կազմավորող տարր, ավարտուն տեսք է տալիս հորդորական ասույթներին՝ դրանց հաղորդելով դրդողական բնույթ: Որպես հավաստի նկարագիր՝ այն առանցքային դեր է կատարում հիշյալ ասույթների ճանաչման և տարանջատման գործում՝ կատարելով ինչպես իմաստաբանական, այնպես էլ գործաբանական բաղադրիչի գործառույթ, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում հորդորի կարգի տարատեսակ դրսևորումների տարբերակումը:

Հիմք ընդունելով հնչերանգի ստանձնած վերը նշված բոլոր գործառույթները՝ այն կարող է որակվել որպես հորդորական ասույթների «չնշույթավորված չափորոշիչ»:

Բանայի բառեր – հորդորական ասույթ, զգացմունքային-կամային լեզու, հնչերանգ, նախադասության կազմավորող տարր, չնշույթավորված չափորոշիչ:

Ինչպես հայտնի է, հորդորի կարգի ուսումնասիրման ավանդական մոտեցումն անգլերենում հիմնված է ձևի վրա (ինչին բնորոշ է «ձևից - իմաստ» սկզբունքով դիտարկումը), ինչն էլ հիմք է հորդորական կառույցների ավանդական ձևերի ճանաչման համար որպես զատորոշիչ գործոն դիտարկել հրամայական եղանակը, թեև գործնականում հորդորական ասույթներն ընկալվում են որպես անուղղակի հրամանի գործառույթ իրականացնող նախադասություններ, որոնցում որևէ գործողության դրդելու, կոչ անելու իմաստը կարող է ներկայացված լինել ինչպես հրամայական (“*Get your coat off, Henry.*”, “*Don’t talk to me like that.*”), այնպես էլ ոչ հրամայական (“*You have to tell the truth.*”, “*Can you change the subject?*”, “*I want you to take down a speech in shorthand at my dictation.*”) կառույցներով:

Անդրադառնալով «նախադասություն» լեզվաբանական հասկացությանը, լեզվաբանների մեծ մասն այն չի նույնացնում «ասույթ» եզրույթի հետ՝ կարևորելով ոչ թե ասույթի քերականորեն ճիշտ ձևակերպումը, այլ խոսողի կողմից իր միտքը հասցեատիրոջը հասանելի դարձնելը: Գ.Պոչեպցովի՝ կարծիքով ասույթի հիմքում ընկած է նախադասությունը ոչ միայն որպես ֆիզիկական իրականություն, այլև բովանդակային, գործառական երևույթ:

Անկախ կառուցվածքային առանձնահատկություններից, հորդորական

¹ Почепцов Г.Г. Конструктивный анализ предложения. Киев, 1971, стр. 192.

ասույթները բնութագրվում են որպես դրդողական բնույթ ունեցող հաղորդակցային միջոցներ, որոնց բովանդակային կառուցվածքը բազմազան է և ընդգրկում է հաղորդակցական և գործաբանական բաղադրիչներ: Այս համատեքստում հարկ է նկատել, որ զգացմունքայնությունը՝ որպես հորդորին բնորոշ առանցքային բաղադրիչ, նշանակալի դեր է խաղում ասույթներն արտաբերելիս, և պատահական չէ, որ դրանք տարանջատելիս առանձնակի կարևորվում է ասույթի արտահայտչականությունը:

Արտահայտելով խոսողի կամքը, դրդելով խոսակցին դառնալ որևէ գործողության իրականացման սուբյեկտ՝ հորդորական ասույթները պատկանում են զգացմունքային-կամային լեզվին և բնութագրվում են հատուկ հնչերանգով:

Հնչերանգը (intonation) հաղորդակցային երևույթ է և քերականորեն չի նշույթավորվում: Այն ձայնի տոնի, հնչյունի ուժգնության և տևողության, տեմպի և ռիթմի, ինչպես նաև մեղեդայնության և տրամաբանական շեշտի համադրությունն է, որն արտահայտվում է ձայնային տարբեր ելևէջումներով ու դադարով:

Որպես բնութագրական առանձնահատկություն հարկ է նշել, որ հնչերանգը՝ որպես հիմնական նշանակային բեռը կրող գործոն, ավարտուն տեսք է տալիս հորդորական ասույթներին, ինչի շնորհիվ էլ դրանք ձեռք են բերում համապատասխան տեսակի բնույթ:

Ասվածի հավաստիությունը փաստող, նույնական ձևաբանական կառուցվածք ունեցող **“You do it”** (*պատմողական, փաստի հաստատում*) ⇔ **“You do it !”** (*հորդոր*) նախադասությունների համեմատությունից պարզորոշ երևում է, որ բանավոր խոսքում հորդոր արտահայտող նախադասությունը համապատասխան պատմողական նախադասությունից տարբերակող հիմնական գործոնը հնչերանգն է:

Ուշագրավ է, որ գրավոր խոսքում այդ գործառույթն իր վրա է վերցնում բացականչական նշանը: Անգլերենում նախադասության վերջում բացականչական նշանի առկայությունը միտված է ընդգծելու ասույթի վճռականությունը: Ակնհայտ է, որ *“Go to the blackboard!”* կամ *“Air the room!”* նախադասությունները, անշուշտ, շատ ավելի խիստ են հնչում, քան *“Tell me about it.”* կամ *“Come to see us tonight.”* նախադասությունները:

Հնչերանգը՝ որպես բառը կամ բառակապակցությունը նախադասության վերածող ամենազվխավոր գործոն, իր հերթին զգալիորեն պայմանավորված է հաղորդակցային իրավիճակով:

Որպես ասվածի հիմնավորում հարկ է նկատել, որ անգլերենում ցան-

կացած բայի բառարանային ձև (պայմանավորված այն հանգամանքով, որ հրամայական եղանակի բայածևը լիովին համընկնում է անորոշ դերբայի /առանց «to» մասնիկի/ ձևի հետ /օր.՝ «go»- «գնալ»/), առանց համատեքստի կամ կյանքի իրավիճակի, կարող է արտասանվել ցանկացած տոնայնությամբ, ձայնային տեմբրով, ձայնի բարձրությամբ և տևողությամբ՝ արդյունքում մնալով սոսկ իբրև բառարանային միավոր՝ անկարող լինելով ծառայելու որպես խոսողի մտքերն արտահայտելու միջոց: Եվ երբ նշված առանձնահատկությունների բոլոր հնարավոր համադրություններից մեկը համընկնի կյանքի իրավիճակի համապատասխան համատեքստին, ապա այդ ընտրված համադրությունը կդառնա հնչերանգ, որը բառը կամ բառակապակցությունը կվերածի նախադասության՝ «Go!»-«Գնա»:

Հորդորական ասույթների գործաբանական վերլուծությունն առավել ակնառու է դարձնում հնչերանգի կարևորությունը: Ուշագրավ է, որ հորդորական ասույթների ավանդական ձևերը, այն է՝ հրամայական նախադասությունները, ուղեկցվելով համապատասխան հնչերանգով, կարող են ձեռք բերել գործաբանական տարատեսակ դրսևորումներ (*“Help me”!* /խնդրանք/, *“Let’s walk”* /առաջարկ/, *“Take an aspirine”* /խորհուրդ/, *“Help yourself!”* /հրավեր/, *“Buy some bread”* /ցուցում/, *“Don’t forget!”* /նախազգուշացում/), որոնք, ըստ էության, շատ հեռու են հրաման լինելուց:

Հնչերանգի որոշիչ դերի մասին է վկայում նաև հորդորի կարգի ոչ ավանդական (այլընտրանքային) ձևերի ուսումնասիրությունը: Այդ ձևերը սովորաբար ներկայացված են լինում պատմողական, հարցական կամ եղանակավորող բայեր պարունակող նախադասություններով, ուստի հորդոր ապահովելու հիմնական ծանրությունն ընկնում է հենց հնչերանգի վրա (*“I want you to try and realize my point of view”* /կամք/, *“Would you mind opening the door?”* /խնդրանք/, *“You must be proud of your wife.”* /խորհուրդ/, *“You can’t talk to me like that!”* /դիտողություն/):

Կարևորելով հնչերանգի դերը՝ բավականին ուշագրավ տեսակետ է հայտնել Վ. Բուզարովը² անդրադառնալով բայազուրկ հորդորական կառույցներին: Նա այդ արտահայտչամիջոցները չի համարում բովանդակային առումով թերի, քանի որ դրանցում բայի բացակայությունը չի դժվարացնում հորդորի արտահայտումը: Հեղինակի բնորոշմամբ նշված ասույթներում հոր-

² Бузаров В.В. Безглагольные побудительные предложения в современном разговорном английском языке. Пятигорск, 1969, стр. 17.

դորն արտահայտվում է յուրահատուկ ձևով՝ հնչերանգի միջոցով:

Թերևս անվիճելի է, որ՝ “Silence!” “Quickly Marry!”; “Here!” “Coffee, please.” հուզական-արտահայտչական արտահայտությունները, ուղեկցվելով հորդորին բնորոշ հնչերանգով, ի զորու են դրդելու խոսակցին գործողության:

Հնչերանգը դիտարկելով որպես նախադասության կազմավորող տարր (a sentence-constitutive element in language)՝ Վ.Վասիլևն³ այն համարում է ոչ միայն հնչյունաբանական (phonetic), այլ նաև քերականական, այն է՝ շարահյուսական արտահայտչամիջոց:

Հատկանշական է, որ անգլերենում կտրուկ հրաման արտահայտող նախադասությունը բնութագրվում է իջնող տոնայնությամբ՝ ի հակադրություն քաղաքավարի խնդրանք արտահայտող նախադասության, որը բնութագրվում է բարձրացող կամ իջնող-բարձրացող տոնայնությամբ, մինչդեռ շարահյուսորեն դրանք երկուսն էլ միևնույն կառուցվածքն ունեն:

Օրինակ՝
 Sit down. ↘ (a categoric command)
 Sit down. or ↗ Sit down. ↗ (a polite request)

Հորդոր արտահայտող իմաստային խմբի կամ նախադասության մեջ հնչերանգը ձևավորող հիմնական բաղադրիչների՝ շեշտի և տոնի բարձրության փոխկապակցվածությունն այնքան սերտ է, որ դրանցից յուրաքանչյուրի փոփոխության դեպքում անխուսափելիորեն կկատարվեն ինչպես իմաստաբանական, այնպես էլ շարահյուսական փոփոխություններ:

Օրինակ՝
 Call the students. ↘ (command)
 Call the students? ↗ (general question)
 Շեշտի փոփոխությունը ևս հնարավոր է՝
 ↘ Call the students (and not dismiss them)

Ուշագրավ է նկատել, որ եթե բառի շեշտադրությունը որոշվում է լեզվի շեշտադրական կանոնների օգնությամբ, ապա հորդորական ասոյթներում շեշտի տեղաբաշխումը որոշվում է հիմնականում իմաստաբանական գործոնի օգնությամբ:

Եզրակացություն: Այսպիսով, կարելի է հստակորեն արձանագրել, որ հնչերանգը՝ որպես հորդորական ասոյթներին բնորոշ պարտադիր նախապայման, օժտված է իմաստաբանական և գործաբանական որոշակի ներու-

³ Vassilyev V. English Phonetics: a theoretical course. Moscow, 1970, 324 p.

Ժով, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում խոսակցին դրդել գործողության: Այն զգացմունքային-կամային լեզվին հատուկ մի բաղադրիչ է, որը կարող է ընկալվել որպես հորդոր արտահայտելու յուրահատուկ ձև, ուստի տրամաբանական կլինի հորդորի կարգի ուսումնասիրության շրջանակներում հնչերանգը դիտարկել որպես հորդորական ասույթների «չնշոյթավորված չափորոշիչ»:

ИНТОНАЦИЯ КАК НЕМАРКИРОВАННЫЙ СТАНДАРТ ПОБУДИТЕЛЬНЫХ ИЗРЕЧЕНИЙ

ДАВИД ЕПИСКОПОСЯН

Интонация как предложение-образующий элемент формирует окончательный вид побудительных изречений, передавая им соответствующий характер. Как надежный указатель интонация играет ключевую роль в распознавании и выделении побудительных изречений, выполняя функции как семантического, так и прагматического компонентов, благодаря чему становится возможным различение разнообразных проявлений категории побуждения.

На основании вышеупомянутых функций интонация может классифицироваться как немаркированный стандарт побудительных изречений.

Ключевые слова – побудительное изречение, эмоционально-волевой язык, интонация, предложение-образующий элемент, немаркированный стандарт.

INTONATION AS AN UNMARKED STANDARD OF INDUCIVE DICTUM

DAVIT YEPISKOPOSYAN

Intonation as a sentence-constitutive element provides a final form to an inductive dictum according a persistence nature to the sentence. As a reliable indication intonation plays a key role in the recognition and allocation of inductive dictum fulfilling the functions of both semantic and pragmatic components. This makes possible to differentiate various manifestations of similar categories of inducement.

On the basis of the above-mentioned functions intonation can be classified as an unmarked standard of inductive dictum.

Key words – inductive dictum, emotional-volitional language, intonation, a sentence-constitutive element, unmarked standard.

ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԻՍՖԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

ԷԼԱՎԵ ԹԱՂՎԱԵԻ

Գունանունները կազմում են տեղանվանահիմքերի առանձին իմաստային դաշտ: Սովորաբար գունանունները տեղանուններ են դառնում միջնորդավորված, այսինքն՝ տվյալ տարածքը, լեռը կամ գետը նմանեցվում են որևէ առարկայի, որն էլ իր հերթին ասոցացվում է որևէ գույնի հետ՝ այդպիսով ստանալով տվյալ գունանունը:

Իսֆահան նահանգի տեղանվանական համակարգում հիմնական տարածում ունեն հետևյալ գունանունները՝ *siyāh* «սև», *sefid* «սպիտակ», *sorx* «կարմիր», *zard* «դեղին», *xākestāri* «մոխրագույն», *sabz* «կանաչ», *golgūn* «վարդագույն», *ātešīn* «բոսորագույն», օր.՝ *Siyāh-Kalak*, *Sang-e Sefid*, *Sorxi*, *Bāy-Sorx*, *Zarīn Šahr*, *Sabzābād* և այլն: Այս անվանումներում հաճախադեպ գործածությունն ունի սպիտակ գույնի անվանումը, որ խորհրդանշում է մաքրություն:

Բանայի բառեր – Իրան, Իսֆահան, տեղանուն, տեղանվանահիմք, իմաստ:

Իսֆահանի տեղանվանահամակարգում տեղանվանահիմք կարող են դառնալ հետևյալ հիմնային գունանունները՝ *siyāh* «սև», *sefid* «սպիտակ», *sorx* «կարմիր», *zard* «դեղին», *xākestāri* «մոխրագույն», *sabz* «կանաչ», *golgūn* «վարդագույն», *ātešīn* «բոսորագույն»: Ընդ որում, նշեմք, որ բառակազմության տեսակետից գունանունները հիմնականում կազմում են բարդ-հարադրավոր տեղանուններ և միայն քիչ դեպքերում կազմության մեջ են մտնում տեղանվանակերտ ձևայինների հետ: Մեր ուսումնասիրած տարածքում՝ Իրանի Իսֆահան նահանգում, առանձնանում են հետևյալ գունանուն տեղանվանահիմքերը՝

1. *siyāh* «սև»¹ - ավ. *Sāma-*, *syāva-*, մ. պ. *siyā*, պրթև. *syāw*(ag) < **syāva-*, այս գունանուն տեղանվանահիմքը բնականուններում ունի հետևյալ երկու իմաստային լիցքերը. ա) այն խորհրդանշում է ծառաշատ, անտառաշատ, այգեշատ բնական պայման, բ) գունանունը կարող է փոխանցված լինել մոտակա գետանունից, որի անվանադրումը հիմնականում կապված է տղմոտ, սև ջուր ունենալու հետ: Իսֆահանում «սև» գունանունը հանդիպում է հետևյալ տեղանուններում.

¹ Այս գունանունը Իրանի, նաև՝ Հայաստանի, բնականուններում, գետանուններում ու լեռնանուններում ամենատարածված գունանունն է:

Siyāh-Kalak – այս բնականունը գտնվում է Իսֆահան նահանգի Սամիրոմ շահրեստանի Կենտրոնական շրջանի Վարդաշտ դեհեստանում: Այս գյուղը 2009 թ. ուներ ընդամենը 36 բնակիչ, 10 ընտանիք: Տեղանունը նշանակում է «սև ամրոց/բերդ», որի անվանումը կապված է, ըստ ամենայնի, անտառներով շրջապատված լինելու հանգամանքի հետ: Առաջին բաղադրիչը Siyāh «սև» գունանունն է, իսկ երկրորդ բաղադրիչը Kalak «ամրոց» նշանակությամբ ժամանակակից պարսկերենում գործածվում է kul/kol, իսկ փուշտուում՝ *kəlay* «գյուղ» ձևերով, իսկ բարբառային տարբերակները հանդիպում են կասպիական բարբառներում, մազանդարաներենում, քրդերենում, հմմտ.՝ մազանդարաներեն *kəla, kolə, qalə, kaləya* նշանակում է «գյուղ, բնակավայր, ամրոց»²քրդ. *kalə* «ամրոց»: Ըստ Հ.Վ. Բեյլիի՝ այս բառածը ծագել է հին իրան. *kat- / *čat- < հնդ. եվր. *kot- արմատից՝ «ծածկել» նշանակությամբ: Գիտնականն այդ ստուգաբանությունը հիմնավորում է միջին պրսկ. *kalāč* «ամրոց» բառի մեջ հին իրան. *-t- > -l- հնչյունական զարգացմամբ: Բառերի այս խմբի ծագումը նա կապում է *kata- (ka-) «տուն» (ավ. kata «սենյակ, տուն», սողդ. *kt'k-/katē* «սենյակ», պաիլավերեն *katak*, նպրսկ. *kade, kad*, փուշտու *kəlay* և այլն) ձևի հետ:

Հետևաբար, ենթադրում է *kalāč* –ի համար (համապատասխանաբար՝ *kalā*) –*āka* և *kalāt(ah)* –ի համար՝ –*āta*- վերջածանցները (հմմտ. *kavāta*)³: Այսպիսով, կարելի է ասել, որ *kalāt, kalāk* (համապատասխանաբար՝ քրդ. *kalā* < *kalāč*) միևնույն ձևի ածանցավոր, իսկ ժամանակակից պարսկերենի *kul* բառույթը դրա պարզ տարբերակն է⁴: *Lāy-Siyāh*- դեհեստանի անունն է Իսֆահանի Նային շահրեստանի Կենտրոնական շրջանում: Այս տեղանունը ևս նշանակում է «սև ամրոց»: *Lāy*- ձևը Այլերսը նշում է «շերտ, նաև լեռների արանքում գտնվող վայր» նշանակությամբ < հին. իր. **dāta*-⁵

2. *Sefid* «սպիտակ» - ավ. *Spaēta*-, մ. պ. *spēt*, պրթև. *ispēd*, սողդ. ‘*sp’yt’k* < **spaita*- Իրանի տեղանվանական համակարգի լայն գործածություն ունեցող հաջորդ գունանունն է: Տեղանուններում ունի սպիտակ-սև, համապատաս-

² De Morgan, J., (1899), *Études linguistiques: Dialectes kurdes, Langues et dialectes du nord de la Perse, Imprimerie nationale, Paris, v. V, pp 222-223;*

³ Bailey, H. W., (1959), *Ambages Indoiranicae, Instituto Universitario Orientale Annali Sezione Linguistica, 1/2., Napoli, pp. 118-120.*

⁴ Ասադուրյան Ա., (2008), –*kalāt, -kalāta/-kalāte* տոպոֆորմանտը ժամանակակից Իրանի տեղանվանական համակարգում, *Orientalia*, Երևան, ԻԻԿ, հ. VI, էջ 11-14:

⁵ Eilers, W., (1954), *Der Name Demawend, ARCHIV ORIENTALNI, XXII, p. 350.*

խանաբար՝ բարի- չար հակադրության նշանակությունը, ինչպես նաև բնակլիմայական պայմաններից ելնելով՝ սպիտակ քարեր, ավազ կամ սպիտակ հանքատեսակներ՝ պեղիտ, կրաքար պարունակող վայրերը բնութագրելու համար: Սպիտակ գունանունը նաև գործածվում է գետանուններում, որը կապված է սպիտակ գույն հիշեցնող ջուր ունենալու կամ փրփրոտ լինելու հետ, երբ փրփուրների արդյունքում ջուրը սպիտակ է թվում: Գետանունից տեղանուն դառնալու շղթան տեղանվանագիտության մեջ արդեն հիմնավոր երևույթ է: Իսֆահանի տարածքում արձանագրվել են հետևյալ տեղանունները.

Sang-e Sefid - Խանսար շահրեստանի Չեշմեսար դեհեստանում: Տեղանունը նշանակում է «սպիտակ քար» և բաղկացած է sefid «սպիտակ» գունանունից և sang «քար» բառույթից: Կազմությունը իզաֆեթային կառույց է:

Češme-ye Sefid – տեղանունը գտնվում է Սամիրոմ շահրեստանի Հանա դեհեստանում: Բաղկացած է Češme «աղբյուր» և Sefid «սպիտակ» բառամիավորներից: Տեղանունը նշանակում է «սպիտակ աղբյուր» և շարահյուսորեն կապակցված են իզաֆետային կապով:

Āb-e Sefidāb – Քաշանի Քուիփայե դեհեստանում է գտնվում այս բնակավայրը: Տեղանունը նշանակում է «Սպիտակ ջուր»: Տեղանվան մեջ āb «ջուր» < *špa- միավորը կրկնակի է գործածվել, ինչից կարելի է ենթադրել, որ Sefidāb-ը առանձին գետանուն է կամ աղբյուրի անուն:

Asfidān – Նաթանզի Քարքաս դեհեստան այս բնակավայրը ածանցավոր ձև է և կազմված է -dān ինչ-որ բան ունեցող, պարունակող իմաստն արտահայտող վերջածանցով < *dā- «դնել, տեղավորել» արմատից, հմմտ.՝ սանսկրիտ dhāna- «աման»:

Čāh-e Sang-e Sefid – Բարխար օ Մեյմե շահրեստանի Բարխար-ե Մեյմե դեհեստանում գտնվող այս բնականունը նշանակում է «Սպիտակ քարի հոր»՝ Čāh «հոր» Sang «քար», Sefid «սպիտակ»:

Sahrāxāl-e Sefid - Բարխար օ Մեյմե շահրեստանի Մուրջեխոր դեհեստանում գտնվող այս տեղանունը բառացի բաղկացած է Sahrā- «դաշտ», -xāl «խալ» և Sefid «սպիտակ» բառամիավորներից, սակայն որպես տեղանուն դժվար մեկնաբանելի է:

Qal’e-ye Sefid – Մոբարաքե շահրեստանի Թալախունչե դեհեստանի այս գյուղանունը նշանակում է «սպիտակ ամրոց»: Գունանվան այս գործածությունը կապված է սպիտակ քարաշեն ամրոցի գոյության հետ այս բնակավայրում: Կազմված է Qal’e «ամրոց» և Sefid «սպիտակ» բառամիավորներից:

Sefid-Dašt – Արան օ Բիդգոլ շահրեստանի խոշոր դեհեստաններից մեկն է:

Նշանակում է «սպիտակ դաշտ»՝ Sefid- «սպիտակ» և -dašt «դաշտ», հմմտ. հլվ. Dašt «դաշտ» > հյ. դաշտ:

Sefid-Šahr – Արան օ Բիդգոլ շահրեստանի դեհեստաններից է, և տեղանունը նշանակում է «սպիտակ քաղաք»: Այս տեղանվան մեջ Sefid գունանունը տեղանուն է կազմել Šahr «քաղաք» միավորի հետ, հմմտ.՝ հ. պրսկ. Xšaθra- «թագավորություն, իշխանություն», ավ. Xšaθra- «տերություն, իշխանություն», պիլվ. Xšatr «երկիր», պրսկ. Šahr⁶, քրդ. Šār «քաղաք» < հին իր. *xšāy- «իշխել», հյ. աշխարհ < իր⁷.

Damāye-ye Sefid – Սամիրոմ-ե Սոֆլա շահրեստանի Համգին դեհեստանում է գտնվում այս բնականունը, որը նշանակում է «սպիտակ գագաթ», հմմտ.՝ արաբ. Damāye «գագաթ» և Sefid «սպիտակ»:

3. Sorx «կարմիր» – ավ. suxra-, մ. պ. suhr, պրթև. suxrag, այս գունանունով կազմված տեղանունները Իսֆահանի նահանգում հետևյալներն են:

Sorxī – տեղանունը գտնվում է Իսֆահան շահրեստանի Թուդաշաք դեհեստանում: Գյուղը 2009 թ. բնակեցված էր 30 ընտանիքով, որոնք խոսում էին տեղական բարբառով: Բնականունը նշանակում է «կարմրավոր», կազմված է 7 ածանցով < մ. իր.-ի, -k -ի անկմամբ:

Qal'e-ye Sorx – Իսֆահանում արձանագրված է երկու նույնանուն բնակավայր՝ Ֆարդունշահր շահրեստանի Աշայեր դեհեստանում և Ֆալավարջան շահրեստանի Գարքոն դեհեստանում: Տեղանունը նշանակում է «կարմիր ամրոց», հմմտ.՝ Qal'e «ամրոց» և Sorx «կարմիր»:

Ma'adan-e Tappe-ye Sorx – այս տեղանունը գտնվում է Ֆալավարջան շահրեստանի Աբրիշամ դեհեստանում և կազմված է Ma'adan արաբ. «հանք», Tappe «բլուր» և Sorx «կարմիր» միավորներից: Այս տեղանունը կապված է տարածքում կարմիր հանքաքարի գոյության հետ: Ըստ կազմության՝ տեղանունը եռարմատ բարդ կազմություն է, որն, ի դեպ, Իրանի տեղանվանական համակարգում տարածված նոր շրջանի տեղանուններից է:

⁶ Պարսկերենում Šahr ձևը չի համապատասխանում հարավարևմտյան բարբառների հնչյունական զարգացման օրենքներին, ըստ որի՝ այս բառը պետք է ունենար *šas ձևը, տե՛ս մանրամասն՝ Gershevich 1985: 194-225:

⁷ Աճառյան Հր., Հայերենի արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, հ. 3, 1977:

Robāt-e Sorx-e O'lyā – այս բնականունը գտնվում է Գուլիայեզան շահրեստանի Քենար-Ռուդխանե դեհեստանում: Տեղանունն ունի «վերին կարմիր գյուղակ» նշանակությունը: Ավելի բառացի մեկնաբանության դեպքում պետք է նշենք, որ Robāt արաբերեն բառը «իջևանատուն, աղքատների կացարան» իմաստից բացի, «գյուղ, փոքր ավան» իմաստով կիրառվել է դեռևս Hodūd-ol-'ālam երկրում (Dehxodā, համապատասխան բառահոդվածը): Իսկ կրկին արաբերեն O'lyā միավորը «վերին» նշանակությամբ Իրանի տեղանվանահամակարգում աշխարհագրական դիրքը բնորոշող հիմնական ձևայիններից է:

Deh-e Sorx «կարմիր գյուղ» տեղանունը գտնվում է Մոբարաքե շահրեստանի Նուրաբադ դեհեստանում: Այս տեղանունը կարելի է մեկնաբանել կարմիր հողեր ունեցող գյուղ նշանակությամբ:

Kabūtār-e Sorx – Իսֆահանի Չադեզան շահրեստանի Կենտրոնական շրջանի խոշոր դեհեստաններից է: Տեղանունը նշանակում է «կարմիր աղավնի»: Այս տեղանվան իմաստային դաշտը դիտարկելիս այն քննության է ենթակա նաև որպես կենդանիների անունով կազմված հատկանուն և պաշտամունքային լիցք կրող տեղանուն, քանզի նրա առաջացման հիմքում ընկած է իսլամական հատիսներում պահպանված այն պատմությունը, որ Մուհամմեդ մարգարեն իր տանը պահել է երկու կարմիր աղավնի, և իսլամական հավատալիքային համակարգում կարմիր աղավնին ձեռք է բերել պաշտամունքային նշանակություն⁸: Կարծում ենք՝ այս տեղանվան համար այս մեկնաբանությունը լիովին ընդունելի է, քանզի ժողովրդական հավատալիքներում աղավնի պահելը չունի այն դրական լիցքը, որը հիմք հանդիսանար՝ դեհեստանը անվանադրելու համար:

Bāy-e Sorx – տեղանունը գտնվում է Շահրեզա շահրեստանի Մանգարի յե դեհեստանում: Տեղանունը նշանակում է «կարմիր այգի», հմմտ.՝ Bāy-«այգի» և Sorx գունանունը:

4. Zard «դեղին» - ավ. zari, zāri-, zairita-, մ. պ. zart, սող. zyrtyh < *zaritaka-, այս գունանունն իրանական աշխարհընկալման մեջ նույնացվում է «արքայականության, իշխանության» հետ, ինչը ասոցացվում է նաև ոսկու և նրա գույնի հետ: Այս տեղանվանահիմքով կազմված տեղանունները Իսֆահանի նահանգում հետևյալն են.

⁸ Ըստ նույն հատիսների՝ շիական 6-րդ իմամ Ջաֆար Սադեդը իր տանը պահել է երեք կանաչ աղավնի, և կանաչ աղավնին էլ խորհրդանշում է այս իմամին:

Zarde – բնակավայրը գտնվում է Նային շահրեստանի Քուհեստան դեհեստանում:

Կազմված է –e ածանցով և նշանակում է «դեղնավուն, դեղին բնակավայր»:

Zard-Xašūye – այս տեղանունը գտնվում է Իսֆահանի Լանջան շահրեստանի Չամհուդ դեհեստանում և, ըստ ամենայնի, կազմված է Xašūye անձնանունից: Տեղանվան այլ մեկնաբանություն առաջարկել չենք կարող:

Zard Fahre– տեղանունը, որը գտնվում է Ֆարդունշահր շահրեստանի Կենտրոնական շրջանում, ունի «դեղին սալաքար» նշանակությունը: Կազմված է Zard «դեղին», Fahr արաբ. «ջրաղացի ներքևի սալաքար» բառույթներից և –e ածանցից:

Նման տեղանվան ընտրությունը կապված է գյուղի ջրաղացի նշանավոր, խոշոր սալաքարի հետ:

Zard Nojān – այս բնականունը գտնվում է Իսֆահանի Ջեյ դեհեստանում:

Տեղանունը նշանակում է «դեղին երախներ», կազմված է Zard «դեղին», Noj- «ըմպան, երախ» և -ān հոգնակիակերտ ձևույթից: Հետաքրքիր է, որ Գոլփայեգան շահրեստանի Նեյվան դեհեստանում է գտնվում Zar Nojān տեղանունը, որը նույնական է քննարկվող տեղանվան հետ, և այստեղ նկատելի է արդեն նշված Zard «դեղին» և Zar «ոսկի» գունանվանական գործածությունը:

Zarīn Šahr – Լենջան շահրեստանի Կենտրոնական շրջանի քաղաքներից է, որը նշանակում է «ոսկե քաղաք», ինչը կրկին դեղին գունանվան գործածություն է: Իսկ Բարխար օ Մեյմե շահրեստանի Zarekān տեղանունը՝ դեհեստան, չեն կարծում՝ կապված է գունանվան հետ: Այս տեղանունը նշանակում է «ոսկու հանք», կազմված է Zar «ոսկի» և -kān «հանք» < *kan- «փորել» արմատից:

5. sabz «կանաչ» - մ. պ. saβz, այս գունանվան գործածությունը հիմնականում կապվում է բնության, փարթամ բուսականությունը նկարագրելու հետ: Իսֆահանում արձանագրվել են հետևյալ տեղանունները.

Sabzābād – տեղանունը գտնվում է Սամիրոմ շահրեստանի Վարդաշտ դեհեստանում: Ածանցավոր կազմություն է -ābād տեղանվանակերտ ձևույթով և նշանակում է «կանաչառատ, այսինքն՝ փարթամ բնություն ունեցող»:

Čāh-e Sabzevārī – այս տեղանունը գտնվում է Շահռեգա շահրեստանի Մանգարիե դեհեստանում և տեղանունից կազմված տեղանուն է: Նման մեկնաբանությունը թույլատրելի է երկու առումով. նախ՝ Իրանի տեղանվանական համակարգում Sabzevār–ը տարածված տեղանուն է, հմմտ.՝

Խորասան, Թեհրան նահանգներում և Երկրորդ՝ -ի ածանցը այստեղ ցույց է տալիս պատկանելություն, այսինքն՝ «Սաբզեվարիի հոր»: Ինչ վերաբերում է հենց Sabzevār ձևին, ապա այն կրկին ածանցավոր կազմություն է և կազմված է -vār տեղանվանակերտ ձևույթով, որն արտահայտում է «ինչ-որ բանով առատ լինելու» նշանակությունը < *baraka- և տեղանունը նշանակում է «կանաչառատ, բուսականությամբ առատ»:

6. Golgūn «վարդագույն» - այս գունանունը մեծ տարածում չունի քննարկվող տարածքի տեղանուններում, սակայն Իրանի տեղանվանահամակարգում հաճախ հանդիպող անուններից է: Այս գունանունն ունի նաև սիմվոլիկ նշանակություն, ինչն արտացոլված է հատկապես պարսից գրականության մեջ: Այն գործածվում է «արեգակ» և նաև «գինի» իմաստով: Իսֆահանում արձանագրվել է միայն մեկ դեպքում. Ֆալավարջան դեհեստանի Սարնֆիրուզան դեհեստանի Golgūn բնակավայրն է:

ТОПОНИМЫ, ОБРАЗОВАННЫЕ ОТ НАЗВАНИЙ ЦВЕТА В ПРОВИНЦИИ ИСФАХАН

ЭЛАХЕ ТАХВАЕИ

Наименования цветов составляют отдельное семантическое поле среди топонимических основ. Обычно наименования цветов становятся топонимами опосредованно, т.е. данная территория, гора или река ассоциируется с каким-то предметом, который в свою очередь ассоциируется с цветом.

В топонимической системе провинции Исфahan основную роль играют следующие наименования цветов: siyāh “черный”, sefid “белый”, sorx “красный”, zard “желтый”, xākestāri “серый”, sabz “зеленый”, golgūn “розовый” и ātešīn “алый”, например: Siyāh-Kalak, Sang-e Sefid, Sorxī, Bāy-Sorx, Zarīn Šahr, Sabzābād и т.д. Среди этих наименований наибольшее распространение имеет наименование белого цвета, которое символизирует чистоту.

Ключевые слова – Иран, Исфahan, топонимы, атонический, семантика.

**THE TOPONYMS FORMED FROM COLOR NAMES
IN THE PROVINCE OF ISFAHAN**

ELAHE TAGHVAEI

Color toponyms form a separate semantic field among the names of topographical areas. The naming of an area by a color is usually intermediated: that is a certain area, mountain or river is likened to an object, which is in its turn associated with a color and getting that name..

In the toponymic system of Isfahan state the following color names are frequent: black (siyāh), white (sefid), red (sorx), yellow (zard), grey (xākestāri), green (sabz), pink (golgun), scarlet (ātešln) ect. The most common among these is the white color, Which symbolizes purity.

Key words – Iran, Isfahan, toponymy, toponymic base, sense.

**ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՏԵՔՍԻ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՎԵՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ
ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ ԽԹԱՆ**

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎԱՄԱՅԱՆ

Հոդվածում քննվում են լեզվի ցուցային միավորները դրանց համավերաբերական գործառույթի տեսանկյունից, երբ դրանք հղում են խոսույթի որոշակի հատվածների: Կատարելով համավերաբերության գործառույթ՝ ցուցային միավորները խթանում են (գոյութենական) կանխենթադրույթներ: Ուսումնասիրության արդյունքները բացահայտում են, որ տեքստի ցուցային նշան – խոսույթի կանխենթադրույթ համավերաբերությունն իրականում ստեղծում է ամբողջական խոսույթ և ներկապակցված տեքստ:

Բանալի բառեր – ցուցայնություն, ցուցային նշան, կանխենթադրույթ, տեքստի ներկապակցում, համավերաբերություն, ամբողջական խոսույթ, ֆենոմենոլոգիական և լեզվական ճանաչողական կառույցներ:

Տեքստի քերականական ներկապակցման հարաբերությունների առկայացման ամենաառանցքային միջոցներից մեկը դերանվանական վերաբերությունն է:

Դերանունները, որոնց գործառույթը լեզվական ճանաչողական կառույցներն արտալեզվական իրողությունների և իրավիճակների հետ հարաբերակցելն է, իմաստային անփոփոխակներ են¹, քանի որ դրանք ներառում են իրենց հարաբերակից լեզվական ճանաչողական կառույցների իմաստները՝ որպես կանխենթադրույթներ: Փաստորեն դերանունը, վերաբերելով բազմաստորոգական կառույցի որոշակի միավորի/ հատվածի, տեքստի, կանխենթադրում է դրա գոյությունը՝ սերելով (գոյութենական) կանխենթադրույթ, որն այս դեպքում հանդես է գալիս որպես դերանվան/ ցուցային նշանի հարաբերակից, վերաբերելի: Բազմաստորոգական կառույցի, տեքստի մասերի հարաբերակցումը ցուցային նշան - կանխենթադրույթ համավերաբերության միջոցով ստեղծում է ամբողջական խոսույթ և ներկապակցված տեքստ:

Դերանվան իմաստը սահմանելու համար Թ. Գիվոնը դրանց իմաստային կառուցվածքում տարանջատում է երկու տարբեր հիմնիմաստ՝ ա) բոլոր

¹ Шведова Н.Ю. Детерминирующий объект и детерминирующее обстоятельство как самостоятельные распространители предложения // Вопросы языкознания, Москва, 1964, №2, стр. 77-93.

դերանունների իմաստային հատկանիշները գրեթե համընկնում են, բ) դերանուններն առկայացնում են այդ ընդհանուր իմաստային հատկանիշները տեքստում հնարավորինս լիարժեք, առանց այլ իմաստային հատկանիշներ հավելելու²:

Դերանուններով առկայացած լեզվի տարբեր ենթահամակարգերի իմաստները «ամբողջացնում են աշխարհի լեզվական պատկերի գեղարվեստական կտավը»³: Մեր կարծիքով դա նշանակում է, որ աշխարհի լեզվական պատկերի ամբողջականության կարևորագույն նախապայմաններից մեկը մի կողմից բառային միավորի և դրա իմաստի՝ որպես որոշակի (գոյութենական) կանխենթադրույթ, հարաբերակցումն է, իսկ մյուս կողմից դրան հարաբերակից դերանվան իմաստն է, որոնք խոսույթում և տեքստում առկայանում են դերանվանական ներկայակցման վերաբերության հարաբերության միջոցով:

Չնայած, որպես կանոն, վերաբերությունը լեզվական միավորի հարաբերակցումն է արտալեզվական իրողության հետ. այն կարելի է վերագրել նաև մի միավորի հարաբերակցմանը մյուսին տեքստում: Տեքստային համավերաբերության հիմքում ընկած է լեզվական ճանաչողական կառույցի իմաստը (գոյութենական)՝ կանխենթադրույթը. «վերաբերությունը կանխորոշված է իմաստով»⁴: Ե. Պադուչևայի նախանշած իմաստային վերաբերության հիմքը տեքստի, բազմաստորոգական կառույցի որոշակի հատվածի իմաստի, այսինքն՝ (գոյութենական) կանխենթադրույթի առկայությունն է, որն էլ հնարավոր է դարձնում այդ վերաբերությունը՝ ցուցալին միավորը և կանխենթադրույթը դարձնելով համավերաբերելիներ: Այս խնդրի շուրջ Մ. Հելիդեյի և Ռ. Հասանի հայեցակետը գրեթե համընկնում է Ե. Պադուչևայի տեսակետի հետ: Նրանք սահմանում են վերաբերությունը որպես «լեզվական միավորների միջև այնպիսի իմաստային հարաբերություն, որի դեպքում մեկի իմաստը հնարավոր է մեկնել մյուսի վերաբերական իմաստին հարաբերակցելու միջո-

² **Givon T.** Prototypes: Between Plato and Wittgenstein // Noun classes and categorization: Proceedings of a Symposium on categorization and noun classification, Eugene, Oregon, October 1983, Craig C. (ed.), Amsterdam; Philadelphia, 1986, p. 195.

³ **Шведова Н.Ю.** Теоретические результаты, полученные в работе над «Русским семантическим словарем» // Вопросы языкознания, Москва, 1999, №1, стр. 10.

⁴ **Падучева Е.В.** Высказывание и его соотносительность с действительностью (референциальные аспекты семантики местоимений) // Падучева Е.В. Изд. 3-е, стереотипное. Москва, 2002, стр. 70-80.

ցով»⁵: Սակայն դերանունների իմաստն առանձնահատուկ է: Լինելով իմաստային անփոփոխականեր, այսինքն՝ բառեր, որոնք ունեն առավելագույնս ընդհանրական իմաստ, դրանք ձեռք են բերում որոշակի իմաստ միայն տեքստում. «Այս բառերի իմաստը ամբողջովին պայմանավորված է վերաբերելի իմաստային հատկանիշներով, որոնց ընտրությունը կախված է տվյալ խոսքային ակտից»⁶:

Վերաբերության ակտը ենթադրում է տեքստի խոսույթում որոշակիացնել, առանձնացնել որոշակի նախանշված իրողություններ՝ կանխենթադրույթներ: Սա է պատճառը, որ հնարավոր չէ տարանջատել դերանվանական վերաբերությունը և ցուցայնությունը: Վերլուծելով դերանվանական բառերի ծագումն ու իմաստաբանությունը՝ Կ. Բյուլերը դրանք դասում է մեկ խոսքի մասի մեջ՝ ելնելով դրանց գործառական ընդհանրությունից, և ցուցային գործառույթ վերագրում բոլոր տեսակի դերանուններին, որի մեջ մտնում են և՛ հարաբերական, և՛ անձնական դերանունները. «... դասը սահմանվում է ոչ թե դրա անդամների դերանվանական կիրառության հատկանիշով, այլ ցուցային գործառույթի հատկանիշով»⁷:

Է. Բենվենիստի պնդմամբ ցուցային միջոցները կոչված են «ճառայելու լեզուն խոսքի վերածելու համար»⁸: Ցուցային բառերը այսպես կոչված «շարժական որոշիչներ են» (shifters)⁹, որոնք կարող են հղել ցանկացած վերաբերելի, այսինքն՝ խոսույթի ցանկացած կանխենթադրույթի: Ցուցային միավորների հիմնական գործառույթը «զգայական ընկալման ենթակա առարկաների... և երևույթների նույնականացումն ու տարբերակումն է այն հատկանիշների հիման վրա, որոնցով այդ առարկաներն ու երևույթները բնորոշվում են հաղորդակցական ակտի ցուցիչներին հարաբերակցելու միջոցով»¹⁰:

⁵ Халлидей М.А.К., Хасан Р. Когезия в английском языке // Исследования по теории текста. Реферативный сборник. Москва, 1979, стр. 110-111.

⁶ Арутюнова Н.Д. Коммуникативная функция и значение слова // НДВШ ФН, Москва, 1973, № 3, стр. 43.

⁷ Бюлер К. Теория языка. Репрезентативная функция языка: Пер. с нем. /Общ. ред. и коммент. Т.В. Булыгиной, вступ. ст. Т.В. Булыгиной и А.А. Леонтьева/. Москва, 2000, стр. 107.

⁸ Кирвалидзе Н.Г. Прагматический аспект дейктических средств языка // НДВШ ФН, Москва, 1988, № 6, стр. 58.

⁹ Նույն տեղում, էջ 58:

¹⁰ Նույն տեղում:

4. Բյուլերի առաջարկած ցուցայնության հայեցակետը լեզվաբանական հետազոտություններում հիմնականում օգտագործվում է տիպական լեզվական իրավիճակի *ցուցային ցուցիչներ*¹¹ նկարագրելու համար, այսինքն՝ մատնանշում է դրա մասնակիցներին, տեղը և ժամանակը: Սրանք նույնպես խոսույթում հանդես են գալիս որպես (գոյութենական) կանխենթադրույթներ: Հատկանշական է, որ ցուցայնության բոլոր տեսակների իմաստավորման ելակետը հասցեագրողն է: Այս տեսակետից տեղին է մեջբերել՝ ինչպես է բնորոշում ցուցային բառերը Ս. Կացնելսոնը՝ մեր կարծիքով տալով ցուցային միջոցների խոսույթային չափորոշիչները. 1) դրանք իրավիճակային են, այսինքն՝ այդ միավորների իմաստային մեկնությունը կախված է լեզվական իրավիճակից, որից դուրս այդպիսի բառերի իմաստներն անորոշ են և անպարզ, 2) դրանք ծայրահեղ անհատական են (էզոգենտրիկ), այսինքն՝ ցուցային բառերի իմաստային մեկնության համար դրանք պարտադիր անհրաժեշտ է հարաբերակցել խոսողի հետ, 3) ցուցային միավորները սուբյեկտիվ են, այսինքն՝ դրանց իմաստը հնարավոր է մեկնել ոչ թե սեփական հատկանիշների հիման վրա, այլ խոսողի հետ անմիջական հարաբերակցման միջոցով, 4) դրանց իմաստը վայրկենական է ու վաղանցիկ, այն փոխվում է դրանց կիրառման մի դեպքից մյուսը¹²: Այսպիսով, հաղորդակցական-գործաբանական տեսանկյունից ցուցային միավորները հասցեագրողի համար հանդես են գալիս որպես հարաբերակցման կարևորագույն միջոց: Բացի այդ, ցուցային վերաբերությունը և դրանից սերող կանխենթադրույթները վայրկենական են և վաղանցիկ: Սա նշանակում է, որ միևնույն ցուցային միավորը կարող է կիրառվել միևնույն նախադասության, բազմաստորոգական կառույցի, տեքստի մեջ և հղվել բացարձակապես տարբեր վերաբերելիների: Դրանց վերաբերական իմաստը վերաբերելիի իմաստն է՝ որպես կանխենթադրույթ:

Վերաբերությունը (ցուցային հատկանիշը) հիմնականում առկայանում է ցուցային դերանունների միջոցով: Դրանք են անձնական, անդրադարձական, ցուցական, հարաբերական և այլ տեսակի դերանունները: Դրանք հղում են որոշակի վերաբերելիի՝ հստակեցնելով մարդկանց, իրեր կամ երևույթներ երկու ձևով՝ կամ լեզվական իրավիճակի ցուցային ցուցիչներին հարաբերակցելու միջոցով, կամ տեքստին հարաբերակցելու միջոցով: Սրանք բոլորը

¹¹ Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. Москва, 1978, 543 с.

¹² Кацнельсон С.Д. Содержание слова, значение и обозначение. Москва-Ленинград, 1965, стр. 5-6.

խոսույթի կառուցվածքի տեսանկյունից կանխենթադրույթներ են: Ցուցային դերանունների շարքին են պատկանում իրավիճակային-ցուցային (ես, դու) և համատեքստային-ցուցային (համավերաբերական (anaphoric)՝ երրորդ դեմքի անձնական, ցուցական և մի շարք այլ դերանուններ¹³:

Իրավիճակային-ցուցային դերանունների վերաբերելիները լեզվական իրավիճակի մասնակիցներն են: Վերաբերության այս տեսակը կոչվում է էկզոֆորիկ: Ասվածը լուսաբանելու համար դիտարկենք մի օրինակ՝

Բեր ինձ տուր, ես կրնեմ,— առաջարկեց վաճառականը¹⁴:

Համատեքստային-ցուցային դերանունները հղում են կատարում լեզվական իրավիճակին կամ դրա տեքստին: Վերաբերության այս տեսակը կոչվում է էնդոֆորիկ վերաբերություն: Հղելով լեզվական հաղորդակցության տեքստին՝ դրանք մատնանշում են որոշակի իրողության գոյությունը և դրա եզակիությունը հաղորդակիցների համար, որի իմաստը վերագրվում է համատեքստային-ցուցային դերանվանը՝ որպես խոսույթային կանխենթադրույթ: Օրինակ՝

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տրվավ բազազ Արտեմի տանը: Պայման էն էր, որ Գիքորը պեպք է տունը մարեր, ամանները լվանար, ուր-նամանները սրբեր, դուրանը բաժին տաներ, ու էս տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի: Մի տարուց ետը բազազը նրան պեպք է տաներ դուրան, շիներ դուրանի «աշկերպ», ու էսպես Գիքորը պեպք է բարձրանար¹⁵:

Վերոբերյալ օրինակներից ակնհայտ է, որ ցուցային դերանունների երկու տեսակներն էլ կատարում են որոշակի վերաբերության գործառույթ՝ դրանով իսկ խթանելով որոշակի խոսույթային կանխենթադրույթ: Այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրը մատնանշում է որոշակի իրողության գոյություն: Այս հայեցակետի ջատագովներն են նաև Մ. Հելիդեյը և Ռ. Հասանը՝ նշելով, որ վերաբերությունը. «...օժտված է որոշակիության իմաստային հատկանիշով, որը դրսևորվում է իրավիճակի համատեքստին հարաբերակցելու միջոցով»¹⁶: Այս տեսակետից մի հարց է ծագում. արդյո՞ք ցանկացած վերաբերություն օժտված է իմաստի որոշակիությամբ, այսինքն՝ կանխենթադրում է որոշակի

¹³ Крылов С.А. О семантике местоименных слов и выражений // Русские местоимения: семантика и грамматика. Владимир, 1989, стр. 8-9.

¹⁴ Թումանյան Հ., Ընտիր երկեր, 2 հատորով: Երևան, 1985: Առցանց աղբյուր. <http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/giqor.html>

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Халлидей М.А.К., Хасан Р. Когезия в английском языке, стр. 111.

իրողության՝ որոշակի (գոյութենական) կանխենթադրույթի գոյություն: Մեր կարծիքով այն, որ վերաբերությունը, հատկապես դերանվանական վերաբերությունը, խթանում է որոշակի (գոյութենական) կանխենթադրույթ, այսինքն՝ իմաստային տեսակետից որոշակի իրողության գոյությունն է մատնանշում, վերագրելի է միայն տեքստային (համավերաբերական) վերաբերությանը լայն իմաստով, որի էությունը որոշակի միավորի իմաստի մեկնությունն է՝ այն տեքստում որոշակի նախանդամի (antecedent) հարաբերակցելու միջոցով: Հենց այդ նախանդամի իմաստը (գոյութենական) կանխենթադրույթն է, որը հանդես է գալիս որպես վերաբերելի որոշակի ցուցչային միավորի համար և կանխենթադրում դրա գոյությունը: Այսինքն՝ տեքստի խոսույթը կազմված է փոխկապակցված կանխենթադրույթների ցանցից, որոնք և հանդես են գալիս որպես նախանդամ՝ դերանվանական ցուցչային վերաբերության իմաստը մեկնելու համար: Փաստորեն ցուցայնությունը հանդես է գալիս որպես կանխենթադրույթի խթան, որը հղում է կատարում խոսույթի կանխենթադրույթի՝ այդպես ապահովելով թե՛ խոսույթի ամբողջականությունը, թե՛ տեքստի ներկապակցումը:

Անձնական դերանունների իմաստի որոշակիությունը պայմանավորված է դրանց նախանդամի *նախանշվածությամբ*¹⁷: Թ. Գիվնը որոշակի է համարում այն վերաբերելին, որն արդեն հիշողության մեջ առկա է՝ ի տարբերություն դեռ չասվածի, չհիշատակվածի¹⁸: Սա հենց կանխենթադրվող տեղեկատվություն է՝ կանխենթադրույթ: Այս տեսակետից անորոշ են տալիս առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների վերաբերելիները, քանի որ դրանց վերաբերելին կարող է և նախանշված չլինել (օրինակ՝ զովագրներում, շահագործման հրահանգներում, ուղեցույցներում և այլն), և, բացի այդ, այն անընդհատ փոփոխվում է՝ հաղորդակիցների դերային (հասցեագրող-հասցեատեր) փոփոխության պատճառով: Բացի այդ, Տ. Նիկոլաևան նշում է, որ. «նախանշվածը կարող է անորոշ լինել, օրինակ՝ *Дайте мне какую-нибудь ручку!* – *Вот и ручка для Вас*»¹⁹:

Փ. Սթրոսոնը²⁰ և նրա հետևորդ Ա. Քրիփքեն²¹ համարում են, որ անորոշ արտահայտություններն ունեն վերաբերելի, սակայն դա իմաստային վերա-

¹⁷ Николаева Т.М. От звука к тексту. Москва, 2000, 679 стр.

¹⁸ Givón Т. Functionalism and grammar. Amsterdam & Philadelphia, 1995, 504 p.

¹⁹ Николаева Т.М. От звука к тексту, стр. 309.

²⁰ Стросон П.Ф. Идентифицирующая референция и истинное значение // Новое в зарубежной лингвистике. Вып. XIII, Москва, 1982, стр. 55-86.

բերություն չէ: Այլ կերպ ասած՝ առկա չէ որևէ նախանդամ, որի իմաստի մեկնությունը՝ որպես կանխենթադրույթ, կհանգեցնե՞ր անորոշ արտահայտության իմաստին՝ դրան հարաբերակցելու դեպքում: Հասցեագրողն օգտագործում է անորոշ լեզվական ճանաչողական կառույցներ՝ անորոշ իրողություններ նշանակելու համար: Մեր կարծիքով այս դեպքում գործ ունենք ոչ թե վերաբերության բացակայության հետ, այլ անորոշ վերաբերության հետ, որոնք (գոյութենական) կանխենթադրույթներ չեն խթանում: Այսպիսով, ի տարբերություն ցուցային դերանունների, անորոշ դերանունների դեպքում գործ ունենք անորոշ վերաբերության հետ, որոնք տեքստում չունեն նախանդամ, որի խոսույթից կանխենթադրվող իմաստը կվերագրվեր նաև դրանց:

Հասցեագրողն օգտագործում է անորոշ, երբեմն հարցական դերանուններ, եթե դրանք մատնանշում են անորոշ իրողություններ, քանի որ դրանցով նշվող իրողությունը հայտնի չէ հաղորդակիցներին հետևյալ դեպքերում.

ա) այն անորոշ է իր համար, սակայն (հավանաբար) որոշակի է հասցեատիրոջ համար: Օրինակ՝

Да, да, как это было? – думал он, вспоминая сон. – Да, как это было? Да! Алабин давал обед в Дармиштадте; нет, не в Дармиштадте, а что-то американское²²;

բ) այն որոշակի է իր համար, սակայն անորոշ հասցեատիրոջ համար: Օրինակ՝

*– Օ՛Ֆ, սիրտս մաշել է,– գանգափվում էր փիկին Նաիրոն.– թե իմանաք՝ **ինչ** եմ քաշում ես դրա ձեռիցը²³;*

գ) այն անորոշ է հաղորդակցման երկու կողմերին էլ: Օրինակ՝

– Долли, что я могу сказать?.. Одно: прости, прости... Вспомни, разве девять лет жизни не могут искупить минуты, минуты...

*Она стояла, опустив глаза, и слушала, ожидая, что он скажет, как будто умоляя его о том, чтобы он **как-нибудь** разуверил ее²⁴:*

²¹ **Kripke S.** Speaker's Reference and Semantic Reference // Contemporary Perspectives in the Philosophy of Language. French P., Uehling T., Wettstein H. (eds). Minneapolis (Minn.), 1977, p. 6-27.

²² **Толстой Л.Н.** Анна Каренина, Сборник сочинений в 22 томах. Том 8, книга первая, стр. 7 // http://rvb.ru/tolstoy/01text/vol_8/0031_1.htm.

²³ **Թումանյան Հ.,** Ընտիր երկեր, 2 հատորով: Երևան, 1985: Աղցանց աղբյուր. <http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/giqor.html>:

Քննված օրինակները բացահայտում են, որ դերանվանական վերաբերությունը հաղորդակցման տվյալ պահին որոշակի խոսույթային իրողությունների իմաստը որոշակիացնելն է՝ կանխենթադրույթներ խթանել՝ հաղորդակցման տեքստի պատշաճ կառուցման, ընկալման և մեկնության համար: Այնուհանդերձ, անորոշ դերանունների դեպքում դրանք վերաբերական, կանխենթադրվող իմաստները կարող են լինել հավասարապես և՛ որոշակի, և՛ անորոշ հաղորդակիցների համար: Այսինքն՝ մի դեպքում դրանք պարտադիր կանխենթադրում են որոշակի իրողության գոյությունը, սակայն այն կարող է որոշակի չլինել հաղորդակիցներից մեկին կամ երկուսին: Այսինքն՝ խոսույթում դրանք առկա են՝ որպես որոշակի տեղեկատվություն՝ կանխենթադրույթ, սակայն հայտնի չեն կամ որոշակի չեն հաղորդակիցներից մեկի կամ երկուսի համար: Վերաբերության ակտը տեղի է ունենում, սակայն այն չի խթանում որոշակի կանխենթադրույթ, քանի որ դրա նախանդամը հստակ չէ: Մյուս դեպքում անորոշ դերանվան վերաբերությունը չի խթանում կանխենթադրույթ, քանի որ տեքստում այն չունի նախանդամ, որի իմաստը կդառնար խոսույթային կանխենթադրույթ, ինչպես վերջին օրինակում:

Իրողության նույնականացումն իր հերթին ենթադրում է դրա գոյությունը, այսինքն՝ խթանում է կանխենթադրույթ լայն իմաստով (ասելով լայն իմաստով՝ նկատի ունենք, որ այդ կանխենթադրույթը կարող է ոչ միայն խոսույթային լինել և սերել խոսույթից, այլ բխել հաղորդակիցների ԿՀ-երից՝ որպես նախադիպային իրողություն, ճանաչողական գիտելիք կամ պատկերացում): Իրողության նույնականացումը հղում է խոսույթի և տեքստի նախանդամներին՝ նախ ստեղծելով ամբողջական խոսույթ, ապա ներկայակցված տեքստ:

Նշենք, որ, բացի վերաբերական գործառույթից, տեքստում ցուցային բառերը ծառայում են նաև շարակարգային փոխարինման համար: Համատեղելով ցուցային և փոխարինման գործառույթները՝ ցուցային դերանունները մասնակցում են տեքստի կառուցմանը՝ հանդես գալով որպես շարահյուսական ցուցայնության միջոցներ, որոնք ծառայում են տեքստի շարահյուսական միավորները կապակցելու համար:

Ուսումնասիրության արդյունքները բացահայտում են, որ դերանվանական միավորները կարող են կատարել ցուցային վերաբերական գործա-

²⁴ Толстой Л.Н. Анна Каренина. Сборник сочинений в 22 томах. Том 8, книга первая, стр. 18 // http://rvb.ru/tolstoy/01text/vol_8/0031_1.htm:

ույթ ինչպես տարբեր նվազագույն տեքստային կառույցներում, այնպես էլ բարդ շարահյուսական միավորներում: Այսպիսի կառույցներում դրանք հիմնականում հանդես են գալիս համավերաբերական գործառույթով՝ խթանելով (գոյութենական) կանխենթադրույթներ:

ДЕЙКСИС В АНАФОРИЧЕСКОЙ ФУНКЦИИ И КАК АКТИВАТОР ПРЕСУППОЗИЦИЙ

ГРАНУШ ТОВМАСЯН

Дейктические знаки языка функционируют как анафора при соотношении этих же единиц с частями дискурса. В анафорической функции дейктические знаки фактически активируют (экзистенциальные) пресуппозиции. Соотношение дейктический знак – пресуппозиция формирует когерентный дискурс и связный текст, так как она создает имплицитную связь между частями текста и дискурса.

Ключевые слова – дейксис, дейктический знак, пресуппозиция, связный текст, когерентный дискурс, анафора, феноменологические и языковые когнитивные структуры.

DEIXIS AS ANAPHORA AND PRESUPPOSITION TRIGGER

HRANUSH TOVMASYAN

This article is concerned with the analysis of deictic units in the perspective of their anaphoric function when they refer to certain definite parts of the discourse. Functioning as anaphora deictic units they in fact trigger (existential) presuppositions.

The findings of the study reveal that deictic signs – discourse deixis functioning as anaphora in fact creates a coherent discourse and a cohesive text as it implicitly unites parts of the text and discourse.

Key words – deixis, deictic sign, presupposition, text cohesion, anaphora, text coherence, phenomenological and linguistic cognitive structures.

ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ - 2

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քերականական, համաձայնական և բանասիրական վերլուծության տեսակները հնարավորություն են տալիս բառը ուսումնասիրելու համակողմանի՝ և՛ բառակազմական, և՛ իմաստային, և՛ կատարած պաշտոնի տեսանկյունից:

Քանալի բառեր – քերականական վերլուծություն, համաձայնական վերլուծություն, բանասիրական վերլուծություն:

Քերականությունը, ըստ մեր նախնիների, ինչպես նշում է Ա. Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության «Ուղղագրության, առոգանության, տաղաչափության» գլխի «Ծանուցման» մեջ բաժանվում է հինգ գլխավոր մասերի կամ բաժինների. 1.Ստուգաբանություն 2.Համաձայնություն 3.Ուղղագրություն 4.Առոգանություն 5.Տաղաչափություն: «Ստուգաբանությունն այն մասն է՝ որ իրաքանչիւր բառի կամ մասանց բանի (խոսքի մասեր) քերականական կազմութեան կանոնները կաանդէ (գորօրինակ՝ հոլովմունք, խոնարհմունք եւ այլն): Ստուգաբանություն բառին այս նշանակութիւնը գրեթէ անսովոր եղած է»: Արդեն իսկ նրա կենդանության օրոք իր իսկ խոսքերով «Արդի ստուգաբանութեան խնդրո առարկան միայն բառերի ներքին կամ ծածուկ կազմութիւնն ու բաղադրութիւնը վերլուծելն է»: Օրինակ՝ գրք. Տէր անունը (գոյական) երկու տարրերի է լուծարում (փխկ. բաղկացնելու) տի և այր, գայթազղել բայը՝ գայթ և գիղ (գայթել,զղել կամ գիլ), նմանապես էլ աշխարհաբար քովնտի մակբայը մեկնաբանում է հնագույն ձևով՝ քովն դի կամ ի քովն դիհ (իմա՝ մոտը դրված, կողքին):

Լուծում կամ վերլուծություն է կոչվում քերականության գործնական մասի երեք հրահանգներից (1.լուծում կամ վերլուծություն, 2.ընթերցում, 3.շարադրություն) առաջինը:

1.Վերլուծությունը քերականության կարգի մեջ է մտնում և հավասարապես իբրև հիմք ու առաջնորդ է ծառայում մյուս երկուսին, այսինքն՝ ընթերցվածը ճիշտ, անսխալ գրելու (իմա՝ շարադրելու) համար:

Վերլուծությունը խոսքի յուրաքանչյուր մասերի առանձին քննությամբ, դրանց քերականական կանոնը (օրինաչափություն), հանգամանքը, կատարած պաշտոնն է որոշում: Վերլուծությունը բաղադրյալից գնում է դեպի պարզ, այսինքն՝ բաղադրյալը պարզաբանում է: Քերականական վերլուծությունը դյու-

րին և գործնական դարձնելու համար երկու տեսակի կարող ենք բաժանել

1.Ստուգաբանական վերլուծություն, որը զբաղվում է բառերի խոսքի մասերի (գոյական, ածական, բայ ...) և ձևերի (հոլով, խոնարհում ...) որոշմամբ և սահմանմամբ: Այսպիսով, ստուգաբանությունը հանդես է գալիս բառակազմության օրինաչափությունները ներկայացնող գիտակարգ՝ ելնելով վերը հիշված ստուգաբանության՝ Ա. Այտընյանի տված մեկնությունից: Օրինակ՝ Անտառին ծառն էլալ դաշտ գնաց, մտածեց եւ ըսաւ իւր ընկերներուն: Անտառի-ն - հասարակ գոյական, եզակի սեռական, ն որոշյալ հոդով: Ծառն - հասարակ գոյական, եզակի ուղղական, ն ստացական հոդով որոշյալ: Օրինակ (գրաբար) Չոգաւ գնաց անտառին փայտն ի դաշտն:

Չոգաւ - չէզոք բայ, անկանոն, խառն խնրհմ, սհմ. կտր. եզակի Յդ.: Գնաց - չէզոք բայ, անկանոն, խառն խնրհմ, սհմ. կտր. եզակի Յդ.:

2. Համաձայնական վերլուծությունը խոսքը կամ ամբողջ նախադասությունն է վերլուծում, խոսքի մասերի փոխհարաբերությունը կամ յուրաքանչյուրի կատարած պաշտոնը: Օրինակ՝ Անտառին - յատկացուցիչ, ծառը՝ յատկացելոյն: Ծառն - անուն- բայի՝ էլալ գնաց բային եւ յատկացեալ՝ անտառին յտկցցչին: /Գրաբար/ Չոգաւ - գլխատր բայ՝ փայտն անուան -բայի: Գնաց - երկրորդական բայ, ավելադրութեամբ կրկնուած, չոգաւ բայի նույնանշան:

3.Բանասիրական վերլուծությունը, որը կատարում ենք՝ դուրս չգալով քերականական ոլորտից, յուրաքանչյուր արմատի կազմախոսությունը (իմա՝ բաղադրություն) գտնելով կամ տարրերը վերլուծելով, օրինակ՝ պարզ է, բարդ, թե ածանցավոր:

Արմատ է կոչվում սկզբնական բառը, որից ածանց է առաջանում, ծագում:Պարզ բառը իրենցից առաջացածների նկատմամբ արմատ կամ արմատական է կոչվում: Օրինակ՝ հավատալ բայը հավատացնել բայի արմատն է, իսկ հավատալ բայի արմատը հավատ պարզ բառն է: Արմատ բառերից կամ պարզ բառերից (այսուհետև՝ արմատականներ) ոմանք միայն ածանցների ու բարդությունների մեջ են լինում և առանձին չեն գործածվում, այսպես օրինակ՝ տանջ, զբաղ, զգայ, զեղ, հեղ, պաշտ, պարիշտ, մոլ, տիւ, հեղձ (տանջալլուկ, զգայացունց, անզգա, մտազբաղ, սիրազեղ, ծայրահեղ, հեղեղատ, եսապաշտ, աստվածապաշտ, ամբարիշտ, կնամոլ, տվնջյան, շնչահեղձ): Արդի հայերենում կան պարզ բառեր, որոնք գրաբարի մեջ եղել են միայն արմատական և ակնառու են (երևում են) ածանցումների մեջ և որպես այդպիսին առանձին չեն գործածվում:

Այսպես օրինակ՝ շարժ, ծիծաղ, սատակ, դյուրաշարժ, ինքնաշարժ, գե-

ղաժիժաղ, ինքնասատակ:

Բառաձև ասելով հասկանում ենք միևնույն բառի այլևայլ ձևափոխումների արդյունքում փարբեր նշանակություններ ստանալը: Այստեղ մի փոքր անդրադարձ կատարենք գրաբարի չորս լծորդությունների ծագմանը և կազմությանը:

1. Ա լծորդությունն էլ, եցի, ե', ած, քիչ թե շատ նույնանում է գրաբարի հետ, օրինակ՝ *գործ* – *եմ, եցի, եա'*: Գրաբար –անեն լծորդության բայերն էլ, որոնք բոլորովին այլ ձև ու խոնարհումներ ունեն, այս պարզեցված լծորդության մեջ են մտել *Թ* - *Ժ* դարերից սկսած – *լուծիլ, լուծիցի, լուծի', օծիլ, օծիցի, օծի'*: Այս արմատների պարզեցումը հասնում է մինչև հինգերորդ դարը:

2. Բ լծորդությունն՝ *իմ, եցայ, ե', ած*, գրաբարի մեջ առանձին լծորդություն չէ, այլ Ա լծորդության կրավորական ձևն է: Այդ իսկ պատճառով էլ արդի լեզվի Բ լծորդության բայերն ընդհանրապես հին լեզվի կրավորակերպ չեզոքներն են: Մի քանի ներգործական էլ որ կան, նույնպես նույն չեզոքներից են առաջացել ներգործական դառնալով: Գրաբար չեզոք է *սովորիմ, սովորեցայ, սովորեաց*, սակայն այսօր լծորդության այս ձևը բուն ներկայի ձևն է և իր առանձին կրավորականն ունի:

3. Գ լծորդությունն՝ *ալ, ացի, ա, ացած*, գրաբարի հետ նույնն է՝ *կարդամ, ացի, -ա', -ացեալ*:

4. Դ լծորդությունը՝ *նալ, ցայ, ցիր, ցած*, գրաբարի մեջ Գ լծորդության կրավորական ձև (*մոռանամ, մոռացայ, մոռացիր, մոռացեալ*) արդի լծորդության մեջ այն հանդես է գալիս որպես առանձին ձևն է (լծորդություն և իր առանձին կրավորական ձևն ունի): *Ած* անցյալը գրաբարի մեջ հանդես է եկել իբրև բայանուն, իսկ միջին դարերում դարձավ բայի անցյալ: *էր* անցյալը գրաբարյան *եալ-ն* է, որը *Ժ* - *ԺԱ* դարերից ի վեր փոխակերպվել է *ել -ի*, ինչպես մինչև հիմա գավառներում և ապա՝ *եր - ի*: Կան *նել, նիլ, նալ* վերջավորությամբ բայեր, որոնք չորրորդ լծորդության (*եալ*) նման են խոնարհվում, բայց անկանոն ժամանակների մեջ ն տառը *ց-ի* փոխվելու դեպքում դուրս են մնում: Ելլենել և ըլլալ բայերը *նել, նալ* վերջավորություններից են համարվում՝ ելլել, ելայ, ե'լ կամ ելի'ր, ելած – ըլլալ, եղայ, եղի'ր, եղած: Ըլլալ բառը արևմտահայերենում էական բայ է, որն ունի բոլոր ժամանակաձևերը: Այսպես՝ սահմանական ներկա – կըլլամ, կըլլաս, կըլլայ, կըլլանք, կըլլաք, կըլլան, անկատար – կըլլայի, կըլլայիր, կըլլար, կըլլայինք, կըլլայիք, կըլլայիլ և այլն: Ելլիլ բայի հին ձևն էր ելիլ, գրաբարում՝ ելանել, որն արտասանության դյուրության համար դարձել է ելլիլ: Ընդհանրապես լեզուներում կանոն է, որ *լն* փոխակերպվի *լլ-ի* կամ

նն-ի: Այսօր էլ դեռ հանդիպում ենք ելինի բառին: Գրաբարում եղանիլ բայը մի ժամանակ գործածվել է եղնիլ, ապա եղնալ, իսկ բարբառներում մինչև այսօր եղնալ > կեղնայ, դ –ն դարձել է լ: Այլ է լինել բայից(ԺԱ – ԺԲ) դարերից սկսած կու լինի հին ձևը, որը դարձել է կուվնի, կու լնի և վերջապես ներկայի բարբառային ձևը՝ կ. ըլլի (լլ փոխանակ լն):

Ի՞նչ է ածանցը և ի՞նչ արժեք ունի: *Ածանցում է կոչվում այն քերականական երևույթը, երբ մի բառից առաջ է գալիս մեկ այլ բառ, իսկ առաջացած բառը կոչվում է ածանցյալ*: Այսպես՝ ծառայ բառից ածանցվել են ծառայություն գոյականը, ծառայական ածականը և ծառայել բայը: *Ածանցը պարզ բառի վրա ավելացած մասնիկն է, իսկ ածանցյալ բառը սկզբնամասում կամ վերջնամասում ունի հավելում, այսպես՝ աննման, ծանրություն*: Ա. Այտընյանը գրում է. «*Մասնիկն ըստ ինքեան աննշանակ ծայն մըն է՝ որ բառի վրա ավելանալով՝ անոր զար նշանակություն կու տայ*»: Գոյական խոսքի մասից առաջ է գալիս ածական, ածականից գոյական կամ բայ կամ որևէ այլ խոսքի մասանց պատկանելիության բառ՝ սեր - սիրային, սիրել, նազանք - նազելի, նազել: *Մեկ պարզ բառը կարող է սրանալ տարբեր ածանցներ, այսպես՝ մեղ բառի ածանցներն են՝ մեղ-ք, -աց, - ավոր, ան - մեղ, անմեղ - ութին, մեղ - անչել, մեղանչ - ական, ան - մեղանչական, սրանց հավելենք նաև գոյականի հոգնակիակերտ ածանցներ՝ մեղք - ք, մեղք - եր, հոլովական վերջավորություններ՝ մեղք - ի, - ին, -ից, ածականակերտ մասնիկներ՝ ամենաանմեղ, ամենից անմեղ, բայակերտ՝ մեղանչած, մեղանչող և այլն*: Ածանցման կանոնները հետևյալն են.

1. Գրաբարում ածանցման ժամանակ ածանցը գլխավոր բառին՝ արմատին, կապվում է ա հոդակապով՝ *փայտ - ա - նոց, դպր - ա - նոց*:

2. Գրաբարյան ձևով ածանցման ժամանակ մասնիկից առաջ մտնում է ա հոդակապը, եթե սկսվում է բաղաձայնով, ինչպես՝ *ցավագին, զինվորական, իյուրանոց* և այլն, նմանապես և բայերը՝ *զվարճանալ, գողանալ*:

3. Ձայնավորների սղման, փոփոխման կանոնը ճշգրիտ պահպանվում է՝ *սիրտ - սրտագին, գիր - գրային*:

4. Հոգնակիակերտ և բայանուն ք տառը դուրս է ընկնում ածանցման ժամանակ՝ *մեղք - մեղավոր, անմեղ, մեղանչել, անմեղ, խեղք - խելացի, փառք - փառավոր*: Սակայն կա բացառություն: Եթե ք -ն արմատական բաղաձայն է, այն դուրս չի ընկնում, այսպես՝ *կնքել, անկնիք*:

5. Եթե ա հոդակապից առաջ հանդիպում է ի- ն, ապա այն դառնում է ե, այսպես՝ *տարեկան, գառնեցի* և այլն: Որոշ դեպքերում էլ ի տառը սղվում է՝ *եկեղեցի - եկեղեցական, պիտանի - պիտանացու*:

6. Ածանցները լինում են. *նախադաս* (եղծման, ժխտման, բացասական՝ *ան, ապ, դժ կամ րժ, չ* - անողոք, ապաժամ, չկամ, տմարդի, դժպատեհ, տժգույն), կան նաև նախածանցներ, որոնք բառին հաղորդում են իմաստներ. արտ - արտադրել, (գ) արտուղի, բաց - բացատրել, հակ - հակադարձ, փոխ - փոխադրել, տրամ - տրամադրել, տրամաբան, վեր - վերադիր, պար - պարագիծ, տար - տարագիր, մակ - մակաբերել և այլն: Ըստ Ա. Այտընյանի՝ այս նախածանցների մեծ մասը ստեղծվել է հունարենի նմանությամբ: *Վերջադաս ածանցները* (*հետդաս մասնիկներ*) բավականին շատ են, այսպես՝ - *ակ* (նվազական մասնիկ) գոյականակերտ - գիտակ, վրիպակ, ցուցակ, ածականակերտ՝ խառնակ, բուրդակ, *ան* -ը իբրև բայանուն՝ շրջան, նշան, ավելի հաճախ *ք* հավելվածով՝ գրկանք, զարմանք և այլն, -*գին* և՛ ածական, և՛ մակբայ՝ ուժգին, ցավագին, սրտագին՝ ուժգին հարված - ուժգին հարվածել, -*եղեն* - ածական՝ հոգեղեն, լուսեղեն, հավաքական գոյական՝ ընդեղեն, ճերմակեղեն (գրաբարում հաճախ հանդիպում ենք աստվածեղեն, մարդկեղեն) և այլն: Երբեմն բառին ավելանում է ածանցման մասնիկ՝ առանց նրա նշանակությունը փոխելու, այսպես՝ *արքունի* -*արքունական, պարրասպ* - *պարրասպական, թշվառ* - *թշվառական, տերունի* - *տերունական, ժառանգ* - *ժառանգորդ* և այլն:

Հիմա քննենք բարդ բառերը: *Բարդ են կոչվում երկու կամ ավելի բառից բաղադրվածները՝ գորագլուխ, զոր և գլուխ արմատ բառերը հողված են (կցորդված) իրար:*

Երեք բառով բարդությունները խորթ են և շատ գործածական չեն:

Բարդության երեք կերպ կա.

ա. *Երկու բառ արմատ կապակցվում են կցական բարդությամբ*, այսպես՝ համտես, հացթուխ, ծովափ և այլն:

բ. *Ա հողակապով՝* քայլափոխ, տնամերձ, մատենագիր և այլն:

գ. *Ու շաղկապով՝* ահուդող, աղուհաց, ջարդուբորդ և այլն:

Համադրական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ բաղադրիչները (բառ, արմատ, նախդիր) հանդես են գալիս միասնաբար՝ կցումով (գրվում և արտաբերվում են իբրև բառ), կոչվում են կցական բարդություններ. օրինակ՝ այսօր, երբևէ, հորեղբայր, այստեղ:

Այս երեք կերպն էլ գործածվել են գրաբարում, սակայն կցական բարդությամբ կազմված բառերը ի տարբերություն բ և գ կերպերի, սակավ են: Բարդության մեջ ճշտությամբ գործածվում են նույն ածանցման կանոնները:

Երկու բառ առանց (*ա կամ ու*) հողակապի բարդվում են՝ պահպանելով հնչյունախոսության (*հնչյունափոխություն, առոգանություն, կետադրություն*)

կանոնները քիչ բացառությամբ, այսպես՝ կց – կտուր, քմ – ծիծաղ, սրտհատնում / սուտ – գրույց, ծուռ – բերան:

Եթե երկրորդ բառը սկսվում է ձայնավորով (բնականաբար ա հոդակապ չի կարող մտնել), գործածվում են հնչյունների սղման կանոնները, իսկ գրաբարի պարագայում՝ նաև փոփոխման կանոնը, այսպես՝ ջրօրհնեք, փղոսկր – զուգընթաց, շինավան: Ավելի ուշ շրջանի գրիչները պահել են *ա հոդակապը*, երբեմն նաև հավելելով *յ* կիսաձայնը, ինչպես՝ երկնա – ելք, աստուածա – ազդ, կիսայ – եղկ:

Գրաբարին բնորոշ են *ա հոդակապով* բարդությունները, և գործածական բարդ բառերը գրաբարից ենք ժառանգել, այսպես՝ *ժողկալից, գանգրահեր, կարծահասակ, շարախոս և այլն: Ա. Այվրընյանը* իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ գրում է, որ ներկայիս արևելահայերենում կան *ա հոդակապով մի քանի բարդություններ, որոնք, ելնելով գրաբարի բառաբարդման կանոններից. «ընդհանրապես խորթ ու անսովոր համարված են», այսպես՝ աստուծավախ, գրքատուն, գրքակալ, աջքաբաց, սակայն այս բառերը արդի արևելահայերենում գործածական են և «խորթ ու անսովոր» չեն:*

Ու շաղկապով կազմված բարդության մեջ հնչյունի սղման, հնչափոխության երևույթների չենք հանդիպում, այսպես՝ ցիրուցան, թուքումուր և այլն:

Գրաբարից մնացած կանոն՝ ընդհանրապես բարդության, ինչպես նաև ածանցման մեջ բառերը պիտի լինեն պարզ, այսպես՝ իմաստություն սիրող – իմաստասեր, ածանց՝ հիվանդություն ունեցող՝ հիվանդոտ:

Գրաբարում կա բարդության ևս մի տեսակ, որի կազմության մեջ կիրառվում են նախդիրներ՝ գլխավայր, գառիվայր, գառիվեր և այլն:

Հայերենում բառաբարդման պարագայում կարևոր նշանակություն ունեն խոսքի մասերի կիրառությունը, դիրքը, որն անշուշտ մեծ ազդեցություն ունի բառի նշանակության վրա: Հայերենում բարդության մեջ ընդհանրապես առաջին բառը լինում է կա՛մ խնդիր, կա՛մ ածական երկրորդ բառի նկատմամբ: Իսկ բարդության կերպերը հետևյալներն են.

1. գրաբարում գոյականի հետ արտահայտում է որևէ բան ունենալու գաղափար, այսպես՝ *առյուծասիրտ (առյուծի սիրտ ունեցող), շնագլուխ (շան գլուխ ունեցող), սառնակերպ (սառը կերպարանք ունեցող):* 2. Հատկացյալը գլխավոր գոյական՝ *գահագլուխ (գահի գլուխ), սրտադող (սրտի դող):* 3. Երկու գոյականները՝ չարսիրտ (չար սիրտ ունեցող), հավասարապես գլխավոր են՝ *ցլամարտ (ցուլ և մարտ), ազգատոհմ, այրուձի, վարուցան և այլն:* 4. Ածականը

գոյականի հետ դարձյալ ցույց է տալիս որևէ բան ունենալու գաղափար, այսպես՝ *պինդգրուխ, այծքաղ, ազգափոհմ, ծակաչք*: 5. Ածական և բայի արմատ. ածականը հանդես է գալիս որպես մակբայ, իսկ բայի արմատը դերբայի նշանակություն է ձեռք բերում՝ *ոյորասահ (ոյորին սահող), արագաշարժ*: Հազվադեպ հանդիպում ենք նաև բուն մակբայով բարդված՝ *մշտադալար (միշտ դալարող)*: 6. Գոյական և բայի արմատ, իբրև խնդիր և բայ, ցույց է տալիս որևէ բան անելու կամ լինելու գաղափար, այսպես՝ *ծկնորս (ծուկ որսացող), մարտենագիր, եղբայրասպան և այլն*: 7. Բայի արմատ և գոյական, իբրև ածական և գոյական, օրինակ՝ *վկայագիր (վկայական գիր)*:

Հայերենն աչքի է ընկնում բարդ բառերի առատությամբ և առավել ևս նորանոր բարդություններ կազմելու ազատություն ունի, սակայն այս ազատությունը երբեմն իմաստից զուրկ բարդությունների ստեղծման պատճառ է դառնում: Հայերենում բարդ բառերի ստեղծումը ոչ այնքան լեզվական հնարավորությունների խնդրահարույց հարց է, որքան բարդությունների հմուտ, մշակված և նպատակասլաց գործածում:

СОВРЕМЕННЫЙ ПОДХОД К ЭТИМОЛОГИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА -2

TAMARA ARUTYUNYAN

Виды грамматического анализа позволяют исследовать лексический состав языка как с точки зрения словообразования, этимологии, так и синтаксиса.

Ключевые слова - грамматический анализ, синтаксический разбор, филологический анализ.

MODERN APPROACH TO ETYMOLOGY (2)

TAMARA HARUTYUNYAN

Different varieties of comprehensive analysis of language such as philological, grammatical and other give the etymologists the possibility to study the word conclusively that is from the standpoint of grammatics, linguistics, semantics and function.

Key words – Grammatical analysis, analysis of verb-subject agreement, philological analysis

ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոդվածում քննարկվում են փոխանունությանը վերաբերող մոտեցումներ և սահմանումներ տարբեր տեսությունների դիտանկյունից: Զուտ լեզվաբանական մոտեցման տեսանկյունից փոխանունությունը դիտարկվում է որպես իմաստի անցում՝ հիմնված երևույթների տարածական և ժամանակային հարակից կապերի վրա: Ճանաչողական լեզվաբանության զարգացումն ընդլայնում է փոխանունության մեկնաբանությունը՝ իմաստային կանոնավոր կառուցակարգը վերածելով ճանաչողական կանոնավոր գործընթացի: Այսպիսի համատեքստում ճանաչողական փոխանունությունը սահմանվում է որպես օբյեկտիվ իրականության որոշակի հատվածների հասկացության ղաշտի ձևավորմանն ու ընկալմանն անհրաժեշտ տարր:

Բանալի բառեր – փոխանունության տեսություն, ճանաչողական լեզվաբանություն, ճանաչողական փոխանունություն, իրականության ընկալման միջոց:

Մարդու՝ աշխարհընկալման, իմաստավորման, կարգայնացման, ինչպես նաև իմացության բարդ ու տարաբնույթ երևույթները մտապահելու ունակությունները հիմնվում են փոխանունության և փոխաբերության երևույթների վրա: Այս գործընթացներում գիտելիքի որևէ կառույց կարող է գիտակցության մեջ արթնացնել համապատասխան առարկաների ու երևույթների հետ կապված տարբեր զուգորդումներ և տեղեկություններ: Ըստ Ռ. Յակոբսոնի՝ մարդու խոսքային գործունեությունն ամբողջապես հիմնված է այս երկու հիմնարար հնարների վրա: Ընդ որում, փոխանունության և փոխաբերության հիմքն են տարաբնույթ մտավոր և հոգեբանական գործընթացները: Այսպես, փոխաբերությունն ապահովում է մարդու կարողությունը՝ ընտրելու որոշակի նշանակությամբ բառեր կամ բառերը փոխարինելու իմաստով մոտ այլ լեզվամիավորներով, մինչդեռ փոխանունության երևույթը հնարավորություն է ընձեռում անհատին բառերից հաջորդական շղթաներ կազմելու և բառերը շարահյուսորեն ճիշտ դասավորելու¹:

Ավանդական լեզվաբանության տեսանկյունից փոխանունությունը դիտարկվում է որպես իմաստի անցում, որի հիմքում գոյություն ունեն առար-

¹ **Якобсон Р.О.** Два аспекта языка и два типа афатических нарушений // Теория метафоры. Москва, 1990, стр. 110–132.

կաների կամ երևույթների միջև իրական հարակից կապեր՝ հիմնված տարածական, ժամանակային, պատճառահետևանքային և այլ զուգորդումների վրա: Այս տարածված տեսակետն այս կամ այն չափով ընդունելի է այն լեզվաբանների համար, որոնք փոխանունությունը դիտարկում են զուտ լեզվաբանական տեսության տեսանկյունից²: Այսպես, փոխանունության տարածված օրինակ են համարվում The Kremlin, Whitehall, Washington, Baghdad բառերը, որպես փոխանուններ, հիմնված տարածական զուգորդման վրա:

Փոխանունության տեսության շրջանակներում առանձնակի ընդգծվում է դրա մի տեսակը՝ սինեկդոխան, որի դեպքում ընկալումը ձևավորվում է ոչ թե ամբողջի, այլ, ավելի հաճախ, դրա փոքր մասի միջոցով, որով իմաստավորվում է ամբողջը. օրինակ՝ *bricks and mortar*-ը շենքերի, անշարժ գույքի և նույնիսկ ֆինանսական անվտանգության մի ողջ համալիրի փոխանվանական անվանում է³:

Այսպիսով, լեզվաբանական մոտեցման տեսանկյունից փոխանունությանը նվիրված հետազոտությունների մեծ մասն այն սահմանում է որպես իմաստի անցում, որը հիմնված է երևույթների հարակից կապերի վրա:

Ճանաչողական լեզվաբանության զարգացումն ընդլայնում է փոխանունության մեկնաբանությունը՝ իմաստային կանոնավոր կառուցակարգը վերածելով ճանաչողական կանոնավոր գործընթացի: Փոխանունության նկատմամբ ճանաչողական մոտեցումը դրան վերագրում է աշխարհի մասին մտավոր հատուկ կառույցների տեսքով գիտելիքի ձևավորման ձևերից մեկի՝ փոխանվանական հասկացույթի կարգավիճակ: Ճանաչողական առումով փոխանունությունը մտածողության հիմնական բնութագրերից մեկն է: Արտաքին աշխարհից ստացվող տեղեկույթը հավաքվում և վերամշակվում է անհատի ուղեղում, ինչի արդյունքում ձևավորվում է տեղեկությանի որոշակի կառույց, որն արտացոլում է մարդու իմացական փորձը գիտելիք-հասկացույթ՝ ինչ-որ «քվանտների» տեսքով⁴:

Փոխանունությունը՝ որպես հասկացութային երևույթ, ճանաչողական

² **Реформатский А.А.** Введение в языковедение. Москва, 1967; **Арнольд И.В.** Стилистика современного английского языка. Ленинград, 1973; **Гинзбург Е.Л.** Конструкции полисемии в русском языке: таксономия и метонимия. Москва, 1985; **Апресян Ю.Д.** Лексическая семантика: Избранные труды в 2 т. Том 1, Москва, 1995.

³ **Punter D.** Metaphor. London, N.Y., 2007, p. 147-148.

⁴ Краткий словарь когнитивных терминов /Кубрякова Е.С., Демьянков В.З., Панкрац Ю. Г., Лузина Л.Г. / Под общей ред. Е.С. Кубряковой/. Москва, 1996, стр. 90.

լեզվաբանների ուշադրությանն առաջին անգամ արժանացավ 1980 թ., երբ լույս տեսավ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի «Փոխաբերությունները, որոնցով ապրում ենք» հիմնարար աշխատությունը: Ըստ հեղինակների՝ փոխանունության լեզվաբանական գործառույթն անուղղակի հղում է (reference), որի դեպքում մի էությունը փոխարինում է մյուսին: Մյուս կողմից, փոխանունությունը դուրս է գալիս լեզվական երևույթի շրջանակից և մեր հասկացությանին համակարգում գործում փոխանվանական կայուն, կանոնավոր հասկացությունների ձևով (օրինակ՝ ամբողջ-մաս), որոնք մեր գիտակցության մեջ համակարգված են և արտացոլվում են լեզվի միջոցով: Փոխանվանական հասկացությունները մեզ հնարավորություն են ընձեռում ընկալելու մի էության հասկացությանին դաշտը մեկ այլ էության հետ դրա հարաբերության միջոցով: Դրանք կազմորոշում են ոչ միայն մեր լեզուն, այլև մեր մտքերը, գործողությունները և հիմնված են մեր փորձի վրա: Այդ հիմքն ավելի ակնհայտ ու «շոշափելի» է, քան փոխաբերական հասկացություններինը, քանի որ ենթադրում է անմիջական ֆիզիկական կամ պատճառական զուգորդումներ⁵: Այսպիսով, փոխանունությունն ընկալվում է որպես իմաստի ընդլայնման ամենից հիմնարար գործընթացներից մեկը և հնարավոր է ավելի կարևոր, քան փոխաբերությունը⁶:

Հետագայում Ջ. Լակոֆը կարգայնացման գործընթացի վերլուծությանը նվիրված «Կանայք, կրակը և վտանգը» աշխատության մեջ խոսում է նախատիպերի տեսության մասին⁷: Հեղինակը կարգերում նախատիպային էֆեկտների (ազդեցությունների) առաջացման աղբյուր է համարում փոխանունությունը, որի դեպքում կարգի անդամները (օրինակ՝ տիպային ներկայացուցիչը կամ նախատիպը) ներկայացնում են ողջ կարգը. օրինակ՝ Արևմուտքի մշակույթում mother հասկացությամբ նախատիպային հիմքով զուգորդվում է «housewife mother» հասկացության հետ: «Mother»-ի և «housewife»-ի միջև հարաբերությունները փոխանվանական են և գոյություն ունեն միայն հասկացության մակարդակում. «mother» կարգը փոխանվանաբար ներառում է «housewife mother» ենթակարգը: Հասարակական կարծրատիպերը մասնավորապես ներկայացնում են փոխանվանական կաղապարների տեսակներից մեկը, որտեղ կարգի ներկայացուցիչը հանդես է գալիս ողջ կարգի փոխարեն:

⁵ Lakoff G., Johnson M. Metaphors we live by. Chicago, IL., 1980, p. 35.

⁶ Taylor J. Linguistic categorization. Prototypes in linguistic theory. Great Britain, 1995, p. 124.

⁷ Lakoff G. Women, fire and dangerous things. What categories reveal about the mind. Chicago, 1987.

Նույն աշխատության մեջ Զ. Լակոֆը գործածության մեջ է դնում նոր հասկացություն՝ «իդեալականացված ճանաչողական կաղապարներ» (ԻՃԿ)⁸ որպես բարդ համակարգված գիտելիքային կառույցներ, որոնք ներկայացնում են անհատների հասկացությային իմացությունը: ԻՃԿ-ները իդեալականացված են համարվում, քանի որ ստեղծված են մարդկանց կողմից և կարող են մշակույթից մշակույթ տարբերվել: Մեկ այլ կարևոր հատկանիշն այն է, որ ԻՃԿ-ները մասերից կազմված ամբողջություններ են, օրինակ՝ իդեալականացված կաղապարում շաբաթը ներկայացվում է որպես յոթ՝ իրար հաջորդող մասերից կազմված ամբողջություն, ամեն մի մասը կոչվում է օր, և երրորդ օրը երեքշաբթին է: Կարգայնացման գործընթացի նկարագրության համար հեղինակը բացահայտում է ԻՃԿ չորս տեսակ՝ նախադասական (propositional), սխեմատիկ (image schematic), փոխաբերական (metaphorical) և փոխանվանական (metonymic), որից վերջինը նախատիպային էֆեկտների հիմքն է: «Նախատիպային էֆեկտների» ձևով նախատիպության դրսևորումների էությունն այն է, որ կարգի կենտրոնական անդամները, որոնք ավելի մոտ են նախատիպին, ավելի արագ են ճանաչվում, հաճախ գործածվում, քան ոչ կենտրոնականները, այսինքն՝ օգտագործվում են կարգն ընդհանուր առմամբ ընկալելու համար⁹ :

Այսպիսով, խոսքը մի առարկայի կամ իրադրության ընկալման կանոնավոր կառուցակարգի և տարբեր տեսանկյուններից դրա իմաստավորման հնարավորության մասին է, որը կարգավորվում է փոխանունության գործընթացով: Փոխանունության ճանաչողական և գործնական գործառության հիմքում է եզրահանգման ճանաչողական գործառույթը (մարդկային մտածողության ճանաչողական կարևորագույն գործողություններից մեկը, որի ընթացքում մարդը դուրս է գալիս տրվածի սահմաններից՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք կան արտահայտության մեջ, և նոր տեղեկություն է ստանում)⁹, որը հնարավորություն է ընձեռում մարդուն ստեղծելու առարկաների կամ իրադրությունների նոր իմաստներ և հետևաբար՝ իրականությունը տարբեր կերպով ընկալելու: Այս գործընթացում բառը, որը սահմանակցում է հին նշվածի հետ ժամանակի և տարածության մեջ կամ դրա հետ ներառված է նույն իրադրությունում, կիրառվում է նոր առարկան անվանելու նպատակով¹⁰:

⁸ Նույն տեղում, էջ 67-70:

⁹ Краткий словарь когнитивных терминов, стр. 33.

¹⁰ Кронгауз М. А. Семантика: учебник для вузов. Москва, 2001, стр. 156.

Այսպիսով, վերջին տարիների մի շարք աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոխանունությունը՝ որպես իրականության ընկալման խորքային կառուցակարգ, ավելի հաճախ է հայտնվում ճանաչողական լեզվաբանության ուշադրության կենտրոնում և դրանով իսկ հետզհետե դուրս գալիս ավանդական բառագիտության կամ ոճաբանության հետաքրքրությունների շրջանակներից:

Ճանաչողական տեսության շրջանակներում բոլորովին այլ բացատրություն է ստանում նաև «հարակցություն» եզրույթը, որը փոխանունության ավանդական սահմանումներից մեծ մասի հիմքում է: Գ. Ռադենի և Զ. Կովեչեսի կարծիքով ավանդական մոտեցմամբ հարակից հարաբերություններն իրական աշխարհ են գալիս, իսկ ճանաչողականով՝ մղվում դեպի հասկացության մակարդակ¹¹: Այս հարթակում հարակցությունը ձեռք է բերում հասկացության հատկանիշներ, որոնք «միշտ չէ, որ օբյեկտիվորեն են արտացոլում իրական հարաբերությունները»¹²: Հասկացության հարակցության հիմքում այն գաղափարն է, որ իմաստը ոչ թե հայտնաբերվում, այլ ստեղծվում է անհատների կողմից, և «իրականության ճանաչողական մոտեցումը գոյություն չունի առանց անհատների գիտելիքների և ընկալման»¹³: Սա նշանակում է, որ անհատներից է կախված այն իրողությունը, թե ինչ են նրանք ըմբռնում, ինչ հարակցային կապեր են նշմարում փոխանվանական անցումների ժամանակ: Հետևաբար՝ վերհանվող հարակցային կապերի բնույթը կարող է տարբեր անհատների կողմից տարբեր կերպ ընկալվել:

Ճանաչողաբանության տեսանկյունից փոխանունությունը դիտարկվում է ոչ միայն որպես հասկացության երևույթ, այլև ճանաչողական գործընթաց, որի ժամանակ մտավոր մի էությունը հասանելի է դառնում մյուսի միջոցով, և փոխանվանական անցման ժամանակ «հասկացույթ-աղբյուրը «մտավոր ներթափանցում է» հասկացույթ-նպատակ կամ «ակտիվացնում է» հասկա-

¹¹ Kövecses Z., Radden G. Metonymy: Developing a cognitive linguistic view // Cognitive Linguistics 9-1, 1998, p. 37-77.

¹² Koch P. Frame and contiguity: On the cognitive bases of metonymy and certain types of word formation // Metonymy in language and thought. / Panther K.-U., Radden. G. (eds). Amsterdam/Philadelphia, 1999, p. 139-167.

¹³ Feyaerts K. Metonymic Hierarchies: The Conceptualization of Stupidity in German Idiomatic Expressions // Metonymy in Language and Thought / Panther K.-U., Radden G. (eds.). Amsterdam/Philadelphia, 1999, p. 317.

ցույթ–նպատակը»¹⁴ : Ընդգծվում է, որ փոխանունությունը մարդու առօրեական մտածողության մաս է, որը կառուցվածքայնացնում է նրա մտքերն ու գործողությունները: Փոխանվանական անցման ժամանակ բառը որոշակի իմաստ է ձեռք բերում շեշտադրման, այսինքն՝ հասկացությանին որոշակի տիրույթում որևէ տարրի առանձնացման արդյունքում: Բառի փոխանվանական նշանակությունը համապատասխանում է շեշտադրվող տարրի, այսպես կոչված, ակտիվ մասին, որն անմիջականորեն մասնակցում է նկարագրվող իրադրությանը (She heard the piano – *piano* – *sound* պրոֆիլի ակտիվ գոտի): Ռ. Լենքերը, նկարագրելով փոխանունության բնույթը, նշում է, որ դրա միջոցով անվանում ստացած էությունը ծառայում է որպես «հղման կետ» (reference point), որը մտավոր ազատ մուտք է բացում ցանկալի արդյունքի համար (այն էության համար, որին հղում են կատարում)¹⁵: Այսպիսով, մի անունը ոչ թե ուղղակիորեն օգտագործում ենք մյուսն անվանելու համար, այլ կատարում ենք բարդ մտավոր գործողություն՝ մի էության միջոցով այլ էությունների հասնելու համար:

Փոխանվանական անցման շրջանակներում կատարվող տեղաշարժի մեկնաբանությանն անդրադարձել են մի շարք լեզվաբաններ: Որոշակի ճշգրտմամբ այդ մեկնաբանությունները տեղ են գտել փոխանունության նոր սահմանումներում: Օրինակ՝ «հասկացության տիրույթ–աղբյուրի ասիմետրիկ անցում դեպի այլ տիրույթ–նպատակ»¹⁶: Լրացուցիչ մեկնության է ենթարկվել նաև փոխանվանական՝ *հեղինակ–ստեղծագործություն* ընդունված անցումը, որի կանոնավոր կերպն ընդգծվում է մինչևճանաչողական շրջանում: Այսպես, Ռուիս դե Մենդոսայի աշխատությունում տարբերակվում են փոխանունության երկու հիմնական տեսակներ, որոնցից մեկի դեպքում աղբյուրը նպատակի ենթատիրույթն է (source–in–target). օրինակ՝ փոխանվանական կաղապար՝ *գործիք–երաժիշտ*, որն այն նվագում է. «The **sax** won't come to today's rehearsal» (սաքսոֆոնն այսօր փորձի չի գալու), որտեղ «the sax»-ը համարվում է «the sax player»-ի ենթատիրույթ: Փոխանվանական մյուս կաղապարի դեպ-

¹⁴ **Barcelona A.** The multi-level role of metonymy in grammar and Discourse: A case study // Proceedings of the international conference "Perspectives on metonymy", held in Lodz, Poland, May 6–7, 2005, Peter Lang, 2007, p. 103–132.

¹⁵ **Langacker R.W.** Reference–point constructions // Cognitive Linguistics 4, 1993, p. 30.

¹⁶ **Barcelona A.** Reviewing the properties and prototype structure of metonymy // Defining metonymy in cognitive linguistics: Towards a consensus view. Benczes R., Barcelona A., Ruiz de Mendoza Ibanez F.J. (eds). Amsterdam/Philadelphia, 2011, p. 7–57.

քում նպատակն աղբյուրի ենթատիրույթն է (target-in-source). օրինակ՝ «*He always enjoys Shakespeare*», որտեղ «*Shakespeare*» նշանակում է նրա ստեղծագործությունները և համարվում հայտնի դրամատուրգի մասին մեր գիտելիքների ենթատիրույթ: Փոխանունության այս երկու տեսակները համընկնում են ճանաչողական երկու հիմնական գործողությունների հետ՝ *տիրույթի ընդլայնում* (domain expansion), որը համապատասխանում է աղբյուրը նպատակի ենթատիրույթն է (source-in-target) կաղապարին և *տիրույթի կրճատում* (domain reduction), որտեղ նպատակն է աղբյուրի ենթատիրույթը (target-in-source)¹⁷:

Ճանաչողական իմաստաբանության տեսանկյունից փոխանունության մեկնաբանումն արտացոլված է Ե. Պադուչևայի ուսումնասիրություններում, որտեղ դա դիտարկվում է որպես գործընթաց (ուշադրության կիզակենտրոնի տեղաշարժ) և արդյունք: Նա հետազոտում է փոխանունությունը «նշյալ իրադրություն» հասկացության համատեքստում, որը դիտարկվում է որպես ընկալվող իրականության հատված: Ընդ որում, միևնույն իրադրությունը լեզվում կարող է տարբեր կերպ ընկալվել: Լեզվաբանը նշում է, որ փոխանվանական տեղաշարժերի համար հիմք կարող է լինել մարդու ընկալման ընտրողականությունը: Իրականության որևէ հատվածի հասկացությալին դաշտի ձևավորման ընթացքում իրականության որոշ կողմեր շեշտադրվում են, առանձնանում, մյուսները՝ քողարկվում, դառնում ֆոն. կարծես կատարվում է իրականության կառուցվածքայնացում¹⁸:

Այսպիսով, փոխանունությունն աշխարհի լեզվական պատկերի ձևավորման կառուցակարգերից մեկն է, իրականության որևէ հատվածի ճանաչողական արտացոլումն ամբողջի և նրա մասերի միջև՝ հարաբերությունների հիման վրա:

Վերոնշյալ աշխատությունների քննարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ եթե ավանդական տեսանկյունից փոխանունությունը դիտարկվում է որպես առարկայի անվանման միջոցների զուտ փոխարինում՝ հիմնված հարակից

¹⁷ **Ruiz de Mendoza Ibáñez F.J.** High-level cognitive models: In search of a unified framework for inferential and grammatical behavior // Proceedings of the international conference "Perspectives on metonymy", held in Lodz, Poland, May 6–7, 2005. Peter Lang, 2007, p. 11 – 30.

¹⁸ **Падучева Е.В.** Пространство в обличий времени и наоборот (к типологии метонимических переносов) // Логический анализ языка. Языки пространств. Москва, 2000, стр. 242.

կապերի վրա, ապա ճանաչողական մոտեցումն էականորեն ընդլայնում է դրա՝ որպես բառույթի ներսում իմաստային անցումների կառուցակարգերից մեկի մասին պատկերացումը և նկատելիորեն վերանայում վերջինիս էությունը՝ այն ներկայացնելով որպես ճանաչողական գործընթաց, երևույթի հասկացության ղաշտի մոդելավորման ճանաչողական կառուցակարգ: Այսպիսով, փոխանունությունը սահմանվում է որպես իրականության ընկալման և կարգայնացման ձև, այսինքն՝ աշխարհի մասին գիտելիքի, իմացության, իմաստավորման և կազմակերպման հիմնարար հնար:

КОГНИТИВНАЯ МЕТОНИМИЯ В СВЕТЕ РАЗНЫХ ТЕОРИЙ

ЛУСИНЕ АРУТЮНЯН

В статье рассматриваются подходы и определения метонимии с точки зрения разных теорий. В рамках лингвистической теории метонимия определяется как перенос значения, основанный на пространственной или временной смежности предметов и явлений. Развитие когнитивной лингвистики расширило интерпретацию метонимии, определяя ее как регулярный когнитивный процесс, как важный инструмент познания и осмысления фрагментов объективной действительности.

Ключевые слова – теория метонимии, когнитивная лингвистика, когнитивная метонимия, средство концептуализации действительности.

COGNITIVE METONYMY WITHIN THE FRAMEWORK OF VARIOUS THEORIES

LUSINE HARUTYUNYAN

The paper considers the approaches and definitions of metonymy from the point of view of various theories. Linguistically, metonymy is defined as a transfer of word meaning based on spatio-temporal contiguity. With the development of cognitive linguistics, the status of metonymy has increasingly changed being perceived as a regular cognitive process. Cognitive approach to metonymy considers it to be a fundamental tool for the perception of fragments of reality.

Key words – metonymy theory, cognitive linguistics, cognitive metonymy, reality conceptualization tool.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՀՈՒՋԻՉ ՀԱՐՑԵՐ

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. ապրիլյան իրադարձությունները, ընդհանրապես Ադրբեջանի ռազմատենչ, ազգայնամուլ քաղաքականությունը համոզում են, որ այդ պետությունը, իր ստեղծման սկզբից մինչև հիմա գաղափարական սնունդ ստանալով Թուրքիայի հնոցից, օր օրի ավելի մոլեգին է դառնում: Հակահայ գաղափարախոսությունը և ֆանատիզմը իր պտույտի մեջ է առել ոչ միայն իշխանավորներին, այլև հանրապետության բնակչության զգալի մասին, որոնց համար մարդասպանությունը ապրելակերպ է դարձել:

Դեռ ցարական իշխանության ժամանակներից և հետագայում Խորհրդային Միության տարիներից Հայաստանից տարածքների զավթումը ազերի իշխանության համար դարձել էր կենսական պահանջ, որն ավելի լայն ծավալով առաջ է քաշվում հիմա: Դրա լավագույն ապացույցն են 2016 թ. ապրիլյան իրադարձությունները, որի չորսօրյա ռազմական գործողությունների ժամանակ ստանալով արժանի հակահարված, ստիպված էր զինադադար խնդրել:

Քանալի բառեր - տարածք, պահանջ, աշխատություններ, ազգայնամուլ, սուլերեն, սպառել, բռնագաղթ, գավառ, բանակցություններ:

2016 թ. ապրիլյան իրադարձությունները և ընդհանրապես Ադրբեջանի ռազմատենչ, ազգայնամուլ քաղաքականությունը համոզում են, որ այդ պետությունը, իր ստեղծման սկզբից մինչև հիմա գաղափարական սնունդ ստանալով Թուրքիայի հնոցից, օր օրի ավելի մոլեգին է դառնում: Հակահայ քաղաքականությունը և ֆանատիզմը այստեղ իր պտույտի մեջ է առել ոչ միայն իշխանավորներին, այլև հանրապետության բնակչության մի մասին, որոնց համար մարդասպանությունը և դիակների այլանդակումը հաճույք է դարձել:

Ազերի թուրքերը դեռևս ցարական տիրապետության ժամանակ և հետո՝ Խորհրդային տարիներին, Արցախ-Չանգեզուրը և հայկական այլ տարածքներ իրենցը համարելով, մոլեգին պահանջել են հանձնել իրենց: Այդ ձգտումը հիմա ավելի կատաղի տեսք է ստացել: Հենց դա էլ տողերիս հեղինակին ստիպել է մի անգամ ևս անդրադառնալ այդ հարցին:

Ազերի թուրք հեղինակների մի ամբողջ շայկա խոսում, աղմկում, պահանջում են, թե, օրինակ, նախկին Երևանի նահանգը, Չանգեզուրը, Արցախը, Ղազախը, Նախիջևանը և այլ տարածքներ հնուց պատկանել են Ադրբեջանին, մի պետություն, որը քարտեզի վրա երևացել է 1918 թվականից: Այդ հեղինակներից Միրկասըմ Սեյիդովի «Հայկական վանդալիզմ»¹, նախագահական գրադարանի աշխատակիցների կողմից կազմված «Ցեղասպանություն և ադրբեջանցիների բռնագաղթը»² և Էդգար Իսմայիլովի «Ադրբեջանի պատմության ուրվագծեր»³ աշխատություններն այդ տեսակետից ավելի ակնառու են և հագեցած ազգայնամուլ գաղափարներով: Նպատակահարմար գտանք նախ՝ անդրադառնալ այդ աշխատանքներին, հետո մյուս հարցերին:

Մ. Սեյիդովի գրքի ներածական մասում խոսք կա, թե երբ 1918 թ. մայիսի վերջին լուծարվում է Անդրկովկասի սեյմը, հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, հայտնի է դառնում, որ «Հայերը չունեին մայրաքաղաք հայտարարելու քաղաք, որի վրա կարող էին հենվել և կառուցել իրենց անկախությունը»: Իբրև Դեմոկրատական Ադրբեջանի Հանրապետության հիմնադիրները, ընդառաջելով հայկական Ազգային խորհրդի խնդրանքին. «Կատարել են պատմական ակնհայտ քայլ: Մեր կողմից կատարվածի արդյունքում Իրևանը մնում է հայերի իրավասության տակ»⁴: Բերված քաղվածքի իմաստը հետևյալն է. իբրև 1918 թ. մայիսի 29-ին Թիֆլիսում գտնվող հայոց Ազգային խորհուրդը դիմել է այնտեղ գտնվող Ադրբեջանի մահմեդական խորհրդին՝ նշելով, որ իրենք քաղաք չունեն նորանկախ հանրապետության մայրաքաղաք հայտարարելու: Ուստի խնդրում են Իրևանը իրենց տրամադրել այդ նպատակին ծառայեցնելու համար: Եվ որ իբրև իրենք համաձայնվել են: Այդ «փաստաթուղթը» տեղավորված է Բաքվում 2008 թվականին տպագրված փաստաթղթերի մի ժողովածուի երրորդ համարի տակ:

Թուրք հեղինակի այդ պնդումը խիստ վիճահարույց է: Նախ՝ 3000-ամյա պատմություն ունեցող Երևանը ինչպե՞ս կարող էր պատկանել XI դարում Միջին Ասիայի անապատներից Անդրկովկաս ներխուժած քոչվոր ցեղի: Չէ՞ որ Անդրկովկասյան սեյմի լուծարումից առաջ Երևանում էր տեղավորված քաղաքի Ազգային խորհուրդը, որը գլխավորում էր Արամ Մանուկյանը: Հենց Սարդարապատում ու Բաշ Ապարանում թուրքերի ջախջախման կազմակեր-

¹ **Сеидов М.**, Армянский вандализм, Новосибирск, 2010, 93 стр.

² Геноцид и депортация азербайджанцев, Баку, 2011, 319 стр.

³ **Исмаилов Э.** Очерки по истории Азербайджана, Москва, 2010, 330 стр.

⁴ **Сеидов М.** Армянский вандализм, стр. 4.

պիչը հանդիսացել է Երևանի Ազգային խորհուրդը Արամ Մանուկյանի գլխավորությամբ:

Ես ստիպված էի Հայաստանի ազգային արխիվում որոնել Հայոց ազգային խորհրդի այդ դիմումի պատճենը, սակայն մեր որոնումներն ավարտվեցին անարդյունք: Անարդյունք, որովհետև նման բան գոյություն չի ունեցել, դա հորինվել է Բաքվում: Իմիջիայլոց, Մ. Սեյիդովը, շարունակելով իր ճամարտակությունները, գրում է, որ այսպես կոչված Հայաստան պետությունը, ունենալով 29 հազար քվ տարածություն, կազմակերպվել է բացառապես ադրբեջանական հնագույն հողի վրա: Ամբողջ աշխարհին ցուցադրելով պատմական այդ փաստաթուղթը՝ ցույց ենք տալիս, որ Իրևանը հին ադրբեջանական քաղաք է: Դրանով մենք ապացուցում ենք, որ այդ պետության տարածքը վաղեմի ադրբեջանական հող է, և որ «Հայաստանը, գրավելով ադրբեջանական հողը, բռնագրավել է 17 հազար քվ. տարածք»⁵: Մտածում ես. «ադրբեջանական ի՞նչ վաղեմի հող», ի՞նչ «հին քաղաք»: Այդ նույն հեղինակը, բաց թողնելով իր սանձը, շարունակում է, թե «Նախիջևանում ոչ մի անգամ հայկական հուշարձաններ չեն եղել» և որ «Բարոյական տեսակետից ադրբեջանական հասարակությունը մի գլխով բարձր է հայկականից»⁶: Ոչ այն է ծիծաղես, ոչ այն է տխրես: Ստացվում է, որ հազարավոր պատմական հուշարձանները հողին հավասարեցնողները, քնած մարդուն կացնահարող բարբարոսը, զոհված մարդկանց գլուխ և ականջներ կտրող վայրագները բարոյապես բարձր են հայ ժողովրդից: Ահա սա է ոչ շատ անցյալի մի քոչվոր հորդայի բարոյականությունը, հորդա, որը, յուրացնելով հարևան ժողովուրդների մշակույթը, դառնալով նրանց տարածքի տերը, այսօր հանդես է գալիս «բարոյական քարոզներով»: Նրանց համար Արցախ-Ղարաբաղում և Հայաստանի տարածքում իրենց հոտերի համար արոտավայրեր ձեռք բերելը բարձր էր բարոյական նորմերից: Մի քանի ընտանիքից բաղկացած դշաղը համարելով գյուղ կամ բնակավայր՝ Հայաստանում հարյուրավոր տեղեր հայտարարում են «ադրբեջանական բնակավայրեր»: Ադրբեջանական պետություններ են հայտարարվում նաև Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի և մյուս բոլոր խանությունները, որոնք մտնում էին Պարսկաստանի կազմի մեջ: Նույնիսկ ադրբեջանական են հայտարարում XIX դարում ստեղծված Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը՝ անտեսելով այդտեղ բնակվող այլազգիներին: Օրինակ, 1897 թ. մարդա-

⁵ Նույն տեղում, էջ 4, 5:

⁶ Նույն տեղում, էջ 5:

համարի տվյալներով Ելիզավետպոլի նահանգի 878.415 հազար բնակչության 33, 26 %-ը հայեր էին, 60.80%-ը՝ մահմեդականներ⁷: Ազերի թուրք հեղինակները, անտեսելով նահանգի 300 հազար հայ բնակչությանը և թուրք, քուրդ, պարսիկ, թալիշ, թաթար, լեզգի ու մյուս մահմեդական ժողովուրդներին, նահանգը հայտարարում են ազերական:

Ադրբեջանի նախագահական գրադարանի աշխատակիցների պատրաստած վերոհիշյալ գրքի մեջ տեղ են գտել բազմաթիվ կեղծիքներ և ստեր: Օրինակ, ասված է, որ իբրև հայերն այս աշխարհում ապրելու տեղ չգտնելով՝ եկել և բնակվել են «ադրբեջանական հողի վրա», որպեսզի ադրբեջանցիներին ենթարկեն ցեղասպանության, որն ի կատար է ածվել 1905-1906 և 1918-1920 թվականներին Բաքվում, ինչպես և 1992 թ. փետրվարին Խոջալուում⁸: Ջարմանում ես, թե այդ «խեղճ» ազերիները ինչպես են դիմացել «ցեղասպանություն» իրագործած հայերին: Եվ անկախ դրանից նրանք շարունակում էին ներխուժել հայկական տարածքներ և այնտեղ դժլաղներ հիմնել: XIX դարի վերջին Արցախ-Ղարաբաղում ընդամենը 6-7 դժլաղ կար՝ մի քանի հարյուր քոչվորներով, որոնց թիվը 1989 թ. մարդահամարի տվյալներով հասել էր 50-ի (որոշ աղբյուրներում՝ 57)⁹ քառասուն հազար բնակչով⁹:

Մյուս պատմաշինարար Էլզար Իսմայիլովը բավականին լուրջ պարտավորություններ վերցնելով իր վրա, խոստանում է իր «Ուրվագծերում...» «փաստագրական նյութերի հիման վրա» ներդրումներ կատարել «ադրբեջանագիտությունը զարգացնելու գործում»¹⁰: Նախ՝ «Ուրվագծերի...» հեղինակը շահած կյիներ, եթե իր աշխատանքը սկսեր X դարից, չէ՞ որ, ինչպես նշվել է, նրա նախնիները Միջին Ասիայի անապատներից եկել են XI դարում, հետո, Ադրբեջանի ներկայիս տարածքում հայտնաբերված իրերի հեղինակները երբեք էլ չեն հանդիսացել ազերի թուրքերը, այլ այն ժողովուրդները, որոնք նրանցից առաջ այդ տարածքում ապրել են մի քանի հազար տարի:

Է. Իսմայիլովը փորձում է ցույց տալ, թե ազերիները արաբներից մահմեդականություն են ընդունել X դարից առաջ, որը չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Քոչվոր ազերիները Հյուսիսային Պարս-

⁷ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Елисаветпольская губерния, 1904, стр. III.

⁸ Геноцид и депортация Азербайджанцев, стр. 5:

⁹ Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту Нагорно-Карабахской автономной области, таблица 2.

¹⁰ **Исмаилов Э.** Очерки по истории Азербайджана, стр. 2.

կաստանում՝ Ատրպատականում, երևացին այն ժամանակ, երբ այստեղ բնակվող ցեղային միությունները քայքայվում էին: Եկվոր քոչվորները արհեստի տարբեր տեսակներ սովորել են տեղացիներից: Մինչդեռ հեղինակը այնպես է նկարագրում իրադարձությունները, որ իբրև այդ քոչվորները եկել էին բավականին հարուստ սովորություններով և ունակություններով: Թուրքերին ազգակից եկվորներն ունեին քոչվորի հոգեբանություն՝ տարածքներ և արտավայրեր զավթելու անզուսպ ձգտում: «Ուրվագծերի...» հեղինակի կեղծարարության ծայրը հասնում է մինչև մեր օրերը: Նա անամոթաբար գրում է, թե 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ իբրև «Ադրբեջանը հարևան հանրապետությանը օգնության ձեռք է մեկնել: Սակայն պատասխանի փոխարեն ազգայնամոլները իրենց ճնշումն ուժեղացրել են Հայաստանում ադրբեջանցի բնակչության նկատմամբ»¹¹: Արդեն սա քայլազյուրություն է, բացահայտ անամոթություն: Ո՞վ չգիտի, թե երկրաշարժի օրերին Ադրբեջանի տարածքով օգնություն բերող գնացքներն ինչպես են թալանվել և ապրանքները ոչնչացվել Ադրբեջանի ավազակային խմբավորումների կողմից:

Այդ նույն հեղինակը թույլատրել է նաև այլ սանձարձակություն: Օրինակ, պնդում է, թե 1988 թ. փետրվարի 19-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի է ունեցել հակաադրբեջանական հանրահավաք, և որ ընդհանրապես «Ղարաբաղյան հակասությունը խոշոր պայթյունի դետոնատոր է հանդիսացել, որից հետո Խորհրդային սոցիալիստական պետության փլուզումը դարձել է անխուսափելի»¹²: Մինչդեռ 1988 թ. մարտի 19-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում հակաադրբեջանական ոչ մի արտահայտություն չի հնչել: Ուրիշ հարց է Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանությունից հետո: Ասենք նաև մոլորություն է և մոքի տկարություն, երբ ինչպես «Ուրվագծերի...», նույնպես և ուրիշ հեղինակներ կարծում են, թե ղարաբաղյան հակասությունները հանդիսացել են Միության խոշոր պայթյուցիչ: Իսկ չէ որ Միությունն իրեն սպառել էր, և այդ պայթյունը պետք է տեղի ունենար:

Բացի այդ, պարոն Է. Իսմայիլովը փորձում է Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի հարձակումն արդարացնել, թե իբրև այն նպատակ է ունեցել «վերականգնել իր սուվերենությունը»¹³: Սա առավել ամոթալի է, դատապարտելի և մտազարություն:

¹¹ Նույն տեղում, էջ 303:

¹² Նույն տեղում, էջ 300-302:

¹³ Նույն տեղում, էջ 317:

Նշված, ինչպես նաև չնշված բազմաթիվ այլ հեղինակներ ոչինչ չեն խնայում «արդարացնելու» սեփական ցեղի գործադրած մոլեռանդ, ծավալապաշտական և արյունոտ քաղաքականությունը: Իմիջիայլոց դա գալիս է ցարական ժամանակներից և կապ ունի այն ժամանակվա մեծապետական օրենքների հետ: Ազերի հեղինակներին և կառավարիչներին հիշեցնենք, որ 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի հաշտության պայմանագրով Անդրկովկասում բավականին տարածքներ անցել են ցարական Ռուսաստանին: Դրանց շարքում էր Արցախ-Ղարաբաղը, որն այն ժամանակ, ըստ աղբյուրների, զբաղեցնում էր 13.000 քառ. մղոն տարածք, ուներ 18500 ծուխ և մոտ 90000 երկսեռ բնակչություն¹⁴: 1822 թ.՝ Ղարաբաղի խանության վերացումից հետո, երբ վերջին խան Մենթի-Կուլին, դրժելով իր հավատարմությունը Ռուսաստանին, փախավ Պարսկաստան, խանության նախկին տարածքը կառավարելու համար Կովկասի կառավարիչ գեներալ Երմոլովի հրամանով այստեղ ստեղծվում է «Երկրամասային ինքնավար վարչություն», որը ենթարկվում էր զինվորական տեղամասի պետին¹⁵:

Անդրկովկասի մնացած տարածքը Ռուսաստանին միացվեց 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Այսպիսով, Ռուսաստանի գաղութային տարածքը Անդրկովկասում զգալիորեն ընդարձակվում է: Հայտնի է, որ դեռևս 1827 թ. ապրիլին Ռուսաստանի ֆինանսների նախարար կոմս Կանկրինը կազմում է օրենքների մի նախագիծ, որում չի թաքցվում, որ դարասկզբից անցած երեսուն տարում Ռուսաստանը Անդրկովկասի և հարևան երկրների նկատմամբ ոչ միայն բարերար էր, այլ նաև «իշխող տիրակալ և նվաճած տիրոջների լիիրավ տեր ու տնօրեն...»¹⁶:

Ռուսաստանի միավորված տարածքներում միասնական և միանման վարչակարգ ստեղծելու համար 1933 թ. ստեղծվում է «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե, որը պետք է զբաղվեր սույն տարածաշրջանի բարեփոխումների ծրագիր մշակելով և իրականացնելով»¹⁷: Թե՛ նշված կոմիտեի և թե՛ 1937 թ. Անդրկովկաս գործուղված սենատոր Բ. Գանի (Հան) գլխավորած հանձնաժողովի կազմած զեկուցագիրը ցարը հաստատեց 1940 թ. ապրիլին,

¹⁴ **Иваненко В.** Гражданское управление Закавказьем. Тифлис, 1901, стр. 146.

¹⁵ **Тунян В.** Карабахский конфликт. Ереван, 1999, стр. 6.

¹⁶ Обзорение российских владений Закавказьем. Часть I, Санкт-Петербург, 1836, стр. 5-6.

¹⁷ **Иваненко В.** Гражданское управление Закавказьем, стр. 341.

որը օրենքի ուժ ստացավ: Այն ներկված էր գաղութակալության շաղախով: Այնտեղ «անտեսվում էին երկրամասի բազմազան ազգային առանձնահատկությունները», ինչպես և խճճվում էին «վարչատարածքային քաղաքականության օրենսդրությունը կիրառելիս»¹⁸: Այստեղ «վարչական միավորները կազմավորելիս անտեսվում էին տվյալ վայրում ապրող ժողովրդի ազգային պատկանելության, նրա ունեցած պատմական հայրենիքի տարածքները և այլ գործոններ: Ուստի պատահական չէր, որ Հայաստանի և տվյալ ժամանակահատվածի հայկական շրջանները ստեղծվում էին մերթ այս, մերթ այլ վարչական միավորի մեջ, որն իր բացասական ազդեցությունն էր ունենում հայ ժողովրդի համախմբման ընթացքի վրա»¹⁹:

Համաձայն այդ օրենքի՝ Անդրկովկասում ստեղծվում է Վրացա-Իմերեթական նահանգ (կենտրոն՝ Թիֆլիս) և Կասպիական մարզ (կենտրոն՝ Շամախի): Ըստ Իվանենկոյի՝ այս երկրորդի մեջ մտնում էին Կասպից ծովի արևմտյան տարածքները, Ղարաբաղը և հայաշատ այլ վայրեր²⁰:

1849 թ. ստեղծվում է Երևանի նահանգը: Դրան հաջորդում է 1867 թ. դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր Երկրորդ ցարի ստորագրած «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխումների մասին» օրենքը, որը գործողության մեջ է դրվում 1868 թ. հունվարի 1-ից: Ըստ այդ օրենքի՝ Անդրկովկասում ստեղծվում է նոր նահանգ՝ Ելիզավետպոլի: Ըստ էության Կասպիական նահանգի տարածքը և բնակչության թիվը զգալիորեն գերազանցել էին պահանջվող չափը: Դրա համար ցարական իշխանությունը նպատակահարմար է գտնում նահանգի մի մասը անջատել և կազմել նոր նահանգ: Յարի ստորագրած կանոնադրության համաձայն՝ գավառների սահմանագծման հիմքում դրված սկզբունքի հիման վրա նրանցից ոչ մեկն իր գրաված տարածությամբ չպետք է գերազանցեր 6500 քառակուսի վերստը, իսկ բնակչության տեսակետից չպետք է անցներ 10000 ծխից կամ 80000 մարդուց²¹:

¹⁸ **Գոհար Առաքելյան**, Գանձակ-Ելիզավետպոլի (մարզ, նահանգ) բնակչությունը XIX դարում, Երևան, 2003, էջ 7:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Иваненко В.** Гражданское управление Закавказьем, стр. 342.

²¹ St'u Отчет по главному управлению наместника за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаило Николаевичем, 6 декабря 1962 - 6 декабря 1872 гг. Тифлис, 1878, стр. 49-50: Գեներալ Տիցիանովը, XIX դարի սկզբին նշանակվելով ռուս-պարսկական պատերազմի հրամանատար, Գանձակը (Գյանջա) անվանել է Ալեքսանդր 1-ին կայսրի մահացած

Կասպիական նահանգը վերանվանվում է Բաքվի նահանգ՝ Բաքու կենտրոնով: Նահանգին ներկայացվող պահանջները բավարարելու համար Էրիվանի նահանգից կրճատվում է 1519 մղոն տարածք, Մեղրիի շրջանը, Ջանգեզուրը, Ղարաբաղը և այլ տարածքներ ու միացվում Ելիզավետպոլի նահանգին: Նահանգի կազմավորման գործում ոչ մի նշանակություն չի ունեցել, թե այդ տարածքում ինչ ժողովուրդներ են ապրում՝ թուրք, հայ, ռուս, քուրդ և այլն: Տարածք և բնակչության քանակ: Ուրիշ ոչինչ: Այստեղից էլ սկսվում են Ջանգեզուրի և Ղարաբաղի ողբերգական իրադարձությունները և թուրք-ազերիների սանձարձակ քաղաքականությունն այդ տարածքների նկատմամբ: Մեր կարծիքով շան գլուխը հենց այստեղ է թաղված: Վարչական այդ բաժանման հիման վրա Ղարաբաղում կազմավորվում է երեք գավառ՝ Ջևանշիրի, Շուշիի և Ջեբրայիլի: Ջևանշիրի մեջ ներառվել էին Գյուլիստանի և Ջրաբերդի նախկին մելիքությունների տարածքները, Խաչենի մելիքության տարածքի մի մասը, Ջեբրայիլի գավառի մեջ մտնում են տվյալ շրջանը և Դիզակի նախկին մելիքության տարածքի մի մասը, Շուշիի գավառի մեջ մտնում են նախկին Վարանդայի մելիքության տարածքը և Խաչենի ու Դիզակի մելիքությունների որոշ տարածքներ:

Այսպիսով, երեք գավառներից, որոնք կազմավորվել են Արցախի տարածքում, հայկական գավառ է թողնվել Շուշիի գավառը, մյուս երկուսը խառն էին՝ հայ և ազերի բնակավայրերով: Ընդհանրապես Ելիզավետպոլի նահանգը բաղկացած էր ութ գավառից՝ Նուխի (Շաքի), Արեշի, Ղազախի, Ելիզավետպոլի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի, Շուշիի և Ջանգեզուրի: Նախկինում Անդրկովկասի 18 գավառների փոխարեն 1873 թ. այն հասցվել է 86-ի, իսկ հետագայում 1888 թ. մայիսի 10-ի օրենքով գավառների թիվը իջեցվել է 37-ի²²:

Ազերի թուրք հեղինակները, խոսելով Երևանի խանության, Ջանգեզուրի, Շուշիի, Ջիվանշիրի և հարևանությամբ գտնվող մյուս գավառների մասին, աղաղակում են, թե այսինչ նահանգում կամ գավառում այսքան մահմեդական բնակավայրեր են եղել և անկախ նրանից, թե մահմեդական այդ բնակավայրը քրդակա՞ն է եղել, թուրքակա՞ն կամ ազերի թաթարական, միևնույնն է, այն հայտարարում են ազերի-թաթարական: Այդ նահանգներում կամ գավառներում թե որքան հայկական բնակավայրեր են եղել, և դրանցում որքան

կնոջ՝ Ելիզավետայի անունով: Նոր ստեղծված նահանգն այդ անունով էլ կոչվում էր Ելիզավետպոլի:

²² **Евангулов Г.** Местная реформа на Кавказе. Санкт-Петербург, 1914, стр. 18-19.

հայեր են բնակվել, դա նրանց չէր հետաքրքրում: XIX դարի վերջին Ելիզավետպոլի նահանգի 708 բնակավայրերից 357-ը հայկական է եղել, ըստ որում Ելիզավետպոլի գավառում՝ 36, Արեշի՝ 17, Ջեբրայիլի՝ 28, Ջիվանշիրի՝ 32, Ջանգեզուրի՝ 81, Ղազախի՝ 43, Նուխիի՝ 24 և Շուշիի՝ 92²³: Այդ գավառներում հայերը կազմում էին՝ Նուխիի գավառում՝ 18,0, Շուշիի՝ 56,6, Գանձակ (Գյանջա) քաղաքում՝ 26,1, Արեշի՝ 23, 7, Ջեբրայիլի՝ 24,7, Ջիվանշիրի՝ 28,2, Ջանգեզուրի՝ 46,3, Ղազախի՝ 39,0, Նուխի քաղաքում՝ 15,7, Շուշի քաղաքում՝ 58,2, ամբողջ նահանգում՝ 35,4 տոկոս²⁴:

Նահանգում բնակչության թվով հայերը երկրորդ տեղում էին: Հայերը նշանակալից թիվ էին կազմում նաև Բաքվի նահանգում: Օրինակ, դարավերջին Բաքվի 222412 բնակիչներից 51340-ը (18,8 %) հայեր էին²⁵: Ըստ վիճակագրության՝ այդ ժամանակ Անդրկովկասում հայերի թիվը հասնում էր 478809-ի, իսկ թուրք-թաթարներինը՝ 547444-ի²⁶, ըստ որում այս վերջինը բաղկացած էր տարբեր ազգերի պատկանող մահմեդականներից: 1897 թ. համընդհանուր մարդահամարի տվյալներով Կովկասի 9.289.364 մարդուց 1.118.094-ը (12, 04 %) հայեր էին, ըստ որում Ելիզավետպոլի նահանգի 874.415 մարդուց 292.188-ը (33,76 %), հայեր էին, մահմեդականները կազմում էին 61,33 %²⁷: Մարդահամարից մեկ տարի անց նոր հաշվառման համաձայն Շուշիի գավառն ուներ 138.835 մարդ, որից հայ՝ 74.213, մահմեդական՝ 62.708²⁸:

Բերված տվյալները ցույց էին տալիս, որ տարածքի հնագույն բնակիչներից հայերը հազարամյակներ շարունակ կայուն տեղ են ունեցել Անդրկովկասի ժողովուրդների շարքում, և իզուր են ազգերի թուրք հեղինակները դուրս գալիս իրենց մորթուց՝ «ապացուցելու», թե իբրև «եկվոր» հայերը բնակություն են հաստատել աղբբեջանական հողի վրա, մի բան, որն ամբողջովին սուտ է և կեղծ: Անդրկովկասում ազգերի թուրքերը ոչ մի անգամ պատմական տարածք

²³ Кавказ. Издание кавказского статистического комитета. Тифлис, 1888, стр. V.

²⁴ Նույն տեղում, էջ XI:

²⁵ **Անանուն Դավիթ**, Ռուսահայերի հասարակական զարգացումը XI դարում, հատ. II (1870-1900), Էջմիածին, 1922, էջ 8:

²⁶ Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края. Том II, Тифлис, 1887, стр. 25, 27-28.

²⁷ **Իշխանյան Բ.**, Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, էջ 28, Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., стр. III.

²⁸ Сборник статистических сведений по Закавказскому краю. Часть I, Тифлис, 1902, стр. 254 и 255.

չեն ունեցել, որի մասին անընդհատ աղաղակում են, թե իրենք իբրև այս հողի վրա «ապրում են հնագույն ժամանակներից»: Սա պարզապես զավեշտ է:

Հիմա անդրադառնանք ազերի թուրքերի մյուս զագրելի հորինվածքներին: Իբրև Ղարաբաղում, Ջանգեզուրում և Ղազախում 1920 թ. մարտի 22-ին նովորոզ բայրամի օրը հայերն ապստամբել են ազերի մահմեդականների դեմ: Օրինակ են բերում, թե Հայաստանում բնակվող 575.000 ադրբեջանցիներից 565000-ը սպանվել կամ դուրս են մղվել, մնացել է 10 հազարը: Իբրև հեռացածներից 60.000-ը 1922-ին վերադարձել են²⁹: Իրականում ազերի թուրքերն են 1920 թ. մարտին՝ մուսուլմանական ամանորին, հարձակվել Շուշի քաղաքի հայերի վրա, կատարել ցեղասպանություն, որի արդյունքում ավերվել է հայոց քաղաքը, սրի են մատնվել մոտ 10 հազար կին, երեխա, ծերեր, մտավորականներ: Դրա հանցագործները, պատասխանատվության չենթարկվելով, հետագայում փորձել են ամբողջ մեղքը բարդել հայերի վրա՝ պնդելով, թե նրանց նախնիները, բնակություն հաստատելով «ադրբեջանական պատմական տարածքում», նպատակ են ունեցել ազերիներին ոչնչացնելու: Օրինակ են բերում, թե Սումգայիթի ցեղասպանության համար մահապատժի են դատապարտվել 96 հոգի, իսկ Հայաստանում «սպանված 317 ադրբեջանցու» և հանրապետությունից դուրս մղված ավելի քան 200 հազար ադրբեջանցիների համար ոչ ոք չի պատժվել³⁰: Հայտնի է, որ Սումգայիթի ցեղասպանության համար մահապատժի են ենթարկվել երկու հոգի, և Հայաստանից հեռացել են 168 հազար մարդ³¹:

Ազերի հեղինակները չեն «տեսնում», որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի 15 տոկոսը գտնվում է զավթված վիճակում, բնակչության 33 տոկոսը դարձել են փախստականներ և տեղափոխվածներ, մինչդեռ այդ հանրապետության տարածքի 8 %-ն է գտնվում ԼՂՀ պաշտպանության բանակի հսկողության տակ, և փախստականներ ու տեղափոխվածներ են դարձել բնակչության 7,9 տոկոսը³²: Էլ չենք խոսում Լեռնային Ղարաբաղի բնակչության կրած ավելի քան երկու միլիարդ դոլարի նյութական վնասի մասին: Նաև հիշենք, որ Հայաստանի բնակչության 12 տոկոսը դարձել էին փախստական: Այդ ամենի հետ միասին Ադրբեջանից բռնագաղթված 360

²⁹ Геноцид и депортация азербайджанцев, стр. 6.

³⁰ Նույն տեղում, էջ 56:

³¹ Мелик-Шахназаров А. Нагорный Карабах. Факты против лжи. Москва, 2009, стр. 764.

³² Նույն տեղում, էջ 766:

հազար հայերի ճնշող մեծամասնությունը պատասպարվել են Հայաստանում, մարդիկ, որոնք միլիարդներ են թողել Ադրբեջանում, իսկ Հայաստանից հեռացած ադրբեջանցիները տարել են իրենց ամբողջ ունեցվածքը կամ փոխհատուցում են ստացել:

Հայտնի է, որ 1918 թ. Բաթումի բանակցությունների ժամանակ Հայաստանի պատվիրակությունը լուրջ բացթողումներ է ունեցել: Արարատյան հանրապետությունը հասկանում է դա, և արտաքին գործերի նախարար Ավետիս Ահարոնյանը 1918 թ. հուլիսի 8-ին Կոստանդնուպոլսի կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանին ուղարկած հեռագրում պահանջում է ուղղում մտցնել Բաթումի պայմանագրի մեջ և Շուշիի, Կարյազինոյի, Ջիվանշիրի, Գանձակի, Զանգեզուրի, Դարալագյազի, Շարուրի, Սուրմալուի, Նախիջևանի տարածքները ճանաչել որպես Հայկական Հանրապետության անբաժան մաս³³: Այդ ժամանակ՝ հուլիսի 27-ին, «Կովկասկոյե սլովո» թերթը գրել է, որ Հայաստանից կտրել 250 հազար բնակչություն ունեցող Շուշին, Զանգեզուրը և Սիսիանը անարդարացի է: Թերթը Հայաստանի կառավարությունից և Ազգային խորհրդից պահանջում է «միջոցառումներ ձեռնարկել Ղարաբաղի բնակչությանը պաշտպանելու համար» և այն «փրկել ահեղ վտանգից»:

Այդ ժամանակ էլ Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճաբանության հարց է դառնում Ղարաբաղը: Ադրբեջանի ազգայնամուլները պնդում են, թե պետք է Ղարաբաղը մտցվի իր սահմանների մեջ, մինչդեռ հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղը տեղագրական, լեռնագրական, ֆիզիկական, տնտեսական և մշակութային կյանքի, էթնիկական և լեզվաբանական տեսակետից հայկական է, և դրանում որևէ կասկած լինել չի կարող³⁴:

Կովկասում թուրքական բանակի հրամանատար Ֆերիք Նուրի փաշան շտապում էր որքան հնարավոր էր շուտ հնազանդեցնել Ադրբեջանից ամբողջովին կտրված Ղարաբաղն ու Զանգեզուրը: Նա այդ տարածքների հայությունից պահանջում է ընդունել, որ «Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի Հանրապետության անքակտելի մասը»: Պատմության մեջ առաջին անգամ է այդ մասին հայտարարվում, այն էլ թուրքի կողմից: Դրանով չբավարարվելով՝ Նուրի փաշան Թիֆլիսի «Ժողովրդի ծայնը» թերթի 1918 թ. օգոստոսի 28-ի համարում հանդես է գալիս մի հայտարարությամբ, որն արտատպվել է որպես

³³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 25:

³⁴ Նույն տեղում, գ. 49, թ. 6-9:

թուուցիկ և փակցվել Շուշիի պատերին: Հայերին զգուշացվում է կատարել իր պահանջը, հակառակ դեպքում կարժանանան Ադանայի հայերի բախտին:

Ոչ միայն այս, այլև հետագայում ազերի թուրքերի համանման պահանջներին արցախահայությունը մերժողական պատասխան է տվել նրա 1-ին, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ համագումարներում:

Հնարավոր չէ մեկ հոդվածում գրել ազերի թուրքերի բոլոր զազրելի կեղծարարությունների և խեղաթյուրումների մասին: Սակայն չենք կարող անտարբեր անցնել մի փաստի կողքով, որը հակառակ կողմը դրոշ է դարձրել: Ավելի քան երկու տասնամյակ է, ինչ Ադրբեջանի հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը աշխարհի տարբեր ամբիոններից աղաղակում են, թե հայերը զավթել են իրենց տարածքի 20 տոկոսը և ունեն մեկ մլն փախստական: Այդ սուտն ու կեղծիքը Ադրբեջանին հարկավոր են՝ տարբեր խողովակներով օգնություն ստանալու համար: Իրականում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) պաշտպանության բանակը (ՊԲ) ազատագրել է իր պատմական տարածքի մի մասը միայն, որտեղից ոչ թե հեռացել են մեկ մլն մարդ, այլ մոտ 510 հազար: 1997 թ. օգոստոսի 17-ին ՄԱԿ-ի ԳԽ քարտուղար Կոֆի Անանին ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի կողմից ուղարկված նամակում նշված է, որ ԼՂՀ ՊԲ ռազմական գործողությունների ժամանակ լրիվ ազատագրվել է հինգ շրջան (Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Ջեբրայիլի և Ջանգելանի), իսկ Ֆիզուլու և Ադդամի շրջաններն ազատագրվել են մասնակիորեն, ընդամենը 30 տոկոսով: Ըստ Ադրբեջանի վիճակագրական տվյալների նշված շրջանների տարածքն ու բնակչությունը կազմել են.

Շրջաններ	Տարածք	Բնակչության թիվը
Քելբաջար	1936 քառ.կմ	50,6 հազ. մարդ
Լաչին	1835	59,9
Ղուբաթլու	802	30,3
Ջեբրայիլ	1050	51, 6
Ջանգելան	707	59,9
Ադդամ	1094	155
Ֆիզուլի	1386	100
Ընդամենը	8810	510,3

Առաջին հինգ շրջանների ընդհանուր տարածությունը կազմել է 6330 քառ.կմ, իսկ Ադրամի և Ֆիզուլու ընդհանուր տարածությունը՝ 2480 քառ.կմ, սակայն դրանից ԼՂՀ ՊԲ հսկողության տակ է գտնվում Ադրամի տարածքի 35, Ֆիզուլիի՝ 25 տոկոսը, այսինքն՝ 283 և 347 քառ.կմ: Այսպիսով, ԼՂՀ ՊԲ հսկողության տակ գտնվող տարածքը կազմում է ոչ թե 8780 քառ.կմ., այլ 7059, որը Ադրբեջանի ընդհանուր տարածքի՝ 86600 հազ.քառ. կմ-ի 8 տոկոսն է, այսինքն՝ 2,5 անգամ պակաս 20 տոկոսից, որի մասին աղաղակում են Ադրբեջանի իշխանությունները՝ նպատակ ունենալով մոլորության մեջ գցել համաշխարհային հանրությանը՝ անտեսելով, ինչպես նշվել է, որ իրենց տիրապետության տակ է գտնվում ԼՂՀ տարածքի 15 տոկոսը³⁵:

Ադրբեջանի ներկայիս քաղաքականությունը հիմնականում ուղղված է հայ ժողովրդի դեմ: Փորձում է վարկաբեկել նրան, նրա հասցեին հազար ու մի կեղծիք հորինել, նույնիսկ ագրեսոր հայտարարել: Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը ֆաշիստական տարրեր ունի և չի տարբերվում մոլի նացիոնալիզմից: Դրա վառ ապացույցն է 2016 թ. ապրիլի քառօրյա պատերազմը, որի ժամանակ կենտրոնացնելով մեծ թվով տանկեր, ռազմական հզոր այլ տեխնիկա, մարդկային ուժ, փորձել է խախտել 1994-95 թթ. զինադադարի պայմանագրերը, առաջ է բերել մարդկային և նյութական զգալի կորուստներ: Սակայն ստանալով արժանի հակահարված՝ ստիպված էր նահանջել և զինադադար խնդրել: Հայ զինվորի խիզախությունն ապշեցրել է բոլորին և ցույց տվել նրա մեծագույն հայրենասիրությունն ու անպարտ լինելը: 18-19 տարեկան տղաները, եզակի խիզախություն և հերոսություն ցուցաբերելով, զարմացրին աշխարհին: Հայկական կողմը, տալով 100-ից ավելի զոհ, մինչև վերջին շունչը կանգնած էր հայրենի հողը պաշտպանելու դիրքերում: Հակառակորդը, որի զոհերի թիվը, ըստ տվյալների, շատ ավելի էր, յա՛ Ալլահ գոռալով և իրենց հույսը դնելով կացնի ու բարբարոս ֆանատիզմի վրա, հույս ուներ հաշված ժամերի ընթացքում հողին հավասարեցնել Արցախ-Ղարաբաղը: Սակայն ճակատագիրն այլ փայլ և հետևանք ունեցավ շնորհիվ հայ հերոսների խիզախության: Փա՛ռք նրանց:

³⁵ Мелик-Шахназаров А. Нагорный Карабах. Факты против лжи, стр. 764.

ВОПРОСЫ, ВЫЗЫВАЮЩИЕ ТРЕВОГУ

ГРАНТ АБРААМЯН

Апрельские события 2016 г., в особенности воинственная, шовинистическая политика Азербайджана уверяет, что это государство, со дня его основания до нынешних времен, получая идеологическое питание из кузницы Турции, с каждым днем усиливается. Антиармянская идеология и фанатизм включили в свой оборот не только элиту, но и большую часть населения республики, для которых убийство стало образом жизни.

Еще со времен царской власти и далее со времен Советского Союза завоевание армянских территорий для азербайджанской власти стало жизненной нуждой, что в настоящее время большей степенью выдвигается вперед. Лучшим доказательством являются апрельские события 2016 г., в течение четырехдневных военных действий Азербайджан, получив достойный ответ, был вынужден попросить перемирие.

Ключевые слова – территория, требование, исследования, шовинист, суверенный, исчерпать, депортация, область, переговоры.

DISTURBING INQUIRIES

HRANT ABRAHAMYAN

The attack of Azerbaijan in April of 2016, and their militant, chauvinistic policy on the whole make certain that Azerbaijan ever since its foundation until today, driven by the Turkish forge, is getting more and more brutal day after day. The Azerbaijanis' anti-Armenian ideology and fanaticism have entangled not only their authorities, but also most of the population of Azerbaijan for whom murder has become an adopted posture.

Even in the days of the Russian Empire and later during the period of the Soviet Union the invasion of Armenian territories had become a pressing requirement for Azeri authorities. At present, their hunger to occupy neighboring territories has become even stronger. The best evidence is their attack in April of 2016. However, Azerbaijan in the four-day military actions, having received an appropriate counterattack, was obliged to ask for cease-fire.

Key words – territory, requirement, (literary) works, nationalist, sovereign, exhausted, expulsion, province, negotiations.

**ԵԳԻՊՏՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՌՆԱԶՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՊՈԼԵՈՆ
ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

ԽԱԶԻԿ ԱԶԻԶՅԱՆ

Նապոլեոն Բոնապարտի կողմից նախաձեռնված կառավարչական բարեփոխումները, չնայած օկուպացիոն տարրերի պարունակությանը, նպաստեցին կառավարման առաջադիմական մոտեցումների ներդրմանը և ուղղակի ու անուղղակի էապես վերափոխեցին նոր ժամանակաշրջանի Եգիպտոսի կառավարման համակարգը: Հենց այս բարեփոխումների ներդրման և զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությանն է ուղղված այս հոդվածը: Չնայած Բոնապարտյան բարեփոխումների մասնակի ձախողմանը՝ դրանք դարձան Եգիպտոսի նոր կառավարչի՝ Մուհամմադ Ալիի կողմից նախաձեռնված բարեփոխումների գաղափարական ամուր հենասյունը: Հողվածուս հետազոտվել են նաև ավանդական և նորամուծական կառավարման մեխանիզմների զուգակցման, իշխանության մարմինների հասարակական կազմի ընդարձակման նպատակահարմարության, ինչպես նաև բարեփոխումների գործնական իրագործման և այլ հիմնախնդիրներ:

Բանալի բաներ – Նապոլեոն Բոնապարտ, կառավարման համակարգ, Եգիպտոս, նորամուծություններ, հասարակական կազմի ընդարձակում, բարեփոխումներ:

Պատմագրության մեջ հայրենական և արտասահմանյան ուսումնասիրողների կարծիքով Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը (1798-1801թթ.) կրում էր ակնհայտ օկուպացիոն բնույթ, բայց դրա հետ մեկտեղ ֆրանսիական վարչակարգի քաղաքականությունը նվաճողականի հետ միասին ներառում էր նաև առաջադիմական գաղափարներ, որոնք Նապոլեոն Բոնապարտը առաջ էր քաշում ֆրանսիական բանակի կողմից բռնազավթված երկրներում: Այս մասին փաստում է նաև խորհրդային պատմաբան, Ֆրանսիայի պատմության, մասնավորապես Ֆրանսիական մեծ հեղափոխության հայտնի մասնագետ Ալբերտ Մանֆրեդը իր «Նապոլեոն Բոնապարտ» գրքում. նա նշում է, որ Եգիպտոսում Նապոլեոնն իրականացրեց հակաֆեոդալական բնույթի մի շարք բարեփոխումներ, սակայն չստացավ արաբների աջակցությունը¹:

Արևմտյան պատմաբան-արևելագետների որոշ աշխատություններում դարձյալ խոսվում է այն մասին, որ Նապոլեոնը հակված էր վերափոխելու

¹ **Манфред А.** Наполеон Бонапарт. Москва, 1971, стр. 212, 213.

Եգիպտոսի ներքին կյանքը, այդ թվում՝ նաև այդ երկրի իշխանական մարմինների և իրավական ինստիտուտների կառուցվածքը: Հայտնի ամերիկացի արևելագետ Ստենֆորդ Ջ. Շոուն հաստատում է, որ ֆրանսիական ռազմարշավը հեղափոխեց ինչպես Եգիպտոսի կառավարման համակարգը, այնպես էլ հասարակությունը²:

Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավի ժամանակ Եգիպտոսի քաղաքական իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս որոշել, թե իրականում որքանով էին առաջադեմ ֆրանսիական իշխանությունների միջոցառումները՝ հաշվի առնելով ինչպես իրականացված, այնպես էլ նախատեսվող նորարարությունները կառավարման և դատական համակարգերում:

Հուլիսի 2-ին Ալեքսանդրիայում ֆրանսիական զորքերի իջեցումից և 1798թ. հուլիսի 21-ին՝ մամլուքյան ջոկատների ջախջախումից հետո, էքսպեդիցիոն կորպուսի միավորումները Նապոլեոնի հրամանով բռնազավթեցին Դելտայի մարզերը և սկսեցին Միջին և Վերին Եգիպտոսի գրավումը:

Եգիպտոսի գրավված տարածքների վրա հաստատելով օկուպացիոն համակարգ՝ Նապոլեոնը ձգտում էր ստանալ տեղական բնակչության աջակցությունը: Ռազմարշավի հենց սկզբից Նապոլեոնը ձգտում էր աջակիցներ գտնել: Ալեքսանդրիայում գեներալ Կլեբերին պարետ նշանակելու հետ կապված վերջինիս ուղղված նամակում Նապոլեոնը գրում էր, որ անհրաժեշտ է հնարավորինս արաբների հետ համաձայնության գալ և մեծ հարգանք ցուցաբերել մուֆթիներին և գլխավոր շեյխերին: Հատկանշական է, որ Նապոլեոնը սկզբում հակված էր Եգիպտոսի համար ավանդական կառավարման պետական ինստիտուտների պահպանմանը: Դեռևս 1798թ. հուլիսի 2-ից 7-ը՝ ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի իջեցումից հետո, Ալեքսանդրիայում նրա հրամանով ստեղծվեց դիվան, որի մեջ ընդգրկվեցին առավել հարգված շեյխեր և հայտնի քաղաքացիներ: Բոնապարտը դիվանի անդամներին հավաստիացրեց, որ ֆրանսիական ռազմական իշխանությունները պետք է խորհրդակցեն նրանց հետ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ: Միաժամանակ նա դիվանի անդամներից պահանջեց դրսևորել չեզոքություն ֆրանսիական վարչակարգի նկատմամբ³:

² **Efendi H.** Ottoman Egypt in the Age of the French Revolution: Translated by Stanford Jay Shaw. Cambridge, 1964, p. 23.

³ **Кириллина С., Рябков М.** Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон I Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй. Москва, 1991, стр. 131.

Հասարակական հենարանի փնտրտուքը տեղական վերնախավի մեջ և օկուպացիոն վարչակարգի համագործակցությունը դիվանների հետ դարձան Նապոլեոնի ներքին քաղաքականության չափանիշը Եգիպտոսում: 1798թ. հուլիսի 25-ին՝ ֆրանսիական զորքի՝ Կահիրե մտնելուց մեկ օր հետո, Նապոլեոնը տվեց Կահիրեի դիվանի ձևավորման հրամանը, որի արդյունքում որոշվեց իշխանության ձևափոխված 10 անդամների կազմում ընդգրկել մուսուլմանական հոգևորականության ակնառու ներկայացուցիչներին⁴: Նշանավոր հոգևորականների ընդգրկումը դիվանի մեջ պայմանավորված էր ֆրանսիացիների՝ պետական կառավարումից մամլուքներին դուրս մղելու ծրագրերով, ովքեր օկուպանտներին դիմադրող հիմնական ռազմական ուժն էին⁵:

Այսպիսով, Բոնապարտը իրագործեց հստակ մտածված և բազմակողմանի հետևանքներ ենթադրող կարևոր քաղաքական քայլ. նա ոչ միայն պետական կառավարման համակարգից դուրս մղեց մամլուքներին, այլ նաև օգտագործելով մուսուլմանական ժողովրդի հավատքը և տրամադրվածությունը հոգևորականների նկատմամբ՝ այն ուղղեց իր կողմից վերափոխված կառավարման համակարգի նկատմամբ հավատի բարձրացմանը:

Դիվանի աշխատանքը հսկելու համար նշանակվում էին ֆրանսիացի խորհրդականներ: Նապոլեոնը հաշվի առավ դիվանի անդամների կարծիքը նահանգային կառավարման մարմինների կազմակերպման վերաբերյալ: Շեյխերն արտահայտվեցին նահանգային նախկին վարչական համակարգի պահպանման օգտին և աջակցեցին այն ծրագրին, ըստ որի Եգիպտոսի բոլոր նահանգներում ստեղծվում էին տեղական դիվաններ, որոնք կազմված էին 7 անդամներից: Նահանգային դիվանները պետք է իրենց ներկայացուցիչներին ուղարկեին մասնակցելու կենտրոնական կահիրյան դիվանի աշխատանքներին⁶:

Այսպիսով, դիվանների ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական կառավարման համակարգերին տրվեցին հիմնականում խորհրդակցական գործառույթներ: Ֆրանսիացիները, խորհրդականների միջոցով խստորեն

⁴ Абд ар-Рахман ал-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801). Москва, 1962, стр. 68.

⁵ Vatikiotis P. The History of Modern Egypt. From Muhammad Ali to Mubarak. 4th edition, London, 1991, p. 39-40.

⁶ Кириллина С., Рябков М. Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон I Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, стр. 132, 133.

հսկելով կենտրոնական և նահանգային դիվանների գործունեությունը, այն ուղղորդում էին իրենց համար ձեռնտու ճանապարհով և խոչընդոտում էին ինքնուրույն որոշումներ կայացնելու փորձերը, որոնք չէին համապատասխանում օկուպացիոն համակարգի շահերին⁷:

Շրջանցելով կենտրոնական դիվանը՝ ֆրանսիական իշխանությունները հրամայում էին վճարել հարկերը, իրականացնում էին խուզարկություններ և ձերբակալություններ, բռնագրավում էին բնակչության ունեցվածքը: Ալ-Ջաբարտիի վկայությամբ արդեն 1798թ. վերջին ֆրանսիական իշխանությունները սկսեցին անտեսել իրենց կողմից ստեղծված կահիրյան դիվանը⁸: Խոստացված խորհրդակցությունը, որը պետք է անցկացվեր նրա անդամների հետ, չիրականացվեց, և արդյունքում այդ կառույցը դադարեցրեց իր գոյությունը ստեղծումից ընդամենը 2 ամիս անց:

Շուտով ֆրանսիական վարչակարգը փորձեց ձևավորել նոր համաեգիպտական մարմին, որը ստացավ Մեծ դիվան (Գերագույն խորհուրդ) անվանումը: Նահանգների ֆրանսիացի նահանգապետերը նոր դիվանի աշխատանքներին մասնակցելու համար Կահիրե ուղարկեցին տեղական ավագանիների ներկայացուցիչներին, ովքեր էական ազդեցություն ունեին բնակչության մեջ և չեզոք էին օկուպացիոն իշխանությունների նկատմամբ: Ընդհանուր առմամբ դիվանում հաշվվում էր 180 եգիպտացի⁹: Մեծ դիվանի ղեկավար ընտրվեց շեյխ Աբդալլահ աշ-Շարկավին:

1798թ. հոկտեմբերին՝ ֆրանսիացիների կողմից Կահիրեի ապստամբությունը ճնշելուց հետո, Մեծ դիվանը փաստացի չէր գործում: Միայն 2 ամիս անց՝ 1798թ. դեկտեմբերին, ֆրանսիական վարչակարգը սկսեց վերջինի վերակազմավորումը: Այն կազմված էր 60 անդամներից. նախկին Գլխավոր խորհրդի համեմատությամբ դիվանի անդամների թիվը 3 անգամ կրճատվեց¹⁰:

Մեծ դիվանի անդամներից ձևավորվեց Յուրահատուկ կամ Մշտական

⁷ Charles-Roux F. Bonaparte: Governor of Egypt. Translated From The French by Dickes E., London, 1937, p. 52-58.

⁸ Абд ар-Рахман ал-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), стр. 88.

⁹ Charles-Roux F. Bonaparte: Governor of Egypt, p. 58.

¹⁰ Кириллина С., Рябков М. Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон I Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, стр. 135.

դիվան, որի մեջ մտան 14 մարդ¹¹: Ընտրված էին եգիպտական հասարակությունից ֆրանսիացիների նկատմամբ առավել չեզոք դիրք ունեցող տարրերը, որով և բացատրվում է դիվանի մեջ քրիստոնյաների՝ ղպտիների և սիրիացիների ընդգրկումը:

Ընդհանուր առմամբ, ինչպես արդեն ասվեց, Կահիրեում և նահանգներում ստեղծված դիվանների համակարգը կոչված էր դառնալու օկուպացիոն վարչակարգի քաղաքականության ուղեցույցը: Գաղութային վարչակարգում դիվաններին հատկացված էր կառավարման մարմինների խամաճիկային դեր: Դրա հետ մեկտեղ Բոնապարտի գլխավորությամբ ֆրանսիական իշխանությունները չէին փորձում ինչ-որ ձևով «եվրոպականացնել» և «հեղափոխել» Եգիպտոսի կառավարման համակարգը: Նապոլեոնն իր խաղաղությամբ կատարել էր ավանդական մուսուլմանական իշխանության մարմինների վրա: Նրանց հաճախակի վերակառուցումը պայմանավորված էր լավագույն հարաբերակցության փնտրտուքով ֆրանսիական և տեղական վարչությունների միջև, որը կապահովեր քաղաքական ոլորտում ֆրանսիացիների բացարձակ գերակայությունը:

Հատկանշական է, որ ֆրանսիական ռազմական վարչության և դիվանների միջև բախումները պայմանավորված էին հարկային դրույքների հետ կապված անհամաձայնություններով, ռազմատուգանքների չափազանց մեծ ծավալներով և այլ հարցերով, որոնք կապված էին օկուպացիոն զորքերի ապահովման հետ¹²:

Ֆրանսիական վարչակարգի կողմից մամլուքների դեմ ճնշումների հետ կապված կառավարման համակարգում նրանց տեղը զբաղեցրին հիմնականում բարձրագույն մուսուլմանական հոգևորականության ներկայացուցիչները: Սակայն այդպիսի փոփոխությունները հակաֆեոդալական բնույթ չէին կրում, որը հաճախ վերագրվում է Եգիպտոսում Նապոլեոնի բարեփոխումներին: Դասային տեսակետից իշխանության մարմինների կազմը գործնականում չփոխվեց, քանի որ ուլեմները, զբաղեցնելով մամլուքների տեղը, իշխող դասի բավականին ազդեցիկ խումբ էին:

¹¹ Абд ар-Рахман ал-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), стр. 128.

¹² Кириллина С., Рябков М. Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон I Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, стр. 135, 136.

Իշխանության մարմինների մեջ մի շարք կրոնական ակնառու հեղինակությունների ընդգրկումը պայմանավորված էր նրանով, որ ուլեմները Նապոլեոնի կողմից դիտվում էին միակ իրական քաղաքական ուժ՝ որպես այլընտրանք մամլուքյան խմբավորումներին և օսմանյան իշխանություններին: Ֆրանսիական իշխանությունները Բոնապարտի գլխավորությամբ ձգտում էին հոգևորական գործիչներին գրավել իրենց կողմը՝ որպես իրենց քաղաքականության իրավագոր ուղեկցորդներ օգտագործելու համար: Նապոլեոնը գիտակցում էր, որ «ֆրանսիացիները, եթե նույնիսկ ուզենային, ապա չէին կարող կառավարել այս երկիրը», այդ պատճառով անհրաժեշտ էր դիմել ուլեմների աջակցությանը, ովքեր, նրա խոսքերով, «միաժամանակ և՛ ազնվականներ էին, և՛ իրավագետներ»¹³:

Նապոլեոնը ռազմարշավի առաջին ամիսներին հայտարարում էր մուսուլմանական արժեքներին իր նվիրվածության մասին և մասնավորապես արտահայտվում էր իսլամական դատական ինստիտուտների պահպանման օգտին: Նման հայտարարությունները չէին կրում ձևական բնույթ և գործնականում իրականացվում էին:

Ֆրանսիական վարչակարգի կողմից դատական համակարգում իրականացված նորարարության կարևոր հետևանք էր 1798թ. Եգիպտոսի համար դատական նոր մարմնի (մահկամաթ ալ-կադայա) ստեղծումը, որի մեջ մտան 6 քրիստոնյա-ղպտիներ և 6 մուսուլման-վաճառականներ: Ֆրանսիացիների նախաձեռնությամբ գլխավոր դատավորի պաշտոնը ստանձնեց ղպտի Մալթին: Եգիպտոսի համար անսովոր երևույթ էր արդարադատության համակարգում արտոնությունների վստահումը քրիստոնեություն դավանող մարդու:

Ֆրանսիական ռազմարշավի նախօրյակին, չնայած մամլուքների տիրապետությանը, Եգիպտոսում մուսուլմանական դատավարական համակարգը շարունակում էր մնալ Բարձր դռան հսկողության տակ: Դատական ապարատում առաջատար պաշտոնները որպես կանոն զբաղեցնում էին ոչ եգիպտացիները: Դրա հետ մեկտեղ նկատվում էր կրոնական-իրավական ոլորտի մասնակի անցման միտում տեղական մուսուլմանական հոգևորականության ձեռքը: Մամլուքները, հանդես գալով Բարձր դռան դիկտատի դեմ, հանձինս օսմանյան շարիաթական դատավորների, տեսնում էին կենտրոնական կառավարության շահերի ջատագովների, ինչի արդյունքում սկսեցին եգիպտական դատական համակարգից դուրս մղել օսմանյան կադիներին ու մեծացնել տե-

¹³ Նույն տեղում, էջ 136,137:

ղական կադիների թիվը: Այս քաղաքականությունը, պայմանավորված մի քանի այլ շարժառիթներով, շարունակվեց ֆրանսիացիների կողմից: Ֆրանսիական վարչակարգի միջոցառումների շրջանակներում, որոնք ուղղված էին եգիպտական մուսուլմանական հոգևորականության հետ մերձեցմանը, աստիճանաբար իրականացվում էր Ստամբուլից ուղարկված կադիների փոխարինումը եգիպտացի շարիաթական դատավորներով: Այն փուլում, երբ Բոնապարտը, քողարկելով ռազմարշավի իրական նպատակները, մարտիկի դեր էր խաղում Եգիպտոսի վրա Բարձր դռան սուլթերետության պահպանման համար, 5 դատական պաշտոնները պահպանվում էին օսմանյան կադիների կողմից՝ օսմանյան գերիշխանության պատրանքը ինչ-որ կերպ պահպանելու համար: Մինևույն ժամանակ Նապոլեոնը զիտակցում էր, որ օսմանյան հոգևորական հեղինակությունները, ժամանակավորապես գտնվելով Եգիպտոսում, դժվար թե ակտիվորեն համագործակցեն օկուպացիոն բանակի հետ և աջակցեն ֆրանսիական նախագծերի կյանքի կոչմանը: Ֆրանսիական վարչակարգի կարծիքով եգիպտական հոգևորական հեղինակությունները դատական համակարգում պատասխանատու և առանցքային պաշտոններ ստանալուց հետո կարող էին հանդես գալ որպես օկուպացիոն իշխանությունների կամքի կատարողներ: Ստամբուլի դրածո, Եգիպտոսի գերագույն շարիաթական դատավոր Ջումկաշի զադեի փախուստից հետո՝ 1799թ. մայիսին, երկրի գլխավոր կադիի պաշտոնում նշանակվեց եգիպտացի իրավագետ Ահմադ ալ-Արիշին¹⁴, ով այդ պաշտոնը որոշ ընդմիջումով զբաղեցրեց մինչև բռնազավթման վերջը (1801թ.): Միաժամանակ Նապոլեոնը նշեց, որ այսուհետ կադիի պաշտոններում պետք է նշանակվեն միայն եգիպտացիները:

Եգիպտոսից ֆրանսիական զորքերի տարհանումից հետո երկրում վերականգնվեց շարիաթական իրավական մարմինների կախվածությունն օսմանյան իշխանություններից: Առավել կարևոր կադիի պաշտոնները, այդ թվում՝ Եգիպտոսի ավանդական դատական համակարգի ղեկավարի պաշտոնը, դարձյալ զբաղեցրին Ստամբուլից ուղարկված մարդիկ¹⁵:

1800թ. նոյեմբերի սկզբին ֆրանսիացիները դարձյալ վերակազմավորեցին իշխանության մարմինների համակարգը: Մեծ դիվանը ցրվեց, Մշտա-

¹⁴ Абд ар-Рахман ал-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), стр. 211.

¹⁵ Кириллина С., Рябков М. Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон I Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, стр. 139.

կան դիվանի կազմի մեջ մտան գերազանցապես հոգևոր շրջանակների ներկայացուցիչները: Սակայն այս դիվանը ձևական բնույթ էր կրում և ֆրանսիական բանակի կապիտուլյացիայի պայմանագիրը կնքելուց 2 ամիս առաջ դադարեցրեց իր գործունեությունը Եգիպտոսում: Դիվանի վերջին նիստը կայացավ 1801թ. հուլիսի 6-ին¹⁶:

Կառավարման համակարգը, որը զուգակցում էր ֆրանսիական օկուպացիոն վարչակարգը և տեղական կառավարման մարմինները, գործում էր ֆրանսիացիների կողմից գրավված Ստորին և մասամբ Միջին Եգիպտոսի տարածքներում: Այն չտարածվեց Վերին Եգիպտոսում, որը դարձել էր երկարատև մարտերի խաղասապարեզ մամլուքյան կազմավորումների և ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի գորամասերի միջև:

Այսպիսով, չնայած Նապոլեոն Բոնապարտի ազատագրական և ժողովրդավարական կարգախոսներին, ֆրանսիական ռազմարշավի ժամանակահատվածում Եգիպտոսի կառավարման համակարգը, այնուամենայնիվ, պարունակում էր գաղութային համակարգի տարրեր, որոնք ֆրանսիական ռազմարշավի դիրքերի ամրապնդմանը զուգընթաց ավելի էին ընդգծվում: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցելու էր գալիս այն, որ ֆրանսիական ռազմարշավի բարձրաձայնած նպատակները սին էին, և Եգիպտոսի ազատագրումը Օսմանյան լծից միջանկյալ նպատակ էր տվյալ տարածաշրջանում միանձնյա վերահսկողության հաստատման ճանապարհին: Չնայած այն հանգամանքին, որ Եգիպտոսում պահպանվել էին թե՛ կառավարման ավանդական մարմինները, թե՛ մուսուլմանական իրավունքի վրա հիմնված դատական համակարգը, այնուամենայնիվ, դրա հետ մեկտեղ Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավը նշանակալի ազդեցություն թողեց Եգիպտոսական հասարակության հետագա զարգացման վրա: Եգիպտոսում ֆրանսիացիների եռամյա գոյության արդյունքում մամլուքների հասարակական-քաղաքական դիրքերը քայքայվեցին: Հիմնական կառավարման համակարգում նրանց տեղը գրավեցին իսլամական հոգևոր հեղինակությունները: Ֆրանսիացիների օրոք Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ իշխանության մարմինների հասարակական կազմի ընդարձակում, ինչը ենթադրում էր համապատասխան հասարակական շերտերի առկայություն և ուղղված էր ներքին խռովությունների մեղմացմանը և բացառմանը: Ցավոք, Բոնապարտի

¹⁶ Абд ар-Рахман ал-Джабарти. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), стр. 355-357.

կողմից նախաձեռնված մի շարք բարեփոխումներ միայն մասնակիորեն իրականացվեցին ֆրանսիական իշխանության գերակայության ժամանակահատվածում, սակայն հետագայում դրանք կյանքի կոչվեցին Մուհամմադ Ալիի կողմից իրականացվող Եգիպտոսի կառավարման համակարգի վերակազմավորման ժամանակ:

ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ЕГИПТА ВО ВРЕМЕНА ЭКСПЕДИЦИИ НАПОЛЕОНА БОНАПАРТА

ХАЧИК АЗИЗЯН

Инициированные Наполеоном Бонапартом управленческие реформы, несмотря на оккупационные элементы, способствовали введению прогрессивных механизмов управления и прямым и косвенным путем значительно изменили систему управления современного Египта. Статья направлена именно на обзор особенностей осуществления и развития этих реформ. Несмотря на частичный провал реформ Бонапарта, они стали одним из идейных основ для осуществления реформ новым правителем Египта Мухаммадом Али. В статье также рассмотрены целесообразность сочетания традиционных и инновационных механизмов управления, расширения социального состава государственных органов, а также проблемы практической реализации реформ и другие вопросы.

Ключевые слова – Наполеон Бонапарт, система управления, Египет, инновации, расширение социального состава, реформы.

THE ASPECTS OF THE EGYPTIAN MANAGEMENT SYSTEM DURING THE NAPOLEON BONAPARTE'S INVASION

KHACHIK AZIZYAN

The administrative reforms initiated by Napoleon Bonaparte, despite having some invasion issues contributed to the introduction of progressive management mechanisms and changed both directly and indirectly the management system of modern Egypt. This article is concerned with the investigation of the specifics of

the implementation and development of these reforms. Regardless of the partial failure of these reforms at the beginning, they became the ideological pillars of the reforms of the new Egyptian governor, Muhammad Ali. The feasibility of combining traditional and innovative management mechanisms, the appropriateness of the increase of number social members in the governing system are also studied together with the implementation of reforms and some other important issues.

Key words – Napoleon Bonaparte, management system, Egypt, innovations, expansion of social composition, reforms.

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ XII ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՄԵՐԻՆ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հոդվածի նպատակն է վերլուծել Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի 80-ական թթ. կեսերին ժամանակի հզոր քաղաքական ուժերի հետ հարաբերություններում, երբ դիվանագիտության ասպարեզում առաջատար դեր էր խաղում Հայոց կաթողիկոսությունը Գրիգոր Դ Տղա հայրապետի առաջնորդությամբ:

Բանալի բաներ – Ռուբինյան իշխանապետություն, Բյուզանդական կայսրություն, Հռոմի կաթոլիկ եկեղեցի, Եգիպտոսի Այյուբյան սուլթանություն, Գրիգոր Դ Տղա, Ռուբեն Գ, Իսահակ II Անգելոս, Ղուկիոս III, Սալահ ալ-Դին:

XII դ. 80-ական թվականների կեսերին Ռուբինյան իշխանապետությունը և նրան ամեն կերպ սատարող Ամենայն հայոց կաթողիկոսությունը, որն այդ ժամանակ գտնվում էր Հռոմկլայում, որդեգրեցին բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, որում հատկապես նշանակալից էր Գրիգոր Դ Տղա (1173-1193) կաթողիկոսի դերը: Քննության առարկա ժամանակահատվածը, մասնավորապես 1185-1186 թթ. աչքի ընկան հայ եկեղեցական դիվանագիտության նկատելի ակտիվացմամբ, ինչը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև Անտիոքի իշխանի կողմից Ռուբինյան իշխան Ռուբեն Գ-ի (1175-1187) 1185 թ. բանտարգելությամբ, որը շարունակվեց մինչև 1187 թ.: Ճիշտ է, այդ ընթացքում Կիլիկյան իշխանապետությունը գլխավորում էր Ռուբեն Գ-ի եղբայր Լևոնը, սակայն նրա իշխանությունն ուներ ոչ այնքան իրավական (de jure), որքան փաստացի (de facto) բնույթ:

Ինչպես հայտնի է, Կիլիկիայի հայկական իշխանատոհմերից Հեթումյանների դրդմամբ Անտիոքի լատին իշխանության առաջնորդ Բոհեմունդ III-ը (1163-1201) 1185 թ. նենգաբար ձերբակալեց Ռուբեն Գ-ին՝ այդպիսով ծանր կացության մեջ դնելով թշնամական պետություններով շրջապատված Կիլիկյան Հայաստանը: Ստեղծված դժվարագույն կացությունից ելք գտնելու մղումով Գրիգոր Դ Տղան բանակցությունների մեջ մտավ միմյանց հակադիր աշխարհաքաղաքական երեք բևեռների՝ Բյուզանդական կայսրության, Հռոմի կաթոլիկ եկեղեցու և Եգիպտոսի Այյուբյան սուլթանության հետ:

Թեև երկու կողմերին հայոց հայրապետի հղած հարցերի զգալի մասն ուներ եկեղեցական բնույթ, սակայն այլևս ապացուցման կարիք չունի այն թե-

զը, որ ինչպես հայ-բյուզանդական, այնպես էլ Հռոմի պապական աթոռի հետ Հայոց եկեղեցու հարաբերությունները, հատկապես XII դ. երկրորդ կեսին և Կիլիկիայի հայկական թագավորության գոյության հետագա ընթացքում, ունեցել են առավելապես հենց քաղաքական հետնախորք¹:

Այս տեսանկյունից չափազանց հետաքրքրական են Հռոմի պապի և Բյուզանդիայի կայսեր հետ Գրիգոր Դ Տղայի վարած բանակցությունները, որոնք ուղեկցվում էին փոխադարձ նամակագրությամբ:

Հակառակ պատմագիտության մեջ ընդունված տեսակետի, թե հայ-բյուզանդական հարաբերությունները Հռոմկլայի 1178 թ. եկեղեցական ժողովից հետո գրեթե դադարել էին², Հ. Բարթիկյանը, նկատի առնելով 1180-ական թթ. կեսերին և հետագայում հայ և բյուզանդական աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև գոյություն ունեցած նամակագրությունը, հիմնավորապես ցույց տվեց, որ այդ փոխառնչությունները ոչ միայն չեն դադարել, այլև ունեցել են ուշագրավ դրսևորումներ³: Խնդրո առարկա ժամանակահատվածի տեսանկյունից չափազանց հետաքրքրական է Բյուզանդիայի ինքնակալ Իսահակ II Անգելյուսի (1185-1195) 1185/1186 թվակիր նամակը Գրիգոր Դ Տղային, որը կայսեր պատասխանն է հայոց հայրապետին⁴: Անգելյուսի նամակից տեղեկանում ենք, որ Գրիգոր Տղան նրան հղել է երկու նամակ, մեկը՝ հայերեն, իսկ մյուսը՝ արաբերեն, այն դեպքում, երբ առանց որևէ դժվարության նամակները կարող էին գրվել հունարեն⁵: Իսահակ II Անգելյուսին դիմելու դրդապատճառը Բյուզանդիայի տարածքում ապրող հայերի նկատմամբ նրա հարուցած հալածանքներին վերջ դնելն էր: Սակայն կայսրը, ինչպես դժվար չէ մակա-

¹ Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների քաղաքական նշանակության մասին տե՛ս **Բարթիկյան Հ.**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 639-653:

² **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 1734:

³ Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 182, նույնի՝ Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 29-39:

⁴ Նամակի բովանդակությունը տե՛ս **Բարթիկյան Հ.**, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային, էջ 181-186:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 182:

բերել Վարդան վարդապետի հաղորդումից, չի անսացել Հայոց հայրապետի դիմումին՝ շարունակելով դավանափոխության պարտադրանքը⁶: Արդյունքի չհասնելով՝ Գրիգոր Դ Տղան վճռում է դիմել Հռոմի պապ Ղուկիոս III-ին (1181–1185)՝ որպես Իսահակ Անգելոսին հակակշիռ. «Առաքել և նոյն պատրիարք (Գրիգոր Դ Տղան – Վ. Տ-Ղ.) եպիսկոպոս մի Գրիգոր անուն ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ ի Յունաց կրէին Հայք»⁷: Հունադավան եկեղեցու հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող Հռոմի պապական աթոռին խիստ ցանկալի պետք է լիներ Հայոց հայրապետի դիմումը և պատեհ առիթ եկեղեցիների միության հարցը բարձրացնելու: Սակայն Պապն իր հերթին քաջ գիտակցում էր, որ առնվազն սխալ կլիներ ստեղծված պայմաններում, երբ միջերկրածովյան ավազանում խաչակրաց իշխանություններին լքողրեն սպառնում էին տարածաշրջանի մուսուլմանական երկրները, անմիջապես բարձրացնել Հայոց և լատին եկեղեցիների միության հարցը: Ուստի նա, դիվանագիտորեն շրջանցելով երկու եկեղեցիների միջև առկա դավանաբանական տարբերությունները, առաջարկում է մի քանի փոփոխություն կատարել Հայոց եկեղեցու ծիսակարգում⁸:

Վերադառնալով Իսահակ II Անգելոսի նամակին՝ նշենք, որ դրանից տեղեկանում ենք, որ Գրիգոր Դ Տղան ցանկություն է հայտնել մեկնել Կոստանդնուպոլիս և ի վերջո միություն հաստատել Հայոց և հունադավան եկեղեցիների միջև. «Այդ երկու նամակով մի բան հայտնեցիր, - դիմելով Գրիգոր Դ Տղային՝ գրում է կայսրը, - որ վառվում է քո սիրտը մեզ հետ միանալու սիրով, որ շատ ուրախ ես այդ առթիվ: Քո սիրո, խաղաղասիրության և միաբանության մասին վկայում է նախ և առաջ այն, որ դու քո վրա ես վերցնում այնքան երկար ճանապարհ կտրելով անձամբ մեր, խաղաղություն ավետողներիս ոտքին գալու հոգնությունը, բանակցություններ վարելու մեզ հետ...»⁹: Սակայն ինչպես գիտենք, հայրապետն այդպես էլ չմեկնեց Բյուզանդիայի մայրաքաղաք: Որպես հայոց կաթողիկոսների՝ Կոստանդնուպոլիս մեկնելուց հրաժարվելու պատճառ պատմագիտության մեջ արդարացիորեն մատնացույց է արվել քաղկեդոնա-

⁶ Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 133, 134:

⁷ Նույն տեղում, էջ 134:

⁸ Տե՛ս **Վարդանյան Վ.**, Գրիգոր Դ Տղա հայրապետը ժամանակի դավանական ու քաղաքական խաչողիներում, «Էջմիածին», 2005, թիվ է-Ը, էջ 88:

⁹ **Բարթիկյան Հ.**, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային, էջ 183:

կանությանը հարելու հնարավոր մեղադրանքը, որից ամեն կերպ խուսափել են Հայոց եկեղեցու առաջնորդները: Ինչպես հայտնի է, այդ պատճառաբանությամբ էր Հովհաննես Ե Դրասխանակերտցին (898-929), կազմակերպելով հանդերձ Աշոտ Բ Երկաթի (914-928) այցը Կոստանդնուպոլիս, հրաժարվել այնտեղ մեկնելուց¹⁰: Իհարկե, Բյուզանդիայի մայրաքաղաք Գրիգոր Դ Տղայի ջմեկնելու հիմնական պատճառը ևս հնարավոր մեղադրանքներից ու քաղկեդոնականություն ընդունելու պարտադրանքից խուսափելն էր, սակայն Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակի վերջում առկա տեղեկությունը թույլ է տալիս թեականորեն պնդել, որ կար Կոստանդնուպոլիս հայրապետի չգնալու մեկ այլ, թերևս, ոչ պակաս կարևոր դրոպապատճառ: Կայսրը վստահ լինելով, որ Գրիգոր Տղան ժամանելու է Կոստանդնուպոլիս, նրա անվտանգությունն ապահովելու նպատակով դիմել էր Իկոնիայի և Եգիպտոսի սուլթաններին. «Թագավորությունս պատվականությանդ ուղին մաքրել է ամեն մի խոչընդոտից և հայտնել ազնվագույն սուլթաններին՝ թե՛ Իկոնիայի և թե՛ Եգիպտոսի, որպեսզի քեզ ենթակա երկիրը անվնաս պահպանվի, և դու առանց դժվարության անցնես քո մարդկանց հետ միասին, ուղևորվելով դեպի իմ թագավորությունը»¹¹, - կարդում ենք նամակում: Կաթողիկոսի անվտանգությունն ապահովելու համար, թերևս, բավարար էր դիմել միայն Իկոնիայի սուլթանին այն պարզ պատճառով, որ Կիլիկիայից Կոստանդնուպոլիս տանող ճանապարհին անցնում էր սելջուկյան սուլթանության տարածքով: Իհարկե, կաթողիկոսանիստ Հռոմկլան գտնվում էր Այյուբյան սուլթանությունում, և այդ-

¹⁰ «Իսկ իմ չուեալ գնացի ի գաւառն Դերճան. և ամսօրեայ ատուրս ինչ ի նմա զետեղեալ՝ թէ պետև ստեպ ստեպ իրաւիրակն կոչէր սիրալիր կամօք երթալ ի պալատն առ Կայսր, սակայն ես ոչ կամեցայ. զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեցի գանդ երթալն իմ ի Քաղկեդոնիտոսն յարակցել ինձ համարեալ: Եւ ապա այսպէս ոչ կամեցայ գնալ ի գայթակղութիւն մտաց տկարաց» (Յովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 286): Ի պատասխան Բյուզանդիայի Մորիկ կայսեր (582-602) հրավերին՝ մասնակցելու Կոստանդնուպոլսում կայանալիք եկեղեցական ժողովին՝ Մովսէս Բ Եղիվարդեցի (574-604) կաթողիկոսն ասել է. «չեմ անցնի Ազատ գետը, չեմ ոտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի» (**Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 107): Պարսկա-բյուզանդական 591 թ. պայմանագրով Ազատ գետը դարձել էր երկու տերությունների սահման: Հայոց կաթողիկոսի նշած «փռան հացն» ու «գինին» խորհրդանշում էին հունադավան եկեղեցում կիրառվող հաղորդության հացն ու ջրախառն գինին:

¹¹ **Բարթիկյան Հ.**, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային, էջ 186:

պիսով կարծես կար Եգիպտոսի Այյուբյան սուլթանին դիմելու անհրաժեշտություն, բայց մյուս կողմից Հայոց հայրապետը, ինչպես նախկինում, այնպես էլ հետագայում առանց խոչընդոտի կարողանում էր մեկնել Ռուբինյան իշխանապետություն¹²: Դա նշանակում է, որ դեպի Կոստանդնուպոլիս Գրիգոր Դ Տղայի ուղևորության անվտանգությունն ապահովելու համար Եգիպտոսի Այյուբյան սուլթանին դիմելու անհրաժեշտություն չկար: Այս դեպքում սխալված չենք լինի պնդելու, որ Իսահակ II Անգելոսը, Այյուբյան սուլթանին հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մասին տեղեկացնելով, փորձել է սեպ խրել տակավին 1180 թ. հաշտության պայմանագիր կնքած Եգիպտոսի Այյուբյան սուլթանության և Ռուբինյան իշխանապետության միջև, ծանր կացության մեջ դնել վերջինիս՝ ստիպելով դիմել Բյուզանդիայի օգնությանը¹³: Անտարակոյս, հայկական կողմը գերադասել է բանակցությունները վարել հույժ գաղտնի պայմաններում, քանզի Այյուբյան տիրակալ Սալահ ալ-Դինի (1171-1193) հետ հաշտություն կնքած Ռուբինյան իշխանապետության համար խիստ բացասական հետևանքներ կարող էր ունենալ դրանց մասին սուլթանի իմացությունը:

Կոստանդնուպոլիս չմեկնելու և այդպիսով եկեղեցիների միության շուրջ բանակցություններն առժամանակ դադարեցնելու որոշումը խիստ կշռադատված քայլ էր Հայոց հայրապետի կողմից, և ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, այդպիսով առժամանակ չեզոքացվեց Այյուբյան սուլթանության հնարավոր թշնամանքը Ռուբինյան իշխանապետության հանդեպ: Այս տեսակետը հաստատվում է Գրիգոր Դ Տղայի կողմից 1185/1186 թթ. Եգիպտոս առաքված պատվիրակությամբ, որի մասին խիստ ուշագրավ տեղեկություն է հաղորդում XII-XIII դդ. ղպտի հեղինակ Աբու ալ-Մաքարիմը¹⁴ գրելով. «[Այդ

¹² Տակավին 1190 թ. Սրբազան Հռոմեական կայսրության ինքնակալ Ֆրիդրիխ I Բարբարոսային (1152-1190) դիմավորելու համար Լևոն Բ իշխանն (1187-1198) ուղարկեց հենց Գրիգոր Դ Տղային, որը Հռոմկլայից ժամանել էր Ռուբինյան իշխանապետություն:

¹³ Հայտնի է, որ եկեղեցիների միության շուրջ հայ-բյուզանդական բանակցություններն ընթացել են գաղտնիության պայմաններում, դրանցից գրեթե անտեղյակ են եղել հայ հասարակության՝ քաղաքականությունից ու դիվանագիտությունից հեռու կանգնած շրջանակները (տե՛ս **Քաղթիկյան Հ.**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծայքերը, էջ 643):

¹⁴ Երկը երկար ժամանակ՝ 1895 թ. Բ. Իվեթթաի խմբագրությունից և անգլերեն թարգմանական հրատարակությունից (տե՛ս հաջորդ ծնթ.) ի վեր, վերագրվել է Աբու Սահի (կամ Աբու Սալիհ Հայ) անունով մի հեղինակի: Սակայն երկի հետագա ուսումնասիրությունները և աշխարհի գրադարաններում նոր գրչագրերի հայտնաբերումն աստիճանաբար ապացուցել են, որ Աբու Սալիհը պարզապես եղել է երկի ձեռագրերից մեկի սեփա-

ժամանակ] մի եպիսկոպոս եկավ հայոց երկրից՝ երեք քահանաների ուղեկցությամբ, ովքեր ուղարկված էին հայոց թագավորի և պատրիարքի կողմից: Նա երկու ուղերձ էր բերել նրանցից, ինչպես նաև ևս երկու նամակ, որոնցից մեկը ալ-Մալիք Սալահ ալ-Դինից, մյուսը՝ ալ-Մալիք Սայֆ ալ-Դին Աբու Բաքրից՝ նրա եղբորից՝ ուղղված ալ-Մալիք Թակի ալ-Դինին: [Վերջիններս իրենց նամակներում] հորդորում էին, որ եպիսկոպոսը պետք է պատվի արժանանա, և որ հայկական երկու եկեղեցիները՝ ալ-Չուհրան և ալ-Բուսթանը, պետք է նրան հանձնվեն»¹⁵, - գրում է հեղինակը: Անկախ պատվիրակության արձանագրած արդյունքից, որի մասին կնշվի ստորև, արձանագրենք կարևոր մի հանգամանք. կաթողիկոսի բանագնացներն իրենց հետ տանում էին Սալահ ալ-Դինի բարեխոսական նամակը՝ ուղղված ալ-Մալիք Թակի ալ-Դինին: Դա նշանակում է, որ 1180 թ. Ռուբեն Գ-ի և Սալահ ալ-Դինի միջև հաստատված հաշտությունը լիովին պահպանվում էր: Պարզ է, որ Այյուբյան սուլթանը վճռել էր մեղմացնել Եգիպտոսի հայության նկատմամբ իր երբեմնի թշնամական վերաբերմունքը: Այդ հարցում, անշուշտ, շրջափելի էին հաշտության պայմանագրին հաջորդող հնգամյակում Գրիգոր Դ Տղայի դիվանագիտական ջանքերը, որոնց առհավատյա պետք է համարել Սալահ ալ-Դինի և ալ-Մալիք Սայֆ ալ-Դին Աբու Բաքրի՝ Հայոց հայրապետի բանագնացներին ուղեկցող նամակներ տրամադրելը: Վերոբերյալ քաղվածքից պարզվում է, որ կաթողիկոսի բանագնաց եպիսկոպոսին չի հաջողվել դրական արդյունքի հասնել, սակայն խնդրո առարկա թեմայի քննության տեսանկյունից առավել կարևոր

կանատերը: Մյուս ձեռագրերում, որոնք ավելի ամբողջական են, երկի հեղինակ է նշված Աբու ալ-Մաքարիմ անունով մի ղպտի: Տե՛ս **Hacken C. T.** The description of Antioch in Abū al-Makārim's History of the Churches and Monasteries of Egypt and some neighboring countries, East and West in the medieval eastern Mediterranean. I. Antioch from the Byzantine reconquest until the end of the crusader principality. Ed. by K. Ciggaar and M. Metcalf. Leuven, 2006, p. 185-216 և հատկապես **Heijer J. D., Pilette P.** History of the Churches and the Monasteries of Egypt, Christian-Muslim relations. A Bibliographical History. Vol. 4 (1200-1350). Ed. by D. Thomas and A. Malett, E.J., Brill. Leiden-Boston, 2012, p. 983-988:

¹⁵ Տե՛ս The Churches and Monasteries and some neighboring countries attributed to **Abū Ṣāliḥ The Armenian**, p. 10 (անգլերեն թարգմանությունը) և էջ 7 (արաբերեն բնագիրը): Այս հրատարակությունից հատվածական թարգմանություն է կատարել Ղ. Ալիշանը (տե՛ս **Ալիշան Ղ.**, Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ, 1933, էջ 30): 1984 թ. ղպտի եպիսկոպոս Սամուիլը պահպանված ձեռագրերի հիման վրա ձեռնարկել է երկի ամբողջական հրատարակությունը (4 հատորով): Մեզ հետաքրքրող հատվածը տե՛ս **Abū al-Makārim**, v. II, էջ 5:

էր Սալահ ալ-Դինի դրական վերաբերմունքը, ինչը հուշում է, որ Ռուբինյան իշխանապետություն-Այյուբյաններ հարաբերություններում պահպանվել էր 1180 թ. հաշտությամբ հաստատված խաղաղությունը: Վերջինիս պահպանումն առավել ամրապնդում էր Ռուբինյան իշխանապետության դիրքերն Անտիոքի դքսության հետ հակամարտությունում: Սալահ ալ-Դինի հետ Գրիգոր Դ Տղայի նամակագրական կապը, որն ամենևին չսահմանափակվեց վերոբերյալ դրվագով, հույժ կարևոր նշանակություն ունեցավ Կիլիկյան Հայաստանի անվտանգության տեսանկյունից, քանզի ոչ ամբողջությամբ, սակայն ինչ-որ չափով հնարավորություն էր տալիս խուսանավելու խաչակրաց պետություններ-Այյուբյան սուլթանություն ռազմական հակամարտությունում, որում կամա թե ակամա ներքաշված էր նաև Ռուբինյան իշխանապետությունը:

ДИПЛОМАТИЧЕСКИЕ ШАГИ АРМЯНСКОГО КАТОЛИКОСАТА В СЕРЕДИНЕ 80-ЫХ ГОДОВ XII СТОЛЕТИЯ

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

В середине 80-ых годов XII столетия армянский католикосат, под предводительством Григора IV Отрока, заметно активизировал отношения с тремя конфликтующими между собой влиятельными политическими силами того времени: Византийской империей, Римской католической церковью и Египетским султанатом Аййюбидов. Благодаря дипломатическим усилиям католикоса в течение этого периода стало возможным обеспечение полной безопасности Киликийского армянского княжества, равно как и сохранение хороших взаимоотношений с Византийской империей, Римским Папским престолом и Аййюбидским султанатом.

Ключевые слова - Византийская империя, Римская католическая церковь, Египетский султанат Аййюбидов, Григор IV Отрок.

**THE DIPLOMATIC EFFORTS OF THE ARMENIAN CATHOLICOSATE DURING
THE MID-80s OF THE 12th CENTURY**

VAHAN TER-GHEVONDIAN

This article is to analyze the foreign policy of Cilician Armenia consisting with the policy of the dominant political powers of that time, the Byzantine Empire, the Holy See of Rome as well as the Ayyubid sultanate in the 80s of the XII century. The Armenians were able to secure their rule over Cilicia by maintaining positive relations with all the three political powers through diplomatic efforts of the Armenian Catholicosate headed by Grigor D'Elia's patriarch who had a leading role in that period.

Key words – The Rubinyan dynasty rule, Byzantine Empire, Holy See of Rome, Ayyubid sultanate of Egypt, Grigor D'Egha, Ruben G, Isaac II Angels, Luke III, Salah al-Din.

ԱՆՏԻՈՔԻ ԱՌՈՒՄԸ ԼԵՎՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ (1216 Թ.). ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Լևոն Ա թագավորը շուրջ մեկուկես տասնամյակ համառ պայքար մղեց իր եղբոր թոռան՝ Ռայմոնդ-Ռուբենի օրինական իրավունքները պաշտպանելու և նրան Անտիոքի գահին բազմեցնելու համար: Բազմաթիվ փորձերից հետո, ի վերջո, 1216 թվականին նրան հաջողվեց գրավել Անտիոքը: Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, Հայոց թագավորը այս անգամ փորձեց թույլ չտալ, որ Կիլիկիայի դեմ ձևավորվի հարևան պետությունների դաշինք: Այդ նպատակով նա դիվանագիտական մեծ ջանքեր գործադրեց, որի արդյունքում Հալեպի Այյուբյան սուլթանությունը ձեռնպահ մնաց Կիլիկյան Հայաստանի վրա միացյալ հարձակում գործելու: Իկոնիայի սուլթանության առաջարկից:

Հայոց թագավորության դիվանագիտական քայլերն արտահայտվեցին Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլին և նրա եղբորորդի Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին Լևոն թագավորի ուղարկած նամակներով, որոնց մասին բացառիկ տեղեկություններ են հաղորդում XIII դարի արաբ պատմիչներ Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը և Իբն Վասիլը:

Քանայի քաներ – Լևոն Ա, Ռայմոնդ-Ռուբեն, Կիլիկիա, Անտիոք, Այյուբյան սուլթանություն, Հալեպ, Եգիպտոս, ալ-Մալիք ալ-Ադիլ, ալ-Մալիք ալ-Ջահիր, Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ:

Չնայած Իկոնիայի սելջուկյան և Հալեպի Այյուբյան սուլթանությունների միջամտությամբ 1208 թ. կնքված հայ-անտիոքյան պայմանագրին՝ Լևոն Ա արքան չհրաժարվեց Անտիոքին տիրելու և իշխանապետության գահաժառանգման խնդիրը¹ հօգուտ իր զարմիկ Ռայմոնդ-Ռուբենի լուծելու նպատակից: Հաջորդ տարում արդեն՝ 1209 թ., արու զավակ չունեցող հայոց արքան Ռայմոնդ-Ռուբենին հռչակեց իր գահաժառանգ: Այդպես նա փորձում էր մեկ պետության մեջ միավորել Կիլիկիան և Անտիոքը, բայց նախքան կրկին կանցներ վճռական գործողությունների Անտիոքում իշխանությունը զավթած Բոհեմունդ IV-ի դեմ, պիտի իրեն ապահովագրեր իր վտանգավոր մուսուլմանական հարևանների հակազդեցությունից՝ թուլացնելով նրանց դիրքերը: Օրինակ, երբ 1211 թ. մահացավ Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրովը, Լևոն Մեծագործը շտապեց միջամտել նրա երկու որդիների միջև ծագած գահակալական պայքարին՝

¹ **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 211-235, ինչպես նաև **Burgdorf J.**, The Antiochene War of Succession // The Crusader World, ed. by Adrian J. Boas, Routledge, 2016, pp. 196-211.

աջակցելով գահը ժառանգած Իզզ ալ-Դին Քեյ Քաուս I-ի (կառ. 1211-1219 թթ.) դեմ խռովություն բարձրացրած եղբորը՝ Ալա ալ-Դինին: Ալա ալ-Դինը փորձելով խլել իշխանությունը, օգնության կանչեց Լևոն Ա-ին՝ խոստանալով նրան հանձնել Կեսարիա քաղաքը: Լևոնն իր զորքով մոտեցավ Կեսարիային, բայց օրինական սուլթանն, ի վերջո, նրան համոզեց հետ քաշել զորքերն ու չմիջամտել գահակալական ներքին պայքարին: Հայկական զորքերը հետ քաշելու որոշման մեջ իր դերն ունեցավ նաև Զազիրայի տեր Այյուբյան ալ-Մալիք ալ-Աշրաֆը, որը ևս միջնորդեց հօգուտ Քեյ Քաուսի²:

Այս ընթացքում Անտիոքում շարունակվում էր ներքին քաղաքական պայքարը: Բոհեմունդ IV-ը փորձում էր ամեն կերպ ազատվել իր հակառակորդներից: Նա 1208 թ. բանտարկեց իր գլխավոր հակառակորդներից մեկին՝ Անտիոքի լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացուն, ինչի հետևանքով Հռոմի հետ նրա հարաբերությունները սրվեցին: Բայց Բոհեմունդին այդպես էլ չհաջողվեց ազատվել իրեն ընդդիմացող ուժերից, որոնք շարունակում էին աջակցել Ռայմոնդ-Ռուբենին, և Հայոց թագավորը հաջողությամբ օգտվեց այս հանգամանքից³:

1216 թ. գրված մի Մաշտոցի **հիշատակագիրը** վկայում է. «...Յամս յորում տերամբ յաղթող թագաւորն Հայոց Լեւոն էառ զԱնտիոք՝ զմեծ մայրաքաղաքն Ասորոց»⁴: Քաղաքի գրավման ամենահանգամանալից նկարագրությունը հայ հեղինակներից տվել է **Սմբատ Սպարապետը**: 1216 թ. փետրվարի 14-ին Լևոն Մեծագործը նրա դիպուկ բնորոշմամբ՝ «արուեստի և իմաստութեամբ»⁵, գրավեց Անտիոքը և այս անգամ արդեն ավելի երկար ժամանակով գահին նստեցրեց Ռայմոնդ-Ռուբենին: Սմբատը շարունակում է, որ Լևոն Ա-ն Անտիոքի իշխաններից ոմանց (այդ թվում և սենեշալ Ամորիին) մեծ պարգևներ խոստանալով իր կողմը գրավեց: Վերջիններս գիշերով բացեցին քաղաքի

² Cahen Cl., La Turquie pré-ottomane (Varia Turcica VII), Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 69; Բոզոյան Ա. (խմբ.), **Շուքրուով Ռ., Տեր-Ղևոնդյան Վ., Դանիելյան Գ.**, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), Երևան, 2016, էջ 94-95:

³ Cahen Cl., La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Geuthner, Paris, 1940, p. 611-613; Moutafian Cl., L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Tome 1, Paris, Les Belles Lettres, 2012, p. 107-108:

⁴ Տե՛ս **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**. ԺԳ դար, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1984, էջ 96 և հմմտ. նույն տեղում, էջ 103:

⁵ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Ս. Ղազար, Վենետիկ, 1956, էջ 219:

դարպասները, և հայոց զորքը մտավ քաղաք: Ֆրանկների մեծ մասն ամրացավ Անտիոքի միջնաբերդում, բայց շուտով ստիպված հանձնվեց: Անտիոքի պատրիարքը, քաղաքի մեծամեծերի ուղեկցությամբ, Լևոն թագավորի գլխավորությամբ Ռայմոնդ-Ռուբենին (1216-1219 թթ.) բազմեցրեց իշխանական գահին⁶:

Հեթում Կոռիկոսցին, Անտիոքի դարպասները հայկական զորքի առջև բացած Ամրի սենեշալի և մյուս ֆրանկ իշխանավորների դասալքությունը նկատի ունենալով, գրում է. «Թագաւորն Հայոց Լեւոն էառ *դաւով* ի գիշերի գքաղաքն Անտիոք եւ կացոյց անդ բրինձ զՌուբէն, թոռն եղբար իւրոյ»⁷:

Այժմ դառնանք Անտիոքի գրավման մասին վկայող արաբ հեղինակներին: Արաբագիր **Սիբու Իբն ալ-Ջաուզի** պատմիչը, որին Ջազիրայի տեր Այյուբյան ալ-Մալիք ալ-Աշրաֆը որպես դեսպան 1216 թ. ուղարկել էր Հալեպ՝ իր եղբայր սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրի մոտ, վկայում է, որ վերջինիս Անտիոքի գրավման մասին հայտնել է հենց ինքը. «Այդ թվականի (իմա՝ հիջրայի 612 թ.) Շավալ ամսի 24-ին՝ կիրակի օրը (1216 թ. փետրվարի 14), Լավինը խլել է Անտիոքը ֆրանկներից»⁸:

Սիբուը Լևոնի այս քայլի դրդապատճառների մասին լռում է: Սրան հակառակ՝ Անտիոքի գահաժառանգության խնդրի էության մասին բավական լավատեղյակ է **Իզզ ալ-Դին իբն Շադդադը**, չնայած որ նա Լևոնի ձեռնարկումը սխալմամբ թվագրում է 1215 թ. վերջերով. «[Հիջրայի] 612 թ. Շաաբան (sic) ամսի 23-ին՝ երկուշաբթի օրը (1215 թ. դեկտեմբերի 17), *Իբն Լավունը*⁹ հարձակվեց Անտիոքի վրա, գրավեց այն և հանձնեց իր քեռորդուն (sic)¹⁰: Սրա պատճառն այն էր, որ այդ ժամանակ իշխողի հայրը՝ պրինց Ռայմոնդ Ավագը,

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ **Մաթևոսյան Կ.**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա «Ժամանակագրությունը», Երևան, 2011, էջ 50, ինչպես նաև **Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.**, հտ. 1, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, հտ. 1, էջ 79, 94 և նույնի՝ հտ. 2, 1956, էջ 63: Իսկ Սամվել Անեցու շարունակողներից մեկն Անտիոքի առումը թյուրիմացաբար դրել է 1218 թ. տակ: Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 239 և հմնտ. նույն տեղում, էջ 238 (դրված է ճիշտ թվականի տակ):

⁸ **Sibt ibn al-Gawzi**, *Mirāt al-zamān fi tāriḫ al-aʿyān*, հտ. VIII, (ed. with introduction by J. R. Jewett, The University of Chicago Press, Chicago, 1907), էջ 374:

⁹ Նկատի է առնված Լևոն Ա թագավորը:

¹⁰ Խոսքն Ալիսի (Ալիծի) մասին է, ով ոչ թե Լևոնի քույրն էր, այլ զարմուհին՝ նրա եղբայր Ռուբենի դուստրը:

երկու որդի ուներ: Նրանցից մեկը հիշյալ Բայմունդն էր (Բոհեմունդ IV), որ իշխում էր այնտեղ, իսկ մյուսի անունը Ռայմունդ էր: Հոր հավանությունը [հենց] նրա կողմն էր, ուստի և նշանել էր նրան Իբն Լավունի դստեր հետ, և [ապա] ամուսնացրել նրա հետ: [Հետո] թագավորությունը նրան էր կտակել և իր ժողովրդին ճանաչել տվել նրան: Բայց այնպես էր պատահել, որ Ռայմունդը կատաղությամբ հիվանդանալով մահացել էր դեռ իր հոր կենդանության օրոք: Նա Իբն Լավունի քրոջից (sic) մի որդի էր ունեցել, որի անունը Ռուբին (Ռուբեն) էր: Իբն Լավունը դիմեց դեպի Անտիոք՝ իր հետ տանելով իր քրոջն (sic) ու նրա որդուն»¹¹: Իզզ ալ-Դին իբն Շադդադը բացատրում է նաև, որ Բոհեմունդը սպանել էր Անտիոքի պատրիարքին, քանի որ վերջինս բացեփբաց աջակցում էր Լևոնին և կողմ էր, որ գահը ժառանգի Ռուբեն-Ռայմունդը: Նա շարունակում է. «Իբն Լավունը ստացել էր Անտիոքի պատրիարքի (բնագրում՝ biṭrīq Anṭākyā) նամակն այն մասին, որ *թագավորությունը* պատկանում էր նրա քեռորդուն: Այս նամակը նա նրան (Բոհեմունդին) էր ուղարկել, և երբ Բոհեմունդը ստացել էր այն և ծանոթացել բովանդակությանը, ասել էր՝ սա իմ թագավորությունն է, և այն իմ ձեռքում է: Ապա պատրիարքին միջնաբերդ էր բարձրացրել և խեղդել»¹²:

Անտիոքի գահաժառանգության խնդիրն էլ ավելի ճիշտ է ընկալել Իբն Շադդադի ժամանակակից ասորի պատմիչ **Բար Հեբրեոսը**. «Այդ ժամանակ, գրում է նա, - երբ պրինց Բայմունդը (Բոհեմունդ III) մահացավ, մի որդի թողեց Ռուֆին (Ռուբեն) անունով, որին նրա համար ծնել էր Հայոց *արքա* Ռուֆինի (Ռուբեն Գ) դուստրը: Եվ չնայած թագավորությունը իրավապես նրան էր պատկանում, նրա հորեղբայրը համարձակվեց ընդդիմանալ և հափշտակել այն իր համար: Այս բանից հետո Լևոնը՝ Հայոց արքան, հիմք ընդունելով, որ Ռուֆին Ֆրանկն իր եղբոր դստեր որդին էր, զայրացավ և Անտիոք եկավ՝ ստիպելով Անտիոքի ժողովրդին հավատարմության երդում տալ նրան»¹³:

Լևոնը բարեհաճ վերաբերմունքի արժանացրեց քաղաքի բնակչությանը, ինչը նրա հաջողության գրավականներից էր: Այս առումով հետաքրքրական է մեկ այլ արաբ պատմիչ **Իբն Վասիլի** հետևյալ վկայությունը. «Այս (իմա՝ հիջրայի 612 թ.) տարվա Շավալ ամսին (1216 թ. հունվար/փետրվար) Հայոց

¹¹ Տե՛ս 'Izz al-Dīn Ibn Šaddād, Al-A'lāq al-ḥaṭīra fi dīkr umarā' al-Šām wa-l-Ġazīra, hun. 1.2, խմբ. Yaḥyā Zakarā 'Abbāra, Dimašq, 1991, էջ 407:

¹² Նույն տեղում:

¹³ The Chronography of **Bar Hebraeus Gregory Abu-I-Faraj**, translated by Ernest A. Wallis Budge, Amsterdam, 1976, էջ 370:

արքան՝ «Իբն Լևոնը», տիրացավ Անտիոքին և լավ վարվեց տեղի բնակչության հետ և արդարություն գործադրեց: Նրա (Անտիոքի) տեր Բրինսը¹⁴ բռնակալ մարդ էր, և Իբն Լևոնի դիրքը բարձրացավ Անտիոքի ժողովրդի մոտ»¹⁵:

Անտիոքի գրավումը Լևոն Մեծագործի ռազմաքաղաքական խոշորագույն ձեռքբերումն էր: Սա նաև դիվանագիտական խոշոր հաղթանակ էր: Առաջին հերթին ճիշտ էր ընտրված Անտիոքի նվաճման պահը: Սկսվել էր Խաչակրաց հինգերորդ արշավանքը (1213-1221 թթ.)¹⁶, որն անկախ իր ուժգնությունից ու արդյունավետությունից, Այյուբյաններին ստիպեց իրենց ուժերը կենտրոնացնել այդ ճակատում: Հետևաբար, հույս կար, որ Հալեպը չէր կարող ամեն առիթով օգնության հասնել Բոհեմունդ IV-ին: Այնուամենայնիվ, Լևոնն էլ ավելի մեծ զգուշավորություն ցուցաբերեց և Անտիոքին տիրելուց հետո այնտեղ եղած մուսուլման գերիներին անմիջապես ուղարկեց Հալեպ՝ կանխելով ալ-Մալիք ալ-Չահիրի հավանական միջամտությունը. «... և նա (Լևոնը) ազատ արձակեց մի խումբ մահմեդական գերիների, որոնք գտնվում էին Անտիոքում և նրանց տեղափոխեց [Հալեպ], և հաշտություն եղավ իր և ալ-Մալիք ալ-Չահիրի միջև»¹⁷: **Իզզ ալ-Դին Իբն Շադդադը**, որը նույնպես պատմում է Անտիոքի գրավման հանգամանքների մասին, գրում է. «Երբ Իբն Լավունը տիրեց միջնաբերդին, իսկ Բայմունդը (իմա՝ Բոհեմունդը) վերադարձավ Տրիպոլի, Իբն Լավունը գրեց ալ-Մալիք ալ-Չահիր Աբու ալ-Ֆաթի Բայբարսին՝ տեղեկացնելով, որ ինքը նրա ծառայության տակ է և [երբեք] չի հակառակվի նրա կարգադրությանը և կարծիքին, և որ ինքն Անտիոքը գրավել է [իրենց] նրա անունից ու ազատ արձակել այնտեղ եղած մուսուլման գերիներին և ուղարկել Հալեպ»¹⁸: Լևոնի այս քայլը, ինչպես նաև նրա և Եգիպտոսի Այյուբյան սուլթանի հետ նրա վաղեմի գործակցությունը զսպեցին Հալեպի սուլթանին՝ կան-

¹⁴ Նկատի է առնված Բոհեմունդ IV Միականին:

¹⁵ Տե՛ս **Ibn Wāṣil**, Mufarrig al-kurūb fi aḥbār banī Ayyūb, hun. III, խմբ. Ġamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957, էջ 233:

¹⁶ 5-րդ խաչակրության մասին մանրամասն տե՛ս **S. Runciman**, A history of the Crusades: Vol. III (The Kingdom of Acre and the Later Crusades), Cambridge University Press, Cambridge, 1951, pp. 132-170; **Thomas C. Van Cleve**, The Fifth Crusade // A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311, gen. ed. K. M. Setton, The University of Wisconsin Press, 1969, 377-428:

¹⁷ **Ibn Wāṣil**, Mufarrig al-kurūb, hun. III, էջ 233: Տե՛ս նաև **Cahen Cl.**, La Syrie du Nord, էջ 621:

¹⁸ **Izz al-Dīn Ibn Šaddād**, al-Aʿlāq al-ḥaṭira, ց. 1.2, էջ 408-409:

խելով վերջինիս միջամտությունը: Դեպքերի հետագա ընթացքն ապացուցում է սա:

Անտիոքին տիրելուց հետո Լևոն Մեծագործը վերականգնեց հարաբերությունները նաև լատին եկեղեցու հետ՝ վերահաստատելով Տարսնի ու Մամեստիայի կաթոլիկ եպիսկոպոսական աթոռները և Բաղրասը, այնուամենայնիվ, վերադարձնելով Տաճարականներին¹⁹: **Իբն Վասիլն** այս առիթով գրում է. «Իբն Լավունը Բաղրասը հանձնեց Տաճարականներին (բնագրում՝ *Dāwiyya*), իր քրոջ որդուն տեղապահ նշանակեց Անտիոքում և վերադարձավ իր երկիր՝ վախենալով Իզզ ալ-Դին Քայկաուսից»²⁰: Սա Կիլիկյան Հայաստանի վարած ճկուն դիվանագիտության բարձրակետն էր:

Անտիոքի գրավմանն ու Բոհեմունդ IV-ի կոչին, ինչպես արաբ պատմիչներն են վկայում, առաջինն արձագանքեց Իկոնիայի սուլթան Քեյ Քաուսը: **Իբն Վասիլը** հիշրայի 612 թ. տակ գրում է Ռումի սելջուկների կողմից Կիլիկյան Հայաստանի Լուլուա բերդի գրավման մասին: Ամենայն հավանականությամբ, հենց այս լուրն է ստիպել Լևոնին թողնել Անտիոքն ու հապշտապ վերադառնալ Կիլիկիա: Ռումի սուլթանը շարունակել է հայոց երկրի ասպատակությունը՝ տիրանալով մի քանի այլ բերդերի նույնպես: Ըստ **Սամվել Անեցու** շարունակողներից մեկի՝ «եկն բազմօք զօրօք ի վերայ թագաւորին Լեւոնի եւ պաշարեաց զբերդն զԿապան, եւ թագաւորն Լեւոն զօրօք իւրովք մարտեաւ ընդ նմա եւ զառաջինն յաղթեաց, բայց յետոյ զօրքն անմտութեամբ պարտեցան ի սուլտանէն»²¹:

1216 թ. Տարսնում գրված մի Ավետարանի **հիշատակարանից** էլ պարզ է դառնում, որ հայկական ուժերը Կապան բերդամրոցի մոտ տեղի ունեցած կռվում չեն կարողացել լուրջ դիմադրություն կազմակերպել, և անգամ իշխաններ են գերի ընկել սելջուկներին և նրանց հետ նաև Կոստանդին գունդստաբլը. «Իսկ յանուրէն զաւրացն գունդ հասեալ, ասպատակեալ աւերեին զսահմանսն՝ ուր եւ կարէին: Իսկ քրիստոսասէր թագաւորն մեր առաքեալ զքեռորդին իւր զԿոստանդին գունդստապլ զաւրաք սակաւութ ընդդէմ, առ ի չթողացուցանել զաւերումն սահմանաց մերոց,- գրում է նա, ապա այսպես եզրափակում,-... եւ զբազումս ձեռբակալ արարեալ տարան ի գերութիւն յաշխարհն իւրեանց. կալան զԿոստանդին գունդստապլ եւ զերկու իշխանսն

¹⁹ Տե՛ս **Ibn Wāṣil**, *Mufarriğ al-kurūb*, հտ. III, էջ 233:

²⁰ Նույն տեղում:

²¹ **Սամուել Անեցի եւ Շարունակողներ**, Ժամանակագրութիւն, էջ 238:

ընդ նմին՝ զԿեոսակ (կիռ Սահակ) եւ զմիւս Կոստանդին՝ զորդի Հեթմոյ սեաստոսի»²²:

Անտիոքի գրավման լուրը, այդուհանդերձ, անելանելի դրույթան մեջ էր դրել Հալեպի սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին: Ըստ **Իբն Վասիլի**՝ հիջրայի 613 թ. Մուհարրամ ամսին (1216 թ. ապրիլ-մայիս) Քայքաուն է դիմում ալ-Մալիք ալ-Ջահիրին, որ միասնաբար հարձակվեն ու ազատեն Անտիոքը Լևոն թագավորից: Ի պատասխան այս նախաձեռնության՝ ալ-Մալիք ալ-Ջահիրն առաջարկում է, որ Իկոնիայի սելջուկները Հայոց թագավորության վրա հարձակվեն Մարաշի կողմից, իսկ ինքը՝ Դարպասակի, իսկ պրինցը թիրախի Անտիոքը՝ իր տրամադրության տակ ունենալով Դամասկոսի, Համայի և Հոմսի զորքերը²³:

Հալեպցի պատմիչ **Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը** քիչ այլ կերպ է ներկայացնում դեպքերը: Ըստ նրա 1216 թ. նամակագրություն հաստատվեց սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրի և սուլթան Իզզ ալ-Դին Քեյ Քաուսի միջև: Պայմանավորվեցին, որ սուլթանը (ալ-Մալիք ալ-Ջահիրը) անցնի նրա (Քեյ Քաուսի) գերակայության տակ և դաշնակցություն կնքի, որովհետև վախենում էր իր հորեղբորից: Քեյ Քաուսը համաձայնեց»²⁴: Պատմիչն ավելացնում է, որ Հալեպի սուլթանը, այնուամենայնիվ, զղջաց իր արածի համար և մի դեսպանություն էլ ուղարկեց Կահիրե՝ իր մտադրությունների վերաբերյալ ալ-Մալիք ալ-Ադիլի հավանությունը ստանալու համար: Այս անգամ նա այլևս ալ-Մալիք ալ-Ադիլի հետ մեծ հույսեր չէր կարող կապել, քանզի ինչպես շարունակում է **Իբն ալ-Ադիմը**. «Եվ նա (ալ-Մալիք ալ-Ջահիրը) դեսպան ուղարկեց Եգիպտոս: Սուլթանը փոստածիեր պատրաստեց, որպեսզի թարմ լուրեր ստանա իր հորեղբորից (ալ-Մալիք ալ-Ադիլի), որպեսզի իր անելիքն իմանա, եթե նրա կողմից որևէ կասկածելի քայլ նկատի: Եվ ինքն էլ անձնապես դիմեց Քեյ Քաուսին, և այս բոլոր եղածի մեջ իր նպատակն էր բանակը պատրաստ վիճակի մեջ պահել և պատրաստ լինել Քեյ Քաուսին ընդառաջ գնալու և

²² **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, ԺԳ դար, էջ 101; **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, Ժամանակագրութիւն, էջ 238; **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 221-222: Լևոնը հիշյալ գերիներին գերությունից ազատել է միայն երեք տարի անց՝ որպես փրկագին Ռումի սուլթանությանը զիջելով Լուրա և Լոզատ բերդերը: Տե՛ս նույն տեղում, էջ 222:

²³ **Ibn Wāṣil**, Mufarriḡ al-kurūb, hun. III, էջ 234:

²⁴ Տե՛ս **Kamāl al-Dīn Ibn al-Adīm**, Zubdat al-ḥalab fi tāriḥ Ḥalab (Histoire d'Alep par Kamāl al-Dīn Ibn al-Adīm, t. III, ed. Sami Dahan, Institut Français de Damas, 1968), էջ 168:

միանալու նրան՝ առաջին հերթին [հարձակվելու] համար «Իբն Լևոնի» երկրի վրա: «Իբն Լևոնը» տիրել էր Անտիոքին, և սուլթանն անելանելի կացության մեջ էր հայտնվել, քանզի սահմանակից էր նրան, բայց գիտեր որ [Լևոնն] իր հորեղբոր (ալ-Ադիլի) հովանու տակ էր»²⁵:

Ուշագրավ է **Իբն Վասիլի** տեղեկությունը, որը բացահայտում է ինչպես ալ-Ադիլի և ալ-Ջահիրի ներքին հակասությունները, այնպես էլ Եգիպտոսի Այյուբյան սուլթանի խաղաղաժ դերը Հալեպն Իկոնիայի սուլթանությունից հեռու պահելու, հետևաբար, Կիլիկիայի վրա հարձակումը զսպելու գործում: Պատմիչը նշում է. «Ալ-Մալիք ալ-Ջահիրը մարդ ուղարկեց ալ-Մալիք ալ-Ադիլի մոտ որպեսզի խորհրդակցի այդ հարցի»²⁶ մասին, բայց ալ-Ադիլը մերժեց նրա տեսակետը (զաղափարը) և հայտնեց, որ նրան (ալ-Մալիք ալ-Ջահիրին) անգամ չի ցանկանում տեսնել: Եվ տեղյակ պահեց, թե այս հարցի մեջ ինչ չար գործեր (խարդավանքներ) կան: [Այս բանից հետո] ալ-Մալիք ալ-Ջահիրն ընկավ մեծ շփոթության մեջ. դրժե՞ր Իզզ ալ-Դինին տված խոստումը, թե՞ ընդդիմանար իր հորեղբայր ալ-Մալիք ալ-Ադիլին»²⁷:

1216 թ.-ին վերաբերող հաղորդումները ապացուցում են Լևոն Ա-ի և ալ-Մալիք ալ-Ադիլի միջև հաստատված նամակագրության և սերտ հարաբերությունների մասին: Արաբ պատմիչների տեղեկություններից կարելի է մակարեղել, որ Լևոն Ա-ի և ալ-Ադիլի գործակցությունը 1208-1216 թթ. ու հավանաբար նաև հետագա տարիներին, եղել է տևական:

Թեև նամակների մանրամասն բովանդակությունը մեզ հայտնի չէ, սակայն ենթադրելի է, որ Լևոն Ա-ը նույնիսկ ձևականորեն ճանաչել է Եգիպտոսի սուլթանի գերագահությունը: Դա նրան ոչինչ չէր պարտավորեցնում՝ թեկուզ հաշվի առնելով ալ-Մալիք ալ-Ադիլի սուլթանության և Կիլիկիայի սահմանակից չլինելը: Լևոն Ա-ը քաջատեղյակ էր Այյուբյան տոհմի տարբեր ներկայացուցիչների միջև առկա ներքին հակասություններին և ձգտում էր, ալ-Ադիլի հետ գործակցելով, զսպել նրա եղբորորդուն, դրանով իսկ չեզոքացնելով հակակիլիկյան եռյակ դաշինքի հանգուցային անդամին:

Այս անգամ Հալեպի Այյուբյանները խուսափեցին հարձակվել հայկական ուժերի վրա, քանզի ոչ միայն չստացան Եգիպտոսի աջակցությունը, այլև կարող էին հարուցել գերագահ սուլթանի զայրույթը՝ նրա մտերիմ միապետի

²⁵ Նույն տեղում, էջ 168-169:

²⁶ Խոսքը Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի վրա Իկոնիայի՝ Տրիպոլիսի հետ համաձայնեցված հարձակման մասին է:

²⁷ Տե՛ս **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb, hu. III, էջ 234:

դեմ պատերազմ սկսելով: Հալեպի սուլթանության հնարավոր հարձակումը վերջնականապես կանխելու նպատակով Լևոն Ա-ը հանկարծակիի բերեց ալ-Ջահիրին՝ ալ-Ադիլից հետո նամակ ուղարկելով նաև նրան:

Նամակի համառոտ բովանդակությունն արաբ հեղինակներից հաղորդում է **Իբն Վասիլը**: Լևոն Ա-ն իր բարեկամությունը և նույնիսկ հավատարմությունն է հայտնում Այյուբյաններին՝ գրելով. «Ես սուլթանի *ծառան* եմ (բնագրում՝ *mamlūk*, իմա՝ «ստրուկ»), նրա պետության մի տնկին (բնագրում՝ *ḡaras dawlatihi*): Ես նրա մոտ եմ մտել ինչպես մի արաբ և խնդրում եմ փրկել ինձ այս անելանելի դրությունից (բնագրում՝ *al-warḡa*), և ես նրա ծառան կլինեմ, քանի դեռ ողջ եմ»²⁸: Հմուտ դիվանագիտություն բանեցնելով՝ Լևոնն ալ-Մալիք ալ-Ջահիրին հիշեցնում է, որ երբ նա երկիցս իր բոլոր զորքերն ուղարկել էր Դամասկոսը գրավելու, ինքը կարող էր ազատորեն ներխուժել Հալեպի սուլթանություն և մեծ վնասներ պատճառել, բայց չի արել՝ գերադասելով ծառայություն մատուցել Այյուբյաններին: Լևոնը հաջորդիվ նշում է, որ իր ծառայություններն ավելին են, քան Բոհեմունդ IV-ինը, որի հետ ալ-Ջահիրը դաշնակցում է: Հայոց արքան իր պարտքն է համարում ավելացնել, որ Անտիոքում իր փոխարեն նշանակված Ռայմոնդ-Ռուբենին ևս թելադրել է հավատարիմ մնալ Այյուբյաններին: Ըստ պատմիչի՝ Լևոնը նամակի հետ նաև մի փառահեղ ընձա է մատուցել ալ-Մալիք ալ-Ջահիրին, որով շահել է նրա վստահությունը²⁹:

Իբն Վասիլի այս հաղորդումն իր բնույթով բացառիկ է և էապես նպաստում է Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների փոխհարաբերությունների լիարժեք քննությանը: Պատմիչը շարունակում է, որ այս ընթացքում Իկոնիայի սուլթանի դեսպաններ էին գալիս Հալեպ՝ համոզելու ալ-Մալիք ալ-Ջահիրին, որ արագացնի զորքերի դուրսբերումը Կիլիկյան Հայաստանի դեմ: Վերջինս, սակայն, հետ է ուղարկում սելջուկ դեսպաններին և հրաժարվում իր տված խոստումից³⁰: Այսպես, Կիլիկյան Հայաստանի գլխին կախված վտանգը մեծամասամբ չեզոքանում է, և Լևոնին մնում է պայքար մղել միայն Ռումի սելջուկների դեմ:

Իբն ալ-Ադիմի և Իբն Վասիլի վերոհիշյալ հաղորդումները փաստում են, որ 1208 թ. հետո էլ Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ է պահպանել Եգիպտոսի Այյուբյան սուլթանի հետ, քանի որ ութ տարի անց ևս

²⁸ Նույն տեղում, էջ 235: Տե՛ս նաև **A.-M. Eddé**, *La Principauté Ayyoubide d'Alep (579/1183 – 658/1260)*, Stuttgart, Franz Steiner Verlag, 1999, p. 84.

²⁹ **Ibn Wāṣil**, *Mufarriḡ al-kurūb*, hun. III, էջ 235:

³⁰ Նույն տեղում, էջ 236:

այդ կապն իր դերը խաղաց: Եթե նկատի ունենանք Մերձավոր Արևելքում ալ-Մալիք ալ-Ադիլի քաղաքական կշիռը և այն, որ նա չէր կարող շահագրգռված լինել Կիլիկիա-Անտիոք միացյալ պետության ստեղծմամբ, վերոհիշյալ գործակցության հաստատման մեջ հիմնական դերը պետք է վերագրել Լևոն թագավորին՝ այն համարելով վերջինիս դիվանագիտական ուղեգծի կարևորագույն ձեռքբերումներից մեկը:

ВЗЯТИЕ АНТИОХИИ ЦАРЕМ ЛЕВОНОМ (1216 г.): СВИДЕТЕЛЬСТВА АРАБСКИХ ИСТОЧНИКОВ

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

Царь Левон I около пятнадцати лет последовательно защищал законные права своего внучатого племянника Раймонда-Рубена с целью возведения последнего на престол Антиохии. В 1216 г. попытки царя увенчались успехом, и он наконец завладел Антиохией. Учитывая опыт предыдущих лет, армянский царь на этот раз сделал все, чтобы не допустить создания коалиции соседних стран против Киликии. С этой целью он предпринял серьезные дипломатические шаги, в результате которых Аййюбидский султанат Алеппо воздержался от предложенного султаном Иконии совместного нападения на Киликийскую Армению.

Дипломатические действия армянского царства нашли отражение в письмах царя Левона, адресованных Аййюбидскому султану Египта ал-Малик ал-Адилу и его племяннику- Аййюбидскому султану Алеппо ал-Малик ал-Захиру, сведения о которых передают исключительно арабские летописцы XIII века Камаль ал-Дин Ибн ал-Адим и Ибн Васил.

Ключевые слова - Левон I, Раймонд-Рубен, Киликия, Антиохия, Аййюбидский султанат, Алеппо, Египет, ал-Малик ал-Адил, ал-Малик ал-Захир, Камаль ал-Дин Ибн ал-Адим, Ибн Васил.

SEIZURE OF ANTIOCH BY KING LEVON (1216) ACORDING TO ARAB SOURCES

VAHAN TER-GHEVONDIAN

For about fifteen years, king Levon I struggled to defend the legitimate rights of his brother's grandson, Raymond-Ruben, in order to raise him to the Antioch's throne. After several attempts, he eventually took over Antioch in 1216. Taking into consideration last years' experience, this time the Armenian king tried not to let the neighboring countries to form a coalition against Cilicia. His substantial diplomatic efforts led to the abstention of the Ayyubid sultanate of Aleppo from the joint attack against Cilician Armenia, proposed by the sultanate of Iconium.

The letters sent by king Levon to Ayyubid sultan of Egypt al-Malik al-Adil and to his nephew, Ayyubid sultan of Aleppo al Malik al-Zahir evidence the great diplomatic steps undertaken by the Armenian kingdom. This correspondence is revealed only by the Arab chroniclers of XIII century Kamal al-Din Ibn al-Adim and Ibn Wasil.

Key words – Levon I, Raymond-Ruben, Cilicia, Antioch, Ayyubid sultanate, Aleppo, Egypt, al-Malik al-Adil, al-Malik al-Zahir, Kamal al-Din Ibn al-Adim, Ibn Wasil.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԵՎ ԱՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ. ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՄԱԳԴԱ ԱՐՍԵՆՅԱՆ

Հոդվածում անդրադարձ է կատարվել ՀՀ խորհրդարանական դիվանագիտությանը, մասնավորապես ՀՀ-ԼՂՀ միջխորհրդարանական համագործակցության ձևավորմանն ու զարգացմանը: Հայաստանի և Արցախի միջև միջխորհրդարանական համագործակցության ձևավորման մեկնարկը հոդվածում ներկայացվում է սկսած նորակախ ժամանակաշրջանից, երբ երկկողմ հարաբերությունները ձեռք են բերել ինստիտուցիոնալ բնույթ: ՀՀ խորհրդարանական դիվանագիտության արդիականացման համատեքստում փորձ է արվել ուսումնասիրելու խորհրդարանական դիվանագիտության միջազգային փորձը:

Բանալի բառեր – խորհրդարանական մշակույթ, խորհրդարանական դիվանագիտություն, խորհրդարանական կառավարման համակարգ:

Պատմական ակնարկ

Միջազգային հարաբերությունների արդի կառուցվածքում խորհրդարանական դիվանագիտությունն ունի կարևորագույն դերակատարում փոխադարձ կարևորության հարցերի շուրջ ազգամիջյան երկխոսությունը զարգացնելու և ժողովուրդների միջև փոխվստահություն ու համագործակցություն հաստատելու տեսանկյունից¹: Խորհրդարանական դիվանագիտության դերակատարումն առավել մեծ կարևորություն է ձեռք բերում այնպիսի բարդ հիմնախնդիրների լուծման գործում, որոնք առնչվում են այս կամ այն տարածաշրջանում առկա չկարգավորված հակամարտություններին: Վերոնշյալը հայկական երկու պետությունների համար ունի հատուկ արդիականություն:

¹ St'u U. **Schöler**. The Emergence of Parliamentary Diplomacy - Practice, Challenges and Risks, Geneva Session, 2013 // <http://www.asgp.co/sites/default/files/documents/WWAWLGGMCPWYELGRSQMUNXEBA PBWK.doc>.

ՀՀ ԱԺ-ի և ԼՂՀ ԱԺ-ի միջև սերտ հարաբերություններ են հաստատվել դեռևս 1990-ական թվականների սկզբներին, սակայն միջխորհրդարանական կապերը գործուն և ակտիվ բնույթ են ստացել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի միջև համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրումից հետո: Այդ համաձայնագիրը ստորագրվել է ՀՀ ԱԺ նախագահ Բ. Արարքցյանի և ԼՂՀ խորհրդարանի նախագահ Կ. Բաբուրյանի կողմից 1996 թվականի մարտի 1-ին: Համաձայնագրի նպատակն է եղել սատարել ԼՂՀ օրենսդրական դաշտի ստեղծման գործընթացին և, իհարկե, նպաստել խաղաղության ամրապնդման գործընթացին:

Երկու երկրների միջխորհրդարանական հարաբերություններին առավել մեծ ակտիվություն է հաղորդել 1998 թվականի մայիսի 15-ին ՀՀ ԱԺ-ի և ԼՂՀ ԱԺ-ի նախագահներ Խ. Հարությունյանի և Օ. Եսայանի կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության մասին» համաձայնագիրը, որը առաջին համաձայնագրի տրամաբանական շարունակությունն է: «ՀՀ ԱԺ-ի և ԼՂՀ ԱԺ-ի միջև համագործակցության մասին» համաձայնագրով ստեղծվել է ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովը:

Միջխորհրդարանական հանձնաժողովի շրջանակներում առաջին նիստը կայացել է 1998 թվականի սեպտեմբերի 7-ից 10-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում: 1998 թվականից ի վեր մինչ օրս ՀՀ և ԼՂՀ միջխորհրդարանական հանձնաժողովն արդյունավետորեն շարունակում է իր գործունեությունը՝ նիստերի ընթացքում քննարկելով կարևորագույն հիմնահարցերը: Դրանք առաջին հերթին անվտանգության և դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմնախնդիրների շուրջ քննարկումներն են, Արցախի Հանրապետության պետականաշինության գործընթացում ՀՀ կուտակված փորձի փոխառման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ խորհրդարանական դիվանագիտության համատեքստում ԱՀ միջազգային ճանաչմանն ուղղված գործողությունների ակտիվացումը:

ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Խ. Հարությունյանի մեկնաբանությամբ, ով 1998 թվականին որպես ՀՀ ԱԺ-ի նախագահ ԼՂՀ ԱԺ-ի նախագահ Օ. Եսայանի հետ ստորագրել էր համագործակցության մասին համաձայնագիրը, այն, բացի «օրենսդրության մերձեցման և ներդաշնակեցման» նպատակից, նաև սահմանում է, որ միջազգային կազմակերպությունների կողմից հրավիրված

գիտաժողովներում և խորհրդակցություններում ՀՀ խորհրդարանական պատվիրակությունների կազմում պետք է «հաճախակի ընդգրկել ԼՂՀ ԱԺ ներկայացուցիչներին»²:

Նախկին ՀՀ ԱԺ-ի նախագահի խոսքով այդ ժամանակաշրջանում հատկապես կարևոր էր ԼՂՀ պատգամավորների ներգրավումը տարբեր միջազգային հարթակներում ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունների կազմում: «Քանի որ մենք նրանք չէինք կարող ներգրավել որպես ԼՂՀ պատգամավոր, նրանք ներգրավվում էին որպես ՀՀ ԱԺ փորձագետ, ինչի արդյունքում նրանք ունեին հնարավորություն միջազգային հարթակներում շփումներ հաստատելու և փորձառություն ձեռք բերելու համար»³:

Համագործակցության մասին համաձայնագիրը, Խ. Հարությունյանի մեկնաբանությամբ, կրում էր քաղաքական բովանդակություն, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ այդ ժամանակ բանակցային սեղանին քննարկվում էր ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև բանակցությունների հարցը⁴:

Միջազգային հանրությանն Արցախի ժողովրդի ձայնը լսելի դարձնելու հանգամանքը, ինչպես նաև բանակցություններում ԼՂՀ-ի մասնակցության խնդիրն առկա է նաև այսօր: Ադրբեջանի իշխանությունները տարիներ շարունակ ջանք ու եռանդ չեն խնայում Արցախին աշխարհաքաղաքական գործընթացներից մեկուսացնելու համար՝ անտեսելով այնտեղ ապրող ժողովրդի ինքնորոշման իրավունքը և Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնելով որպես Ադրբեջանի ներքաղաքական խնդիր:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը լայն ներկայացված է տարբեր միջազգային խորհրդարանական կառույցներում և իր ակտիվ մասնակցությունն է բերում ՀՀ արտաքին քաղաքական կուրսի կյանքի կոչման և միջազգային հարթակներում ազգային շահերի համակողմանի պաշտպանության գործընթացին: Ի թիվս ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի այլ առաջնահերթությունների՝ խորհրդարանի մշտական ուշադրության կենտրոնում է Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը⁵:

² Տե՛ս **խոսքով Հարությունյան**, ՀՀ և ԼՂՀ ԱԺ միջև համաձայնագիրը պետք է իր տրամաբանական շարունակությունը ստանար. 09.06.2016: <http://www.aysor.am/am/news/2016/06/09/%D5%B0%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1095507>

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Ղարաբաղյան հակամարտության համատեքստում հայկական դիրքորոշումը ներկայացնելու և հայանպաստ մոտեցումներ առաջ տանելու գործում չափազանց պատասխանատու դեր է բաժին ընկնում ՀՀ խորհրդարանական պատվիրակություններին: Ղարաբաղյան հակամարտությունը քննարկվում է այնպիսի միջազգային կազմակերպությունների խորհրդարանական վեհաժողովներում, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն, ԵԽ-ն, ՆԱՏՕ-ն, Եվրանեսթը, որտեղ հայ խորհրդարանականները, ներկայացնելով հակամարտության վերաբերյալ իրենց դիրքորոշումներն ու առաջարկները, միջազգային հանրությանը կոչ են անում զերծ մնալ անհասցե և կողմնակալ հայտարարություններից և առավել հստակ գնահատական տալ Ադրբեյջանի ապակառուցողական գործելակերպին:

Եվրոպական կառույցներում ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության ապահովման նպատակով հայ խորհրդարանականներն իրենց օտարերկրացի գործընկերներին ներկայացնում են փաստավավերագրական նյութեր, տրամադրում տեղեկատվություն հակամարտության ծագման ու ծավալման իրական պատճառների մասին:

Բացի այդ, հարկ է նշել, որ Ղարաբաղյան հակամարտությունը ոչ միայն ԱՀ, այլև ՀՀ անվտանգային և արտաքին քաղաքականության անքակտելի մաս է: Այս մասին տարբեր ձևաչափերով բազմիցս հայտարարել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը. «Հայաստանի Հանրապետությունը լիարժեքորեն կատարելու է իր պարտականությունը Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման առումով, և մենք նաև ունենք դրա իրավաբանական իրավունքը, որովհետև ինքներս հանդիսանում ենք 1994 թվականին կնքված հրադադարի համաձայնագրի կողմ»⁶:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ և ԼՂՀ միջխորհրդարանական համագործակցության մասին համաձայնագրով գործնական քայլեր էին կատարվում օրենսդիր դաշտի զարգացման հարցում միջազգային փորձի փոխառման, ԱՀ սուբյեկտայնության բարձրացման, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում Արցախի ժողովրդի ձայն լսելի դարձնելու ուղղությամբ:

Ձեռքբերումներ

ՀՀ և ԱՀ միջխորհրդարանական հարաբերությունների շրջանակներում

⁶ Տե՛ս ՀՀ նախագահի խոսքը Ազգային անվտանգության խորհրդի նիստին (03.04.2016): Այցելված է՝ 10.04.2017: <http://www.president.am/hy/press-release/item/2016/04/02/President-Serzh-Sargsyan-meeting-National-Security-Council>:

և ոչ միայն, երկուստեք ներդրված ջանքերը զուր չեն եղել, և այս առումով մենք կարող ենք արձանագրել բազմաթիվ ձեռքբերումներ: Միգուցե այդ ձեռքբերումները սպասված արդյունքը չեն, սակայն դրանք, միանշանակ, ԱՀ սուբյեկտայնության բարձրացմանն ուղղված փորձիկ քայլեր են:

ՀՀ-ԼՂՀ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում Արցախի Հանրապետության սուբյեկտայնության բարձրացման համատեքստում ուշադրության է արժանի մի շարք նահանգների՝ Բասկերի Երկրի խորհրդարանի⁷, Բասկերի երկրի Գիպուզկոա նահանգի⁸, ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի⁹, ԱՄՆ Հավայի նահանգի¹⁰, Կալիֆոռնիա նահանգի Սենատի¹¹, Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի¹², Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի օրենսդրական խորհրդի¹³, Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնոյի շրջանի¹⁴, ԱՄՆ-ի Լուիզիանա նահանգի Սենատի¹⁵, Մեն նահանգի Սենատի և ներկայացուցիչների պալատի¹⁶, Մասաչուսեթս նահանգի ներկայացուցիչների պալատի¹⁷,

⁷ Տե՛ս Բասկերի Երկրի խորհրդարանն Արցախի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ բանաձև է ընդունել. 12.09.2014: Այցելված է՝ 12.04.2016: <http://www.nkr.am/hy/news/2014-09-12/648/> :

⁸ Տե՛ս Բասկերի Երկրի Գիպուզկոա նահանգը ճանաչել է ԼՂՀ անկախությունը՝ առաջինը Եվրոպայում. 12.02.2014: Այցելված է՝ 18.04.2016: <http://www.panarmenian.net/arm/news/182410/>:

⁹ Տե՛ս ԱՄՆ Ջորջիա նահանգը ԼՂՀ ճանաչման մասին բանաձև է ընդունել. 04.03.2016: Այցելված է՝ 12.04.2017: <http://www.nkr.am/hy/news/2016-03-04/793/>:

¹⁰ Տե՛ս ԱՄՆ Հավայի նահանգը ԼՂՀ ճանաչման մասին բանաձև է ընդունել. 30.03.2016: Այցելված է՝ 12.04.2017: <http://www.nkr.am/hy/news/2016-03-30/799/>:

¹¹ Տե՛ս Արցախի նախագահ. Կալիֆոռնիայի կողմից Լեոնային Ղարաբաղի ճանաչումը շոշափելի հաղթանակ է. 27.11.2014: Այցելված է՝ 18.04.2016: <http://www.panarmenian.net/arm/news/185254/>:

¹² Տե՛ս Լոս Անջելեսի Քաղաքային խորհրդի բանաձևը. 29.01.2017: Այցելված է՝ 12.04.2017: <http://www.nkr.am/hy/news/2014-01-29/588/>:

¹³ Տե՛ս Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի օրենսդրական խորհուրդը ճանաչել է Արցախի անկախությունը. 25.10.2012: Այցելված է՝ 18.04.2017: <http://www.panarmenian.net/arm/news/129241/>:

¹⁴ Տե՛ս The Fresno Bee. Ի հեճուկս Թուրքիայի և Ադրբեջանի, խորհրդարանական ընտրություններով ԼՂՀ-ն կպաշտպանի իր անկախությունը. 2.04.2015: Այցելված է՝ 18.04.2017: <http://panarmenian.net/arm/news/190159/>:

¹⁵ Տե՛ս Լուիզիանա նահանգի Սենատի բանաձև. 01.06.2013: Այցելված է՝ 12.04.2017: <http://www.nkr.am/hy/news/2013-06-01/529/>:

¹⁶ Տե՛ս Կալիֆոռնիայի Սենատը ճանաչել է Արցախի անկախությունը. 28.08.2014: Այցելված է՝ 18.04.2017: <http://www.panarmenian.net/arm/news/181958/>:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

Ռոդ Այլենդ նահանգի¹⁸, ԱՄՆ Հայլենդ քաղաքի¹⁹, ԱՄՆ Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքի քաղաքապետի²⁰ կողմից ԱՀ անկախության ճանաչումը:

ԱՀ միջազգային ճանաչման, ինչպես նաև արտաքին հարաբերությունների զարգացման տեսանկյունից բավական մեծ նշանակություն ունեն ՏԻՄ մակարդակով արտաքին հարաբերությունները: Քույր-քաղաքության վերաբերյալ հուշագրերի կնքումը հնարավորություն է ընձեռում զարգացնելու երկկողմ հարաբերությունները, փոխօգնությունը, փորձի փոխանակումը, ինչպես նաև բարձրացնելու ճանաչողության մակարդակը²¹:

ԱՀ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում ձեռքբերումների շարքում կարելի է դասել ԱՀ ԱԺ-ի և այլ պետությունների օրենսդիր մարմինների միջև բարեկամության պատգամավորական խմբերի ստեղծումը, ինչպես օրինակ՝ Արցախ-Լիտվա²², Ֆրանսիա-Արցախ²³, Եվրախորհրդարան-Ղարաբաղ²⁴ բարեկամական խմբերը: Սա միանշանակ, Արցախի Հանրապետության փաստացի անկախության և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման վկայությունն է:

Բացի այդ կարևոր է փաստել, որ արտաքին կապերի հաստատման շնորհիվ ԱՀ-ն ձեռք է բերում նաև հավելյալ անվտանգային երաշխիքներ, քանի որ անհրաժեշտության դեպքում արտերկրում ԱՀ-ի գործընկերները հանդես

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Տե՛ս ԱՄՆ Հայլենդ քաղաքը ճանաչել է ԼՂՀ անկախությունը և Բերձորի հետ քույրացած քաղաքների հարաբերությունների հաստատման մասին հռչակագիր ընդունել. 27.11.2013: Այցելված է՝ 12.04.2017: <http://www.nkr.am/hy/news/2013-11-27/581/>:

²⁰ Տե՛ս ԱՄՆ Դենվեր քաղաքը ճանաչել է Արցախի անկախությունը. 07.10.2016: Այցելված է՝ 18.04.2017: <http://www.1in.am/2023741.html>:

²¹ Տե՛ս ԼՂՀ քաղաքների քույր քաղաքները (տեղեկանք). 13.06.2016: Այցելված է՝ 18.04.2017: <http://armedia.am/arm/news/31117/lxh-qaxaqneri-quyr-qaxaqnery-texekanq.html>:

²² Տե՛ս ԼՂՀ ԱԳ նախարարը ելույթ է ունեցել Լիտվայի խորհրդարանում կազմակերպված խորհրդաժողովում. 27.02.2013: Այցելված է՝ 12.04.2017, <http://www.nkr.am/hy/news/2013-02-27/503/>:

²³ Տե՛ս Ֆրանսիայում ստեղծվել է Բարեկամության շրջանակ ԼՂՀ-ի հետ. 20.03.2013: Այցելված է՝ 12.04.2017, <http://www.nkr.am/hy/news/2013-03-20/508/>:

²⁴ Տե՛ս ԼՂՀ անկախության տարեդարձը Եվրախորհրդարանում. 17.10.2014: Այցելված է՝ 12.04.2017: <http://news.1tv.am/hy/2014/10/17/%D4%BC%D5%82%D5%80%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%A8%D4%B5%D5%BE%D6%80%D5%A1%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4/1874>:

են գալիս որպես Արցախի բնակչությանը սպառնացող վտանգների մասին առաջին բարձրաձայնողներ:

Չնայած վերոնշյալ ձեռքբերումներին, այնուամենայնիվ ՀՀ-ԼՂՀ խորհրդարանական դիվանագիտության պատմության մեջ կարող ենք հայտնաբերել նաև մի շարք ծախսերումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն արտաքին հանգամանքներով, այլև խորհրդարանական դիվանագիտության գործիքների ոչ արդյունավետ կիրառմամբ: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել մեկ ընդհանրական դրույթ, որը կիրառելի է բոլոր պետությունների պարագայում: Խորհրդարանական դիվանագիտության գործիքների և մեխանիզմների մշակմամբ զբաղվում է տվյալ պետության օրենսդիր մարմնի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը: Խորհրդարանական պատվիրակությունները, որոնց գործունեության համակարգմամբ և ուղղորդմամբ զբաղվում է տվյալ երկրի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր խորհրդարանական պատվիրակության գործունեության արդյունավետության համար:

ՀՀ խորհրդարանական դիվանագիտության բացթողումների և ծախսերումների հաղթահարման, ինչպես նաև խորհրդարանական մշակույթի շրջանակներում գլոբալ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացներով, որոնք առաջ են բերում ՀՀ խորհրդարանական դիվանագիտության արդիականացման անհրաժեշտությունը:

ՀՀ ԱԺ ԱՀՀ վերակազմավորման մոդել

Ստորև ներկայացված է ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի վերակազմավորման մոդելի օրինակը: Այս համատեքստում, իհարկե, շեշտադրումը պետք է դրվի ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի վերակազմավորման վրա՝ հաշվի առնելով ԼՂՀ-ի չճանաչված լինելու հանգամանքը: Ինստիտուցիոնալ վերադասավորումներ իրականացնելու համար առկա են նաև համապատասխան բարենպաստ պայմաններ՝ ի հաշիվ ՀՀ խորհրդարանական կառավարմանն անցման ժամանակահատվածի (2017-2018թթ.), որը ենթադրվում է, որ կլինի պետական կառավարման համակարգի վերակազմավորման փուլ:

Այնուհետև, եթե որոշ ժամանակ անց, համաձայն ներդրված գնահատման չափանիշների, վերակազմավորման մոդելն արդյունավետության տեսանկյունից իրեն արդարացնի, Արցախի իշխանությունները կարող են փոխառել այդ փորձը:

Պատկերացում կազմելու համար, թե ինչպիսին պետք է լինեն արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կառուցվածքն ու գործունեության օրակարգն արդյունավետության ապահովման տեսանկյունից, կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Այս աշխատանքի համար օրինակ են ծառայել Գերմանիայի Բունդեսթագի²⁵ և Լիտվայի Սեյմի արտաքին հարաբերությունների հանձնաժողովների մոդելները:

Եվ այսպես, «Ա արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կերպավորման հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ գործոնները.

- 1) «Ա արտաքին քաղաքականության իրականացման հարցում ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը պետք է ունենա լիիրավ իրավունք և հավասար մասնակցության հնարավորություն արտաքին քաղաքականության իրականացման հարցում: Ներկայումս, երբ մուտք ենք գործել խորհրդարանական կառավարման անցման փուլ, անհրաժեշտ է հավասարակշռել «Ա խորհրդարանի և արտաքին գործերի նախարարության գործառույթային դաշտը: Նման գործելաոճի արդյունքում այս երկու կարևորագույն ինստիտուտները կհստակեցնեն իրենց դերակատարումն արտաքին քաղաքականության իրականացման հարցում: Վերոնշյալը հնարավորություն կընձեռի ապահովելու առավելագույն արդյունավետություն:
- 2) «Ա ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովների աշխատանքի արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային բարեփոխում՝ տարանջատելով արտաքին գերակա խնդիրներով զբաղվող **ենթահանձնաժողովներ**²⁶: Օրինակ՝ **Հայոց պահանջարկություն, Ղարաբաղյան հակամարտություն, Մերձավոր Արևելք, Սփյուռք**: Ենթահանձնաժողովների գործունեության արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է ըստ ներկայացված ուղղությունների ներգրավել համապատասխան փորձագիտական ընկերակցությունների: Վերոնշյալը հնարավորություն կստեղծի համախմբելու ոլորտային փորձագետ-

²⁵ Տե՛ս **BAJTAY P.** Shaping and controlling foreign policy. Directorate-General For External Policies. Policy Department. 2015, p. 17.

[http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU\(2015\)54904_5_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)54904_5_EN.pdf) (այցելված է՝ 26.04.2017 թ.):

²⁶ Տե՛ս Committee on Foreign Affairs. Classic politics, highly sensitive issues.

<http://www.bundestag.de/en/committees/a03> (այցելված է՝ 26.04.2017 թ.):

ների համատեղ ջանքերն արտաքին գերակա խնդիրների և մարտահրավերների լուծման և հաղթահարման ուղղությամբ:

- 3) Հաշվի առնելով հայկական երկու պետությունների առջև ծառայած անվտանգային հիմնախնդիրները՝ անհրաժեշտ է, որպեսզի թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր խորհրդարանական կուսակցություններն արտաքին քաղաքականության գերակա խնդիրների շուրջ ձևավորեն **քաղաքական համաձայնություն**²⁷, որը կամրագրվի խորհրդարանական կուսակցությունների ռազմավարության մեջ՝ հստակ ժամանակային կտրվածքով:
- 4) Հանրության իրազեկվածությունն արտաքին գերակա խնդիրների հարցում բարձրացնելու տեսանկյունից հարկավոր է, որպեսզի ՀՀ ԱԺ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ամսական կտրվածքով հանդես գա **հայտարարություններով**²⁸, որոնցում կներկայացնի խորհրդարանի դիրքորոշումն արտաքին կարևորագույն հիմնախնդիրների շուրջ: Բացի այդ, նպատակահարմար է, որպեսզի ամսական կտրվածքով հրապարակվեն հանձնաժողովի գործունեության **հաշվետվությունները**, որոնցում կամրագրվեն վարվող քաղաքականության արդյունքները և հետագա անելիքները:

Եվ, վերջապես, խորհրդարանական դիվանագիտության արդիակառնացման համատեքստում խորհրդարանական պատվիրակությունների գործունեության հիմքում հարկավոր է **ամրագրել հետևյալ սկզբունքները. դրանք են՝ պարզամտության գործունեության չափելիությունը (թե՛ որակական, թե՛ քանակական), նրանց նախաձեռնողականությունը և ակտիվությունը, հաշվետվողականությունը, աշխատանքի համակարգվածությունը, ընթացիկ աշխատանքը և շարունակականությունը, անձնական պարասխանավորությունը, հետևողականությունը և այլն:**

Եզրակացություն

Անհրաժեշտ է փաստել, որ Հայաստանի խորհրդարանական դիվանագիտությունը դեռևս իր կայացման փուլում է: Ինչ վերաբերում է Արցախին,

²⁷ St'u Committees on Foreign Affairs: agreements between political parties.

http://www.lrs.lt/sip/portal.show?p_r=8929&p_k=2 (այցելված է՝ 26.04.2017 թ.):

²⁸ St'u Committee on Foreign Affairs: declarations, resolutions and statements.

http://www.lrs.lt/sip/portal.show?p_r=8928&p_k=2 (այցելված է՝ 26.04.2017 թ.):

ապա այս դեպքում անտեղի է հնչեցնել գնահատականներ՝ հաշվի առնելով ԱՀ-ի չճանաչված լինելու հանգամանքը:

Երկայիս տարածաշրջանային քաղաքականության մարտահրավերները վկայում են, որ ցանկացած պարագայում չի կարելի կորցնել քաղաքական նպատակահարմարությունը և զգոնությունը: Այս հիմնահարցն առավել արդիական է դառնում ՀՀ-ի փոփոխված սահմանադրությամբ սահմանված խորհրդարանական կառավարման համակարգին անցման պայմաններում: Դա ենթադրում է խորհրդարանի դերի ընդլայնում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության իրականացման հարցում:

Այս պարագայում անհրաժեշտ է, իհարկե, խորհրդարանի ինստիտուցիոնալ վերադասավորում, ինչը հնարավորություն կտա վերասահմանելու և վերաբաշխելու խորհրդարանում արտաքին քաղաքականության իրականացմանը մասնակից հանձնաժողովների և խորհրդարանական պատվիրակությունների գործունեության ձևաչափերն ու գործառույթները:

ОПЫТ ПАРЛАМЕНТСКОЙ ДИПЛОМАТИИ АРМЕНИИ И РЕСПУБЛИКИ АРЦАХ: ДОСТИЖЕНИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

МАГДА АРСЕНЯН

В статье анализируется роль парламентской дипломатии в установлении взаимного доверия, сотрудничества между народами и развития международного диалога по важнейшим вопросам, представляющим взаимный интерес. Этот вопрос приобретает особую значимость в связи с переходом Армении к парламентской форме правления, в которой парламент приобретает более значимую роль во внешней политике. В статье также была изучена деятельность комитетов по международным отношениям в немецком Бундестаге и Сейме Литвы в рамках парламентской дипломатии. Изучение вышеуказанного опыта дало возможность представить модель реструктурирования комитета по международным отношениям в парламенте Армении.

Ключевые слова – парламентская культура, парламентская дипломатия, парламентская форма правления.

**THE DIPLOMATIC EXPERIENCE OF THE PARLIAMENTS OF ARMENIA AND
ARTSAKH REPUBLICS: ACHIEVEMENTS AND DEVELOPMENTAL
PERSPECTIVES**

MAGDA ARSENYAN

This article considers the parliamentary diplomacy of the Republic of Armenia, in particular, the establishment and development of the inter-parliamentary cooperation between Armenia and NKR. The start of this cooperation coincides with the era of independence and when the bilateral relations began to acquire an institutional nature. This issue acquires a special significance in connection with Armenia's transition to a parliamentary form of government in which the parliament gains a more significant role in foreign policy. An attempt is made to study the history of the international parliamentary diplomacy.

Key words – parliamentary culture, parliamentary diplomacy, parliamentary form of government.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԽՆԴՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

ՆԱՍՐԻՆ ՄՈԼԼԱՅԻ

Հոդվածը նվիրված է իրանական հասարակության մեջ ընտանիքի՝ որպես ինստիտուտի, ժամանակակից զարգացման տենդենցների՝ ամուսնական հարաբերությունների, բավարարվածության և ամուսնության որակի ու տևողության վրա թողած ազդեցություններին և այդ ուղղությամբ սոցիոլոգների կողմից առաջ քաշված հետազոտական խնդիրներին և լուծումներին: Այն հնարավորություն է տալիս հասկանալու իրանյան փակ մշակութային համակարգում հնարավոր և թույլատրելի մոդեռնիզացիայի միկրո և մակրո մակարդակի ազդեցությունները:

Բանալի բառեր – ընտանիքը՝ որպես ինստիտուտ, ամուսնական հարաբերություններ, ամուսնության տևողություն, ամուսնական բավարարվածություն, ամուսնության որակ:

Ժամանակակից աշխարհի զարգացումները մեծ փոփոխություններ են մտցնում ինչպես ընտանիքի կառուցվածքում, այնպես էլ ամուսինների դերերի ու ամուսնության կայունության հարցերում: Ավելանում են ամուսնության տարիքը, նուկլեար ընտանիքների և ամուսնալուծությունների քանակը, պակասում է երեխաների քանակը, և ընդհանրապես փոխվում են ամուսնության իմաստի ու շահավետության մասին նախկին պատկերացումները:

Արևմտյան մշակույթի երկրներում ամուսնությունն իր տեղն աստիճանաբար զիջում է զույգերի ժամանակավոր կարճատև կամ երկարաժամկետ հարաբերություններին, քաղաքացիական ամուսնություններին: Այս փոփոխությունները կապված են հատկապես կանանց բարձրագույն կրթություն ստանալու ձգտումների, աշխատանքի անցնելու հնարավորությունների ու ցանկությունների աճի, ընտանիքում կնոջ եկամտային ներդրման չափի մեծացման, կնոջ սոցիալական և տնտեսական անկախության ձեռքբերման և ծնողավար-

ման դերերի, միայնակ մայրերի պետական աջակցության ավելացման և օրենսդրության մեջ հոգուտ կ'նոջ արված փոփոխությունների հետ:

Ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի, միկրո մակարդակում կենսագործունեության կազմակերպման այսպիսի փոփոխություններն ազդել են քաղաքական և տնտեսական ոլորտների մակրո կառուցվածքների վրա: Իհարկե, երկիր առ երկիր դրա տարածվածության չափերն ու դրսևորման ձևերը տարբեր են:

Այս փոփոխությունների տենդենցները և դրանց ազդեցությունները գտնվում են սոցիոլոգների սևեռուն հետաքրքրության դաշտում՝ մեծապես նպաստելով քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների գործունեությանը:

Փոփոխություններից զերծ չեն մնացել նաև Իրանի հասարակությունը և իրանական ընտանիքը, որոնց վերաբերյալ ուսումնասիրությունները վերջին տասնամյակում մեծ թափ են ստացել: Հետազոտությունները բազմաթիվ են՝ իրականացված ինչպես երկրի ներսի, այնպես էլ երկրից դուրս աշխատող իրանցի հետազոտողների, հատկապես սոցիոլոգների ու տնտեսագետների կողմից:

Ցավոք, իրանական փակ հասարակության մեջ մասնագետներն ազատ չեն տարատեսակ հետազոտություններ իրականացնելու համար, կամ էլ ոչ բոլոր հետազոտություններն են հրատարակության կամ այլ եղանակներով բարձրաձայնելու արտոնություն ստանում: Մասնագետների դիտարկումներն ու բացահայտումները ոչ միշտ են հասանելի գործընկերներին: Դրանք հաճախ տպագրվում են արտասահմանում և օտար լեզվով, ինչը նույնպես Իրանում ապրող մասնագետների համար դժվար հասանելի է:

Այս հոդվածում մենք կփորձենք նկարագրել իրանական ժամանակակից ընտանիքի ձևափոխությունները, ձևակերպված հետազոտական խնդիրներն ու դրանց լուծումները:

Ընտանիքի զարգացման ժամանակակից տենդենցներն Իրանում

Իրանի հասարակության մեջ ընտանիքը համարվում է հասարակության հիմնարար ինստիտուտի կայունության ապահովման կոնցեպցիան, որի շրջանակներում ընտանիքի գերարժևորումը գալիս է դեռևս Իրանի պատմության գրադաշտական շրջանից և իր շարունակությունը գտնում հետիսլամական շրջանում՝ հասնելով մինչև մեր օրերը: Իրանում ընտանիքն ավանդույթներին և կրոնական սկզբունքներին հետևող յուրաքանչյուր անհատի կյանքի հիմնական մասն է:

Չնայած հասարակության ավանդապահությանը՝ վերջին տասնամյակներում իրանական ընտանիքի կառուցվածքում և գործառույթներում տեղ են գտել փոփոխություններ՝ կապված տնային տնտեսության չափերի նպատակահարմարության դիտարկման, ամուսնության տարիքի բարձրացման, հասարակական կյանքին կնոջ մասնակցության, զուգընկերոջ ընտրության հարցում որոշակի ազատության, կրթված և աշխատող կանանց թվի ավելացման հետ:

1979 թ. կրոնական և քաղաքական զարգացումներն ուժեղացրել են կրոնի ազդեցությունն անձնական կյանքի բոլոր շերտերի վրա՝ դիետա, հիգիենա, սեռական կյանք, ընտանեկան կյանք, քաղաքականություն, բիզնես, բանկային համակարգ, սոցիալական կյանքի բոլոր հատվածները: Կրոնական սկզբունքներում արձանագրված ընտանեկան կյանքի և ամուսնության կարևորությունը հատկապես ընտանիք ինստիտուտին է վերագրել մարդու երջանկության, նյութական բարեկեցության և անվտանգության առաքելությունը:

Երեք սերնդի ներկայացուցիչների շրջանում սոցիոլոգներ Թ. Ազադարմակի, Մ. Ջանդի և Թ. Խազայի կողմից 2000-ականներին իրականացված հարցումների արդյունքներով երեքն էլ հավասարապես համոզված են, որ ընտանիքը կրթությանը, աշխատանք գտնելուն, զավակների ամուսնությանը և ֆինանսներ ձեռք բերելուն աջակցող կարևոր ռեսուրս է: Իրանական ընտանիքը հարաբերությունների հաստատման, անդամներին աջակցության և քննարկումների կենտրոնն է: Ընդ որում, գնահատականն այսպիսին է և՛ ավանդական, և՛ ժամանակակից, և՛ քաղաքային, և՛ գյուղական շրջանների հարցվողների շրջանում¹:

Իրանում ընտանիքի մոդեռնացման կարևոր ցուցանիշը ընդլայնված ընտանիքից նուկլեար տիպի ընտանիքին անցումն է, որը, ըստ Իրանի պետական վիճակագրական կենտրոնի տվյալների, 2008 թվականին կազմել է երկրի բոլոր ընտանիքների 84%-ը²:

Սակայն իրանական նուկլեար ընտանիքը շատ բանով տարբերվում է արևմտյան մշակույթների նույնանուն ընտանիքից: Ձևով նուկլեար իրանյան ընտանիքը շարունակում է մնալ որպես ինստիտուտ, որը կառուցում է մշակու-

¹ Azadarmaki T., Zand M. & Khazai T. Cultural changes in family during three generations in Tehran: Customs and support functions, Namehe Oloume Eitemai, No 16, 2000, pp. 3-29; Azadarmaki T., Zand M. & Khazai T. Social and cultural changes in family during three generations in Tehran. Oloome Ensani, 2003, pp. 44-45 & 1-24.

² Statistical Centre of Iran, 84% of Iranian households are nuclear families, 2008. [<https://www.amar.org.ir/english/>]

թային հիմքերն ու ձևավորում արժեքները՝ միշտ ամուր կապերի մեջ մնալով հարազատների հետ: Սակայն նուկլեար ընտանիքների թվի և երկրի բնակչության շարունակվող աճին զուգահեռ՝ Իրանում տեղի է ունենում ընտանիքի անդամների թվի կրճատում: Եթե 1976 թ. նուկլեար ընտանիքն ուներ 5 անդամ, արդեն 2010-ին այն արձանագրել է 3.5 անդամ: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ 1987 թ. ծնելիության 5.8 գործակիցը 2010-ին հասել է 1.7-ի: Ավելացնենք միայն, որ այստեղ առկա է նաև տնտեսական գործոնի դերը:

Ի տարբերություն արևմտյան հասարակությունների՝ Իրանում երեխաների նկատմամբ ծնողների, հատկապես հոր, պապի, տնտեսական և սոցիալական գերակայությունն անվերջ առկա է: Ընտանեկան հարաբերությունների ու կառուցվածքի կարևոր հատկանիշ է երեխաների հետ ծնողների՝ ցմահ ձգվող հուզական կապվածությունը, եթե անգամ երեխաներն ամուսնացել են և իրենց զավակներն ունեն: Սա տղամարդու գերակայության մշակույթ է, որտեղ ընտանիքի նկարագիրը որոշվում է հոր կարգավիճակով, և որոշումները կայացվում են նրա կողմից: Այս մասին են վկայում Թ. Ազադարմակի իրականացրած հարցման արդյունքները, որով ռեսպոնդենտ ընտանիքների 62%-ը նշում է, որ հայրն է տան միակ որոշում կայացնողը³:

Ամուսնական կայունության փոփոխությունների ուսումնասիրման առումով հատկապես ուշադրության են արժանի 2005–2015 թթ. ընթացքում Ֆ.Ձահերիի, Մ. Դոլաթյանի, Մ. Շարիատիի, Մ. Սիմբարի, Ա. Էբադիի և Ս. Ազադիի համատեղ ջանքերով իրականացված պարբերական հետազոտությունները⁴: Վերջիններս հատկապես ուշադրություն են դարձնում ամուսնական հարաբերությունների վրա կնոջ դերի փոփոխության ազդեցության խնդրին: Իրանի վիճակագրության վարչության՝ 2011 թ. տվյալներով կանայք կազմում են երկրի բնակչության 49.6%-ը, իսկ նրանց գրագիտության տոկոսը 1976 թ. 74.2-ից 1996 թ. հասել է 81.1%-ի⁵:

Համալսարանական կրթությամբ կանանց տոկոսը 1976- 2010 թթ. ըն-

³ Azadarmaki T. Families in Iran: The contemporary situation. In B. N. Adams & J. Trost (Eds.), Handbook of world families, 2005, pp. 467-485.

⁴ Effective Factors in Marital Satisfaction in Perspective of Iranian Women and Men: A systematic review // Zaheri F, Dolatian M, Shariati M, Simbar M, Ebadi A, Azghadi SB. Electron Physician. 8(12), Dec 25, 2016, pp. 3369-3377, Collection 2016 Dec.

⁵ Statistical Centre of Iran (2011), Հասանելի է՝ <https://www.amar.org.ir/english/>.

թացքում 2.6%-ից հասել է 18.4-ի⁶: Նրանք ներկայացված են դպրոցներում, համալսարաններում, կառավարության մեջ, խորհրդարանում, գործարաններում և մշակույթի ոլորտում:

Ասվածից երևում է, որ, չնայած ավանդականության դիմադրությանը, կնոջ կողմից նորանոր դերեր ստանձնելու, ազատություններ նվաճելու, սոցիալապես ակտիվ դառնալու, համալսարանական կրթություն ստանալու և տնտեսապես ավելի անկախ դառնալու տենդենցները շարունակվում են:

Տեսանելի են դարձել նաև ամուսնության տարիքի փոփոխությունները: Եթե 1976 թ. կանանց շրջանում ամուսնության տարիքը 19.7 տարեկանն էր, 1996-ին՝ 22.4, ապա 2010 թ. այն կազմել է 23.4 տարեկան: Տղամարդկանց շրջանում ամուսնության տարիքը 1996-ին՝ 25.6, իսկ 2010-ին՝ 26.7 տարեկան էր:

Զույգերի հարաբերությունների ուսումնասիրությունները բացահայտել են, որ գյուղական շրջաններում հանդիպող կնոջ 18, իսկ տղամարդու 20 տարեկանում կայացած ամուսնություններն անկայունության ավելի մեծ վտանգ են պարունակում⁷: Մասնագետները նկատում են, որ տարիքային այս փոփոխությունները փոխել են նաև ամուսնության հանդեպ վերաբերմունքն ու ամուսնուց կնոջ սպասումները⁸:

Իրանի օրենսդրությունը հատուկ դեպքերի համար է կնոջն իրավունք վերապահում դիմելու ամուսնալուծության: Սովորաբար ամուսնալուծության որոշման և երեխաների հետագա խնամքի իրավունքը տրված է ամուսնուն (եթե երեխան յոթ տարեկանից մեծ է), և զավակներին կորցնելու վախը բազմաթիվ կանանց ստիպում է համակերպվել ամուսնական անբավարարվածության փաստի հետ: Սոցիալական աշխատողներն արձանագրել են այս երևույթի բացասական ազդեցությունն ինչպես զույգերի, այնպես էլ երեխաների հոգեկան առողջության վրա:

Ասկայն մշակութային և իրավական սահմանափակումներն այսօր չեն

⁶ **Moinifar H.S.** Participation of women in Iran's polity // Gender Equality and Multicultural Conviviality journal, No 4, 2011, pp. 24-35, 52.

⁷ **Shahhosseini Z., Hamzehgardeshi Z., Kardan Souraki M.** The effects of premarital relationship enrichment programs on marriage strength: A narrative review article // Journal of Nursing and Midwifery Sciences, 1(3), 2014, pp. 62-72.

⁸ **Kazemipour Sh.,** Changing the age of marriage in Iranian women and the effective population factors // Zan Dar Tose-e Va Siyasat, 2(3), 2004, pp. 103-124; **Mahmoodian H.** The increasing age at marriage: examining the protective factors. 2005, pp. 24, 27-55.

կասեցնում Իրանում բաժանվող զույգերի թվի աճը: Մասնագիտական խորհրդատվության եկած զույգերին վերաբերող նյութերն արձանագրում են ավանդական և ժամանակակից ընտանեկան արժեքային համակարգերի միջև հաճախակի դարձող կոնֆլիկտներ: Ընտանիքի ինստիտուտի շրջանակներում մոդեռնացման ձգտումների և իսլամական օրենսդրության համատեղումը հաճախ ընտանիքներին լարվածության և տագնապների է ենթարկում⁹: Ընդ որում, տագնապներն ավելի հաճախ համակում են կանանց, քան տղամարդկանց, որովհետև հատկապես աշխատող կանանցից պահանջվող ավանդական դերերը և սպասումների բավարարումը ֆիզիկապես անիրականանալի են դառնում և հաճախակի կոնֆլիկտներ են առաջացնում թե՛ տանը, թե՛ աշխատավայրում: Այս տագնապները բացասաբար են անդրադառնում ամուսնական բավարարվածության վրա՝ հատկապես ազդելով զույգերի հաղորդակցման, միմյանց հետ ժամանակ անցկացնելու տևողության և առողջության վրա¹⁰:

Ամուսնական հարաբերությունների և ամուսնության տևողության ժամանակակից խնդիրների հետազոտությունն իրանցի մասնագետների աշխատանքներում

Այսօր անհատ սոցիոլոգների և պետական կառույցների սոցիոլոգիական խմբերի համար լուրջ հետազոտական խնդիր է ժամանակակից ընտանիքի ամուսնության տևողության վրա ազդող գերակա գործոնների բացահայտումը:

Իրականացված հետազոտությունները բացահայտել են, որ ժողովրդագրական գործոնն էական ազդեցություն ունի ժամանակակից ընտանիքի ամուսնական հարաբերությունների և ամուսնության կայունության վրա, որն էլ մենք կփորձենք ներկայացնել¹¹:

Ամուսնության փարիքը և ամուսնության կայունությունը

Մասնագետները միանշանակ համաձայնության չեն եկել ամուսնության

⁹ **Azadarmaki T.** Families in Iran: The contemporary situation. In B. N. Adams & J. Trost (Eds.), Handbook of world families, 2005, pp. 467-485; **Edalati A. & Redzuan M.** Perception of women towards family values and their marital satisfaction // Journal of American Science, 6(4), 2010, pp. 132-137.

¹⁰ **Bodenmann, G.** Dyadic coping and its significant for marital functioning. In T. Revenson, K. Kayser & G. Bodenmann (Eds.). Couples coping with stress: Emerging perspectives on dyadic coping, 2005, pp. 33-50.

¹¹ **Zainah A.Z., Nasir R., Hashim Ruzy Suliza M.D., Noraini Y.** Effects of Demographic Variables on Marital Satisfaction // Asian Social Science, 8(9), 2012, pp. 46-9 // doi: 10.5539/ass.v8n9p46.

միջին փուլի տևողության՝ երեխաներին մեծացնելու, ֆինանսական կայունության, ազգակիցների հետ հարաբերությունների հաստատման հարցերի շուրջ: Սակայն նրանք համակարծիք են, որ միասնական կյանքի առաջին հինգ տարիների փուլին է բաժին ընկնում զույգերի ոչ բավարար հասունությամբ պայմանավորված ամուսնության անբավարարվածությունը, որը սովորաբար հանգեցնում է անկայունության: Մինչդեռ երրորդ փուլում, երեխաների մեծանալու, անկախանալու ու առանձնանալու հետ կապված, զույգերի ամուսնական բավարարվածությունն ավելանում է¹²:

Կանանց և տղամարդկանց ամուսնանալու տարիքի նպատակահարմարության և տարբերության հարցը մասնագետները դիտարկում են մշակույթի և աշխարհագրական տարածքի համատեքստում, քանզի անձայրածիր Իրանի և նրանում բնակվող բազմաթիվ էթնոսների ամուսնության որակի և կայունության գնահատման հարցում դրանք էական գործոններ են:

Կրթությունը և ամուսնության կայունությունը

Իրանցի ամուսնական զույգերի շրջանում կրթական ցենզի՝ որպես գործոնի, ամուսնական բավարարվածության վրա ունեցած ազդեցությունը դրական է: Բացահայտվել է, որ համալսարանական կրթությամբ զույգերի շրջանում վերբալ և հոգևոր հաղորդակցման և ընդհանուր համաձայնության գալու հարցում կրթությունը բարեկիրթ մթնոլորտ ձևավորող գործոն է¹³:

Կրթական մակարդակը կարևոր գործոն է նաև զուգընկերոջն ընտրելու հարցում, իհարկե, տղաների և աղջիկների համար՝ կարևորության տարբեր աստիճաններով¹⁴:

Չբաղվածությունը և ամուսնության կայունությունը

Գործոնների մյուս խումբը վերաբերում է զույգերի տնտեսական վիճակին:

Ամուսնությունն Իրանում ավելի շատ որպես տնտեսական հարաբերու-

¹² **Abbasi M, Deghani M, Mazaheri MA, Ansarinejad F, Fadaie Z, Nikparvar F. et al.** Trend Analysis of Changes in Marital Satisfaction and Related Dimensions across Family Life Cycle // Journal of Family Research, 6(21), 2010, pp. 5–22.

¹³ **Moosavi R.** Mate, Selection; comparative study between factors in Islam with accepted criteria by the youngs of Kerman // Islām va Pazhūheshhāye Tarbiyat, No 4, 2012, pp. 141–64; **Haghighizadeh M, Karami Kh, Soltani T.** The criteria of spouse choosing in viewpoint of Ahwaz Jundishapur University of Medical Sciences students // Health sciences, 2(2), 2010, pp. 44–54.

¹⁴ **Foroudastan M., Arizi H.R., Noori A.** Educational level as a criterion for choosing spouse and comparing it in male and female students // Social Welfare, 8(33), 2009, pp. 217–26.

թյան և անվտանգության սոցիալական ցանց է դիտարկվում, քան հուզական հարաբերություն:

Եկամուտը, աշխատանքը, սեփականությունը, պարտքերը և տանն աշխատանքի բաշխումը ձևավորում են իրանցու ամուսնական կյանքի որակը և կայունությունը: Հետազոտությունները ցույց են տվել, որ ֆինանսական խնդիրները մեծացնում են կոնֆլիկտների և ամուսնական բավարարվածության մակարդակի անկման հավանականությունը:

Հասարակության մեջ վերջին տասնամյակում աշխատող կանանց թվի աճը փոփոխություններ է մտցրել զույգերի հարաբերությունների, ինքնագնահատման մեջ: 2014 թ. իրականացված ուսումնասիրությունը բացահայտել է, որ աշխատող կնոջ ամուսնու ամուսնական բավարարվածության մակարդակն ավելի բարձր է, քան տնային տնտեսուհու ամուսնունը: Սա այն դեպքում, երբ 2006 թ. ուսումնասիրությունն այլ պատկեր էր արձանագրել: Քարաջիի կին ուսուցիչների շրջանում Հ Ջանջանիի և Ջ. Բաղաիթի ուսումնասիրություններն էական կապ են գտել ամուսնական բավարարվածության և կանանց զբաղվածության միջև: Ընդ որում, ֆորմալ համակարգում աշխատող կանանց բավարարվածությունն ավելի բարձր էր, քան տնային դասուսուցցային ոչ ֆորմալ համակարգով աշխատողներին¹⁵:

Սեռային պարկանելությունը և ամուսնական հարաբերությունների գնահատականը

Ամուսնական բավարարվածության մասին սեռերի պատկերացումների տարբերությունը հանգեցնում է ամուսնական կյանքի գնահատականների տարբերության: Իրանցի կնոջ համար ամուսնական բավարարվածության էական գործոնների շարքը, ըստ կարևորության, այսպիսին է՝ հաղորդակցություն, հասկացվածություն, համաձայնություն, ընտանեկան առողջ հարաբերություններ և երկուսի կողմից ստացվող եկամուտներ: Մինչդեռ ամուսնու համար հերթականությունն այսպիսին է՝ կնոջ կրթվածությունը, երկուսի կողմից ներդրված եկամուտները, հասկացվածությունը, ընտանեկան հարաբերությունները և հաղորդակցությունը¹⁶:

¹⁵ **Zanjani H.A.** Baghait esfahani Z. The effect of employment and family life, on female teachers' satisfaction (A Case Study of Teachers' in Karaj) // Journal of Specialized Social Science, 10(39), 2014, pp. 13–39.

¹⁶ **Ayub N, Iqbal SH.** The Factors predicting marital satisfaction: a gender difference in Pakistan // The International journal of interdisciplinary social sciences. 2012, 6(7), p. 63–73. doi: 10.18848/1833-1882/CGP/v06i07/52112

Հաղորդակցություն և ամուսնական կայունություն

Իրանական ընտանիքը հարմարավետ մթնոլորտ է ստեղծում զույգերի վերբալ հաղորդակցության, ամուսնական հանձնառության, փոխադարձ վստահության, զգացմունքների արտահայտման համար: Նրանք հաղորդակցությունն ընտանիքի գոյատևման ու աճի կարևորագույն գործոն են համարում: Սոցիալական աշխատողների նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ զույգերի հաղորդակցման կարողությունների բացակայությունն ամուսնական անբավարարվածության ձևավորման էական գործոններից է: Ամուսնական բավարարվածության և հաղորդակցման միջև դրական և էական կորելյացիա է արձանագրվում: Այսպես, Բոռժեն կենտրոն դիմած 400 ամուսնացած կանանց շրջանում իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ամուսնական խնդիրների առաջացման մեծ մասն արդյունավետ հաղորդակցություն հաստատելու կարողության բացակայության արդյունք է: Հաղորդակցվելու անկարողությունը խոչընդոտել է խնդիրների լուծման ճիշտ ուղղորդումը:

Հետազոտողներ Ռ. Մաշակը և իր գործընկերները գտնում են, որ հաղորդակցությունը նպաստում է զույգերի մտերմության, մերձեցման հաստատմանը, որը նրանց օգնում է բացահայտել միմյանց հուզական աշխարհը, մտքերի և վարքի ընդհանրություններն ու տարբերությունները: Բազմաթիվ հետազոտություններ էական դրական կորելյացիա են ցույց տվել մտերմության հասնելու և ամուսնական բավարարվածության ու կայունության միջև¹⁷:

Հանձնառություն, վստահություն և ամուսնության կայունություն

2010 թ. ավանդական և ոչ ավանդական ընտանիքների զույգերի շրջանում Մ. Ասուդեհի իրականացրած հետազոտությունը բացահայտել է իրանցի զույգերի հարաբերությունների կայունության հարցում էական նշանակություն ունեցող հանձնառության և վստահության գործոնները: Պարզվել է, որ ավանդական զույգերը հարաբերությունների հարցում կենտրոնանում են հանձնառության, իսկ ոչ ավանդական զույգերը՝ վստահության վրա: Սակայն երկուսն էլ դրական կապ ունեն ամուսնական բավարարվածության հետ:

¹⁷ **Mashak R.** Relationship between love styles with marital satisfaction in married students // *Woman and culture*, 1(2), 2010, pp. 83–97; **Haidary A, Ighbal F.** The relationship between emotion regulation difficulties, styles of attachment and intimacy with marital satisfaction in couples of Fooladshahr Ahvaz // *New finding in Psychology*, 5(15), 2010, pp. 115–134.

Կրոնականություն և ամուսնության կայունություն

Հետազոտությունների կիզակետում է նաև ամուսնական հարաբերությունների համար հաջորդ էական գործոնը՝ մշակութայինը, որը տեսանելի է հատկապես միջմշակութային ամուսնություններում:

Իրանում մահմեդական, քրիստոնյա զույգերի շրջանում կրոնականության ու ամուսնական կայունության խնդրի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեծ է կապը կրոնականության և ամուսնական բավարարվածության միջև: Կրոնականությունն ազդում է ամուսնության կայունության վրա իր ամուսնալուծության հակաքարոզի խողովակներով¹⁸: Ամուսնական զույգի ընտրության հարցում կրոնական պատկանելությունը գերակայությունների առաջին շարքում է, և այս դիրքորոշմամբ ընտրված զույգերի մոտ ամուսնության կայունությունն ավելի բարձր է, քան մյուսների մոտ: Ավելին, հետազոտությունները ցույց են տալիս, որ կրոնականությունը դրականորեն է ազդում կյանքից բավարարվածության վրա և օգնում է զույգերի ու ընտանիքի անդամների համախմբվելուն, կայուն կապերի հաստատմանը և հարաբերությունների կառուցման ժամանակ բարոյական կողմի շեշտադրմանը և, որ ամենակարևորն է, նվազեցնում է ամուսնալուծության հավանականությունը¹⁹:

Սեռական հարաբերություններ և ամուսնության կայունություն

Սեռական պահանջը մեծապես ազդում է մարդու վարքի վրա: Ցանկալի սեռական հարաբերությունները և սեքսուալ առողջությունն ամուսնական բավարարվածության անհրաժեշտ պայմանն ու ընտանիքի հաջող հարատևման հնարավորությունն են: Մ. Խազաեյի խոսքերով սեռական բավարարվածության և ամուսնության տևողության կապն ուղղակի է, քանի որ հետազոտված զույգերից 15 և ավելի տարեկան հաջողված ընտանիքներում արձանագրվում է սեռական բավարարվածության բարձր մակարդակ: Էական դրական կապ է բացահայտվել սեռական սխեմայի ձևերի (կրքոտ ռոմանտիկ, բացահայտ-հարմարավետ, ամաչկոտ-զգուշավոր) և ամուսնական բավարարվածության միջև: Սեռական անբավարարվածություն ունեցող զույգերի մոտ

¹⁸ **Alghaffli Z., Hatch T., Marks L.**, Religion and relationships in muslim families: a qualitative examination of Devout married muslim couples, Religions, 5(3), 2014, pp. 814–833.

¹⁹ **Hosseini Dowlatabadi F., Saadat S., Jahangiri S.**, The Relationship between Religious Attitudes and Marital Satisfaction among married personnel of departments of education in Rasht City, Iran. International Journal of Advanced Studies in Humanities and Social Science, 1(6), 2013, pp. 608–15.

ամուսնական բավարարվածության բացակայությունը հինգ անգամ ավելի բարձր է արձանագրվում²⁰:

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից իրանական ընտանիքում ընթացող փոփոխությունները ձևակերպում են նորանոր հետազոտական խնդիրներ, և մասնագետները փորձում են լուծել դրանք: Ժամանակակից իրանական ընտանիքում ամուսնական հարաբերությունների և ամուսնության տևողության փոփոխությունների հետազոտման աստիճանը բարձր է, և դրանց մի մասն իրականացնում և հրատարակում են երկրից դուրս ապրող ու աշխատող իրանցիները: Այդուհանդերձ, ամուսնության տարբեր տարիքի խմբերի, քաղաքային և գյուղական շրջանների ներկայացուցիչների, ամուսնալուծվածների, տարբեր մեծության ընտանիքների և այլնի շրջանում ընթացող փոփոխություններից առաջացած խնդիրների հետազոտությունները ցուցադրում են ընթացող տեղեկանքների պատկերը, և հնարավորություն տալիս հասկանալու իրանական փակ մշակութային համակարգում հնարավոր և թույլատրելի մոդերնիզացիայի միկրո և մակրո մակարդակի ազդեցությունները:

ИЗМЕНЕНИЯ В БРАЧНЫХ ОТНОШЕНИЯХ И В ПРОДОЛЖИТЕЛЬНОСТИ БРАКА В СОВРЕМЕННОЙ ИРАНСКОЙ СЕМЬЕ И УРОВЕНЬ ИССЛЕДОВАНИЯ ПРОБЛЕМЫ

НАСРИН МОЛЛАИ

Статья посвящена влиянию современных тенденций развития иранской семьи как института на брачные отношения, на удовлетворенность браком, на качество и продолжительность брака и выдвинутым социологами исследовательским задачам и их решениям. Статья демонстрирует возможные и разрешенные микро- и макроуровневые влияния модернизации на иранскую закрытую культурную систему.

Ключевые слова – семья как институт, брачные отношения, удовлетворенность браком, качество брака, протяженность брака.

²⁰ Taghizadeh M.E., Kalhori E. Relation between self-esteem with marital satisfaction of employed women in Payam-e Noor University // GMP Review, 18(2), 2015, pp. 592–596.

MODERN TRENDS OF MARITAL RELATIONSHIPS AND THE DURATION OF MARRIAGES IN CONTEMPORARY IRANIAN FAMILIES AND THE LEVEL OF THE INVESTIGATION OF THE ISSUE

NASRIN MOLLAEI

This article is concerned with the impact of modern trends in institutional developments of families on marital relationships, satisfaction, the quality and the duration of marriages in the contemporary Iranian society. It is as well concerned with the issues and solutions related to the problem that sociologists have put forward. The study gives an opportunity to understand the impact of possible and acceptable micro and macro level of modernization in the Iranian closed cultural system.

Key words – Family as an institution, marital relationships, duration of marriage, marital satisfaction, the quality of marriage.

ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՍՈՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Սոցիալական ցանցերը հնարավորություն են ընձեռում ձևավորելու էթնիկ խմբի ինքնակառավարման կառուցվածքներ օտար միջավայրում, որոնց գործառույթները պայմանավորված են ցանցում ստեղծված հին և նոր կապերի գոյությամբ: Այս պատճառով կարևոր է ուսումնասիրել հայկական Սփյուռքում սոցիալական ցանցերի գործառնության բնույթը, սահմանել նրանց որակական չափանիշները և վեր հանել ազդող գործոնները:

Հայկական հասարակության մեջ ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Կարևոր է պարզել, թե այլ միջավայրերում հայերն ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպանվում են նշված առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխությունների են ենթարկվում: Այս պատճառով անհրաժեշտ է նախ և առաջ դիտարկել համայնքի ներկայացուցիչների ներգրավվածության խնդիրը համայնքային կառույցներում, դրա ձևը և ազդեցությունը համայնքային կյանքի վրա:

Բանալի բառեր – Սփյուռք, ցանցային հարաբերություններ, ազգակցական կապեր, համայնքային կառույցներ:

Սոցիալական ցանցերը¹ հնարավորություն են ընձեռում ձևավորելու էթնիկ խմբի ինքնակառավարման կառուցվածքներ օտար միջավայրում, որոնց գործառույթները պայմանավորված են ցանցում ստեղծված հին և նոր կապերի գոյությամբ: Այս պատճառով կարևոր է ուսումնասիրել հայկական Սփյուռքում սոցիալական ցանցերի գործառնության բնույթը, սահմանել նրանց որակական չափանիշները և վեր հանել ազդող գործոնները:

Հայկական հասարակության մեջ ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Կարևոր է պարզել, թե այլ միջավայրերում հայերն ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպանվում են նշված առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխությունների են ենթարկվում: Այս պատճառով անհրաժեշտ է նախ և առաջ քննարկել համայնքի ներկայացուցիչների

¹ **Barnes J.** Class and Committees in a Norwegian Island Parish // Human Relations (7), 1954, p. 39-58.

ներգրավվածության խնդիրը համայնքային կառույցներում, դրա ձևը և ազդեցությունը համայնքային կյանքի վրա:

Հոդվածի նպատակն է ցույց տալ Բեյրութի հայերի շրջանում ցանցային հարաբերությունների գործառնության առանձնահատկությունները, ինչպես նաև դրա դերը համայնքի ինքնակազմակերպման մեջ:

Վերոնշյալ խնդիրների բացահայտման նպատակով օգտագործվել են 2012թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի հետազոտողների կողմից կատարված հետազոտության արդյունքները²:

Այն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

- ձևայնացված հարցում, որն անցկացվել է Բեյրութում բնակվող հայերի հետ՝ քվոտային ընտրանքով և ձևակույտի մեթոդով,
- դիտարկում՝ չներգրավված և առանց պլանի ձևաչափով,
- փորձագիտական հարցում տվյալ հիմնախնդրով համայնքի փորձագետների հետ,
- խորին հարցազրույց, որտեղ ընդգրկվել են հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ըստ իրենց հմտությունների և տեղեկացվածության աստիճանի:

Տվյալների վերլուծությունն իրականացվել է նկարագրական և ցանցային վերլուծության մեթոդներով:

Այսպիսով, ներկայացված խնդիրների վերհանման նպատակով անհրաժեշտ է էմպիրիկ նյութի վրա դիտարկել Բեյրութի հայերի շրջանում սոցիալական ցանցերի գործառնության առանձնահատկությունները:

Նախ և առաջ հարկ է նշել, որ համայնքային կյանքի ինքնակազմակերպումը մեծապես կախված է դրանում անդամների ներգրավվածության չափից, ձևից և տեսակից: Որևէ համայնքային կառույցում համայնքի անդամների ներգրավվածությանն անդրադառնալով՝ պարզվում են նրա սոցիալական ակ-

² Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդներով՝ «Սեփական եվ այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011-2015թթ.): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմտ. Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ: **Կարապետյան Ռ.**, Երևան, 2012, էջ 19):

տիվությունը, սոցիալական գործունեության բազմազանության աստիճանը և ուղղվածությունը (դեպի ներս՝ համայնք, կամ դեպի դուրս՝ օտար միջավայր):

Ուսումնասիրված խմբի մեծամասնությունը՝ 94%, ներգրավված է այս կամ այն համայնքային կառույցում: Դա խոսում է այն մասին, որ նրանց սոցիալական ակտիվության որոշակի մասն ապահովվում է հենց համայնքային սոցիալական հարցերով և լրացվում է հայկական «բովանդակությամբ»: Սակայն կարևոր է հասկանալ, թե ինչպիսի սոցիալական ակտիվություն են ցուցաբերում համայնքի ներկայացուցիչներն ընդհանրապես. արդյոք ակտիվ համայնքային վարքը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է նրանց սոցիալական վարքի՞ն, թե՞ ավելի վառ դրսևորվում է այլընտրանքային սոցիալական ակտիվության բացակայության խորապատկերին: Այս նպատակով անհրաժեշտ է պարզել, թե համայնքային կառույցներում ներգրավված լինելն ինչ կապի մեջ է այդ կառույցներում զբաղեցրած տեղից: Անձի իրականացրած սոցիալական գործառույթը որոշակի կառույցում կարող է ցույց տալ ինչպես նրա դիրքը համայնքի ներսում, այնպես էլ ազդել անձի սոցիալական դիրքորոշումների, նախընտրությունների վրա:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ուսումնասիրված խմբի ներգրավվածությունը համայնքային կառույցներում:

Աղյուսակ 1. Ներգրավվածությունը համայնքային կառույցներում (% հարցվածներից)


Կազմակերպության տեսակը	%
Կուսակցական	37,9
Մշակութային	19,7
Բարեսիրական	19,7
Մարզական	18,2
Հայրենակցական	1,5
Կրթական	1,5
Եկեղեցական	1,5

Ուսումնասիրված խմբի ներգրավվածությունը համայնքային կառույցներում բավականին բարձր է: Հարցվածների մոտ երեք քառորդը ներգրավված է այս կամ այն կազմակերպության մեջ:

Համայնքային կառույցներից ամենակտիվ գործունեություն են ծավալում քաղաքական կուսակցությունները: Ըստ ներգրավվածության աստիճանի՝ կուսակցություններին հաջորդում են մշակութային, բարեսիրական և մարզական կառույցները, որոնց միջոցառումներին մասնակցում են մեր կողմից հարցված ամեն հինգերորդ բեյրյութահայը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ուսումնասիրված խմբի սեռատարիքային կազմն ըստ համայնքային կառույցներում ներգրավվածության:


Գծապատկեր 1. Համայնքային կառույցներում ներգրավվածությունն ըստ սեռատարիքային կազմի (% հարցվածներից).



Համաձայն ստացված արդյունքների՝ խմբում ավելի բարձր ներգրավվածություն նկատվում է արական սեռի և երիտասարդների մոտ, իսկ ամենաքիչը՝ միջին տարիքի անձանց և կանանց մոտ: Սա կարող է գործոն դառնալ ինչպես ներգրավվածության դրդապատճառների բացահայտման, այնպես էլ կառույցների հետագա գործունեության ուղենշման համար: Ստացված տվյալների միջոցով կարելի է արձանագրել երիտասարդների հետաքրքրվածու-

թյունը համայնքային կյանքով, ինչը կարող է ապահովել համայնքային կառույցների հետագա կայուն գործունեությունը մոտ ապագայում:

Գծապատկեր 2. Համայնքի անդամների՝ կառույցներում ներգրավվածության ձևը (% հարցվածներից)



Համայնքային կառույցներում ներգրավվածությունը կարող է ստեղծել հայկական միջավայր, որտեղ դրանց ներկայացուցիչներն այս կամ այն կերպ առնչվում են «հայկական»-ի հետ, և ինչ-որ չափով իրենք էլ են ներմուծում որոշակի հայկական տարրեր: Որպես կազմակերպության անդամ ներգրավվածների մեծ չափը խոսում է հենց դրա մասին, քանի որ այս մարդիկ կրում են ոչ միայն հայկականին առնչվող տեղեկատվություն, այլև տարածում են այն: Ուշագրավ է կազմակերպիչների բավականին մեծ տոկոսը, ինչը թույլ է տալիս հետևություն անել համայնքում ստեղծվող կամ համայնք ներմուծվող տեղեկատվության բազմազանության մասին: Վերջինս տեղեկատվության որակի կարևոր ցուցիչներից մեկն է, ուստի կարելի է եզրակացնել, որ կազմակերպիչների քանակի աճին զուգահեռ բարձրանում է նաև տեղեկատվության որակը:

Այսպիսով, այլթնիկ միջավայրում ցանցային վարքի փոփոխության կամ առանձնահատկությունների պահպանման համար կարևորագույն գործոններից է տվյալ միջավայրի ազդեցության և ներքին գործոնի հարաբերակցությունը: Որևէ մեկի գերիշխումը հանգեցնում է համայնքում բոլորովին այլ սոցիալական հարաբերությունների և վարքի ձևավորման: Բացի արտաքին ու ներքին գործոններից, կարևոր է առանձնացնել համայնքային կազմակեր-

պություններին ներգրավվածության հարցը, ինչը կարող է տվյալ համայնքի ինքնակազմակերպման և ինքնակառավարման ցուցիչ հանդիսանալ:

Վերոնշյալ եզրահանգումների և հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալը՝ որպես Բեյրութի հայերի մոտ ցանցային հատկանիշների առանձնահատկություն. Բեյրութի հայ համայնքում դիտարկվում է համայնքին ներգրավվածության բարձր աստիճան, որի որակական բնութագրիչները՝ ներգրավվածության չափ, տեսակ, խտություն և այլն, թույլ են տալիս եզրակացություն անել ընդհանուր առմամբ համայնքի ինքնակազմակերպման բարձր մակարդակի վերաբերյալ:

ОСОБЕННОСТИ СЕТЕВЫХ ОТНОШЕНИЙ СРЕДИ БЕЙРУТСКИХ АРМЯН

СОНА НЕРСИСЯН

Для этнической группы, находящейся в инонациональном окружении, особое значение приобретают социальные сети, внутри которых её члены реализуют свою потребность в поддержании своей идентичности. В связи с этим социальная сеть в диаспоре приобретает особое значение и её функционирование, как и развитие, обуславливают существование и воспроизводство этнической группы, определяют формирование структур самоуправления и т.п. Именно поэтому важно исследовать характер функционирования социальных сетей в диаспоре, качественные параметры которых определяются множеством факторов.

В этом контексте осмысление роли социальных сетей в сохранении этничности среди армян диаспоры приобретает особое значение. Это обусловлено тем, что армянский этнос располагает огромным опытом выживания в разнообразном инонациональном окружении. С этой целью рассмотрим общее и особенное в функционировании социальных сетей среди армян диаспоры.

Ключевые слова – Диаспора, сетевые отношения, родственные связи, общинные организации.

THE ATTRIBUTES OF NETWORK RELATIONS AMONG BEIRUT ARMENIANS

SONA NERSISYAN

Social networks give an opportunity to different ethnic groups in foreign environment to form ethnic self-governed groups. This explains the importance of investigating the nature of the network activities in the Armenian diaspora, define their qualitative standards and identify the factors that exercise influence on them.

The network ties and their nature have a decisive role in the construction and functioning of network relations in an Armenian society. It is important to find out the way Armenians construct and develop relationships in other environments, and whether the aforementioned peculiarities are maintained, and what kind of changes they undergo when subjected to foreign influences. This is the reason for observing in the first place the issue of the involvement of the representatives of the diaspora in the organizations of the community, the way and influence on the life of the community.

Key words – Diaspora, network relationships, family relations, community organizations.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ
ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(ըստ հետազոտության տվյալների)**

ԼՈՒՍԻՆԵ ՏԱՆԱԶՅԱՆ

Հայկական համայնքների շարքում իր ծագման բազմաշերտությամբ և մեծությամբ իր ուրույն տեղն է զբաղեցնում Լոս Անջելեսի հայկական համայնքը: Այն առանձնանում է սոցիալական կառուցվածքով և ինտենսիվ քանակական աճով, ինչը պայմանավորված է աշխարհի բոլոր կողմերից՝ Հայաստանից, Միջին Արևելքից, Ամերիկայի տարբեր շրջաններից հայերի ներգաղթով:

Նշված տարածական տեղաշարժերը, ինչպես նաև այլ բազմատեսակ ազդեցությունները (քաղաքական, տնտեսական և այլն) համայնքում առաջ են բերում մի շարք սոցիալական փոփոխություններ: Այս առումով սոցիալական փոփոխությունները դառնում են յուրատեսակ օբյեկտ Սփյուռքի ուսումնասիրության շրջանակներում:

Հոդվածի նպատակն է հետազոտել Լոս Անջելեսի հայերի շրջանում կատարվող սոցիալական փոփոխությունների միտումները՝ նրանց կենսագործունեության սոցիալական համատեքստի փոփոխման պայմաններում:

Բանալի բաներ – սոցիալական տեղաշարժեր, փոփոխություններ, Լոս Անջելեսի հայկական համայնք, սոցիալ-մասնագիտական խմբեր, սոցիալական մոբիլություն:

Հայկական համայնքների շարքում իր ծագման բազմաշերտությամբ և մեծությամբ իր ուրույն տեղն է զբաղեցնում Լոս Անջելեսի հայկական համայնքը: Այն առանձնանում է սոցիալական կառուցվածքով և ինտենսիվ քանակական աճով: Այս քաղաքում բազմաթիվ մշակութային, կրթական, քաղաքական, հայրենակցական ու կրոնական կենտրոններով հայ համայնքն ընդհանուր առմամբ դիսպերս է, սակայն այդ ընդհանուր պատկերի մեջ կան որոշ կոմպակտ խմբեր (Գլենդեյլ, Հոլիվուդ, Ֆրեզնո և այլն), որոնք գտնվում են բավականին բազմազան էթնոմշակութային միջավայրերում¹: Վերջին 50 տարիների ընթացքում միջինարևելյան քաղաքական անցուդարձերի հետևանքով (Սիրիայի, Լիբանանի ներքին քաղաքական իրավիճակները, լիբանանյան քաղաքացիական պատերազմը, Իրանի Իսլամական հեղափոխությունը և այլն) մեծ հոսքեր են նկատվում դեպի Լոս Անջելես, ինչպես նաև հետխորհրդային

¹ **Փիրումյան Ռ., Ավագյան Քն.**, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 33-46:

շրջանից սկսած՝ արտագաղթի հսկայական միտում է նկատվում Հայաստանի Հանրապետությունից²: Նշված տարածական տեղաշարժերը, ինչպես նաև այլ բազմատեսակ ազդեցությունները (քաղաքական, տնտեսական և այլն) համայնքում առաջ են բերում մի շարք սոցիալական փոփոխություններ: Այս առումով սոցիալական փոփոխությունները դառնում են յուրատեսակ օբյեկտ Սփյուռքի ուսումնասիրության շրջանակներում: Առհասարակ ժամանակակից աշխարհում էթնիկ խմբերի մեծ զանգվածների տեղաշարժերը նպաստում են բազմաէթնիկ հանրույթների ավելացմանը, որոնցում տեղի ունեցող մի շարք գործընթացներ առավելապես պայմանավորված են էթնիկ խմբերի սոցիալական փոփոխություններով և տվյալ միջավայրին ինտեգրման ուղղվածությամբ³: Էթնիկ խումբն, իր սոցիալական հատկանիշներով (սոցիալական կառուցվածք, սոցիալական շերտ, տնտեսական գործունեություն և այլն) ներթափանցելով նոր միջավայր, ձեռք է բերում տվյալ հասարակության մեջ որոշակի կարգավիճակ, որը որոշվում է նրա ունեցած ռեսուրսներով⁴: Տվյալ երկրում հասարակական միջավայրի այն հատվածը, որը զբաղեցնում է էթնիկ խումբը, դառնում է նրա զարգացման սկզբնակետը: Սփյուռքում նույն էթնոսի տարբեր խմբեր, կախված ունեցած ռեսուրսներից և ընդունող երկրի միջավայրից, կարող են զբաղեցնել տարբեր կարգավիճակներ և ունենալ տարբեր մասնագիտական կարողություններ, հետևաբար նաև մոբիլության տարբեր ընթացք:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Լոս Անջելեսի հայերի շրջանում կատարվող սոցիալական փոփոխությունների միտումները՝ ներսերնդային և միջսերնդային կտրվածքով տարբեր ժամանակային պայմաններում, հասկանալ Լոս Անջելեսի հայերի սոցիալական մոբիլության առանձնահատկությունները՝ պայմանավորված և՛ սոցիալական միջավայրով, և՛ էթնիկ խմբին հատուկ ելակետային հատկանիշներով:

Ըստ հետազոտության տվյալների՝ հարցվածների աշխատանքային գործունեության տեսակները բաշխվել են երեք խոշոր սոցիալ-մասնագիտական

² **Bozogmeher M., Sabagh G., Der Martirosian C.** Subethnicity: Armenians in Los Angeles, New Brunswick Immigration and entrepreneurship: culture, capital and ethnic networks. (U.S.A.) and London (U.K.), 2004, p. 247-248.

³ **Ungar M.** Researching culturally diverse pathways to resilience: challenges and solution. Multiethnicity & multiethnic families. U.S., 2010, p. 253.

⁴ **Бредникова О., Паченков О.** Этничность “этнической экономики” и социальные сети мигрантов // Экономическая социология. Том 3, № 2, 2002, стр. 75.

խմբերի⁵, որոնց համամասնությունը տրված է աղյուսակ 1-ում.

- ա) առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խումբ,
- բ) ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողների խումբ,
- գ) առավելապես մտավոր աշխատանք կատարողների խումբ:

Հարկ է նշել, որ առանձնացվել են նաև այնպիսի խմբեր, ինչպիսիք են սովորողները և չաշխատողները:

Ելնելով հոդվածի նպատակից և խնդիրներից՝ հոդվածում ներառվել են Լուս Անջելեսի հայերի շրջանում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալները⁶:

Ըստ փորձագիտական գնահատականների՝ այսօր հայկական համայնքը Լուս Անջելեսում ունի իր հարուստ ներկայությունը, որն առաջին հերթին արտահայտվում է և՛ ֆիզիկական ներկայությամբ, և՛ կազմավորված եկեղեցիներով, ազգային, մշակութային կենտրոններով, հայրենակցական միություններով, ոչ շահույթաբեր կազմակերպություններով, մամուլով և այլն: Լուս Անջելեսի հայերը մեծամասամբ կենտրոնացած են Հոլլիվուդում և Գլենդեյլում: Համայնքը ընդհանուր առմամբ հին (դասական) Սփյուռքի և նոր ձևավորված Սփյուռքի միասնությունն է: Դասական Սփյուռքը, որի արդյունքն են հայկական դպրոցները, կուսակցությունները, միությունները, հայալեզու թերթերը, Բեյրութի հայերի սերունդներն են հիմնել մինչև 80-ականները: Պարսկահայերի և հայաստանցի հայերի ներգաղթով բավական մեծ փոփոխություններ եղան դպրոցների լեզվական քաղաքականության մեջ: Առկա է նաև նոր Սփյուռքը, որոնք հիմնականում կազմում են Հայաստանից գաղթած հայերը: Վերջիններս

⁵ **Карпетян, Р. С.** Миграция в городах Армении. Этносоциологическое исследование. Ереван, 2013, стр. 95-96.

⁶ Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011-2015թթ.)՝ քանակական և որակական մեթոդներով (հարցազրույցներ համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ձևայնացված հարցումներ Լուս Անջելեսի հայ համայնքի անդամների հետ քվոտային ընտրանքով և ձևակույտի մեթոդով, չներգրավված դիտարկում՝ առանց պլանի ձևաչափով): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմմտ. Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները, Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ, **Կարապետյան Ռ.**, Երևան, 2012, էջ 19):

հիմնականում գալիս են բարեկամների հետ, կազմում են առանձին խմբեր և միայն դպրոցներում են միախառնվում հին Սփյուռքի ներկայացուցիչների երեխաներին: Սակայն հին և նոր Սփյուռքից գատ կան ամերիկահայեր. նրանք, ովքեր 50 տարի այստեղ են բնակվում, արդեն համարվում են ամերիկահայեր՝ տարբերվող մշակույթով: Լոս Անջելեսի ուսումնասիրված հայերի սոցիալ-մասնագիտական կազմն ունի հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1. Լոս Անջելեսի հայ համայնքների զբաղվածության պատկերը (% հարցվածներից)

ՍՈՑԻԱԼ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ	% հարցվածներից
Առավելապես մտավոր աշխատանք կատարողներ	45
Ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողներ	12
Առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողներ	6
Սովորողներ	15
Չաշխատողներ	22

Որպես հայկական Սփյուռքի բազմատարր համայնք՝ Լոս Անջելեսի հայ համայնքում խմբերի նմանօրինակ բաշխվածությունը բնական է և օրինաչափ: Ինչպես տեսնում ենք, համայնքում գերակա է առավելապես մտավոր աշխատանք կատարողների խումբը, ինչը հավանաբար կապված է կյանքի և առաջընթացի նկատմամբ բավականին բարձր չափանիշների ու պահանջների հետ, որն էլ դառնում է մոբիլ վարքագծի շարժառիթ: Համայնքը դիտարկվում է որպես տարբեր այլ հայկական գաղթօջախներից, բուն ամերիկահայերից և հայաստանցի հայերից կազմված խառնուրդ:

Քանի որ Լոս Անջելեսում հայերի շրջանում միգրացիոն գործընթացները բավականին հարաշարժ են, ապա դիտարկենք, թե ինչպիսի ընթացք են ստացել հայերի կատարած աշխատանքներն անմիջապես այնտեղ տեղափոխվելուց հետո:

«Տեղափոխվելուց անմիջապես հետո ինչո՞վ եք զբաղվել» հարցից պարզ է դարձել, որ սովորողների խումբը ներառում է տեղափոխվողների մեծամասնությունը (69%), ենթադրվում է, որ, կախված միջավայրից, անհրաժեշտ է


եղել սոցիալական ադապտացիայի համար ձեռք բերել որոշակի գիտելիքներ և պատրաստվածություն: Այս խմբի մեջ են մտել թե՛ երիտասարդները, որոնք ուսում են ստացել այնտեղ, թե՛ մեծահասակները, որոնք կարիք են ունեցել իրացնելու լեզվական կամ այլ գիտելիքներ ու հմտություններ՝ հետագա աշխատանքներ նախաձեռնելու համար: Տեղափոխվելուց անմիջապես հետո 17%-ը զբաղվել է առավելապես մտավոր աշխատանքով, այսինքն՝ տվյալ խումբը գնացել է նպատակադրված և արդեն իսկ որոշակի ռեսուրսներով, հետևապես և ավելի արագ է մտել բնականոն կյանքի մեջ: Ապա հավասարապես (7%) տեղափոխվածները զբաղեցրել են ծառայողների և առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների ոլորտները: Համայնքում հարցվածների առաջին և ներկայիս զբաղվածության տեսակները համեմատելիս պարզ է դառնում, որ ամենակայուն խումբը կրկին մտավոր աշխատանք կատարողներն ու ծառայողներն են: Միաժամանակ պետք է նշել, որ նախկինում ֆիզիկական աշխատանքով զբաղվողները ներկայում համալրել են չաշխատողների և սովորողների խմբերը:

Աղյուսակ 2. Լոս Անջելեսի հայ համայնքների զբաղվածության պատկերը տվյալ քաղաք տեղափոխվելուց անմիջապես հետո (% հարցվածներից)

ՍՈՑԻԱԼ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ	% հարցվածներից
Առավելապես մտավոր աշխատանք կատարողներ	17
Ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողներ	7
Առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողներ	7
Սովորողներ	69

Այժմ զուգահեռներ տանենք և տեսնենք՝ ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել միջսերնդային մոբիլության գործընթացը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Լոս Անջելեսի հայերի միջսերնդային մոբիլությունը (% հարցվածներից)



Տեսնում ենք, որ Լոս Անջելեսում սոցիալական վարքագծի ավանդույթի միջսերնդային տրանսմիսիան այնքան էլ չի գործում, մասնավորապես նախկինում առավելապես ֆիզիկական աշխատողների մեծ խումբը (50%) այժմ փոխարինվել է շաշխատողների (22%) և սովորողների (15%) խմբերով: Մտավոր աշխատանքով զբաղվողները գրեթե նույնությամբ պահպանել են նախորդ սերնդի սոցիալական կազմը: Կարելի է ասել, որ կախված իրենց ելքի երկրից՝ Լոս Անջելեսի հայերի տարբեր խմբեր իրենց աշխատանքային ակտիվությունը ցուցաբերում են տարբեր կերպ՝ համապատասխան նախկինում ունեցած փորձի և սովյալ երկրի միջավայրի: Միջավայրին հատուկ պահանջով դրսից տեղափոխված հայերն անմիջապես տեղափոխվելուց հետո զբաղվում են կրթության ձեռքբերմամբ, որն էլ դառնում է սոցիալական շարժունության «գործոն-կատալիզատոր»: Լոս Անջելեսում պայմանները նպաստում են անհատի սոցիալական առաջընթացին՝ նրան տալով լայն հնարավորություններ և միջոցներ՝ ցանկալի կարգավիճակ զբաղեցնելու համար: Սա էլ ապահովում է անհատների սոցիալական մոբիլության տատանումների հավանականությունը՝ ինչպես անկումները, այնպես էլ վերելքները: Ընդհանուր համայնքի կտրվածքով հայերի շրջանում նկատվում է վերընթաց միջսերնդային մոբիլության միտում:

СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ СРЕДИ АРМЯН ЛОС-АНДЖЕЛЕСА (по данным исследования)

ЛУСИНЕ ТАНАДЖЯН

Армянская община Лос-Анджелеса занимает особое место среди многочисленных армянских общин, отличаясь своей многослойностью происхождения, структурой и численностью, постоянный рост которой, обусловлен иммиграцией армян из Ближнего Востока, разных регионов Америки, Армении, а также многих других стран.

Учитывая, что пространственные передвижения, а также различные воздействия политического, экономического и иного характера вызывают ряд социальных изменений в общине – они представляются важным объектом в исследовании диаспор.

Цель данной статьи заключается в изучении тенденций социальных изменений, происходящих среди армян Лос-Анджелеса, в условиях изменения социального контекста их жизни.

Ключевые слова – социальные перемещения, изменения, армянская община Лос-Анджелеса, социально-профессиональные группы, социальная мобильность.

SOCIAL CHANGES AMONG THE ARMENIANS IN LOS ANGELES (according to research data)

LUSINE TANAJYAN

The Armenian community of Los-Angeles with its dense population, multilayered origin and social structure has a particular status among many other Armenian communities. Armenians from different parts of the world such as Armenia, some Middle East countries, different states and regions of America etc. continue to immigrate to Los-Angeles increasing its Armenian population. These moves as well as other numerous diverse influences (political, economic and other) bring forth some social changes. And these changes are becoming a singular issue within the framework of Diaspora studies.

The objective of this article is to investigate the tendencies of these social modifications under diverse social activity conditions within the Armenian community of Los Angeles.

Key words – Social moves, changes, the Armenian community of Los-Angeles, socio-professional groups, social mobility.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն դիտարկում է անձի իրավական դրության սոցիալական երաշխիքների էությունը, բովանդակությունն ու առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի իրավական դրության սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային երաշխիքներն ապահովում են անձի իրավական դրության իրացումը ժողովրդավարական իրավական պետությունում:

Բանալի բաներ – անձի իրավական դրություն, երաշխիքներ, շահեր, անձի իրավունքներ և պարտականություններ, պետություն, ժողովրդավարություն:

Իրավական դրության իրական երաշխավորումն ապահովում է անձի իրավունքների, օրինական շահերի իրականացման բարձր մակարդակը, իրավաբանական պարտականությունների իրականացումն ու վերջիններիս իրավական պահպանության և պաշտպանության բարձր աստիճանը:

Իրավաբանական գրականության մեջ իրավական դրության, անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների հիմնական երաշխիքներ ասելով հասկանում ենք այն ընդհանուր պայմաններն ու հատուկ (իրավաբանական) միջոցները, որոնք փաստացի հնարավորություն են ընձեռում օգտվելու հիմնական իրավունքներից, բավարարելու շահերը և հուսալիորեն պաշտպանելու դրանք¹:

Վերևում շարադրված սահմանումից ակնհայտ է, որ անձի իրավական դրության երաշխիքները հիմնականում դասակարգվում են երկու մեծ խմբերի՝ 1) ընդհանուր (կամ ընդհանուր սոցիալական) պայմանների և 2) հատուկ (իրավաբանական) միջոցների²: Երաշխիքների ամբողջ համակարգից առաջին

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, պատ. խմբ.՝ Այվազյան Ն.Ա., Երևան, 2008, էջ 315, 316:

² Տե՛ս **Денисов А.И.** Советское государственное право. Москва, 1970, стр. 323-324.

հերթին անհրաժեշտ է առանձնացնել *ընդհանուր սոցիալական պայմանները*, որոնք դրական ազդեցություն ունեն անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման, պահպանության և պաշտպանության վրա:

Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել ընդհանուր սոցիալական պայմանների (երաշխիքների)՝ որպես նյութական երաշխիքների բնութագրմանը: Որոշ դեպքերում նյութական երաշխիքներ ասելով հասկանում են միայն տնտեսական պայմանները՝ որպես անձի իրավական դրության երաշխիքների առանձին տեսակ: Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ ընդհանուր սոցիալական երաշխիքներն ավանդաբար դասակարգվում են տնտեսական, քաղաքական ու գաղափարախոսական (կամ հոգևոր) երաշխիքների: Կարծում ենք՝ որպես ինքնուրույն խումբ պետք է առանձնացնել սոցիալական երաշխիքներ: Ընդ որում, հեղինակներից ոմանք սոցիալական երաշխիքները դատում են տնտեսական երաշխիքների թվում, իսկ մյուսները՝ քաղաքական կամ գաղափարախոսական երաշխիքների թվում:

Ընդհանուր սոցիալական երաշխիքները ստեղծում են հիմնարար պայմաններ, որոնք կանխորոշում են մարդու և քաղաքացու իրական (ռեալ) բոլոր իրավունքները, ազատությունները, պարտականություններն ու օրինական շահերը և առաջացնում դրանք իրացնելու շահագրգռվածություն: Այնուամենայնիվ, ընդհանուր սոցիալական պայմանները (երաշխիքները) միշտ չէ, որ կարող են ինքնուրույն ապահովել անձի իրավունքների և ազատությունների լիարժեք իրացումը, առավել ևս՝ պաշտպանել դրանց նկատմամբ իրականացվող ոտնձգություններից: *Հեյլաբար, անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների լիարժեք իրացման համար անհրաժեշտ են իրավաբանական հատուկ երաշխիքներ, այսինքն՝ միասնական իրավական ձև ունեցող միջոցներ, որոնց նպատակն է՝ անմիջականորեն ապահովել իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի իրավաչափ կիրառումը, դրանց իրական պահպանությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև ստանալ և օգտվել դրանց հիմքում ընկած բարիքներից:*

Ուշագրավ են անձի իրավական դրության իրավաբանական երաշխիքների տեսակները: Հարկ է նշել, որ ժողովրդավարական, իրավական պետության մեջ գոյություն ունի արդյունավետ միջոցների համակարգը, որն ուղղված է ինչպես անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների անմիջական իրականացմանն ու դրանց հիմքում ընկած բարիքներից օգտվելուն, այնպես էլ իրավախախտումներից դրանց պաշտպանությանը (պահպանմանը): Այսպես, օրենսդրորեն հստակ տարբերակվում են քաղա-

քացիների իրավունքների և պարտականությունների իրացումը (իրականացումը) և դրանց պահպանությունը (պաշտպանությունը):

Անձի իրավունքների և պարտականությունների իրացման և այդ իրավունքների ու պարտականությունների պահպանության (պաշտպանության) տարանջատումը հիմք է հատուկ իրավաբանական երաշխիքների տեսակների մշակման համար³: Համամիտ ենք Վ.Ն. Սկորելիինի և Ն.Վ. Վիտրոլիի այն կարծիքի հետ, որ երաշխիքների վերաբերյալ այդպիսի մոտեցումն անհիմն է, և անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել անձի իրավունքների, *ազատությունների և պարտականությունների իրացման իրավաբանական երաշխիքների վրա (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)*⁴: Հետևաբար, անձի իրավունքների և պարտականությունների իրացումը (իրականացումը), ինչպես արդեն նշել ենք, ընդգրկում է դրանց իրականացման ընթացքում ծագող խոչընդոտների վերացումը, ոտնձգություններից դրանց պաշտպանությունն ու արդեն իսկ խախտված իրավունքների և պարտականությունների վերականգնման գործընթացը: Այնուամենայնիվ, տվյալ հայեցակարգը չի ժխտում իրավունքների և պարտականությունների պաշտպանության ինքնուրույն գործունեության առկայությունը՝ ի տարբերություն հատուկ գործունեության, որն ուղղված է որոշակի իրավունքների և պարտականությունների անմիջական իրականացմանը: Հետևաբար, Վ. Ն. Սկորելիինը տարանջատում է իրավաբանական երաշխիքները, որոնք ապահովում են անձի ներգրավվածությունն աշխատանքային իրավահարաբերություններում, դրանցում իրավունքների և պարտականությունների իրականացումն իրավաբանական երաշխիքներից որոնց միջոցով վերականգնվում են այդ իրավահարաբերություններում խախտված իրավունքները: Իհարկե, եզրույթի բացահայտման տեսանկյունից, նշված երկու տեսակի իրավաբանական երաշխիքները կարելի է միավորել ընդհանուր անվանման տակ՝ իրավունքների և պարտականությունների իրականացման երաշխիքներ (տվյալ դեպքում նկատի ունենալով ցանկացած իրավունքների և պարտականություն-

³ Տե՛ս **Патюлин В.А.** Государство и личность в СССР (правовые аспекты взаимоотношений). Москва, 1974, стр. 237-238; **Лысенков С.Л.** Гарантии прав и свобод личности в советском обществе: Автореф. дисс. ...канд. юрид. наук. Киев, 1976, стр. 18-19; **Тарасова В.А.** Охрана прав граждан в пенсионном обеспечении. Москва, 1978, стр. 29 - 36.

⁴ Տե՛ս **Скобелкин В.Н.** Юридические гарантии трудовых прав рабочих и служащих. Москва, 1969, стр. 31-33.

ների իրավաբանական երաշխիքները): Տվյալ տեսակետը չի ժխտում առանձին տեսակների իրավաբանական երաշխիքների առկայությունը: Դրանք են՝ 1) քաղաքացիների իրավունքների և պարտականությունների իրացման երաշխիքներ, 2) քաղաքացիների իրավունքների և պարտականությունների պաշտպանության երաշխիքներ:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների երաշխիքների այլ դասակարգման եղանակներ: Այսպես, Ա.Ի. Դենիսովն ու Ֆ.Ի. Ռուդինսկին առանձնացնում են ընդհանուր և հատուկ երաշխիքներ⁵: Եվ իրոք, այդպիսի մոտեցումն արդարացված է, քանի որ յուրաքանչյուր իրավունք և պարտականություն օժտված է իր առարկայական հստակեցված երաշխիքների համակարգով, որն ընդգրկում է ինչպես ընդհանուր սոցիալական պայմանները (տնտեսական, քաղաքական, սոցիալական գաղափարախոսական, հոգևոր և այլն), այնպես էլ դրանց իրացման և պահպանության (պաշտպանության) իրավաբանական միջոցները:

Պետության և իրավունքի տեսությունում իրավագետներից շատերը, հաշվի առնելով պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների կազմակերպչական գործունեության կարևորությունն անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի ու պարտականությունների պաշտպանության և իրացման գործընթացում, առաջարկում են դիտարկել վերոնշյալ մարմինների այդպիսի գործունեությունը երաշխիքների ինքնուրույն տեսակ: Ընդ որում, նրանում ընդգրկված է ընդհանուր (տնտեսական, սոցիալական, քաղաքական) և հատուկ (իրավաբանական) երաշխիքների ողջ համակարգը⁶:

Կարծում ենք, այդպիսի մոտեցումը վերոնշյալ մարմինների կազմակերպչական գործունեության նկատմամբ արդարացված չէ, քանի որ այն նսեմացնում է դրանց իրական դերը երաշխիքների ապահովման ողջ համակարգի

⁵ Տե՛ս **Денисов А.И.** Советское государственное право. Москва, 1947, стр. 322; **Рудинский Ф.М.** Личность и социалистическая законность. Уч. пособ. Волгоград, 1976, стр. 52.

⁶ Տե՛ս **Иванов А.П.** Гарантии конституционных прав и обязанностей советских граждан // Ученые записки Саратовского юридического института. Выпуск XVII, 1968, стр. 116 -118; **Патюлин В.А., Семенов П.Г.** Свобода личности в СССР и ее гарантии // Советское государство и право, 1961, № 8, стр. 22; **Хоменок Ф.А.** Политические свободы граждан СССР: Автореф. дисс. ...канд. юрид. наук. Ленинград, 1965, стр. 9-10.

նկատմամբ: Խնդիրն այն է, որ հաճախ ընդհանուր բարենպաստ պայմանների (տնտեսական, սոցիալական, քաղաքական) առկայության դեպքում լիովին մշակված չէ անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացման իրավաբանական երաշխիքների համակարգը: Հետևաբար, պետք է դիտարկել ոչ միայն իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացումը, այլև իրավաբանական երաշխիքների իրականացումը: Իհարկե, կազմակերպչական գործունեությունը կարելի է դիտարկել որպես անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացման երաշխիք: Սակայն, այն իր էությամբ երաշխիքների հիմքն է և չի կարող դիտարկվել այլ երաշխիքների հետ նույն հարթությունում: Հետևաբար, հարկ ենք համարում ներկայացնել անձի իրավական դրության ընդհանուր սոցիալական երաշխիքների տեսակները:

Ընդհանուր սոցիալական երաշխիքները սոցիալական, քաղաքական և հոգևոր երաշխիքներ են, որոնք վճռորոշ են անձի իրավաբանական իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների ապահովման գործընթացում: Դրանք ընդհանուր հիմք են և անհրաժեշտ պայման անձի իրավական դրության հիմնավորվածության, ինչպես նաև արդյունավետ իրացման համար:

1) **Տնտեսական երաշխիքները** ներառում են շուկայական հարաբերությունները, հասարակության նյութական և մշակութային բարիքների անդադար աճը և այլ տնտեսական գործոններ: Վերջիններս ստեղծում են օբյեկտիվ պայմաններ, որոնց դեպքում անձը ստանում է իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրականացման համար նյութական հնարավորությունների լայն շրջանակ: Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացման տնտեսական երաշխիքների դասին է պատկանում նաև պետության կողմից արտադրական-տեխնիկական ներուժի աճի, աշխատանքի արտադրողականության, միասնական տնտեսական տարածքի, ապրանքների անարգել տեղաշարժի, բարեխիղճ մրցակցության, մասնավոր սեփականության ճանաչումը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հետխորհրդային շատ երկրներում արդի տնտեսության զարգացումն ընթանում է ահռելի թերություններով՝ առանց ազգային, սեփական արդյունաբերության և գյուղատնտեսական արտադրության զարգացման, առանց փոքր և միջին բիզնեսի զարգացման: **Հարկ է նշել, որ տնտեսական երաշխիքներն որոշիչ են ոչ միայն անձի իրավունքների և ազատությունների, այլև ընդհանուր երաշխիքների այլ տեսակների նկատմամբ:**

2) Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների **սոցիալական երաշխիքները** ընդգրկում են աշխատանքի և կապիտալի, առողջապահության, սոցիալական ապահովության, ամուսնության և ընտանիքի, ծնելիության և մահացության հարաբերությունները: Դրանց զարգացումը միտված է յուրաքանչյուր անձի համար կյանքի արժանապատիվ կենսամակարդակի ապահովմանը: Ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո շուկայական անցումային պայմաններում գտնվող պետություններում նվազել էր նախկինում առկա մարդու կայուն իրավունքների, ազատությունների օրինական շահերի և պարտականությունների սոցիալական երաշխիքների իրականացումը, ինչի մասին վկայում էին ծանր սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը, աղքատության բարձր մակարդակը, գործազրկությունը և այլ գործոններ: Եվ այդ իրավիճակը հաղթահարելու համար պետությունը պետք է մշակեր հատուկ ծրագրեր՝ ուղղված սոցիալական ոլորտի զարգացմանը, սոցիալական երաշխիքների իրականացմանը:

Իրավունքների, ազատությունների և պարտականությունների սոցիալական երաշխիքները հիմնված են տվյալ պետությունում առկա սոցիալական շերտերի, կյանքի բոլոր ոլորտներում անձ-կոլեկտիվ-հասարակություն փոխհարաբերության, շահերի միասնության, սոցիալական համերաշխության և համագործակցության վրա: Ինչպես իրավացիորեն նշում է Ն.Վ.Վիտրուկը, սոցիալական երաշխիքների տվյալ տեսակների զարգացումը պետք է ուղղված լինի գործատուների սոցիալական եսասիրության, ազգայնականության, ծայրահեղականության դեմ⁷: Հետևաբար, հեղինակն առաջարկում է վերադառնալ ընդհանրականացման գաղափարի վերականգնմանն ու զարգացմանը, ինչպես նաև երկրի տնտեսության, քաղաքականության, բիզնեսի, մշակույթի ոլորտներում բարոյական սկզբունքների հաստատմանը:

3) Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների **քաղաքական երաշխիքներն** ընդգրկում են ժողովրդավարությունը, վերջինիս ձևերի և ինստիտուտների զարգացումը, որոնք ապահովում են իրական ժողովրդաիշխանությունը, հասարակության քաղաքական համակարգը՝ որպես քաղաքացիական հասարակության արդյունավետ գործունեության ձև, քաղաքական բազմակարծությունը, անձի ակտիվ գործունեությունը պետության հա-

⁷ Տե՛ս **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. Москва, 2009, стр. 144-146:

սարակական և քաղաքական կյանքում: Այս համատեքստում հատուկ նշանակություն ունեն պետության կողմից սահմանադրության մեջ որպես բարձրագույն արժեք ամրագրված տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչման սկզբունքները:

Ակնհայտ է, որ իշխանության տարանջատումն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացումը, թափանցիկ ընտրությունների կազմակերպումը, բազմակուսակցությունը և այլ ժողովրդավարական գործոններ կոչված են ապահովելու անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրական իրացումը: Հետևաբար, անձի իրավական դրության երաշխավոր է ուժեղ, կայուն և զարգացած պետությունը, որն ճանաչում է անձի իրավունքների գերակայությունը, ապահովում է հասարակության մեջ քաղաքական կայունությունը, և որը կարող է արդյունավետ պաշտպանել ժողովրդավարությունը՝ կյանքի կոչելով պաշտոնապես ընդունված իրավական ակտերը բոլոր օրինական միջոցներով: Միևնույն ժամանակ անձի ազատության համար հավասարապես վտանգավոր են ինչպես բացարձակ իշխանությունը, այնպես էլ դրա բացակայությունը, երկրում տիրող քաոսը: Հետևաբար, իշխանության տարանջատումն ընդգրկում է ոչ միայն պետության յուրաքանչյուր ճյուղի ինքնուրույն գործելու հնարավորություն, այլև դրանց համատեղ և համալիր գործունեությունը՝ ուղղված վերջիններիս ընդհանուր պարտականությանը՝ անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի և այլ սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությանը: Իրական ժողովրդավարական պետությունում կայուն քաղաքական գործընթացներն անձի մեջ ստեղծում են վստահություն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրականացման, պետության կողմից պաշտպանվածության նկատմամբ: Ավելին, անձը վստահ է, որ իր իրավունքների խախտման դեպքում դրանք կվերականգնվեն, իսկ մեղավորները կպատժվեն օրենքով սահմանված կարգով: Ժողովրդավարության կայուն զարգացումը, պետության և հասարակության կատարելագործումը, քաղաքացիների ներգրավվածությունը պետության կառավարմանը, հասարակական կազմակերպությունների ակտիվության բարձրացումը, քաղաքացիական հասարակության ամրապնդումը, հրապարակայնությունը հստակեցնում են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխիքների իրացումը, նպաստում են անձի իրա-

կան իրավունքների և ազատությունների համադրմանը հասարակության հանդեպ անձի պարտականություններին:

4) Անձի իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման **հոգևոր-գաղափարախոսական երաշխիքներն** ընդգրկում են հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, հասարակության անդամների կրթվածության աստիճանը, նրանց ստեղծագործական ներուժը: Համամիտ ենք իրավագետների այն կարծիքի հետ, որ հասարակության մեջ կրթվածության, իրավագիտակցության բարձր մակարդակը, քաղաքացիական հասարակության հասունությունը նախապայման են մարդու իրավունքների և ազատությունների լիարժեք իրացման, երաշխավորման և պաշտպանության համար⁸: Այսպես, «Սահմանադրությունն արգելում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը՝ սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով⁹:

Իրավական մշակույթի բարձր մակարդակը նախապայման է իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների գիտակցված իրականացման, հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից իրավական ռոմանտիզմի և իրավական նիհիլիզմի հաղթահարման համար: Այդպիսի իրավական դաստիարակության վերջնական նպատակն է հասարակության յուրաքանչյուր անդամի մեջ ձևավորել հարգանք իրավունքի և օրենքի՝ որպես ներքին համոզմունքի և անվերապահ վարքագծի նկատմամբ:

Մարդկանց կողմից իրենց իրավունքների, ազատությունների և պարտականությունների գիտակցումը, իմացությունն ու դրանց պաշտպանության միջոցներին տիրապետելն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման անքակտելի պայմաններն են:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր երաշխիքներն ապահովում են անձի

⁸ Մանրամասն տե՛ս **Երիցյան Ա.Հ.**, Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները զլոբալիզացիայի դարաշրջանում, Երևան, 2007: **Витрук Н.В.** Общая теория правового положения личности; **Huymens, J.** Post-cold war implosion and globalisation: liberalism running past itself // *Millennium: Journal of International Studies*, 24:3, 1995.

⁹ «Սահմանադրություն (փոփոխ.06.12.2015 թ.) հոդվ. 77 <http://www.president.am/hy/constitution-2015/20.03.2017/>:

իրավական դրության ռեալությունը (իրական լինելը) ժողովրդավարական հասարակությունում և պետությունում: Ավելին, դրանք նպաստում են յուրաքանչ-յուր անճի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրականացմանը:

СУЩНОСТЬ ОБЩИХ СОЦИАЛЬНЫХ ГАРАНТИЙ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ

ЛИЛИТ КАЗАНЧЯН

В данной научной статье автор обстоятельно рассматривает сущность, содержание и особенности социальных гарантий правового положения личности. Проведенные исследования указывают, что социальные, политические, духовно-культурные гарантии правового положения личности обеспечивают реализацию правового положения личности в демократическом, правовом государстве.

Ключевые слова - правовое положение личности, гарантии, интересы, права и обязанности личности, государство, демократия.

THE ESSENCE OF THE GENERAL SOCIAL GARANTEES OF AN INDIVIDUAL'S LEGAL STATUS

LILIT GHAZANCHIAN

In this scientific article the author thoroughly examines the essence, content and features of social guarantees of the legal status of an individual. The investigations indicate that social, political, spiritual and cultural guarantees of the legal status of a person ensure the realization of the legal status of any person in a democratic legal state.

Key words – the legal status of an individual, guarantees, interests, human rights and obligations of an individual, the state, democracy.

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ
ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հոդվածում համակողմանի և համակարգված վերլուծության են ենթարկվել արդարադատության դեմ բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական հատկանիշները և դրանց քրեաիրավական որակման առանձնահատկությունները:

Արդարադատության դեմ բռնությամբ կատարվող հանցագործությունների թվում են դասվում արդարադատության իրականացումը և քննությունը խոչընդոտելը, մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը, մարդու իրավունքների պաշտպանին սպառնալը կամ նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը, նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքը կամ բռնի գործողությունները, փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը սպառնալը:

Քանալի բառեր – արդարադատություն, բռնի գործողություններ, քննությունը խոչընդոտելը, մարդու իրավունքների պաշտպան, արդարադատության իրականացում, սպառնալիք, անհարգալից վերաբերմունք:

Բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնախնդիրը դասվում է քրեական իրավունքի, կրիմինալոգիայի և քրեակատարողական իրավունքի գիտության ու իրավակիրառական պրակտիկայի առաջնային հարցերի շարքում: Հանցավոր այդ դրսևորումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը եղել և մնում է խիստ արդիական ցանկացած պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար¹:

Բռնությունը դիտավորությամբ և ուրիշի կամքին հակառակ կամ առանց ուրիշի կամքը հաշվի առնելու կատարված հանցագործությունն է, որն ապօրինի ուրիշին զրկել է կյանքից կամ սահմանափակել է ուրիշի ազատությունը կամ ուրիշի առողջությանը պատճառել է վնաս, կամ ուրիշին պատճառել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք և կիրառվել է հանցագործություն կատարելու նպատակով²:

¹ Տե՛ս **Առաքելյան Ս.Վ.**, Բռնությամբ կատարվող հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում, սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2014, էջ 19:

² Տե՛ս **Հունանյան Դ.Ռ.**, Բռնության իրավահամեմատությունը և վերլուծությունը

Դատական պրակտիկայում «բռնություն» հասկացությունը տվել է ՀՀ վճռաբեկ դատարանը Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով³, ըստ որի. «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»:

Արդարադատության դեմ բռնությամբ կատարվող հանցագործությունների թվում են դասվում արդարադատության իրականացումը և քննությունը խոչընդոտելը (քր. օր.-ի 332 հոդ.), մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (քր. օր.-ի 332. 1 հոդ.), մարդու իրավունքների պաշտպանին սպառնալը կամ նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը (քր. օր.-ի 332. 2 հոդ.), նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքը կամ բռնի գործողությունները (քր. օր.-ի 334 հոդ.), փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը սպառնալը (քր. օր.-ի 332.3 հոդ.) հանցակազմերը:

Արդարադատության իրականացումը և քննությունը խոչընդոտելը (ՀՀ քր. օր.-ի 332 հոդված):

Դատարանների (դատավորների) նկատմամբ վստահությունն էապես պայմանավորված է անկախ, անաչառ ու անկողմնակալ դատարանների (դատավորների) առկայությամբ: Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հիմնական նորություններից էր անկախ դատական իշխանության երաշխիքների ապահովումը⁴:

2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեով իրականացված սահմանադրական փոփոխություններով որակապես ամրապնդվում են դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկա-

քրեական իրավունքում, սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2011, էջ 9:

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ /0176/01/11 որոշումը:

⁴ Տե՛ս **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ա., Մանասյան Ա.Ա.**, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015, էջ 159:

խության երաշխիքները, անկախացման հատուկ կառուցակարգեր սահմանելու միջոցով բարձրացվում է դատական իշխանության դերն իշխանության այլ թևերի հակակշռման գործում:

Այսպես, փոփոխված ՀՀ սահմանադրության 162-րդ հոդվածը սահմանում է որ «1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»⁵:

Դատարանների (դատավորների) անկախությունն արդարադատության իրականացման կարևորագույն երաշխիքներից է: Անկախություն չունեցող դատարանը դադարում է արդարադատության մարմին լինելուց, քանի որ հարկադրված է որոշումներ կայացնել ոչ թե օրենքի և օրենքով ձեռք բերված ապացույցների հիման վրա, այլ այն պահանջների, որոնք ներկայացվում են դատարանի վրա ճնշում գործադրող կազմակերպությունների կամ անհատների կողմից: Նույնը կարելի է ասել նաև դատախազի, քննիչի, հետաքննություն իրականացնող անձի, փորձագետի, պաշտպանի և դատավարության այլ մասնակիցների մասին: Դրա համար էլ օրենքը պետք է պաշտպանի նրանց անօրինական ազդեցություններից:

Դատավորների և դատավարության մյուս մասնակիցների անկախության, անձնական անվտանգության դեմ ոտնձգող հանցագործությունների հիմնական անմիջական օբյեկտ են արդարադատություն իրականացնող մարմինների, ինչպես նաև արդարադատության իրականացմանն օժանդակող մարմինների ճիշտ և բնական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Քննարկվող հանցագործությունների լրացուցիչ օբյեկտ կարող են հանդիսանալ նշված անձանց անվտանգությունը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը⁶:

ՀՀ քր. օր.-ի հոդված 332-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում արդարադատության իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությունը, իսկ երկրորդ մասը՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2015 (պաշտոնական տեղեկագիր):

⁶ Տե՛ս **Денисов С.А.** Актуальные проблемы уголовной ответственности за преступление против правосудия: дис... д-ра юрид. наук. Санкт-Петербург, 2002, стр. 59-60:

կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն իրականացնող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու մեջ: Միջամտությունը պետք է կապված լինի քննվող գործի հետ: Այն կարող է դրսևորվել ամենաբազմազան եղանակներով՝ պահանջել, հարկադրել, տարբեր ձևերով ճնշում գործադրել, ծառայություններ մատուցելու խոստումներ տալ, սպառնալ ոտնահարել իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը և այլն: Միջամտությունը կարող է արտահայտվել նաև ցույցեր, հավաքներ, միտինգներ կազմակերպելով՝ զուգորդված դատարանին կամ նախաքննություն իրականացնող մարմնին որոշակի գործի քննության կապակցությամբ ներկայացվող պահանջներով:

Միջամտություն չի կարող համարվել դատարանի կամ իրավապահ մարմինների գործունեության քննադատությունը, նրանց կողմից կայացված որոշումներին բացասական գնահատական տալը: Քանի որ արդարադատությունը բովանդակում է նորմատիվ-գնահատողական բաղադրիչներ, որոնք ձևավորվում են զգացողական, ներըմբռնային և տեսական մակարդակներով⁷:

Ըստ Ա.Ս. Գորելիկի. «Ձնայած այդ բաղադրիչների հետևությունների համար որոշակիորեն չեն երաշխավորում, սակայն բնութագրում են հասարակական կարծիքի բարձր կայունություն, օրինակ՝ այնպիսի կանխադրյալների համար, ինչպիսիք են հատուցման համարժեքությունը կատարված հանցանքին, միանման արարքների համար իրավական հետևանքների տարբերության անթույլատրելիությունը և հակառակը՝ տարբերակված մոտեցում այն անձանց նկատմամբ, որոնք վնաս են հասցրել դիտավորությամբ կամ անզգուշությամբ»⁸:

Քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել բացառապես միջամտության որոշակի դրսևորման համար (օրինակ՝ բռնություն գործադրելու դեպքում և այլն):

⁷ Տե՛ս **Ավետիսյան Դավիթ**, Գիտական աշխատությունների ժողովածու, խմբագիր՝ ակադեմիկոս Ա.Ս. Ղազինյան, գրախոս՝ իր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Ավետիսյան, Երևան, 2016, էջ 91:

⁸ Տե՛ս **Горелик А.С.** Назначение наказания о совокупности преступлений и приговоров: принципы законодательства, судебная практика. Красноярск, 1991, стр. 101-103:

Քննարկվող հանցագործությունն ավարտված է համարվում միջամտություն հանդիսացող գործողությունները կատարելու պահից՝ անկախ նրանից՝ հաջողվե՞լ է արդյոք հանցագործին որևէ կերպ ազդել նշված մարմինների կողմից որոշակի գործի կապակցությամբ կայացրած որոշումների վրա, թե՞ ոչ:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հողվածի առաջին մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է արդարադատության իրականացումը խոչընդոտելու նպատակը, իսկ երկրորդ մասով նախատեսված հանցակազմի համար՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը խոչընդոտելու նպատակը:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 332-ի երրորդ մասում նախատեսված է հանցագործության ծանրացնող հանգամանքը, այն է՝ նույն արարքների կատարումը պաշտոնեական դիրքն օգտագործելով: Այս հանցագործության սուբյեկտ կարող են լինել այն պաշտոնատար անձինք, ում լիազորությունները կամ պաշտոնից բխող հեղինակությունը թույլ են տալիս իրական ազդեցություն ունենալ գործի քննության ընթացքի վրա:

2) Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 332. 1)

ՀՀ քր. օր.-ի հոդված 332-ը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

ՀՀ փոփոխված սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված է. «Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներն ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»:

Միաժամանակ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը (2016թ.) հղում է անում ՀՀ քրեական օրենսգրքի այն դրույթներին, որոնք ապահովում են պաշտպանի անձեռնմխելիությունն իր լիազորություններն

իրականացնելիս: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացումը և քննությունը խոչընդոտելու (332-րդ հոդվ.), դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի (343-րդ հոդվ.), դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելու (344-րդ հոդվ.), նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքի կամ բռնի գործողությունների (347-րդ հոդվ.) և այլ արարքների համար: ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ դրույթները հավասարապես վերաբերում են նաև պաշտպանի արդյունավետ գործունեության ապահովմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 332. 1 հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու մեջ: Այն կարող է դրսևորվել ամենաբազմազան եղանակներով՝ պահանջել, հարկադրել, տարբեր ձևերով ճնշում գործադրել, ծառայություններ մատուցելու խոստումներ տալ, սպառնալ ոտնահարել իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը և այլն:

Միջամտություն չի կարող համարվել մարդու իրավունքների պաշտպանի գործունեության քննադատությունը կամ նրա կողմից կայացված որոշումներին բացասական գնահատական տալը:

Քննարկվող հանցագործությունն ավարտված է համարվում միջամտություն հանդիսացող գործողությունները կատարելու պահից:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է. այդպիսին պաշտոնատար անձն է:

3) Մարդու իրավունքների պաշտպանին սպառնալը կամ նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը (քր օր.-ի հոդված 332. 2)

ՀՀ քր. օր.-ի հոդված 332. 2-ը պատասխանատվություն է նախատեսում մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար:

Հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է հոդվածում նշված արարքներից որևէ մեկը կատարելու մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանին սպառնալը կարող է դրսևորվել նրա կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, նրա կամ նրա

մերձավորի մասին անվանարկող տեղեկություններ տարածելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, այլ իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը ոտնահարելու մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանին վիրավորանք հասցնելը դրսևորվում է նրա պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով⁹:

«Հ սահմանադրական դատարանը 2009 թ. հոկտեմբերի 20-ի ՍԴՈ-834 որոշման մեջ նշել է. «... անձի իրավունքների դեմ անթույլատրելի ոտնձգությունը դեռևս բավարար չէ հետապնդման մասին խոսելու համար: Ավելի շուտ պահանջվում է իրավունքների խախտման այնպիսի սպառնալիք, որն իր ձևով ու ծանրությամբ կառաջացնի արժանապատվության ոտնահարում և տուժողին կղնի անելանելի դրության մեջ»¹⁰:

Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի՝ մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն:

Մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը կարող է դրսևորվել բազմազան ձևերով՝ մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին չարամտորեն չպատասխանելով, պաշտոնատար անձի կողմից առանց հարգելի պատճառների նրա ընդունելությունը ձգձգելով կամ չընդունելով, մարդու իրավունքների պաշտպանի առաջարկություններին դիտավորությամբ չարձագանքելով, մարդու իրավունքների պաշտպանին դիտավորությամբ, առանց հարգելի պատճառների անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր չտրամադրելով, պարզաբանումներ չտալով և այլն:

⁹ Տե՛ս **Առաքելյան Ն.Ա.**, Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում, սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2015:

¹⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը, ուղեցույց-ձեռնարկ, հատոր 1, Երևան, 2016, էջ 563:

Հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ վերը նշված արարքները կատարվեն մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր լիազորությունների իրականացման կապակցությամբ:

Նշված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ցանկացած ֆիզիկական անձ:

4) Փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը կամ, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալը (քր.օր-ի հոդված 332.3): ՀՀ քրեական օրենսգրքի 332.3 հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում՝ պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու համար:

Նույն հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է նախատեսում փաստաբանի կամ նոտարի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր լիազորությունների իրականացման հետ:

Հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է փաստաբանի կամ նոտարի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու մեջ: Միջամտությունը պետք է կապված լինի նշված անձանց մասնագիտական գործունեության հետ:

Միջամտություն չի կարող համարվել նշված անձանց գործունեության քննադատությունը: Քր. օր.-ի հոդված 332.3-ով նախատեսված հանցակազմը բացակայում է նաև այն դեպքերում, երբ միջամտությունն իրականացվում է նշված անձանց կողմից օրենքին համապատասխան գործունեությունն ապահովելու նպատակով: Նման դեպքերում քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն միջամտության որոշակի եղանակի համար (օրինակ՝ բռնություն գործադրելու և այլն):

Քննարկվող հանցագործությունն ավարտված է համարվում միջամտություն հանդիսացող գործողությունները կատարելու պահից:

Եթե հանցագործը միջամտությունն իրականացնում է կաշառք տալու միջոցով, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ քր. օր.-ի հոդված 332.3-ի համապատասխան մատով և քր.օր-ի հոդված 200-ի համապատասխան մատով՝ որպես առևտրային կաշառք: Եթե միջամտությունն իրականացվել է փաստաբանի կամ նոտարի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ

վնասելու սպառնալիքի միջոցով, ապա արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 332.3-ի երկրորդ մասով: Կարծում ենք, որ օրենքը թերի է այն առումով, որ հոդված 332.3-ի երկրորդ մասը պատասխանատվություն չի նախատեսում նշված անձանց մերձավորների նկատմամբ սպառնալիքի, ինչպես նաև փաստաբանի կամ նոտարի կամ նրանց մերձավորների նկատմամբ բռնություն գործադրելու համար:

Եթե փաստաբանի կամ նոտարի նկատմամբ բռնություն գործադրվի, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ հոդված 332.3-ով և անձի դեմ ուղղված որոշակի հանցագործության .համար պատասխանատվություն նախատեսող համապատասխան հոդվածով:

Նշված անձանց սպանության դեպքում արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 332-ով և քր. օր.-ի հոդված 104-ի երկրորդ մասի երկրորդ կետով (անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ):

Նշված հանցակազմում սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտը պաշտոնատար անձն է, իսկ երկրորդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

5) **Նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքը կամ բռնի գործողությունները (քր. օր.-ի հոդված 347):** ՀՀ քր. օր.-ի հոդված 347-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում դատավորի կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար, որը կապված է գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ: Նույն հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորների նկատմամբ, կապված նախնական քննություն վարելու, գործը կամ նյութերը դատարանում քննելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը կատարելու հետ:

Ինչպես տեսնում ենք, քր. օր.-ի հոդված 347-ի առաջին և երկրորդ մասերում նախատեսված են երկու ինքնուրույն հանցակազմեր, որոնք միմյանցից տարբերվում են միայն տուժողների շրջանակով: Հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության դեպքում սպառնալիքը տրվում է միայն դատավորին կամ նրա մերձավորին, իսկ երկրորդ մասով նախատեսված հանցագործության դեպքում՝ դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին, պաշտպանին, փորձագետին, դատական ակտերի հարկադիր կատարողին կամ նրանց մերձավորներին (մերձավորի հասկացությունն այստեղ նույնն է, ինչ որ համապատասխան ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության դեպքում):

ՀՀ քր. օր.-ի հոդված 347-ի և՛ առաջին, և՛ երկրորդ մասերով նախատեսված հանցակազմերի օբյեկտիվ կողմերը նույնն են: Քննարկվող հանցակազմերի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հոդվածում նշված անձանց նկատմամբ սպառնալիքի գործադրման մեջ: Սպառնալիք ասելով պետք է հասկանալ նշված անձանց սպանելու, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու՝ բանավոր կամ գրավոր արտահայտված մտադրությունը: Սպառնալիքը կարող է տրվել ինչպես հրապարակայնորեն (օրինակ՝ դատարանի դահլիճում), այնպես էլ երրորդ անձանց բացակայության պայմաններում, ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդի միջոցով, ինչպես իր անունից, այնպես էլ որոշակի խմբի: Սակայն հանցակազմի առկայության համար պարտադիր է, որ այն անձը, ում ուղղված է սպառնալիքը, տվյալ պահին ներկա լինի: Հոդվածում նշված անձանց բացակայության պայմաններում նրանց հասցեին սպառնալիքներ տալը կարող է համարվել զուտ դիտավորության բացահայտում, ինչը պատասխանատվություն չի առաջացնում:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն սպառնալիքի այլ դեպքերի, քննարկվող հանցակազմերի դեպքում պարտադիր չէ, որ սպառնալիքն իրական լինի. բավական է հավաստել միայն սպառնալիքի փաստը: Դատարանի և իրավապահ մարմինների նկատմամբ արտահայտված ցանկացած սպառնալիք անթույլատրելի է, որովհետև այն հեղինակագրկում է իշխանությունը, սպառնում արդարադատության բնականոն իրականացմանը:

Քննարկվող հանցակազմերի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է սպառնալիքի կապը գործը կամ նյութերը դատարանում քննելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ այլ ակտը կատարելու հետ: Այդպիսի կապն առկա է այն դեպքերում, երբ հանցագործության առիթը հոդվածում նշված

անձանց մասնակցությունն է գործի կամ նյութերի քննությանը և հողվածում նշված մյուս գործողությունների կատարմանը (օրինակ՝ սպառնալիքը տրվում է դատավորին կամ քննիչին կամ նրանց մերձավորին՝ գործի քննությանը վերջիններիս մասնակցությունը դադարեցնելու կամ գործի որոշակի լուծման հասնելու նպատակով կամ էլ արդեն կայացրած որոշման համար վրեժ լուծելու նպատակով):

Հանցագործությունն ավարտված է համարվում սպառնալիքը տալու պահից (բանավոր տրված սպառնալիքի դեպքում՝ այն տալու պահից, գրավոր կամ միջնորդի միջոցով տրված սպառնալիքի դեպքում՝ տուժողի կողմից այն ստանալու պահից):

Քննարկվող հանցակազմերի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ցանկացած ֆիզիկական անձ:

ՀՀ քր. օր.-ի հողված 347-ի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված են քննարկվող հանցագործությունները ծանրացնող հանգամանքները: Հողվածի երրորդ մասում որպես այդպիսի ծանրացնող հանգամանք է նախատեսվում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության փաստացի գործադրումը, իսկ չորրորդ մասում՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության փաստացի գործադրումը:

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ЧЕРТЫ И ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ПРАВОСУДИЯ, СОВЕРШЕННЫХ НАСИЛИЕМ

АРУТЮН МАНУКЯН

В данной статье всесторонне и системно проанализированы уголовно-правовые черты преступлений против правосудия, совершенных насиллием, и особенности их уголовно-правовой квалификации.

К числу преступлений против правосудия, совершенных насиллием, относятся воспрепятствование осуществлению правосудия и следствию, воспрепятствование осуществлению полномочий защитника прав человека, угроза или нанесение оскорбления защитнику прав человека, угроза или насильственные действия в связи с ведением предварительного следствия или осуществлением правосудия, угроза осуществлению полномочий адвоката или нотариуса.

Ключевые слова – правосудие, насильственные действия, воспрепятствование следствию, защитник прав человека, осуществление правосудия, угроза, неуважительное отношение.

THE CRIMINAL-LAW CHARACTERISTICS AND QUALIFICATION FEATURES OF VIOLENT CRIMES COMMITTED AGAINST JUSTICE

HARUTYUN MANUKYAN

The criminal-law characteristics of crimes accompanied by violent acts against justice, and features of their criminal-law qualification are analyzed systematically and exhaustively in this article.

Among the crimes of violence against justice are hindrance to the administration of justice, to conducting investigations, hindrance to implementation of the Human Rights Defender's responsibilities, threatening or offending the Human Rights Defender, any kind of threat or violence against preliminary investigation or administration of justice, threatening the implementation of the responsibilities of an advocate or notary.

Key words – justice, violent actions, hindrance to conducting investigation, Human Rights Defender, administration of justice, threat, contemptuous treatment.

**ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում վերլուծվել են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրն ու առանձնահատկությունները: Ավելին՝ հեղինակը կատարված ուսումնասիրությունների հիման վրա բացահայտում է «պաշտոնատար անձ» հասկացության առանձնահատկությունները քրեական իրավունքի համատեքստում:

Բանալի բառեր – պաշտոնատար անձ, պետական ծառայություն, հատուկ սուբյեկտ, կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ:

Արդի քրեական իրավունքի՝ որպես գիտության համար, անկյունաքարային նշանակություն ունեն պետության պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգերի ուսումնասիրությունն ու պարզաբանումը: Հայտնի է, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի խնդիրն արդիական է եղել բոլոր պետությունների համար, քանի որ այդ հանցագործություններն ոտնձգում են կարևորագույն սոցիալական արժեքների դեմ, էական վնաս են հասցնում տնտեսությանը, պետական ապարատի բնականոն գործունեությանը, պետական իշխանության հեղինակությանը, պայմաններ են ստեղծում այլ ծանր հանցագործությունների համար, խախտում են սոցիալական արդարությունը: Պաշտոնեական լիազորությունների չարաշահումը, կաշառակերությունը, որոնք այս խմբի մեջ մտնող առավել տարածված հանցագործություններն են, կոռուպցիայի հիմքն են ու էությունը¹: Ընդ որում, տվյալ հանցագործություններն աչքի են ընկնում լատենտայնության բարձր ցուցանիշով: Հետևաբար, ժողովրդավարական, իրավական պետության կայացման և զարգացման համար անհրաժեշտ է պետություն-հասարակություն-անձ փոխհարաբերությունների ներդաշնակությունը: Այնուամենայնիվ, պաշտոնատար անձանց կողմից կատար-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (հատուկ մաս), Դասագիրք բուհերի համար, 2-րդ վերահրատ., ընդհ. խմբ. **Ղազինյան Գ.Ս.**, Երևան, 2006, էջ 783, 784:

ված հանցագործությունները խաթարում են վերոնշյալ շրջայի բնականոն գործունեությունը՝ ստեղծելով անհաղթահարելի անջրպետ քաղաքացու և պետության միջև²:

Ակնհայտ է, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտը պետական ապարատի (կառավարման հանրային ապարատի) նորմալ գործունեությունն է: Այնուամենայնիվ, պայմանավորված նշված հանցագործությունների որոշակի հանգամանքներով, հիմնական օբյեկտից բացի կարող են լինել լրացուցիչ օբյեկտներ՝ վնաս հասցնել մարդկանց կյանքին, առողջությանը, սեփականությանը, խախտել մարդկանց հիմնական իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է պաշտոնեական լիազորությունների օգտագործմամբ ծառայության շահերին հակասող գործողություն կամ անգործություն կատարելու մեջ: Ընդ որում, տվյալ հանցագործությունների *օբյեկտիվ կողմի կարևորագույն հատկանիշ է համարվում կատարվող հանցանքի և պաշտոնեական լիազորությունների միջև իրական կապի առկայությունը: Հերևաբար, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունն առկա է միայն այն դեպքում, երբ կատարված հանցանքը կապված է անձի ծառայության հետ:*

Իրավաբանական գրականության մեջ պետական ծառայության հետ կապված արարքները դասակարգվում են երկու խմբի³.

1) պաշտոնատար անձի արարք, որը գտնվում է նրա լիազորությունների շրջանակում կամ թեև դուրս է գալիս այդ լիազորությունների շրջանակից, բայց գտնվում է նրա ծառայական գործունեության ոլորտում:

2) Արարք, որը հանգում է ունեցած պաշտոնի հեղինակության օգտագործմանը, երբ պաշտոնատար անձը հանցանքը կատարում է ոչ թե իր լիազորություններն օգտագործելով, այլ իր պաշտոնեական դիրքի, զբաղեցրած պաշտոնի հեղինակությունն օգտագործելով: Հարկ է նշել, որ այս իրադրությունը հատկանշական չէ պաշտոնեական անփութությանը և պաշտոնեական կեղծիքին, քանզի վերջիններս կարող են կատարվել միայն ծառայողական

² Տե՛ս **Ширяев В.Н.** Взятничество и лиходейство в связи с общим учением о должностных преступлениях. Ярославль, 1916, стр. 4.

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (հատուկ մաս), Դասագիրք բուհերի համար, 2-րդ վերահրատ., ընդհ. խմբ. **Ղազինյան Գ.Ս.**, Երևան, 2006, էջ 785, **Аснис А.Я.** Служебное преступление: Понятие и субъект. Москва, 2003, стр. 85; **Батычко Вл.Т.** Уголовное право. Особенная часть. Таганрог, 2015, стр. 250.

գործունեության ոլորտում: Պաշտոնեական դիրքի հեղինակությունն օգտագործելու դեպքում պաշտոնատար անձը, իր դիրքն օգտագործելով, ներգործում է այլ ծառայողների վրա՝ վերջիններիս դրդելով իր կամ այլ անձանց օգտին որևէ գործողություն կատարել կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից⁴: Ավելին, ծառայողները պատկանում են այլ ոլորտի, քան պաշտոնատար անձը, հետևաբար՝ չեն գտնվում պաշտոնատար անձի ենթակայության տակ: Այլ կերպ ասած՝ պաշտոնատար անձը դուրս է գալիս իր ծառայության գործունեության ոլորտից:

Դիտարկելով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմի մյուս առանձնահատկությունները՝ կարելի է նշել, որ դրանց մի մասը նկարագրված են որպես ձևական, իսկ մյուսները՝ որպես նյութական հանցակազմեր:

Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններին բնորոշ է հատուկ սուբյեկտը⁵:

«Հ քրեական օրենսգրքի հոդված 308-ի երրորդ մասի համաձայն՝ այդպիսին են համարվում այն պաշտոնատար անձինք, ովքեր 1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իրականացնում են իշխանության ներկայացուցչի գործառույթներ, 2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իրականացնում են կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ⁶:

Հարկ է նշել, որ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք օժտված են կարգադրիչ լիազորություններով իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող, իրենցից ծառայողական կախվածություն չունեցող անձանց նկատմամբ: Իշխանության ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնում են օրենսդիր, գործադիր և դատական պետական իշխանության ճյուղերում: Դրանցից են՝ Ազգային ժո-

⁴ Տե՛ս **Бриллиантов А.В.** К вопросу о понятии должностного лица // Российский следователь, 2001, № 6, стр. 16-18.

⁵ Տե՛ս **Аветисян С.С.** Соучастие в преступлениях со специальным субъектом. Закон и право. Москва, 2004, стр. 267-295.

⁶ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը (ընդ. 18.04.2003թ.), հոդվ. 306 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=134912/05.06.2017/>:

ղովի պատգամավորը, դատավորը, ՀՀ կառավարության անդամը, իրավապահ մարմինների ներկայացուցիչները, որոնք պայքարում են հանցագործության դեմ, ժամանակավորապես իշխանության ներկայացուցչի գործառույթ իրականացնող անձինք և այլն: Համամիտ ենք քրեական իրավունքի տեսությունում վերջին տարիներին քննարկվող այն տեսակետի հետ, որ վերոնշյալ մարմիններում տեխնիկական, սպասարկող անձնակազմը կամ ոչ օպերատիվ գործառույթներ իրականացնող անձինք, չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում կարող են համարվել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ (որպես վարչատնտեսական կամ կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնողներ), այնուամենայնիվ իշխանության ներկայացուցիչ չեն⁷:

Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ կարող է համարվել այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անունից պաշտոնական փաստաթղթեր տրամադրելու այլ անձանց՝ դրանով կարգավորելով նրանց վարքագիծը⁸:

Վարչապնդեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայող է համարվում այն անձը, որն օժտված է նյութական, գույքային արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով: Այդպիսի լիազորություններով հիմնականում օժտված են տնտեսական, ֆինանսական բաժինների, վարչությունների պետերը, նրանց տեղակալները, որոնք, օրինակ, դրամական միջոցներ են ստանում և հանձնում, նաև հսկողություն են սահմանում գույքի կամ նյութական արժեքների իրացման նկատմամբ:

Հարկ է նշել, որ *կազմակերպական-տնօրինչական* գործառույթներ իրականացնող պետական ծառայող է համարվում այն անձը, որի ծառայողական գործունեությունը կապված է մարդկանց կառավարման հետ, այսինքն՝ ղեկավարում, կառավարում է իր ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Ակնհայտ է, որ տվյալ անձը համարվում է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ: Միննույն ժամանակ,

⁷ Մանրամասն տե՛ս **Волженкин Б.В.** Служебные преступления. Москва, 2000; **Феркалюк Ю.И.** Государственный и муниципальный служащие, не являющиеся должностными лицами, как субъекты служебного подлога // Муниципальная служба: правовые вопросы, Москва, 2009, № 3, стр. 27-29.

⁸ Տե՛ս **Букалерева Л.А.** Документы как предмет преступлений против порядка управления // Законность, Москва, 2006, № 6, стр. 12-15.

պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում սոսկ իրենց մասնագիտական գործառույթներն իրականացնող ծառայողները քննարկվող հանցագործության սուբյեկտ են դառնում այն դեպքում, երբ միաժամանակ նաև օժտված են *վարչատնտեսական կամ կազմակերպական-տնտեսական գործառույթներով*: Օրինակ՝ դեկանը ուսանողների քննական շրջանում վերահսկողություն կամ քննությունների հետ կապված լիազորություններն իրականացնելիս դառնում է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ:

Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտներ չեն մասնավոր անձինք, ոչ պետական, հասարակական, առևտրային կազմակերպություններում *վարչատնտեսական կամ կազմակերպական-տնտեսական գործառույթներ իրականացնող անձինք*: *Վերջիններս նշված հանցագործության մեջ կարող են հանդես գալ միայն որպես հանցակից*:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է որոշակի հանցագործությունների համատեքստում (կաշառք ստանալը, իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը, կաշառք տալը, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը, կաշառքի միջնորդությունը) պաշտոնատար անձանց լրացուցիչ շրջանակը⁹: Դրանք են.

1) օտարերկրյա պետության՝ տվյալ պետության ներպետական իրավունքին համապատասխան՝ պետական պաշտոնյայի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետության օրենսդիր մարմնի կամ վարչական լիազորություններ իրականացնող որևէ ներկայացուցչական մարմնի անդամները,

2) միջազգային կամ վերազգային հանրային կազմակերպության կամ մարմնի պաշտոնյաները կամ այդ կազմակերպության կամ մարմնի կանոնակարգերով նախատեսված դեպքերում պայմանագրերով աշխատողները կամ այլ անձինք, որոնք կատարում են նման պաշտոնյաների կամ աշխատողների կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանող գործառույթներ,

⁹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը (ընդ. 18.04.2003թ.), հոդվ. 308
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349/05.06.2017/>:

3) միջազգային կամ վերազգային կազմակերպության, խորհրդարանական վեհաժողովի կամ նման գործառույթ իրականացնող այլ մարմնի անդամները,

4) միջազգային դատարանի, որի իրավասությունն ընդունել է Հայաստանի Հանրապետությունը, դատական գործառույթներ իրականացնող անդամները կամ պաշտոնյաները,

5) օտարերկրյա պետությունների դատարանների երոլվյալ ատենակալները:

Հատկանշական է, որ պետական ծառայության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով, իսկ որոշ հանցագործությունների սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարվում հանցագործության շարժառիթը¹⁰: Այնուամենայնիվ, պաշտոնեական անփութությունը պետական ծառայության դեմ ուղղված միակ հանցագործությունն է, որի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է անզգուշությամբ: Տվյալ դեպքում անզգուշությունը կարող է դրսևորվել ինչպես անփութությամբ, այնպես էլ ինքնավստահությամբ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ են համարվում իշխանության ներկայացուցիչների, պաշտոնատար անձանց կամ հատուկ լիազորությամբ պաշտոնատար անձի գործառույթներ իրականացնող անձանց կողմից իրենց ծառայողական լիազորությունների օգտագործմամբ կատարվող այն արարքները, որոնք ոտնձգում են պետական ապարատի բնականոն գործունեության դեմ:

ОСОБЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ

ГАЙК ПЕТРОСЯН

В данной научной статье, проанализирована общая характеристика и особенности преступлений против государственной службы и ее интересов. Более того, автор, на основе проведенного исследования, раскрывает особенности понятия «должностное лицо» в контексте уголовного права.

¹⁰ Տե՛ս **Басова Т.** Мотив как обязательный признак субъективной стороны должностных преступлений // Российский судья, 2004, № 11, стр. 30-33.

Ключевые слова – должностное лицо, преступление, государственная служба, специальный субъект, организационно-распорядительные или административно-хозяйственные функции.

FEATURES OF CRIMES AGAINST THE STATE SERVICE OFFICIALS

HAYK PETROSYAN

This scientific article analyzes the general characteristics and features of crimes against state service officials. Moreover, the author, on the basis of this study, reveals the key attributes of a "state official" in the context of the criminal law.

Key words – official, crime, state service, a special individual subject to criminal liability, organizational, disciplinary and administrative functions.

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Հոդվածում հանգամանորեն քննարկվել են անձի անվտանգության ընդհանուր իրավական հասկացության հետ կապված հիմնախնդիրները:

Հոդվածում բացահայտվել են անձի անվտանգության հետ կապված իրավական, քաղաքական և սոցիալական ասպեկտները, դրանց էությունը և բովանդակությունը:

Բանալի բառեր – անձի անվտանգություն, իրավական անվտանգություն, սուբյեկտիվ իրավունքներ, մարդու իրավունքներ, իրավական կարգավիճակ:

«Մարդու անվտանգությունը» սկզբունքային հասկացություններից մեկն է¹: Ներկայումս աքսիոմային է ընկալվում այն դրույթը, որ իսկապես իրավական պետության մեջ մարդը բարձրագույն սոցիալական արժեք է, իսկ նրա անվտանգությունը՝ հասարակական զարգացման իմաստն ու նպատակը: Նկատենք, որ մինչև XVIII դարը չէին տարբերակվում «անվտանգություն» և «ապրել» հասկացությունները, քանի որ կարևոր էր ճանաչվում հիմնականում անհատական բռնության սպառնալիքներից պաշտպանությունը: Բավարար է նշել Պլատոնի և Արիստոտելի սոցիալ-իրավական ուսմունքները: Անտիկ մտածողների կարծիքով կատարյալ պետությունը պետք է բնութագրվեր համամարդկային արժեքներ պահպանող մարդկանց բարձր բարոյականությամբ, քանի որ հենց նրանք են դարձնում անխոցելի և անվտանգ հասարակությունն ու պետությունը: Ինչպես գրում էր Պլատոնը, «անվտանգությունը վնասի կանխարգելում է»: Ընդ որում բուն հասկացությունը նա սահմանում է «օգնություն» (խոչընդոտ՝ գոյություն ունեցող կամ հնարավոր չարիքի համար) և փրկություն (պաշտպանություն՝ որևէ վնասից) հասկացությունների միջոցով²: XVIII դարի կեսերին կենտրոնացված իշխանության ուժեղացումը պահանջում էր ժողովրդի ինտեգրում, իշխանության հանդեպ նրա վստահության բարձրացում:

¹ Տե՛ս **Аветисян С.С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016.

² Տե՛ս **Платон.** Диалоги / Пер. с древнегреч./, Москва, 2011, стр. 433, 434:

Հենց այդ ժամանակ փիլիսոփայական աշխատություններում սկսում է ակտիվորեն քննարկվել պետության կողմից անձի ազատության ապահովման անհրաժեշտության հիմնախնդիրը, ձևավորվում է մարդու բնական իրավունքների մասին տեսությունը: Դրա մշակման գործում զգալի ներդրում են կատարել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ն. Մաքիավելին, Ջ. Լոքը, Ժ.ժ. Ռուսոն, Շ. Մոնթեսքյուն, Դ. Դիդրոն և ուրիշներ: Հատուկ նշվում էր, որ սեփական անվտանգությունը քաղաքականության գերագույն օրենքն է:

Խորհրդային ժամանակաշրջանում մարդու անվտանգության հայեցակարգը գրեթե մոռացված էր: Գիտնականների հիմնական ուշադրությունը սևեռված էր թշնամական կապիտալիստական աշխարհի կողմից վտանգներից՝ սոցիալիստական ընկերակցության արտաքին անվտանգության ապահովմանը: Իսկ ինչ վերաբերվում է առանձին անհատին, ապա այն դիտարկվում էր ոչ թե իբրև իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, այլ իբրև պաշտպանությանը ենթակա հասարակության անդամ: Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ մինչև XX դարի 80-ական թվականների կեսերը «անձի անվտանգություն» հասկացությունը հետազոտվում էր միայն միջազգային մակարդակում:

Մարդու անվտանգության ապահովման միջազգային-իրավական հիմք ձևավորող փաստաթղթերի բովանդակությունը թույլ է տալիս դրանք բաժանել հետևյալ խմբերի.

1) մարդու իրավունքների ոլորտում որոշիչ ունիվերսալ միջազգային-իրավական ստանդարտներ: Այստեղ հարկավոր է հիշատակել ՄԱԿ-ի կանոնադրությունը (1945թ.), Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը (1966 թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտը (1966թ.) և այլն: Իրենց ամբողջականության մեջ այս փաստաթղթերը կազմել են Բիլն իրավունքների մասին, որը լրացվել էր Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պակտի ֆակուլտատիվ արձանագրությանը, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտին երկրորդ ֆակուլտատիվ արձանագրությանը, որոնք կոչված են մահապատժի վերացմանը: Ինչպես նշվում է վերոնշյալ միջազգային պակտերում, պետությունը պարտավոր է ապահովել ցանկացած անձին, ում իրավունքներն ու ազատությունները ոտնահարված են, իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, անգամ

եթե այդ խախտումը կատարվել էր պաշտոնական կարգով գործող անձանց կողմից.

2) նորմատիվ-իրավական փաստաթղթեր, որոնք արտացոլում են անձի անվտանգության, նրա հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ ոտնձգությունների կանխարգելմանն ու կասեցման հիմնական ուղղություններն արտացոլող նորմատիվ-իրավական փաստաթղթերը (Միջազգային կոնվենցիա՝ ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին (1965 թ.), Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիան (1948թ.), Ապարտեիդի հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիան (1973թ.), խոշտանգումներ և վարքի ու պատժի դատան, անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող տեսակների դեմ (1984 թ. և այլն):

Անձի անվտանգության ապահովման միասնական համակարգի ձևավորման համար միջազգային-իրավական ակտերի նշանակությունն այն է, որ վերոնշյալ փաստաթղթերն ամրագրում են անվտանգության օբյեկտը կազմող անձի հիմնական իրավունքների ու ազատությունների ցանկը, սահմանում անդամ-պետությունների պարտավորությունները՝ մարդու կենսական կարևորություն ունեցող բարիքների ճանաչման, ապահովման և պաշտպանման գծով, ինչպես նաև իրավական հիմքեր են դնում անձի անվտանգ գոյության իրավունքի իրականացման համար: Սակայն միջազգային-իրավական մակարդակում «մարդու անվտանգության» իրավական սահմանուն էպես բարդացնում է միջազգային և ազգային իրավունքի ինտեգրման գործընթացները՝ անձի շահերի իրավական պաշտպանության հարցերում:

ՀՀ փոփոխված սահմանադրությունը և ազգային օրենսդրությունը նախատեսում են անվտանգության հետևյալ տեսակները՝ պետական (ազգային) անվտանգություն, անձի անվտանգություն, տնտեսական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, իրավական անվտանգություն, հոգևոր անվտանգություն, էներգետիկ անվտանգություն, տրանսպորտային անվտանգություն, պարենային անվտանգություն, բնապահպանական անվտանգություն: Կենտրոնանալով անձի անվտանգության վրա՝ ՀՀ սահմանադրությունը սահմանում է. «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանու-

թյունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-ի ՀՀ նախագահի հրամանագրով հաստատված է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»³: Ըստ դրա. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայի ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով»:

Ուրեմն անհատի անվտանգության ապահովումն ազգային անվտանգության անկապտելի մասն է: Անձի անվտանգության ապահովմանն է ուղղված նաև ՀՀ նախագահի 2012թ. հոկտեմբերի 29-ի ՆԿ-159 կարգադրության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն» ներածական մասում ամրագրված հետևյալ դրույթը. «Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը: Մարդու իրավունքների պաշտպանությունն այն հիմնարար սկզբունքներից է, որոնց շնորհիվ ձևավորվում է պատշաճ վերաբերմունք ոչ միայն պետության, օրենքի, հասարակական կարգի, այլև քաղաքացիական հասարակության նկատմամբ, քանի որ քաղաքացիական հասարակության հասունությունը և զարգացումն էապես կախված են մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակից, մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների զարգացածության աստիճանից և վերջիններիս փոխգործակցությունից»⁴:

Անձի անվտանգության ապահովումը ցանկացած պետության, առավել ևս

³ Տե՛ս Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (իրավական նորմերի ժողովածու): Կազմող՝ Ա.Ս. Սեդրակյան, Երևան, 2016, էջ 78:

⁴ Տե՛ս Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (իրավական նորմերի ժողովածու), էջ 115:

իրավական, ժողովրդավարական պետության առաջնահերթություններից է⁵:

Վերոշարադրյալը պայմանավորում է «մարդու անվտանգության»⁶ հասկացողական վերլուծությունը՝ նպատակ ունենալով համակարգել բազմաթիվ դոկտրինալ սահմանումները, բացահայտել անվտանգության իրավական բնույթն ու կառուցել ժամանակակից Հայաստանում դրա ապահովման ներքուստ իմաստավորված համակարգ⁷:

Ընդհանրացնելով իրավունքի տեսության մեջ առկա անվտանգության սահմանումները՝ կարելի է տարանջատել դրանք հետևյալ խմբերի.

1) սահմանումներ, որոնք բնորոշում են անվտանգությունը՝ իբրև անձի, հասարակության ու պետության շահերի պաշտպանվածության վիճակ.

2) որոնք սահմանում են անվտանգությունը՝ վտանգի ժխտման միջոցով.

3) սահմանումներ, որտեղ անվտանգությունը համակարգի հատկությունն է.

4) հասկացություններ, որոնք բնութագրում են անվտանգությունը՝ իբրև պետական մարմինների առանձնահատուկ գործունեություն.

5/սահմանումներ, որոնք մատնանշում են անվտանգությունը՝ իբրև որոշակի վիճակ:

Քաղաքական և իրավական իրադարձություններով հագեցած անկախության երկուսուկես ժամանակաշրջանում, զգալիորեն փոփոխվել է անձի անվտանգություն եզրույթի գիտական ընկալումը: Դա ստիպում է մեզ վերաիմաստավորել վերոնշյալ դասակարգումն առանց էական փոփոխության.

1) անվտանգություն՝ իբրև վիճակ.

2) անվտանգություն՝ իբրև գործունեություն.

3) անվտանգություն՝ իբրև համակարգ:

Առաջին տեսակետն ամենատարածվածն է: Մասնավորապես Ա.Ա. Տեր-Ակոպովը սահմանում է իրավաբանական անվտանգությունը իբրև «անձի կենսական նշանակություն ունեցող շահերի՝ արտաքին ու ներքին սպառնալիք-

⁵ Տե՛ս **Тюрина Т.Б.** Правовая безопасность личности в современном российском государстве (вопросы теории и практики). Саратов, 2005, стр. 38:

⁶ Մանրամասն տե՛ս **Тюрина Т.Б.** Правовая безопасность личности в современном государстве (вопросы теории и практики). Саратов, 2012.

⁷ Տե՛ս՝ **Аветисян С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016.

ներից պաշտպանվածության վիճակ»⁸: Ֆ.Կ. Մուգուլովը դրանում տեսնում է ազգային անվտանգության կարևորագույն օբյեկտներից մեկի գործառնական հատկությունների ու սոցիոտիպական որակների պաշտպանվածության վիճակ: Տ.Բ. Թյուրինայի կարծիքով անձի անվտանգություն սելով հարկավոր է հասկանալ անձի կենսական կարևորության շահերի պաշտպանվածությունը իրավական հարաբերությունների ոլորտում արտաքին ու ներքին սպառնալիքներից:

Ինչպես տեսնում ենք, նշված սահմանումները հիմնվում են անվտանգության իրական սահմանման վրա, ինչը, սակայն, չի բացառում դրանց ներքին հակասականությունն ու գործնական չկայացած լինելը: Մասնավորապես դրանք անգամ ընդհանուր գծերով չեն սահմանում անվտանգության իրավական բնույթը (ի՞նչ է դա. գործունեություն, թե՛ գործունեության նպատակ, երևո՞ւյթ, իրադարձություն, թե՛ գործընթաց) և չեն ստեղծում մեթոդաբանական հիմք՝ դրա ապահովման գծով միջոցների համակարգի կառուցման համար:

Ըստ լեզվաբանական բառարանի՝ վիճակն այն դրությունն է, արտաքին ու ներքին հանգամանքները, որոնցում գտնվում է որևէ մեկը կամ ինչ-որ մի բան: Ակնհայտ է, որ տվյալ եզրույթն ի վիճակի չէ արտացոլելու անվտանգության սուբյեկտ-օբյեկտ բաղադրիչները, քանի որ դիրքը (օբյեկտիվ իրականության երևույթ) բացառում է սուբյեկտի և օբյեկտի առկայությունը: Վերլուծվող հասկացության բնույթի սահմանման մեջ պարզություն չի մտցնում նաև «պաշտպանվածության վիճակ» բառակապակցությունը, քանի որ պարզ չէ, թե ով, ում և ինչից է պաշտպանում: Ավելին, հարց է առաջանում՝ նպատակահարմա՞ր է արդյոք խոսք վարել պաշտպանության՝ իբրև գործընթացի մասին, եթե անվտանգությունը սահմանվում է «վիճակ» ստատիկ հասկացության միջոցով: Վերոշարադրյալ փաստարկները, մեր կարծիքով, կասկածի տակ են դնում անձի անվտանգության՝ իբրև շահերի պաշտպանվածության վիճակի սահմանումը:

Տեսական և գործնական առումով հետաքրքրություն է ներկայացնում մարդու անվտանգությունը՝ որոշակի վարքագծի միջոցով քննարկումը:

Օրինակ, Ն.Դ. Կազակովը դրանում տեսնում է «ներքին ու արտաքին վտանգներից պաշտպանվելու, պետության գոյության այնպիսի ներքին ու

⁸ Տե՛ս **Тер-Акопов А.А.** Юридическая безопасность человека // Государство и право, 2001, № 9, стр. 13:

արտաքին պայմանների ապահովման գծով գործունեություն, որոնք երաշխավորում են անձի բազմակողմանի առաջընթացի հնարավորությունը»⁹: Մարդու անվտանգությունն իրավունքի սուբյեկտների կենսական կարևորության շահերի պաշտպանություն ու երաշխավորում՝ իրավական հարաբերությունների ոլորտի մեջ դրանց մտնելու կապակցությամբ. իրավաբանական միջոցներով՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթի արտաքին ու ներքին սպառնալիքներին հակադարձելու ունակություն: Այս առումով պետք է ընդգծել, որ անձի անվտանգությունը բնութագրվում է բազմագործառնականությամբ, նրա նպատակը ոչ միայն այն է, որպեսզի պաշտպանի սուբյեկտի շահերը, այլև նվազեցնի, թուլացնի, վերացնի կամ կանխարգելի վտանգներն ու սպառնալիքները:

Մեր կարծիքով ավելի հեռանկարային է թվում անվտանգության՝ իբրև համակարգի դիտարկումը գիտության մեջ, սակայն բացակայում է կարծիքների միասնություն այն բանի վերաբերյալ, թե ինչպիսի տարրեր են կազմում այդ համակարգը: Մ.Ա. Լեսկովի կարծիքով. «...անվտանգությունը մի երևույթ է, որը համարժեք է համակարգի էությանը, որի տակ ընդունված է հասկանալ դինամիկ հավասարակշռության մի տեսակ, որը բնորոշ է բարդ ինքնակարգավորվող համակարգերին ու վիճակներին՝ թույլատրելի սահմաններում պարամետրերի համակարգի պահպանման համար էականորեն կարևոր վիճակների համար»¹⁰: Դա լրացնում է անվտանգության հայեցակարգը արժեքային-նպատակային դիրքորոշմամբ, սահմանում դրա մեթոդաբանական հիմքը, արտացոլում անվտանգության համակարգային բնույթը, սակայն դրա հետ մեկտեղ բաց է թողնում անվտանգության գնահատման չափանիշների, դրա ապահովման համար կիրառվող մեխանիզմների մասին հարցը, սահմանափակում է վերլուծվող հասկացությունը հասարակական համակարգի բնութագրմամբ, անկախ անձի բնական իրավունքներից նվազեցնում է մարդու՝ իբրև անվտանգության օբյեկտի նշանակությունը:

Մ.Ա. Նովիկովան անձի անվտանգությունը բնորոշում է որպես ներքին ու արտաքին պայմանների համակարգ (տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական, իրավաբանական, տեխնածին և այլն), որը կանխարգելում է անհատի՝ իբրև սոցիումի ներկայացուցչի նկատմամբ սպառնա-

⁹ Տե՛ս **Казакон Н.Д.** Безопасность и синергетика (опыт философского осмысления). Москва, 1994, стр. 62-63:

¹⁰ Տե՛ս **Лесков М.А.** Гомеостатические процессы и теория безопасности // “Безопасность”, Информационный сборник, 1994, № 4, стр 66:

լիքը՝ նպատակ ունենալով նրա կենսական կարևորություն ունեցող իրավունքների, ազատությունների ու շահերի ապահովումը, որն իրագործվում է պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համատեղ»¹¹: Նմանատիպ կարծիքի է նաև Ա.Ս. Պրոտզնիկովը¹²: Նշված սահմանման մեջ առարկություն է առաջացնում սպառնալիքը կանխարգելելու ունակություն ունեցող ակտիվ բնույթի հաղորդումը համակարգին: Ձևական տրամաբանության տեսակետից պայմանները նպաստում են որոշակի գործընթացի զարգացմանը (մեր դեպքում՝ սպառնալիքի կանխարգելման/, սակայն չեն կազմում դրա բովանդակությունը: Ավելի ճիշտ է խոսել համապատասխան պայմանների ստեղծման գծով գործունեության մասին, սակայն այդպիսի մոտեցման ժամանակ սահմանումից հեռացվում է համակարգ հասկացությունը:

Չնայած արտահայտված դատողություններին՝ անձի անվտանգության իրավական բնույթի դիտարկման ժամանակ միակ ճիշտը համարում ենք համակարգային մեթոդի օգտագործումը: Այն կայանում է հետազոտության օբյեկտը՝ իբրև կապերի ու հարաբերությունների որոշակի բազմության վերլուծության մեջ, որոնք տեղի են ունենում ինչպես օբյեկտի ներսում, այնպես էլ արտաքին շրջապատի (միջավայրի) հետ նրա հարաբերություններում: Ուղղությունների որոշ բազմազանության հետ մեկտեղ համակարգային մոտեցման համար ընդհանուրն այն է, որ այն շրջակա աշխարհի օբյեկտներն ու երևույթները դիտարկում է իբրև որոշակի նյութական համակարգեր, որոնք բաղկացած են փոխկապակցված և որոշակիորեն գործառնվող տարրերից. ընդ որում յուրաքանչյուր տարր առանձին վերցրած նույնպես կարող է դիտարկվել իբրև համակարգ: Այս դեպքում այն գնահատվելու է իբրև երկու պակաս բարդ տարրերի միջև կայուն հարաբերությունների ամբողջություն:

Մեր կարծիքով անձի անվտանգության՝ իբրև վիճակի ու գոյության սահմանումները չի կարելի կայացած համարել այն պատճառով, որ դրանք սահմանափակում են անձի անվտանգության համակարգային կատեգորիան դրա առանձին դրսևորումներով (առաջին դեպքում՝ գործունեության նպատակով ու արդյունքով, իսկ երկրորդ դեպքում՝ անվտանգության իրավահարա-

¹¹ Տե՛ս **Новикова М.А.** Безопасность личности в Российском обществе в условиях становления правового государства. Дис. ...канд. юрид. наук. Москва, 2003, стр. 39:

¹² Տե՛ս **Прудников А.С.** Безопасность личности и ее обеспечение органами внутренних дел. Дис. ...канд. юрид. наук. Москва, 1999, стр. 61:

բերությունների բովանդակությամբ: Հեղինակի կարծիքով «մարդու անվտանգություն» հասկացության բովանդակությունը կազմում են այն իրավահարաբերությունները, որոնց նպատակը մարդուն, նրա հիմնական իրավունքներին ու ազատություններին ուղղված սպառնալիքը կանխարգելելն է: Նկատենք, որ անձի անվտանգությունն են կազմում ոչ միայն միասեռ հասարակական հարաբերությունները:

Կախված դրանց գործառնական նշանակությունից՝ առաջարկում ենք առանձնացնել իրավահարաբերությունները.

1) որոնք ստեղծվում են պոտենցիալ սպառնալիքից՝ անձի կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության պայման (propter hoc՝ «մինչև որ»).

2) անմիջականորեն ապահովում են դրանց պաշտպանությունը (ad hoc՝ «այն ժամանակ, երբ»).

3) ուղղված են հասցված վնասի հետևանքների նվազեցմանն ու մարդու խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը (post hoc՝ «այն բանից հետո, երբ»):

Անձի անվտանգության իրավահարաբերություններն ունեն ավանդական կառուցվածք և ներառում են անվտանգության օբյեկտը, սուբյեկտային կազմը, հասարակական հարաբերությունների բովանդակությունը, դրանց առաջացման, փոփոխության ու դադարեցման իրավաբանական փաստը:


Եթե որպես հասարակական վերաբերմունքի օբյեկտ հասկանանք այն, ինչին ուղղված է դրա բովանդակությունը, այսինքն՝ ինչին ուղղված են սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, իրենց հնարավոր, պատշաճ վարքագիծը, ակնհայտ է, որ անվտանգության օբյեկտը լինելու է ոչ թե մարդը, այլ նրա հիմնական իրավունքները և ազատությունները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ ձևակերպենք հետևյալ եզրակացությունները:

Անձի անվտանգության ապահովման քրեաիրավական միջոցը իրավաբանական բնույթ կրող և պետության կողմից ապահովված քրեաիրավական կարգավորման գործիք է, որն արտահայտում է օբյեկտի առանձնահատկությունները, անվտանգության հարաբերությունների բնույթն ու սուբյեկտային բովանդակությունը, ինչպես նաև նպաստում է անձի հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության ապահովման քրեաիրավական մեթոդների ու եղանակների իրագործմանը:

Քրեաիրավական միջոցներ են այն նորմերն ու իրավահարաբերությունները, որոնք, կախված անվտանգության հարաբերությունների սուբյեկտային կազմից և բովանդակությունից, ստորաբաժանվում են պաշտպանության քրեաիրավական միջոցների և անձի հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության քրեաիրավական միջոցների:

Անձի անվտանգության քրեաիրավական միջոցների համակարգը պայմանականորեն կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով.



БЕЗОПАСНОСТЬ ЛИЧНОСТИ КАК ОБЩЕЕ ПРАВОВОЕ ПОНЯТИЕ

ВАРДГЕС САРГСЯН

В данной статье были подробно рассмотрены проблемы, связанные с общим правовым понятием безопасности личности.

В статье выявлены правовые, политические и социальные аспекты, связанные с безопасностью личности, их сущность и содержание.

Ключевые слова – безопасность личности, правовая безопасность, субъективные права, права человека, правовой статус.

THE SECURITY OF AN INDIVIDUAL AS A GENERAL LEGAL CONCEPT

VARDGES SARGSYAN

In this article, problems related to the general legal concept of personal security are considered in details.

The article reveals essence and content of the legal, political and social aspects related to the security of an individual.

Key words – security of an individual, legal security, subjective rights, human rights, legal status.

ԱՐԿԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

НЕПРЕВЗОЙДЕННЫЙ МАСТЕР МОРСКОГО ПЕЙЗАЖА

(К 200-летию со дня рождения И.К. Айвазовского)¹

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՏՅԱՆ

Картины великого мариниста Ивана (Ованнеса) Константиновича Айвазовского (1817-1900) привлекают зрителя высоким живописным мастерством, тонким поэтическим восприятием природы, романтическим настроением и заложенными в их основе глубоко гуманистическими идеями.

Родившийся в Феодосии, всю жизнь проживший в России, учившийся у русских мастеров и тесно общавшийся со многими выдающимися деятелями русской культуры Айвазовский и сам со временем стал одним из крупнейших представителей русского изобразительного искусства.

Однако он никогда не прерывал своих связей с родным народом, с армянской общественной и культурной жизнью. Его теплые патриотические чувства находили самые разнообразные и искренние проявления, отразившись во многих живописных полотнах и рисунках художника на армянскую тему.

Ключевые слова – Айвазовский, живопись, маринизм, русское искусство, армянское искусство.

Иван Константинович Айвазовский (1817-1900) был первым художником армянского происхождения, кто еще при жизни удостоился широкого международного признания и чьи лучшие полотна были причислены к наиболее значительным произведениям, когда-либо созданным в истории изобразительного искусства. Он поднял на новый художественный уровень жанр маринеры – при том, что за свою долгую и плодотворную творческую жизнь, наряду с

¹ Исследование выполнено при поддержке Государственного комитета по науке МОН РА и Российской и Ново-Нахичеванской Епархии Армянской апостольской церкви в рамках научного проекта “Деятельность армянских музыкантов, художников и архитекторов в Крыму”.

многочисленными видами моря и сценами морских сражений, писал также сухопутные, пронизанные солнцем и дышащие зимней стужей пейзажи, а также портреты и автопортреты, жанровые картины, полотна, вдохновленные библейскими и историческими образами и сюжетами.

Айвазовский начал творить в период позднего романтизма и до конца оставался верен этому идейно-художественному направлению, не поддавшись новым течениям, нашедшим распространение в европейском и русском искусстве того времени. Пожалуй, именно поэтому некоторые из молодых критиков последней четверти XIX века – как, например, апологет “нового искусства”, художник-эстет и историк искусства Александр Бенуа – считали его уже отжившим свой век живописцем, произведения которого якобы “устарели” и более не отвечали насущным идейно-эстетическим запросам эпохи².

В то же время многие из прогрессивных деятелей русского искусства и литературы, знавшие художника и следившие за его творчеством, такие как Иван Крылов, Алексей Венецианов, Орест Кипренский, Василий Жуковский, Михаил Глинка, Виссарион Белинский, Владимир Стасов, Антон Рубинштейн, Иван Крамской, а позднее – Федор Достоевский, Илья Репин, Антон Чехов и другие, независимо от их восторженного или критического отношения к творчеству Айвазовского, признавали его неоспоримые заслуги в развитии русского изобразительного искусства.

В конце XIX века и особенно в 1900-е годы, когда в русском искусстве и литературе зародилось и нашло своих убежденных последователей берущее начало в романтизме символистское течение, поднялась новая волна интереса к творчеству Айвазовского. Именно тогда, в 1901-м году, спустя год после кончины художника, появилась первая монография о великом маринисте³. Интерес к искусству Айвазовского не ослабел и сегодня. Его лучшие полотна пользуются устойчивым спросом на художественном рынке, постоянно выставляются на аукционах и продаются по астрономическим ценам.

На протяжении всей жизни Айвазовский имел около 125 персональных выставок как в России, так и за рубежом. Он избирался почетным членом

² См., например: **Бенуа А.Н.** История русской живописи в XIX веке. Санкт-Петербург, 1902, стр. 201-202.

³ См.: **Кузьмин Н.Н.** Воспоминания о профессоре И.К. Айвазовском. Санкт-Петербург, 1901.

художественных академий Рима, Флоренции, Парижа, Амстердама и Штутгарта. Ему присуждали высшие государственные награды, ордена и медали правительства России, Франции, Османской империи и других стран.

Произведения художника привлекают зрителей не только безукоризненным техническим мастерством, но и тонким поэтическим настроением, беспокойным романтическим духом, глубоким драматизмом чувств. В самых, казалось бы, бедственных, безнадежных, даже трагических сюжетах Айвазовского есть все же намек на спасение, на благополучный исход – будь то прорвавшийся сквозь толщу облаков луч солнца, нависшая над бурными водами радуга или далекий свет прибрежного маяка...

Иван Константинович Айвазовский родился 17-го июля 1817-го года в Феодосии в многодетной семье мелкого торговца Константина (Геворга) Григорьевича Гайвазовского (Айвазян), перебравшегося в Крым из Буковины⁴ в начале XIX века, и армянки Рипсима, родившей ему троих сыновей и двух дочерей. Детей крестили в местной армянской церкви Сурб Саргис [Святого Сергия]⁵. Иван был третьим ребенком в семье, он появился на свет после старшего брата Габриэла – будущего архиепископа Армянской Апостольской церкви, и среднего брата Григора.

Начальное образование Иван получил в приходской школе при той же церкви, где проучился пять лет, с 1825-го по 1830-й годы. Он был не по годам смысленным и одаренным ребенком: уже в этом возрасте самостоятельно научился игре на скрипке и начал рисовать. Незаурядные художественные способности мальчика привлекли внимание феодосийского архитектора Якова Коха, который и дал ему первые уроки рисования. Юным дарованием заинтересовался также градоначальник Феодосии Александр Казначеев⁶: по его

⁴ В отмеченный период Буковина находилась в составе Австро-Венгерской империи. В настоящее время северная часть этого края принадлежит Украине, а южная – Румынии.

⁵ В метрической книге церкви была произведена следующая запись о рождении будущего мариниста: “Ованнес, сын Геворга Айвазяна” (См.: Айвазовский. Документы и материалы. Ереван, 1967, стр. 9).

⁶ Казначеев Александр Иванович (1788-1880) – градоначальник Феодосии (с 1827-го года), глава Таврической губернии (с 1829-го года), действительный тайный советник (с 1834-го года), таврический губернский предводитель дворянства (с 1845-го года), градоначальник Одессы (с 1848-го года), сенатор – член верховного органа государственной и законодательной власти Российской империи (с 1854-го года). Айвазовский написал ряд портретов Казначеева. После смерти последнего по проекту художника и на его

рекомендации 13-летний Иван в 1830-м году поступил в русскую гимназию Симферополя. Вскоре покровители решили отправить юношу в Петербург на обучение в Императорской Академии художеств. С этой целью А. Казначеев ознакомил президента Академии художеств Алексея Оленина с рисунками Айвазовского. Довелось увидеть их и министру двора, князю Петру Волконскому, а потом и самому императору Николаю I. В результате, по “высочайшему соизволению” последнего, 22-го июля 1833-го года 16-летний Иван был зачислен в Академию художеств, в мастерскую пейзажа известного русского живописца, профессора Максима Воробьева.

Некоторое время в качестве помощника Айвазовский проработал в мастерской приглашенного Николаем I из Франции мариниста Филиппа Таннера. Однако, не выдержав сварливого и заносчивого характера последнего, он возвратился к М. Воробьеву, а затем перешел в мастерскую батальной живописи, руководимую осевшим в Петербурге немецким живописцем, профессором Александром Зауервейдом. Созданные в этот период картины “Берег моря ночью” (1837), “Ялта” (1838), “Старая Феодосия” (1839), “Лунная ночь в Крыму. Гурзуф” (1839) свидетельствуют о том, что юный художник серьезно изучил произведения не только своих учителей Максима Воробьева и Александра Зауервейда, но и выдающегося русского пейзажиста, замечательного мастера-пленэриста Сильвестра Щедрина⁷.

В годы учебы в Академии художеств Айвазовский поддерживал переписку со своим “духовным отцом” Александром Казначеевым, по рекомендациям которого он часто бывал в домах петербургской знати, где встречались избранные представители российской интеллигенции того времени. На этих собраниях Айвазовский по просьбе присутствовавших играл на скрипке, и делал это в типично восточной манере – подпирая инструмент левым коленом, а случалось, и сопровождая музыку пением. Присутствовавший на одном из таких вечеров Михаил Глинка использовал мелодию лезгинки и двух татарских мотивов, исполненных Айвазовским, в своей знаменитой опере “Руслан и Людмила”⁸. Айвазовскому выпал также счастливый случай познакомиться с

личные средства был сооружен фонтан, увековечивший память бывшего городского головы Феодосии.

⁷ Сохранилось несколько копий, сделанных рукой Айвазовского с полотен Сильвестра Щедрина.

⁸ См.: Глинка М.И. Литературное наследие. Том 1, Москва, 1952, стр. 180.

великим русским поэтом Александром Сергеевичем Пушкиным и его супругой, красавицей Натальей Гончаровой. Знакомство состоялось в 1836-м году, на ежегодной выставке Академии художеств⁹. Последовавшая спустя год после этого трагическая смерть поэта глубоко опечалила художника; в творчестве позднего периода он не раз обращался к образу гения¹⁰.

Важную роль в творчестве Айвазовского сыграла его встреча с Карлом Брюлловым. Завершивший работу над знаменитым полотном “Последний день Помпеи” (1833), все еще молодой, но уже прославленный художник лишь недавно вернулся в Петербург из Италии, и многие студенты Императорской Академии художеств стремились оказаться в руководимой им объединенной мастерской по пейзажу, портрету и исторической живописи. Иван Айвазовский, в отличие от своих соотечественников Агафона Овнатаняна и Мовсеса Меликова (Меликянц), учеником Брюллова не был, однако общался с ним довольно часто и удостаивался его лестных оценок и доброго расположения¹¹. Брюллов первым заметил, что дальнейшее обучение Айвазовского в Академии художеств вряд ли даст ему что-либо новое. Он предложил совету Академии сократить срок обучения молодого художника на два года и отправить за счет Академии за рубеж, тем более, что на очередной академической выставке картина Айвазовского “Штиль на Финском заливе” (1837) удостоилась золотой медали первой степени¹², и это давало ему право совершенствоваться за границей. Однако ввиду юного возраста художника его отправили не в дли-

⁹ См.: **Барсамов Н.С.** Айвазовский. Москва, 1962, стр. 21.

¹⁰ Из произведений Айвазовского, посвященных памяти А.С. Пушкина и его образу, известны следующие картины маслом: “Пушкин среди скал. Закат” (1877), “Пушкин у горы Аю-Даг” (1880), “Прощание Пушкина с Черным морем” (1887; образ поэта в этой картине по просьбе Айвазовского написал Илья Репин, “Пушкин на берегу моря” (недатирована), “Прощание Пушкина с морем” (1897), “Пушкин и Мария Раевская на берегу моря” (недатирована, известна также авторская копия этой картины), “Пушкин на вершине Ай-Петри (Восход солнца)” (недатирована) и “Пушкин у Гурзуфских скал” (1899).

¹¹ Именно по совету Брюллова русский поэт и прозаик Нестор Кукольник поместил ряд хвалебных статей о молодом маринисте в издаваемой им в Петербурге в 1837-1838 и 1840-1841 годах “Художественной газете”.

¹² До этого, в 1835-м году, за эту “Вид на взморье в окрестностях Петербурга” 18-летний Айвазовский получил серебряную медаль, а спустя год – золотую медаль второй степени.

тельную зарубежную командировку, а в родной ему Крым.

Через год Айвазовский в качестве художника участвовал в одной из кавказских экспедиций Черноморского флота. На военном корабле он познакомился с будущими российскими адмиралами и вице-адмиралами Михаилом Лазаревым, Павлом Нахимовым, Владимиром Корниловым, Александром Панфиловым и Владимиром Истоминым, общение с которыми не прекращалось на протяжении многих лет.

По возвращении в Петербург Айвазовский получил звание художника 14-го класса (т.е. “классного художника”) и был, наконец, командирован в Европу в качестве пенсионера Академии художеств.

В июле 1840-го года он отправляется в Италию, где не только внимательно изучает и усердно копирует работы старых мастеров, но и продолжает интенсивно творить. Увидев вновь созданную им картину “Хаос (Сотворение мира)” (1841), где вдохновленный Книгой Бытия художник изобразил как “во тьме над бездною” и в божественном свете отделяются воды от тверди, Папа Римский Григорий XVI выразил желание приобрести это произведение. Айвазовский отказался от предложенной суммы и просто подарил картину духовному предводителю католической церкви¹³. В ответ на это Папа удостоил его золотой медали. Прослышав об этом, живший тогда в Италии Николай Гоголь якобы воскликнул: “Исполать тебе, Ваня! Пришел ты, маленький человек, с берегов Невы в Рим и сразу поднял «Хаос» в Ватикане!”¹⁴.

На острове Св. Лазаря близ Венеции Айвазовский встречает своего старшего брата Габриэла, члена Конгрегации армянских мхитаристов, который уехал из Феодосии еще в 1826 году и с которым Иван давно не виделся. Здесь им была написана картина “Отцы-мхитаристы на острове Св. Лазаря. Венеция” (1843).

В Италии Айвазовский сблизился с выдающимся русским живописцем Александром Ивановым, в то время еще работавшим над масштабным многофигурным произведением “Явление Христа народу” (1836-1857). Об открыв-

¹³ В дальнейшем Папа Римский Лев XIII передал работу художника монастырю Конгрегации мхитаристов Армянской католической церкви в Венеции, где она по сей день и хранится. В 1864-м году Айвазовский написал еще одну картину с таким же названием, которая в настоящее время находится в Государственном Русском музее Санкт-Петербурга.

¹⁴ См.: Кузьмин Н.Н. Воспоминания о профессоре И.К. Айвазовском, стр. 25.

шейся в 1841-м году в Риме выставке Айвазовского в местной прессе появились восторженные отзывы, а через год для посещения его выставки в Неаполе и Венеции люди выстаивали многочасовые очереди¹⁵. Молодого живописца тепло приветствует и посвящает ему написанное на итальянском языке стихотворение крупнейший мастер романтического пейзажа, английский художник Уильям Тернер, проживавший тогда в Риме¹⁶. Много заказов поступает Айвазовскому от посетителей его мастерской, где были созданы такие известные картины раннего периода, как “Неаполитанский залив” (1841), “Неаполитанский залив в лунную ночь. Везувий” (1841), “Вид на Венецианскую лагуну” (1841), “Неаполитанский маяк” (1842), “Венеция” (1842) и другие.

В Риме и Венеции были написаны первые прижизненные портреты самого мариниста. Один из них – портрет маслом сидящего на стуле, улыбающегося Айвазовского кисти Алексея Тыранова, талантливого ученика А.Г. Венецианова и К.П. Брюллова, хранится ныне в Государственной Третьяковской галерее в Москве; два других портрета (в костюме тореадора) – акварели сокурсника Айвазовского по Петербургской Академии художеств, безвременно скончавшегося одаренного живописца Василия Штернберга, а четвертый портрет (в одеянии восточного властителя, в полулежащей позе) – рисунок итальянским карандашом, выполненный выпускником той же Академии, долгие годы жившим в России итальянским художником Михаилом (Микеланджело) Скотти¹⁷.

Свое “победное шествие” по Европе Айвазовский продолжил во Франции, Англии и Нидерландах. Беспрецедентный успех ожидал выставку его работ в Лувре в 1843-м году¹⁸. Французская Академия изящных искусств наградила художника золотой медалью.

¹⁵ См.: Սարգսյան Մինաս, Հովհաննես Այվազովսկի, Երևան, 1967, էջ 8-9 [Саргсян Минас. Ованнес Айвазовский, Ереван, 1967, стр. 8-9].

¹⁶ Итальянский оригинал стихотворения Тернера и его вольный перевод на русский язык см.: Иван Константинович Айвазовский и его художественная XLII-летняя деятельность (1836-1878) // Русская старина. Ежемесячное историческое издание. Том XXII, Санкт-Петербург, 1878 (девятый год), стр. 431.

¹⁷ В дальнейшем к образу Ивана Айвазовского обращались русские художники XIX века Василий Тропинин, Степан Римаренко, Дмитрий Болотов, Иван Крамской, Константин Маковский, Илья Репин; скульпторы Николай Степанов, Александр Беляев, Матвей Чижов, Леопольд Бернштам и другие.

¹⁸ Присутствовавший на открытии выставки французский живописец и дипломат, один

Не ожидая окончания шестилетнего срока пребывания за границей, двумя годами раньше, в 1844-м году, Айвазовский возвращается в Петербург, где сразу же удостоивается звания действительного члена Императорской Академии художеств¹⁹. В том же году он назначается художником Главного Морского штаба России с правом ношения мундира Морского министерства. Отныне многие его полотна, в частности, виды русских военных портов на Балтийском море, украшают не только дома высокопоставленной знати, но и императорские дворцы и резиденции.

Весной 1845-го года Айвазовский в составе экспедиции под руководством выдающегося русского мореплавателя и географа, будущего адмирала и президента Российской Академии наук Федора Литке направляется к берегам Малой Азии и греческого архипелага. Тогда же художник впервые посещает Константинополь. Вернувшись в Крым, он покупает участок на феодосийском побережье и по собственному проекту строит удобное пристанище – просторный жилой дом с мастерской.

Через год Айвазовский уезжает в Петербург и несколько лет остается там, периодически участвуя в академических выставках²⁰. В 1848 году он женится на гувернантке Юлии Гревс – дочери служившего в России придворного врача-англичанина. По настоянию художника молодые венчаются в армянской церкви и спустя несколько лет, в 1852-м году, обосновываются в Феодосии, где, кроме активной творческой работы, Айвазовский вместе с женой проводит археологические раскопки на близлежащих к городу могильных холмах и курганах, открывает при доме-мастерской постоянно действующую картинную галерею, по собственным проектам, а нередко и на собственные средства строит здание феодосийского Музея древностей и другие архитектурные сооружения, содействует постройке и ремонту местного водо-

из видных представителей ориентализма Орас Верне обратился к Айвазовскому со словами: “Ваш талант прославляет Ваше отечество” (см.: **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 42).

¹⁹ В 1847-м году художнику было присвоено также звание профессора, а позднее, в 1877-м году, он был избран почетным членом Петербургской Академии художеств.

²⁰ В эти годы, как и в дальнейшем, художник, помимо Петербурга и Москвы, принимал участие также в выставках, которые открывались в Феодосии и других провинциальных городах и губернских центрах России – в Киеве, Харькове, Одессе, Симферополе, Херсоне, Николаеве, Риге.

провода, морского порта и железной дороги.

В 1857-м году художник отправляется в Париж, открывает там новую выставку и знакомится с известными лицами, в том числе – с живущим здесь итальянским композитором Джоакино Россини.

Несмотря на то, что Петербургская Академия художеств в 1853-м году отказала Айвазовскому в открытии художественной школы при собственной мастерской, позднее, в 1865-м году, ему удалось достичь желаемого. В этой школе под названием “Всеобщая мастерская” учились и приобретали творческий опыт не только родившиеся в Крыму начинающие и уже состоявшиеся художники (как, например, Адольф Фесслер, Эммануил Магдесян или Константин Богаевский), но и художники, приехавшие в Феодосию со всех концов России и из-за рубежа, в том числе – последователь Айвазовского, талантливый итальянский мастер Габриело Бартоломео Касесси.

В 1866-м году Юлия Гревс, обладающая своенравным характером и имеющая серьезные проблемы со здоровьем, отказалась жить в Феодосии и переехала в Одессу. Семейный покой Ивана Айвазовского, заботливого отца четырех дочерей – Елены, Марии, Александры и Жанны – был нарушен²¹.

В 1868-м году художник отправился на Кавказ. В Тифлисе состоялась его персональная выставка²²; две из показанных на ней работ художник принес в дар действующему в городе Кавказскому музею. На выставке были представлены также жанровая по характеру картина “Вид Тифлиса”²³ и два пейзажа с изображениями горы Арарат и озера Севан²⁴.

²¹ Созная, что мирную семейную атмосферу восстановить уже невозможно, Айвазовский шлет письма Католикосу всех армян Геворгу IV Константинопольскому (Керестеджян) с просьбой расторгнуть брак с Юлией Гревс. После долгих проволочек, 30-го мая 1877-го года по решению Эчмиадзинского Синода просьба художника была, наконец, удовлетворена.

²² Это была первая в истории Тифлиса художественная выставка. Подробности о ней см.: **Սարգսյան Մինաս**, *Մեծ ծովանվարչի կյանքը, Երևան*, 1990, էջ 219-227 [**Саргсян Минас**. Жизнь великого мариниста, Ереван, 1990, стр. 219-227].

²³ В 1869-м году Айвазовский написал еще одну картину под тем же названием, но изображающую город с другой точки зрения; сейчас она находится в Ставропольском краевом Музее изобразительных искусств.

²⁴ Айвазовскому не довелось побывать в Армении. Названные картины он создал по фотографиям. Лишено каких-либо оснований утверждение художника и искусствоведа Рафаэла Шишманяна о том, будто Айвазовский ”писал виды Арарата на армянской

В 1869-м году Айвазовский устраивает очередную выставку в Петербурге, а спустя год получает титул действительного статского советника, который соответствовал званию адмирала.

Успехом увенчалась выставка художника во Флоренции в 1874-м году: Айвазовский был избран почетным членом местной Академии изящных искусств, один из его автопортретов приобрела знаменитая галерея Питти²⁵, а второй – Римский Музей изобразительного искусства²⁶.

В том же году Абдул Азиз пригласил художника в Константинополь, где он создал для султана 25 полотен. Восхищенный ими монарх пожаловал ему орден “Османие” второй степени.

В 1878-м году, одна за другой, последовали выставки Айвазовского во Франкфурте-на-Майне, Штутгарте, Амстердаме, Флоренции, Генуе, а затем – в Париже и Мюнхене.

14-го июля 1880-го года городская Дума Феодосии, в знак особого уважения к личности Айвазовского и за его исключительные заслуги перед городом, единогласно присвоила ему титул почетного гражданина Феодосии. Его именем были названы один из окрестных холмов и одна из улиц города; под аллею имени художника выделили свободный от застроек участок на морском побережье²⁷.

Спустя два года 65-летний художник женился на 25-летней вдове феодосийского купца-армянина Анне Бурназян, чей портрет он увековечил в своих картинах²⁸.

земле” (См.: Շիշմանյան Ռաֆայել, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 50 [Шишманян Рафаэл. Пейзаж и армянские художники, Ереван, 1958, стр. 50]). К образу горы Арарат Айвазовский обращался и в картинах “Араратская долина” (1882, подписана армянскими буквами), “Гора Арарат” (1885), “Арарат в полдень” (1887), “Сошествие Ноя с Арарата” (1889).

²⁵ В настоящее время этот автопортрет мариниста принадлежит не менее знаменитой флорентийской галерее Уффици.

²⁶ См.: Кузьмин Н.Н. Воспоминания о профессоре И.К. Айвазовском, стр. 54.

²⁷ См.: Айвазовский. Документы и материалы, стр. 180-181.

²⁸ В носящей имя Ивана Айвазовского Феодосийской картинной галерее находятся два из портретов Анны Бурназян кисти художника; овальное изображение было создано в 1881-м году, за год до их брака, а второй, наиболее известный (с прозрачной вуалью, прикрывающей волосы и нижнюю часть лица модели) – годом позже, когда они уже были супругами и путешествовали по Греции. Эти работы по праву считаются одними из

Летом 1887-го года художник открыл в Стокгольме персональную выставку, которая нашла широкий отклик в шведской прессе²⁹. В том же году, 26-го сентября, в зале заседаний Петербургской Академии художеств состоялись торжества по случаю 70-летия со дня рождения и 50-летия творческой деятельности Ивана Айвазовского. Все высшее общество Петербурга съехало туда, чтобы воздать дань уважения великому маринисту. Ход юбилейного чествования подробно осветил журнал “Аракс”, издаваемый в Петербурге Симеоном Гюламирным³⁰. Перечисляя делегатов от армянских прихожан Петербурга, которые зачитывали приветственные адреса и вручали юбиляру подарки (“изысканный муштабель – палочку для живописца... и красивую серебряную палитру с изображением горы Арарат и Армянской церкви Петербурга”), анонимный корреспондент упоминает и имя художника-архитектора Христофора (Хачатура) Гусикянца – выпускника Петербургской Академии художеств, одного из друзей Ильи Репина³¹. Вскоре Гусикянец создает литографический портрет Ивана Айвазовского по известной фотографии мариниста 1888-го года³². Литографию Гусикянца перепечатывает издаваемый в Тифлисе иллюстрированный еженедельник “Ардзаганк [Эхо]”³³.

В 1890-м году, по пути домой из Парижа, Айвазовский останавливается в Константинополе, где Абдул Гамид награждает его орденом “Меджидие”

наиболее удачных произведений Айвазовского в жанре портрета.

²⁹ Подробности об этой выставке и обстоятельствах пребывания художника в Стокгольме см.: **Գրիգորյան Վարդան**, Հովհաննես Այվազովսկիի Ստոկհոլմում (Ըստ Նորայր Բյուզանդյանի նամակների) // Սովետական արվեստ, Երևան, 1964, № 12, էջ 46-50 [**Григорян Вардан**. Ованнес Айвазовский в Стокгольме (Согласно письмам Норайра Бюзандаци) // Советское искусство, Ереван, 1964, № 12, стр. 46-50].

³⁰ См.: **Ս.Յ.**, Համբավվոր հայազգի նկարիչ Հովհաննես Այվազովսկի // “Արաքս”, Սանկտ Պետերբուրգ, 1888, գիրք Բ, մայիս, էջ 98-105 [Прославленный армянский художник Ованнес Айвазовский // “Аракс”, Санкт-Петербург, 1888, книга вторая, май, стр. 98-105].

³¹ Там же, стр. 104.

³² См.: **Աղաչյան Մարիամ**, Մոռացված անուն. նկարիչ և ճարտարապետ Քրիստափոր (Իսաչատուր) Հովսեփյանց (1840-1910) // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2014, № 1, էջ 286 [**Агасян Арагат**. Забытое имя: художник и архитектор Христофор (Хачатур) Гусикянец (1840-1910) // Вестник общественных наук, Ереван, 2014, № 1, стр. 286].

³³ См.: “Արձազանք”, Թիֆլիս, 10 մարտի 1891, № 1, էջ 9 (“Ардзаганк”, Тифлис, 10 марта 1891, № 1, стр. 9).

первой степени³⁴.

Осенью 1892-го года художник отправляется в США, выставляя свои полотна в галереях Нью-Йорка, Вашингтона, Сан-Франциско, а также в одном из павильонов Международной выставки 1893-го года в Чикаго³⁵. Наиболее известное произведение, созданное им в Америке – “Ниагарский водопад” (1893). За два года до смерти мастера был создан его последний шедевр (“Среди волн”, 1898).

Творческое наследие Айвазовского необычайно велико – почти 6000 картин³⁶, подавляющее большинство которых представляют собой виды моря при штиле и шторме, в утреннем тумане и в вечерних сумерках, солнечным днем или лунной ночью. Море он писал во все времена года, в различных состояниях. Однако с особым вдохновением живописец изображал образ бушующего, матежного моря и отчаянную борьбу со слепой стихией поглощаемых волнами, обессиленных, но не сломленных, не потерявших спасительную надежду людей (“Девятый вал”, 1850, “Кораблекрушение у Афонской горы”, 1856, “Буря в океане”, 1864, “Корабль на мели”, 1872, “Кораблекрушение”, 1876, “Лунная ночь. Гибель горящего корабля”, 1883, “Волна” 1889, “Корабль <<Императрица Мария>> во время шторма”, 1892 и другие).

Айвазовский был многоопытным, искусным художником и с легкостью преодолевал возникающие в процессе работы технические трудности. Обычно он работал в мастерской, полностью полагаясь на свою острую зрительную память и яркое художественное воображение. Работал без исправлений и даже самые крупные по размеру полотна завершал в течение нескольких часов, сохраняя свежесть полученного на природе первого впечатления. При том, что в основе метода Айвазовского лежали традиционные принципы классицизма и

³⁴ Бытует мнение о том, что во время массовых армянских погромов в Османской империи в 1894-1896 гг. Айвазовский будто бы выбросил в море полученные им от турецких султанов ордена и медали.

³⁵ По просьбе организаторов выставки художник отправил в Чикаго около двух десятков картин, но лично на этом авторитетном смотре изобразительного искусства не присутствовал.

³⁶ Помимо этого, Айвазовский создал огромное количество рисунков на обычной и мелованной, белой и тонированной бумаге, которые выполнены в самых различных графических техниках – акварель, сепия, тушь, чернила, черный и цветные карандаши, уголь, пастель.... Многие из этих работ имеют не вспомогательную, второстепенную, а вполне самостоятельную художественную ценность.

академизма, его лучшие работы по сути своей – проявления романтического мышления, полные живых человеческих чувств и переживаний.

Айвазовский обладал тонким цветовым чутьем. Его наиболее удавшиеся полотна, наряду с ясностью композиционных решений, отличаются исключительным богатством и разнообразием многослойных, но тонких и полупрозрачных лессировочных красок, плавными переходами тонов, абсолютным колористическим единством свето-воздушной среды и пространственных планов.

Несмотря на то, что в искусстве Айвазовского, на первый взгляд, не наблюдалось явных и резких сдвигов, тем не менее, оно поэтапно прошло через все необходимые стадии формирования, зрелости и расцвета, претерпев при этом определенные идейно-образные и стилевые изменения, пережив периоды творческих взлетов и падений.

В отдельных полотнах, созданных в 1840-1850-х годах, заметно влияние романтического искусства Карла Брюллова. Один из биографов Айвазовского, искусствовед Николай Барсамов в своей монографии о маринисте не исключает, что импровизационный, без предварительного эскиза, свободный и быстрый стиль работы был подсказан ему именно К. Брюлловым³⁷.

Айвазовский – последний видный представитель романтизма в русской живописи. Романтическим пафосом, героическим духом овеяны созданные им в эти годы, прославляющие победы российского флота сцены морских баталий (“Морское сражение при Наварине”, 1846, “Чесменский бой ночью”, 1848, “Синопский бой. Ночь после боя”, 1853, “Морской бой”, 1855, “Осада Севастополя”, 1859 и другие), которые имеют не только художественную, но и историческую, документальную ценность.

Характерные черты романтизма еще более выпукло проявились в одной из наиболее известных работ Айвазовского этого времени – крупномасштабном полотне “Девятый вал” (1850). Перед нами картина долгожданного расцвета, наступившего после тревожной, мучительной ночи. Лучи восходящего солнца освещают все еще свирепое море, набегающая грозная волна готова поглотить повисших на остатках разбитой мачты истомленных людей – жертв страшного кораблекрушения. При всем драматизме сюжета, картина пронизана светом и воздухом, а теплые лучи солнца вселяют надежду на счастливый

³⁷ См.: **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 113.

исход событий.

Творчество Айвазовского достигло своего расцвета в 1860-1870-е годы – в период, когда было создано множество работ, отмеченных глубоким поэтическим вдохновением: “Вид моря с гор. Крым” (1864), “Буря на Северном море” (1865), “Морской пейзаж с парусником” (1870), “Буря у мыса Айя” (1875) и другие. Вот что писал об одной из этих картин художника великий русский романист Федор Достоевский: “<<Буря над Евпаторией>> г. Айвазовского так же изумительно хороша, как и все его бури, здесь он мастер без соперников... В его буре есть упоение, есть та вечная красота, которая поражает зрителя в живой, настоящей буре. И это свойство таланта г. Айвазовского нельзя назвать односторонностью уже потому, что буря сама по себе бесконечно разнообразна”³⁸.

В 1873-м году была написана одна из лучших работ мариниста – картина “Радуга”, в которой показано как в бурном море у скалистого берега гибнет одинокий корабль. Айвазовский выбрал низкую точку зрения, что создает у зрителя впечатление, будто он сам присутствует при трагедии, погружаясь в неистовые волны, с пенящихся гребней которых ветер срывает водяную пыль. Вдали, сквозь вихрь едва различаются силуэты тонущего корабля. Прорезавший облака радужный луч солнца сообщает всему изображению невысказанную красоту. Картина решена в оттенках голубого, желтого, розового и зеленого цветов, оттенки которых умножаются в мягких, воздушных переливах радуги.

Немалое место в полотнах Айвазовского уделяется небу. Потоки воздуха, движение ветра, бег облаков во время бури, их изменчивые, как бы извивающиеся контуры – все это сгущает эмоциональную атмосферу морских пейзажей.

Неповторимы ночные марины художника (“Неаполитанский залив в лунную ночь”, 1842, “Ночь в Венеции”, 1847, “Буря на море ночью”, 1849, “Вид на Везувий в лунную ночь”, 1858, “Ночь. Константинополь”, 1862, “Вид Одессы ночью”, 1865, “Лунная ночь на Черном море”, 1873, “Феодосия ночью. Прибрежный вид”, 1881, “Море при свете луны” 1892 и другие), которые обладают особой притягательной силой. Волшебные, полные романтической тайны эффекты ночного освещения, отблески обрамленной кружевными облаками луны на неподвижном зеркале вод или в плещущихся волнах худож-

³⁸ Там же, стр. 95.

ник воспроизводил почти с иллюзорной точностью.

С годами в искусстве Айвазовского появляются черты, роднящие его с реализмом; полотна художника постепенно приобретают более строгие и мужественные монументальные формы, более глубоким и емким становится их идейное содержание. В первую очередь это относится к работам мастера 1870-1880-х годов, в которых заметно определенное влияние русских передвижников.

В этом смысле особенно показательное написано художником в 1881 году “Черное море”, где линия горизонта делит композицию на две равновеликие части, отделяя небо от моря. Стоит непогожий – облачный и ветреный день. Кажется, будто до нашего слуха доносятся глухие стоны и тяжелые вздохи моря. Подступающие в мерном ритме из глубины картины мутные волны сообщают пейзажу монументальную силу. В пейзаже господствуют сдержанные оттенки серого, синего и зеленоватого цветов. Айвазовский отказался здесь от броских эффектов, ограничившись скупыми художественными средствами, обобщающими угрюмый образ бушующего моря. Не удивительно, что один из лидеров русских художников-передвижников, ярый приверженец реалистического искусства Иван Крамской, который прежде не раз критиковал творчество мариниста, вынужден был признать, что “<<Черное море>> – одна из самых грандиозных картин, какие я только знаю”³⁹.

К искусству Айвазовского обращался также музыкальный и художественный критик, идейный вдохновитель содружества русских композиторов “Могучая кучка” и Товарищества передвижников Владимир Стасов. О творчестве мариниста он тоже в прошлом высказывался неодобрительно, резко отвергая взятый художником на вооружение принцип импровизационной, чрезвычайно быстрой работы над холстом, называя такой метод “порочным и непозволительным”. В одной из своих статей он писал: “Всего более огорчил между пейзажистами г. Айвазовский... тем, что создал целую группу учащейся молодежи, написал перед ними картину в 2 часа и потом выставил ее на выставке. Вот это так уже никуда не годится! Кто пишет двухчасовые картины, тот про себя держи этот несчастный секрет, не выводи его наружу, а особенно не разблачай его перед учащейся молодежью, не учи ее легкомыслию и ма-

³⁹ См.: Иван Николаевич Крамской. Его жизнь, переписка и художественно-критические статьи (1837-1887), Санкт-Петербург, 1888, стр. 515.

шинным привычкам...”⁴⁰ Однако и Стасов со временем пересмотрел свое мнение об Айвазовском, признав его исключительным мастером в области морского пейзажа⁴¹.

В поздний период творчества Айвазовский создал несколько еще более обобщенных, синтетических образов моря. Таковы масштабные, наделенные широким монументальным размахом и необычайной художественной силой картины “Обвал скалы” (1883), “Волна” (1889) и “Буря на Азовском море” (1895). Но вершиной искусства художника этих лет является столь же грандиозное по размерам, при этом выполненное всего лишь за десять дней живописное полотно “Среди волн” (1898). По своей композиции оно напоминает уже знакомое нам “Черное море” (1881), однако если в последней работе линия горизонта проходит ровно посередине холста, то в картине “Среди волн” написанное холодными лазурными, голубыми, фиолетовыми и зеленоватыми цветами море кажется гораздо более просторным, тогда как затянутое облаками, хмурое небо занимает относительно скромное место. Грозную, но величественную панораму природы освещает падающий слева слабый луч солнца. Заметим, что первоначально Айвазовский изобразил в центре композиции небольшую шлюпку, набитую людьми, но вскоре отказался от этого, сознавая, что таким образом он сужает границы пантеистического по своей сути идейного замысла картины⁴².

Убеленный сединами художник еще продолжал работать, создавая новые произведения (“Восход луны”, 1899, “Ялта”, 1899, “Бухта”, 1900 и другие), но ни одно из них уже не могло сравниться с последним шедевром мастера.

Живя в России, получив образование у знаменитых русских художников, общаясь с выдающимися представителями русской культуры, Айвазовский и сам стал одним из крупнейших представителей русского изобразительного искусства, оказав заметное влияние как на некоторых из своих сверстников, так и на молодых живописцев – Алексея Боголюбова, Льва Лагорио, Архипа Куинджи, Руфина Судковского, Михаила Алисова, Михаила Латри, Алексея

⁴⁰ См.: **Стасов В.В.** Избранные сочинения. В двух томах. Т. 1, Москва-Ленинград, 1937, стр. 227.

⁴¹ См.: **Стасов В.В.** Избранные сочинения. В трех томах. Т. 3, Москва, 1952, стр. 669.

⁴² См.: **Барсамов Н.С.** Айвазовский, стр. 139.

Ганзена и других⁴³.

Тесными были связи Ивана Айвазовского и с родным народом, с армянской общественной и культурной жизнью⁴⁴. Он не раз бывал в Константинополе и Смирне [Измир], где ему был оказан теплый прием со стороны местных армян⁴⁵, а в 1868-м году, как уже было сказано, художник побывал в Тифлисе.

Патриотические чувства Айвазовского находили множество разнообразных проявлений. Конгрегации армянских мхитаристов в Венеции он подарил картину “Неаполитанский маяк” (1842), для главного алтаря вновь построенной армянской церкви в Бурсе (Турция) выполнил икону Св. Геворга, способствовал публикации рукописей средневековых армянских историков, а к концу жизни создал целый ряд полотен на армянскую тему: “Крещение армянского народа (Григорий Просветитель)” (1892), “Клятва перед Аварайрской битвой (Полководец Вардан Мамиконян)” (1892), “Посещение Байроном мхитаристов на острове Св. Лазаря” (1899) и другие. Помимо автопортретов и портретов родных ему людей, Айвазовский обращался также к образам известных армян, видных государственных, общественных и религиозных деятелей армянского происхождения, писал портреты членов их семей и их потомков. Таковы портреты Ованнеса Лазаряна – ушедшего из жизни ребенком младшего сына попечителя Московского Лазаревского института, статского советника Хачатура Лазаряна; Арутюна Халибяна – городского головы Новой Нахичевани; министра внутренних дел Российской империи Микаэла Лорис-Меликова; Католикоса всех армян Мкртича Хримяна; настоятеля армянского монастыря Сурб Хач [Святого Креста] в Крыму, епископа Хорена Степанэ.

Айвазовский в значительной мере способствовал становлению нацио-

⁴³ Михаил Латри (1875-1942) и Алексей Ганзен (1876-1937) – внуки Ивана Айвазовского, сыновья его старших дочерей Елены и Марии.

⁴⁴ Эти связи обстоятельно рассмотрены и освещены в статьях искусствоведа Минаса Саргсяна (см.: **Սարգսյան Մ.Ս.**, Հովհաննես Այվազովսկին և իւր մշակութիւնը // Պատմա-րանասիրական հանդես, Երևան, 1963, № 4, էջ 25-38 [**Саргсян М.С.** Ованнес Айвазовский и армянская культура // Историко-филологический журнал, Ереван, 1963, № 4, стр. 25-38]) и историка Вардгеса Микаеляна (см.: **Микаелян В.А.** И.К. Айвазовский и его соотечественники // Вестник общественных наук, Ереван, 1991, № 1, стр. 59-70).

⁴⁵ См., например: **Թոփչյան Ստեփան**, Նվարչի և բանաստեղծի Սև ծովը // Սովետական արվեստ, Երևան, 1982, № 9, էջ 53-58 [**Топчян Степан**. Черное море художника и поэта // Советское искусство, Ереван, 1982, № 9, стр. 53-58].

нального изобразительного искусства нового времени. Ощутимо его влияние на развитие армянской маринистики и пейзажного жанра в целом. С ним общались, у него учились, внимали его слову и следовали советам армянские маринисты Мкртич Дживанян, Эммануил Магдесян, Арсен Шабанян, Вардан Махоян, Торк Закарян, основатели армянского пейзажа и исторической живописи Геворг Башинджагян и Вардгес Суренянц, увлекавшиеся живописью актер Петрос Адамян, поэт Тиран Чракян (Интра) и другие⁴⁶. С Айвазовским были лично знакомы, посвящали ему восторженные строки и отправляли уважительные послания известные армянские писатели и поэты Ерванд Шахазиз, Ованнес Туманян, Акоп Паронян, Газарос Агаян, Александр Цатурян, Александр Ширванзаде, Арпиар Арпиарян, Ваан Малезян, архитектор Саргис Палян, композитор Александр Спендиарян, скрипач Ованнес Налбандян⁴⁷, филологи и языковеды Карапет Езян, Норайр Бюзандаци, Аковбос Ташян, историк Лео, Католикосы всех армян Нерсес Аштаракеци, Геворг IV Константинопольский, Мкртич I Ванский (Мкртич Хримян, Хримян Айрик), армянские патриархи Константинополя Матеос Чухаджян и Магакия Орманян, епископ Хорен Степанэ, министр Османской империи, государственный деятель и дипломат Арутюн Татян и другие. Свои письма к некоторым из них прославленный маринист писал на армянском языке и подписывался по-армянски: *Հովհաննես Այվազյան (Ованнес Айвазян)*.

Айвазовский всегда проявлял заботу о нуждах армянского населения Крыма. Он выделял крупные суммы приходской школе, в которой учился в детстве, организовывал благотворительные выставки в пользу неимущих армян, а за год до смерти часть своего состояния завещал церкви Сурб Саргис в Феодосии⁴⁸.

⁴⁶ Многочисленные уже известные и вновь обнаруженные факты и свидетельства о встречах Ивана Айвазовского с армянскими маринистами и его влиянии на их творчество приводятся в недавно изданной монографии искусствоведа Ара Акопяна (См.: **Հավորյան Արա**, *Հայագրի ծովանվարիչները, Երևան, 2017* [Акопян Ара. Армянские маринисты, Ереван, 2017]).

⁴⁷ См., например: **Աղասյան Արարատ, Ասատրյան Աննա**, *Հայ-ռուսական գեղարվեստական անչլոթյունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան, 2015*, էջ 102, 114, 140-141 [Агасян Арарат, Асатрян Анна. Из истории армяно-русских художественных связей: Санкт-Петербург, Ереван, 2015, стр. 102, 114, 140-141].

⁴⁸ См.: **Микаелян В.А.** И.К. Айвазовский и его соотечественники, с. 61.

Иван Айвазовский одним из первых среди армянских деятелей искусства откликнулся на имевшие место в Западной Армении, Константинополе и других густонаселенных армянами городах Османской империи кровавые события – резню мирных жителей, которая сопровождалась разрушениями и поджогами, осквернением армянских духовных центров и очагов культуры⁴⁹. Все это больно ранило сердце старого художника, который оказывал посильную моральную и материальную помощь пострадавшим семьям, занимался вопросами их обустройства в Крыму.

В посвященной Айвазовскому литературе часто приводится адресованное художнику письмо Мкртича Хримяна, написанное им в августе 1896 года. В нем Католикос всех армян, сообщая об армянских погромах, побуждает его написать картину, отображающую и осуждающую эти акты массового насилия над безоружными соотечественниками⁵⁰. В ответном письме от 8-го сентября того же года Айвазовский писал: “...Святейший Патриарх, глубокой болью омрачено сердце мое невиданной и неслыханной резней, учиненной над армянами. Вы, Ваше Святейшество, там, мы – здесь, и каждый на своем месте горько оплакиваем погубленные души несчастных сородичей наших и вызываем к божьей милости...”⁵¹. На предложение католикоса Айвазовский ответил: “Божий помазанник! Вы сделали мне весьма чувствительное и прекрасное предложение – изобразить красными красками картину армянской резни на фоне залитых кровью гор и дол и над развалинами – убитого горем Владыку армян. Будь угодно Всевышнему даровать мне жизнь и подольше, настанет день, когда я исполню сие трогательное предложение”⁵².

Айвазовскому не довелось исполнить заказ Хримяна. Во всяком случае, картина с подобным содержанием за подписью мариниста нам не известна. Как бы то ни было, но на закате жизни он создал несколько картин маслом и

⁴⁹ См.: **Աղաւազան Արարատ**, Համիդյան ջարդերի և Մեծ եղեռնի արտացոլումը հայ Կերպարվեստում (1894-1923 թթ.) // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2015, № 2, էջ 13-29 [**Агасян Арагат**. Отражение гамидовских погромов и Геноцида в армянском изобразительном искусстве (1894-1923 гг.) // Историко-филологический журнал, Ереван, 2015, № 2, стр. 13-29].

⁵⁰ См., например: **Սարգսյան Մինաս**, Մեծ ծովանկարչի կյանքը, էջ 386 [**Саргсян Минас**. Жизнь великого мариниста, стр. 386].

⁵¹ См.: Айвазовский. Документы и материалы, стр. 278.

⁵² Там же.

рисунков пером на тему гамидовских погромов; часть их сохранилась, а другие известны по фотографиям. Свои душевные переживания художник выразил в масштабном полотне “Избиение армян в Трапезунде в 1895 году” (1896), а также в ряде картин 1897-го года: “Армян погружают на корабли”, “Ночь. Трагедия в Мраморном море”, “Тихая ночь. Армян сбрасывают в море с турецких кораблей”. Графические эскизы к ним были опубликованы на страницах сборника “Братская помощь пострадавшим в Турции армянам”, вышедшего в свет по инициативе литературного и общественного деятеля Григора Джаншяна в Москве⁵³. В оформлении сборника принимали участие художники Вардгес Суренянц, Григор Габриэлян и Поль Асатур (Погос Тер-Асатрянц). Из помещенного здесь краткого биографического очерка об Айвазовском мы узнаем, что рисунки эти он выполнил по просьбе редакции и отправил в Москву из Ниццы⁵⁴.

Ночью 19-го апреля 1900 года художник скоропостижно скончался. Незаконченной на мольберте осталась его последняя картина – “Взрыв турецкого корабля”.

Иван Константинович Айвазовский погребен в Феодосии, во дворе армянской церкви Сурб Саргис⁵⁵. На беломраморном надгробном камне, установленном над его могилой, на древнеармянском языке высечена эпитафия – строка, заимствованная из третьей книги знаменитой “Истории Армении” Мовсеса Хоренаци: “...родившись смертным, оставил по себе бессмертную память...”.

⁵³ См.: Братская помощь пострадавшим в Турции армянам (Литературно-научный сборник). Москва, 1897, стр. 74-75, 80-81 (второй отдел).

⁵⁴ Там же, стр. 500 (первый отдел).

⁵⁵ По распоряжению вдовы художника, усыпальница Ивана Айвазовского была разделена на две половины; во второй погребен прах ушедшей из жизни в 1944-м году Анны Бурназян.

ԾՈՎԱՆԿԱՐԻ ԲԱՑԱՌԻԿ ՎԱՐՊԵՏԸ
(Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին)⁵⁶

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Հովհաննես Այվազովսկին (1817-1900) հայազգի առաջին արվեստագետն էր, ով իր կյանքի օրոք միջազգային լայն ճանաչում գտավ, և ում լավագույն ստեղծագործությունները, հատկապես նրա ծովանկարները և ծովային մարտանկարները, դասվեցին համաշխարհային կերպարվեստի առավել նշանակալից երևույթների շարքում: Որպես նկարիչ նա ձևավորվեց ուշ ռոմանտիզմի դարաշրջանում և մինչև վերջ հավատարիմ մնաց այդ ուղղությանը:

Այվազովսկու աշխատանքներից շատերն ուշադրություն են գրավում տեխնիկական անթերի վարպետությամբ, բանաստեղծական տրամադրությամբ, ռոմանտիկական ոգով ու շնչով, դրամատիկական խոր ապրումներով, դրանցում արտահայտված հումանիստական վեհ գաղափարներով:

Նկարիչը գունային նուրբ ընկալումների տեր արվեստագետ էր: Նրա կտավները տարածական պարզ կառուցվածքի հետ մեկտեղ աչքի են ընկնում լուսաօդային, լուսաստվերային և լուսագունային սերտ միասնությամբ, բազմերանգությամբ, տոնային աստիճանավոր մեղմ անցումներով:

Թեև առաջին հայացքից Այվազովսկու արվեստն արմատական կտրուկ տեղաշարժերի չի ենթարկվել, սակայն անցել է ձևավորման, հասունացման ու ծաղկման հերթափուլերով, կրել ժանրաթեմատիկ, գաղափարական ու կերպարային որոշակի փոփոխություններ, ապրել վերելքի և անկման պահեր:

Ապրելով Ռուսաստանում, սովորելով ռուս նկարիչների մոտ, շփվելով ռուսական մշակույթի ականավոր ներկայացուցիչների հետ՝ Այվազովսկին ինքն էլ ժամանակի ընթացքում դարձավ ռուսական արվեստի խոշորագույն դեմքերից մեկը: Բայց նա երբեք չի խզել կապը հարազատ ժողովրդի, հայ հասարակական և մշակութային իրականության հետ: Նրա հայրենասիրական ջերմ զգացումները բազմազան դրսևորումներ են ստացել և արտացոլվել Այվազովսկու՝ հայկական թեմաներով ստեղծած յուրաներկ կտավներում ու գրաֆիկական աշխատանքներում:

Բանալի բաներ - Այվազովսկի, գեղանկարչություն, ծովանկարչություն, ռուսական կերպարվեստ, հայկական կերպարվեստ:

⁵⁶ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող «Հայ երաժիշտների, նկարիչների և ճարտարապետների գործունեությունը Ղրիմում» գիտական ծրագրի շրջանակներում:

THE EXCEPTIONAL MASTER OF SEASCAPES
(On the 200th Anniversary of I.K. Aivazovsky's birthday)⁵⁷

ARARAT AGHASYAN

Ivan (Hovhannes) Aivazovsky (1817-1900) was the first Armenian artist to achieve broad international recognition during his lifetime. His best works – his exceptional marine and sea battle paintings in particular – are considered to be of the same prominence as the most outstanding paintings of the world.

He established himself as a painter in the period of late Romanticism and remained to the end faithful to this movement.

Many of Aivazovsky's paintings capture with their flawless technique skills, poetic moods, romantic spirit and vitality, dramatic deep emotions as well as with their profound sublime humanistic ideas.

Aivazovsky was an artist of a subtle sense of color. His canvases even though of simple spatial form are remarkable in being multi-graded, in their gradual muted transition of color and in interweaving the glowing radiating light and the shimmering shades of luminosity.

The first impression of Aivazovsky's art is that it has not undured radical intense changes but in fact it has experienced structural, maturing and flourishing phases, undergone certain thematic and genre evolution and had periods of ups and downs.

He was born in Feodosia, lived his whole life in Russia. He was taught by Russian masters and communicated closely with many renowned Russian artists and eventually became one of the greatest representatives of Russian visual arts. However, he never broke his ties with his own people and never stopped being part of Armenia's public and cultural life. His warmest patriotic feelings found a great variety of sincere expressions in the artist's numerous paintings and drawings on Armenian themes.

Key words – Aivazovsky, painting, seascape, Russian art, Armenian art.

⁵⁷ The research is supported by the RA MES State Committee of Science and the Russian and New Nakhichevan Diocese of the Armenian Apostolic Church, within the frames of the research project "The activity the Armenian musicians, painters and architects in Crimea".

**ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ¹**

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոդվածում ներկայացվում են Երևանի գլխավոր փողոցների և դրանց հարակից կառույցների արտաքին տեսքերի ներկա վիճակն ու բարելավման հնարավորություններն ըստ ճարտարապետական կոմպոզիցիայի հիմնական մեթոդների: Թեմայի ուսումնասիրությունների շրջանակներում կատարվում և կատարվելու են բազմաթիվ տեղային դիտարկումներ Երևանի, ինչպես նաև եվրոպական այլ քաղաքների փողոցների նախագծերում, իսկ այս հոդվածի հիմնական մեթոդների ներկայացման համար հիմք է հանդիսացել 1968 թվականին Մոսկվայում լույս տեսած Վ. Ֆ. Կրինսկու, Ի. Վ. Լամցովի և Մ. Ա. Տուրկուաի «Элементы архитектурно-пространственной композиции» ճարտարապետական բուհերի համար նախատեսված դասագիրքը:

Բանալի բառեր – Երևան, փողոց, ճարտարապետություն, դիզայն, կոմպոզիցիա, նախագծում:

Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տասնամյակում, երբ որոշակիորեն զարգացավ փոքր և միջին բիզնեսը, բացվեցին բազմաթիվ ՄՊԸ-ներ և ԱՁ-ներ, որոնք իրենց գործունեությունն իրականացնում էին խանութներում, կրպակներում, առևտրային շինություններում, փոքր շուկաներում ու տոնավաճառներում: Դրանք իրենց գործունեությունը սկսեցին իրականացնել ըստ պահի հարմարության՝ սոցիալ-տնտեսական վատթար վիճակին զուգահեռ: Մարդիկ հիմնում էին իրենց առևտրային շինություններն ինչպես կամենում էին, և ինչպես ներում էին ֆինանսական միջոցները: Շենքերի մուտքերը, առաջին հարկի բնակարաններն ու նկուղային հարկերը ձևափոխվում էին խանութների կամ առևտրային այլ տարածքների, գլխավոր փողոցների հարակից բնակելի շենքերին կից կառուցվում էին առևտրային տարածքներ, շենքերի առաջին հարկի պատուհանները վերածվում էին դռների, իսկ վերջին հարկերը՝ դառնում նախավերջին: Մի խոսքով՝ խելաթյուրվում

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-2A010 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

էին Հայաստանի մի շարք քաղաքների ճարտարապետական տեսքն ու հորինվածքը:

Թեև Հայաստանը դասվում է զարգացող երկրների շարքում, և արդեն նկատելի են որոշակի դրական փոփոխություններ, այնուամենայնիվ երկրի սոցիալ-հասարակական, տնտեսական և հատկապես մշակութային ոլորտներում կան զգալի չլուծված խնդիրներ: Այդ խնդիրների անհապաղ ուսումնասիրությունն ու լուծման ճիշտ տարբերակների մշակումն ու իրագործումը կխթանեն մշակութային հաստատությունների ճարտարապետական դեկորատիվ ու դիզայներական գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրացման գործընթացը, կաշխուժացնեն երկրի մշակութային մի շարք ոլորտների միապաղաղ ու ձանձրալի առօրյան, ինչպես նաև կբարձրացնեն հանրության գեղագիտական ճաշակն ու առավել ներգրավվածությունը տվյալ ոլորտների հետ առնչվող գործընթացներում:

Փողոցների և դրանց հարակից ճարտարապետական կառույցների այստեսակ հակազեղագիտական, ինչպես նաև դրանց արտաքին ձևավորումների ոչ պրոֆեսիոնալ մոտեցումն առկա է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև ԽՍՀՄ նախկին ու հարևան պետությունների քաղաքներում նույնպես:

Ճարտարապետական և մշակութային արժեք համարվող գլխավոր փողոցներն ու պողոտաները ոչ միայն ճշգրիտ չեն օգտագործվում, այլև տարեցտարի անխնա վերածնափոխվում են. հաջորդաբար, դրանց հարակից շենքերին կից կառուցվում են ժամանակակից, հաճախ կոմպոզիցիոն և դիզայներական առումներով ոչ լիարժեք կառույցներ, որոնք ոչ միայն վերացնում են խնդրո առարկա քաղաքների պատմամշակութային ժառանգությունը, այլև դիտողին թողնում են միմիայն հակազեղագիտական տպավորություն:

Ճարտարապետական այսպիսի ահռելի խեղաթյուրումների հետ մեկտեղ վատթարանում ու խաթարվում են նաև քաղաքների արտաքին տեսքը, փողոցների ձևավորումներն ու դեկորատիվ տարրերը:

Խնդրի հիմնական պատճառներից են թեմային առնչվող քիչ կամ թերի ուսումնասիրությունները, մասնագետների ու գրականության պակասը:

Ժամանակակից աշխարհը, որտեղ օրեցօր զարգանում են ճարտարապետության և դիզայնի նորանոր ճյուղեր, որտեղ ուշադրություն է դարձվում ոչ միայն փողոցների ու դրանց հարակից կառույցների ճարտարապետական ու դիզայներական նորամուծություններին, այլև այս արժեքավոր կառույցների արտաքին տեսքին, և խնամքին: Ուշադրություն է դարձվում մշակութային

առանձնահատկություններին՝ ստեղծելով էսթետիկ մինիմալիստական միջավայր:

Հետազոտության շրջանակներում կատարվելու են մասնագիտական ուսումնասիրություններ՝ պարզելու Երևանի ու մի շարք եվրոպական քաղաքների հայտնի փողոցների ու դրանց հարակից կառույցների արտաքին տեսքի ներկա վիճակը և նախագծման ու կոմպոզիցիոն առանձնահատկությունները:

Հետազոտության հիմնական նպատակներից մեկն է լինելու ստեղծել փողոցների և դրանց հարակից շինությունների արտաքին ձևավորումների համար նախատեսված մասնագիտական վերլուծություն, որի համար անհրաժեշտ են լինելու ոչ միայն տեղային դիտարկումներ ու մասնագիտական գրականության բազմաթիվ նմուշներ ուսումնասիրելը, այլև ճարտարապետական կոմպոզիցիոն մեթոդներին հետևելը և դրանցով առաջնորդվելը:



Թեմայի ուսումնասիրությունների շրջանակներում ցանկացած փողոց ու դրան հարակից ճարտարապետական կառույց վերլուծելիս անհրաժեշտ է հետևել ճարտարապետական կոմպոզիցիայի տարրերին, որոնց համար հիմք ենք վերցրել 1968 թվականին Մոսկվայում լույս տեսած Վ. Ֆ. Կրինսկու, Ի. Վ. Լամցովի և Մ. Ա. Տուրկուսի «Элементы архитектурно-пространственной композиции» ճարտարապետական բուհերի համար նախատեսված դասագիրքը²:

Քանի որ ուսումնասիրություններն ընդգրկում են ոչ միայն փողոցները կամ հարակից կառույցներն առանձին-առանձին, այլև ընդհանուր միջավայրում, ուստի հետազոտության շրջանակներում չենք դիտարկելու միայն ֆասադային կոմպոզիցիոն լուծումները, այլ տարածաձավալական միջավայրում, որի արդյունքում անպայման պետք է հաշվի առնվեն ծավալների երկրաչափական տեսքը, ծավալների մեծությունը, ծավալների դիրքը տարածության մեջ, խտությունը, ֆակտուրան, գույնը և լույսն ու ստվերը:


Տարրերից յուրաքանչյուրը, կախված միջավայրի առանձնահատկություններից, կարող է կրել որոշակի փոփոխություններ:

Ծավալների երկրաչափական տեսքերն ունեն հետևյալ տիպային ձևերը՝ ծավալային, հարթային և գծային ֆորմաներ (նկ. 1. ա, բ):

² В. Ф. Кринский, И. В. Ламцов, М.А.Туркус. Элементы архитектурно-пространственной композиции. Москва, 1968, 168 стр.



նկ. 1. ա)



բ)

Ծավալի մեծությունը դիտվում է մի կողմից ծավալների 3 կոորդինատների փոխհարաբերությունը մարդուն, մյուս կողմից ծավալների հարաբերությունը՝ հարակից տարրերի չափերին (նկ. 2. ա,բ):





նկ. 2. ա)



բ)

Ծավալների դիրքը պարածության մեջ դիտարկվում է դիտողի և 3 կոորդինատների՝ հարթային-ֆրոնտալ, պրոֆիլ և հորիզոնական հարաբերություններում (նկ. 3)



նկ. 3


Խտություն-պարողունակություն. այս նախադրյալը բազմաթիվ առանձնահատկություններ ունի ճարտարապետական կոմպոզիցիայում: Այն կարող է փոփոխվել հետևյալ ուղղություններով.

ա) ծավալի փոփոխությամբ՝ մեծ կամ երկար ֆորմաների համար ավելի շատ տարողություն (նկ. 4. ա, բ),



նկ. 4. ա) բ)

բ) խտության կամ տարողունակության վերաբաժանումը 3 կողրդինատներով՝ կախված տարողունակության աստիճանից, հարթային կամ գծային ֆորմաներից, ինչպես նաև դրա «բնավորությունից», (նկ. 5),




նկ. 5

գ) ծավալների հարթությունների խտության աստիճանից, օրինակ՝ հարթ մակերեսներն ավելի փոքրացնում են ծավալները դիտողի համար (նկ. 6),



նկ. 6

դ) դոմինանտությունը տարածության մեջ, օրինակ՝ կապված տարածության մեծության կամ ընդարձակման հետ կառույցները տարատեսակ են դիտվում, հետևաբար այս դեպքում պետք է դիտարկել թե՛ տարածության դոմինանտությունը ճարտարապետական կառույցին և թե՛ հակառակը (նկ. 7):




նկ. 7

Ցակրուրա հասկացության ներքո դիտարկվում են կառույցների հար-

թությունների թափանցիկությունը, հարթությունը, հղկվածությունը, հայելապատումը, անհարթությունը և այլն: Ֆակտուրայի տեսակները կամ տիպերը կախված են լինում հետևյալ նախադրյալներից.

ա) ֆակտուրայով պատված տարրերի քանակից ու չափերից (նկ. 8),



նկ. 8

բ) տարրերի ռելիեֆների մեծությունից,

գ) դիտողի և կառույցի միջև եղած հեռավորությունից:

Գույն. ճարտարապետական կառույցները կարող են կառուցվել գունային հետևյալ 3 լուծումներով՝

ա) ախրոմատիկ երանգներ՝ սպիտակից սև (նկ. 9),



նկ. 9

բ) խրոմատիկ գույներ՝ գունային սպեկտրի անցումներ (տաք, սառը և խառը երանգներ), (նկ. 10),



նկ. 10

գ) խրոմատիկից ախրոմատիկ. օրինակ՝ կարմիրից սև, կարմիրից սպիտակ կամ կարմիրից մոխրագույն (նկ. 11):



նկ. 11

Լույս և ստվեր. տարածաձավալական ֆորմաների կառուցումն ըստ լույս ու ստվերի կարող են դիտարկվել 2 հիմնական ուղղություններով.

ա) լույսի և ստվերի փոփոխությունը՝ կախված լուսավորվող հարթության և լույսի աղբյուրի նկատմամբ ունեցած դիրքից կամ հակառակը,

բ) լույսի և ստվերի փոփոխությունը՝ կախված արհեստական լույսի ուժից:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ոչ միայն Երևանում, այլև ցանկացած քաղաքի գլխավոր փողոցներն ու դրանց հարակից կառույցների կառուցվածքային, նախագծային և կոմպոզիցիոն խնդիրները դիտարկելու համար անհրաժեշտ է կիրառել վերոնշյալ ճարտարապետական կոմպոզիցիայի բոլոր հիմնական դրույթները, որոնք ներառում են ոչ միայն ճարտարապետական, այլև արվեստաբանական, դիզայներական ու քաղաքաշինական գիտելիքներ: Հարկ եմ համարում նշել, որ բացի այս հիմնական դրույթներից անհրաժեշտ է կիրառել նաև ճարտարապետական կառույցների նախագծման (դինամիկա, մասշտաբ, քաշային հարաբերություններ, համամասնություն, դիրք, դիրքի տեսակներ, ծավալ և հեռավորություն), ինչպես նաև կոմպոզիցիայի տեսակների (ֆրոնտալ, տարածաձավալական, հեռանկարային) հիմնական նախադրյալները, որոնք կներկայացվեն և կուսումնասիրվեն հաջորդ գիտական հրապարակումներում:

ЗАДАЧИ И ВОЗМОЖНОСТИ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОЕКТИРОВКИ И ВНЕШНЕГО ДИЗАЙНА УЛИЦ ЕРЕВАНА И БЛИЗЛЕЖАЩИХ СООРУЖЕНИЙ СОГЛАСНО ОСНОВНЫМ МЕТОДАМ АРХИТЕКТУРНОЙ КОМПОЗИЦИИ³

МАРТИН АРУТЮНЯН

В статье приводится нынешнее состояние и возможности усовершенствования внешнего вида главных улиц Еревана и близлежащих сооружений согласно основным методам архитектурной композиции. В рамках изучения темы осуществлялись, и будут осуществляться множество местных обзоров, как в проектах улиц Еревана, так и в проектах других европейских городов, а в качестве основы для представления основных методов данной статьи лежит учебник В. Ф. Кринского, И. В. Ламцова и М. А. Туркуса «Элементы

³ Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 16YR-2A010.

архитектурно-пространственной композиции», опубликованный в 1968г. в г. Москве и предназначенный для архитектурных ВУЗ-ов.

Ключевые слова – Ереван, улица, архитектура, дизайн, композиция, проектирование.

**THE DESIGN AND ISSUES OF MODELING FACADES AS WELL AS
IMPROVEMENT POSSIBILITIES OF YEREVAN STREETS AND NEIGHBORING
STRUCTURES ACCORDING TO BASIC METHODS OF ARCHITECTURAL
COMPOSITION**

MARTIN HARUTUNYAN

This paper presents the current situation of the facades and the improvement possibilities of the main streets and the neighboring structures of Yerevan by the help of basic architectural composition methods. As part of the study of the topic, numerous local surveys are been carried out and will still be continued of the designs of the streets of Yerevan and other European cities. The textbook "Elements of architectural and spatial composition" published in 1968 in Moscow by V.F. Krinsky, I.V. Lamtsov and M.A. Turkus for architectural universities has served as a basis for presenting the basic methods proposed in this article.

Key words – Yerevan, street, architecture, design, composition, design.

ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ. ՀԻՆԳ ՌՈՄԱՆՍ Վ. ՏԵՐՅԱՆԻ ԵՎ Գ. ՄԱՀԱՐՈՒ ԽՈՍՔԵՐՈՎ

ՇՈՒՇԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արդի հայ կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչներից մեկի՝ Վ. Աճեմյանի բազմաժանր ժառանգության մեջ յուրօրինակ տեղ են գրավում վոկալ շարերը, որոնց գրական հիմքը կոմպոզիտորն ընտրել է բացառապես հայ գրականության ու պոեզիայի հարուստ գանձարանից: «Հինգ ռոմանս» Վ. Տերյանի և Գ. Մահարու խոսքերով շարում (1976) Տերյանի մթնշաղային անուրջները ողողվում են Մահարու փիլիսոփայական խոհականությամբ:

Կոմպոզիտորի վաղ շրջանի բնութագրական այս ստեղծագործության մեջ առկա են էքսպրեսիոնիստական բնորոշ հնարքներ (մելոդեկլամացիա, որոշակի բարձրություն չունեցող հնչյուններ, գլիսանդներ, ատոնալիզմ), որոնք ներդաշնակ միավորվում են ավանդական մտածողության հետ (խոսքի իմաստային շեշտադրության պահպանումը, կանտիլենային հատվածները, ազգային ռիթմահնտոնացիոն դարձվածքները):

Քանայի բառեր – Վարդան Աճեմյան, վոկալ շար, Մահարի, Տերյան, էքսպրեսիոնիզմ, ատոնալիզմ, ավանդական մտածողություն, ազգային ռիթմահնտոնացիաներ:

Վ. Աճեմյանն արդի հայ կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչներից է, ով, իր ստեղծագործական գործունեությունը սկսելով նախորդ դարաշրջանի 70-ական թվականներից, այսօր էլ եռանդուն ստեղծագործում է՝ պահպանելով իր ուրույն ոճը ժամանակի բազմազան ուղղությունների և հոսանքների գունեղ խճանկարում:

Սերելով ականավոր արվեստագետների տոհմից (պապը՝ Վարդան Աճեմյանը, ռեժիսոր էր, դրամատուրգ, մանկավարժ, տատը՝ Արուս Ասրյանը, մայր թատրոնի վաստակաշատ դերասանուհի, հայրը՝ Ալեքսանդր Աճեմյանը, XX դարի երկրորդ կեսի հայ երաժշտության ականավոր ներկայացուցիչներից էր)՝ կրտսեր Աճեմյանը դեռևս մանկուց վայելել է շփումն արվեստի տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ: Այդ ամենը ներգործուն նշանակություն ունեցան երիտասարդ կոմպոզիտորի գեղագիտական աշխարհընկալման վրա: Բազմաժանր են Վարդան Աճեմյանի ստեղծագործական նախասիրությունները՝ սիմֆոնիկ, կամերային, վոկալ, վոկալ-գործիքային և գործիքային: Յուրօրինակ տեղ է հատկացված էստրադային երգի ժանրին:

Աճեմյանը սկսել է ստեղծագործել վաղ տարիքից և կոնսերվատորիան ավարտելու շեմին հանրությանը ներկայացավ «Կիկոսի մահը» օպերայով

(Հովհ.Թումանյանի հանրահայտ հեքիաթի հիման վրա, լիբրետոյի հեղինակը պապն էր՝ ավագ Վարդան Աճեմյանը), որը լայն արձագանքի արժանացավ մասնագետների և հանդիսականի կողմից սրամիտ մտահղացման և ինքնօրինակ ստեղծագործական լուծումների շնորհիվ:

Վոկալ ստեղծագործությունները Վ. Աճեմյանի ժառանգության շուրջ մեկ երրորդ մասն են կազմում: Կարելի է նկատել կոմպոզիտորի մեծ հետաքրքրությունը վոկալ ժանրի ամենատարբեր ասպարեզներում: Կոմպոզիտորը հեղինակ է ինչպես մեծակտավ վոկալ գործերի՝ կոնցերտի, վոկալ շարերի, այնպես էլ խմբերգերի, ռոմանսների և երգերի:

Վոկալ ժանրի հանդեպ Վ.Աճեմյանի հետաքրքրությունը նկատվել է դեռևս ուսանողական տարիներից: Այս շրջանում են գրվել ռոմանսները Հ.Սահյանի խոսքերով, «Բալլադը զինվորի մասին»՝ ըստ Մահարու, որոնցում արդեն իսկ նկատելի են հեղինակի ստեղծագործական ոճի ձևավորման միտումները: Կոմպոզիտորի տարբեր ժանրերի վոկալ ստեղծագործությունների շարքում յուրահատուկ տեղ են գրավում վոկալ շարերը, որոնց գրական հիմքն ընտրել է բացառապես հայ գրականության ու պոեզիայի հարուստ գանձարանից: Բանաստեղծները տարբեր են ժամանակաշրջաններով, ոճերով, գեղագիտական ընկալումներով, սակայն որոշակի կերպարային ընդհանրություն կա ցիկլերի միջև, ինչն էլ ապահովում է դրանց միջև ներքին պայմանական կապը:

Կոմպոզիտորի վոկալ շարքերը հինգն են՝ ռոմանսներ Հ.Սահյանի խոսքերով, «Հինգ ռոմանս Վ. Տերյանի և Գ.Մահարու խոսքերով» (1976), վոկալ շար՝ Հ. Շիրազի խոսքերով (1984), «Լիրիկական երգեր»՝ Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների հիման վրա (1989), և առայժմ վերջինը՝ թվով հինգերորդը «Արտամետյան գիշերներ» շարն է՝ ըստ Գ. Մահարու: Կոմպոզիտորը նշում է, որ հենց այս պոետներն են, որ հոգեհարազատ են իրեն: Յուրօրինակ է կոմպոզիտորի կողմից ցիկլերում երգերի ժանրային ընտրությունը: Մի դեպքում հանդիպում ենք ռոմանսների, մյուս դեպքում՝ լիրիկական երգերի, մեկ այլ դեպքում՝ պատկերի ձայնի համար:

Վ. Աճեմյանի «Հինգ ռոմանս Վ. Տերյանի և Գ.Մահարու խոսքերով» շարն ուշագրավ է նրանով, որ հեղինակն անդրադարձել է երկու՝ տարբեր աշխարհայացքներ ունեցող բանաստեղծների տեքստերին: Տերյանի մթնշաղային անուրջները ողողվում են Մահարու փիլիսոփայական խոհականությամբ: Ի դեպ, Մահարու պոեզիային անդրադարձը պատահական չէ, քանի որ վերջինս նույնպես Աճեմյանների տոհմի ներկայացուցիչ էր, և դրանով է նաև պայմա-

նավորված նրա պոեզիայի այդքան հոգեհարազատ և սրտառուչ ընթերցումը: «Գ. Մահարու արվեստը դեռևս լիարժեք հասկացված և գնահատված չէ», - նշում է Վ. Աճեմյանը¹:

Շարը կազմված է հինգ ռոմանսից, որոնցից առաջին երկուսը՝ «Ինքնօրորումը» և «Տխրությունը», Տերյանի խոսքերով են, իսկ վերջին երեքը՝ «Եկ անգին», «Ուրվական», «Նրան», գրված են Մահարու տեքստերով:

Նախորդ դարի 70-ականները մի ժամանակահատված էր, երբ հայ երաժշտություն մուտք գործեցին և յուրովի դրսևորվեցին նորվիեննական դպրոցի որոշ միտումներ, որոնք անտարբեր չթողեցին նաև Վ. Աճեմյանին: Երաժշտագետ Ա. Գրիգորյանը նշում է, որ մի շարք հայ կոմպոզիտորներ այս շրջանում սկսեցին հետևել ավստրիական էքսպրեսիոնիզմին և, առհասարակ, XX դարի երաժշտության որոշ միտումներին²: Կոմպոզիտորի հետ ունեցած մեր զրույցում Վ. Աճեմյանը հաստատել է որոշ էքսպրեսիոնիստական տարրերի օգտագործման փաստն այս շարում: Իհարկե, այս ուղղության բացահայտ ազդեցությունը շատ շուտով վերացավ, և կոմպոզիտորի երկրորդ շարն արդեն բավականին տարբերվում է նախորդից թե՛ գաղափարական, թե՛ բովանդակային և թե՛ ոճական առումով:

Այդուհանդերձ, կոմպոզիտորի հասուն ոճը նախանշող այս ստեղծագործության մեջ առկա է երգեցողական մելոդեկլամացիոն ոճը, որը հիշեցնում է ավստրիական sprechgesang-ը: Սակայն ստեղծագործության արտահայտչաբանակը բացարձակապես sprechgesang բնորոշել նույնպես ճիշտ չի լինի, քանի որ ասերգայնության հետ մեկտեղ ցիկլում կան նաև երգային-կանտիլենային հատվածներ:

Ժամանակակից երաժշտական արտահայտչամիջոցներից հարկ է նշել նաև որոշակի բարձրություն չունեցող հնչյունների հաճախակի կիրառումը, որոնք ստեղծում են դինամիկա, ներքին լարվածություն և տեղափոխում են ունկնդրին էքսպրեսիոնիստական զգայական ոլորտ: Ընդ որում, այս հնարը հանդիպում է Մահարու խոսքերով երեք ռոմանսներում և «Ուրվական» համարում՝ երկու տեղ: Իսկ «Ինքնօրորում» ռոմանսում օգտագործված են որոշակի բարձրություն ունեցող վարընթաց գլխանդներ, որոնք, ժամանակակից երաժշտական արտահայտչամիջոց լինելով, տվյալ հատվածում նպաստում են կանտիլենային ֆրագավորմանը: Շարին յուրօրինակ երանգ են

¹ Կոմպոզիտորի հետ անձնական զրույցից (Շուշանիկ Հովհաննիսյան):

² Տե՛ս **Григорян А.** Армянская камерно-вокальная музыка. Ереван, 1982, стр. 221.

հաղորդում հաճախակի կիրառվող սոնորային գունավորումները: Շարն ատոնալ է, զուրկ տոնայնական որևէ հիմքից, սակայն խիստ դողեկաֆոն տեխնիկա կոմպոզիտորը նույնպես չի օգտագործել: Շարում բավական հաճախ կիրառված է արագացված յամբ³ ռիթմական դարձվածքը, որը, կարելի է ասել, գիտակցված կամ չգիտակցված դարձել է կոմպոզիտորի ռիթմահնտոնացիոն ոճը բնութագրող կարևոր հնարքներից մեկը: Վ. Աճեմյանի համար խիստ կարևոր են նաև խոսքի ճիշտ շեշտադրությունն ու ֆրազավորումը:

Շարին յուրօրինակ երանգ են հաղորդում նաև որոշ հատվածներում ոչ վառ արտահայտված օստինատային շարժումները, ինչպես նաև ձայնառություն պարունակող առանձին հատվածները: Ձայնառության կոմպոզիցիոն հնարը գալիս է հայ հոգևոր երաժշտությունից և հաճախակի է հանդիպում կոմպոզիտորական արվեստում: Նշված հնարքներն իրենց ցայտուն դրսևորում են ստանում «Տխրություն» ռոմանսում:

Դաշնամուրային նվագակցությունը ելնում է վոկալ պարտիայից և ենթարկվում նրան՝ նպաստելով երաժշտության ավելի լարված ընթացքին: Ռոմանսներում գրեթե չկան միջնանվագներ: Իսկ վերջիններիս առկայության դեպքում դրանք լրացնում և ամբողջական պատկեր են հաղորդում ռոմանսին՝ չնայած նրան, որ միջնանվագների տևողությունը սովորաբար չի գերազանցում մեկ-երկու տակտը:

Կոմպոզիտորի հասուն ոճը բնութագրող մի շարք հատկանիշներով հանդերձ՝ Վ. Աճեմյանի «Հինգ ռոմանս Վ. Տերյանի և Գ. Մահարու խոսքերով» շարում դժվար է խոսել կոմպոզիտորի բյուրեղացած ոճի մասին: Այս միտքն է հաստատում Տաթև Ղազարյանն իր «Վ. Աճեմյան. ստեղծագործական ուրվագիծ» դիպլոմային աշխատանքում⁴: Սակայն շարում արդեն իսկ առկա են մի շարք ռիթմահնտոնացիոն դաժվածքներ, որոնք հետագայում պարբերաբար օգտագործվել են կոմպոզիտորի հաջորդ վոկալ շարերում և դարձել են կոմպոզիտորի ոճը բնութագրող տարրեր: Բավական հաճախ կոմպոզիտորը կիրառում է արագացված յամբը, տրիոլ ռիթմական դարձվածքները, սեկունդային կառուցվածքով համահնչյունները, վերընթաց կվարտային և սեպտիմային թռիչքները, ֆորշլագները, որոնք, համաձայն երաժշտագետ Ժ. Զու-

³ Եզրույթն օգտագործել է երաժշտագետ Կ. Զաղացպանյանն ազգային ռիթմին նվիրված իր ուսումնասիրության մեջ: Տե՛ս **Джагацпанян К.** По следам ритмов национальной музыки. Ереван, 1999, стр. 190.

⁴ Տե՛ս **Ղազարյան Տ.**, Վ. Աճեմյան. ստեղծագործական ուրվագիծ (դիպլոմային աշխատանք), ղեկ.՝ արվ. թեկն. Տեր-Ղազարյան Զ., Երևան, 2006, էջ 9, 10:

րաբյանի տեսակետի, համարվում են հայկական մոնոդիային և մտածողությանը խիստ բնորոշ⁵:

Ինչ վերաբերում է հայ գեղջկական ֆոկլորին բնորոշ արագացված յամբ⁶ դիթամական դարձվածքին, ապա դրա կիրառման առանձնահատկությունը բխում է մայրենի լեզվից: Ինչպես հայոց լեզվում է բառի շեշտը դրվում վերջին վանկի վրա, այնպես էլ երաժշտության մեջ ընդգծվում է վերջին վանկը: Սա իրականացվում է կարճ և երկար տևողությամբ հնչյունների կամ ելևէջային դարձվածքների միջոցով և անվանվում է յամբ: Մեր վերլուծության արդյունքում նկատեցինք, որ արագացված յամբը հանդիպում է Վ. Աճեմյանի շարքում, ընդ որում՝ թե՛ դաշնամուրային պարտիայում, թե՛ վոկալ պարտիայում: Իհարկե, դարձվածքի նման կիրառումը բխում է կոմպոզիտորի՝ տեքստին առաջնահերթ կարևորություն տալու ձգտումից:

Վարդան Աճեմյանի շարք Վ. Տերյանի և Գ. Մահարու տեքստերով կոմպոզիտորի վաղ շրջանի նշանակալի ստեղծագործություններից է, որտեղ նա յուրօրինակ կերպով լուծել է արդիական և ավանդական-ազգային մտածողության փոխհարաբերության խնդիրը:

ВАРДАН АДЖЕМЯН: ПЯТЬ РОМАНСОВ НА СЛОВА В. ТЕРЬЯНА И Г. МААРИ

ШУШАНИК ОВАННИСЯН

Вокальные циклы имеют свое уникальное место в многожанровом наследии одного из ярких представителей современной армянской композиторской школы – Вардана Аджемяна. Композитор выбрал их литературную основу исключительно из богатой сокровищницы армянской литературы и поэзии. В цикле “Пять романсов на слова Ваана Терьяна и Гургена Маари” сумеречные грезы Терьяна сливаются с философским мышлением Маари.

В этом произведении, характерного для раннего периода композитора, прослеживаются экспрессионистические приемы (мелодекламация, звуки, не имеющие определенную высоту, глиссандо, атонализм), которые гармонично переплетаются с традиционным мышлением (сохранение смыслового ударения речи, наличие кантилены, национальные ритмо-интонационные обороты).

⁵ Տե՛ս **Зурабян Ж.** Интонационные истоки и национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке 1950-60гг. Ереван, 2002, стр. 22-26.

⁶ Տե՛ս **Джагацпанян К.** По следам ритмов национальной музыки, стр. 190.

Ключевые слова – Вардан Аджемян, вокальный цикл, Маари, Терьян, экспрессионизм, атонализм, традиционное мышление, национальные ритмоинтонации.

**VARDAN AJEMYAN: FIVE ROMANCES
TO THE POEMS OF V.TERYAN AND G.MAHARI**

SHUSHANIK HOVHANNISYAN

Song cycles have their unique place in the multi-genre compositions of the bright representative of the modern Armenian composer school - Vardan Adjemyan. He chose his song lyrics exclusively from the rich treasury of Armenian literature. His song cycle of 5 romances (1976) are to the poems of Vahan Teryan and Gurgen Maari, thus mingling Teryan's twilight dreams with Gurgen Maari's philosophical thoughts.

Expressionistic techniques (melodeclamation, sounds less than a certain height, glissando, atonalism), harmoniously intertwined with traditional thinking (the preservation of the semantic stress of speech, the parts of cantilena, the national rhythm-intonation) can be traced in these works, characteristic of the early period of the composer.

Key words – Vardan Adjemyan, song cycle, Mahari, Teryan, expressionism, atonalism, traditional thinking, national rhythm-intonations.

МУЗЫКАЛЬНАЯ ЭСТЕТИКА Е.ТНТЕСЯНА В АСПЕКТЕ ПРЕЕМСТВЕННОСТИ НАЦИОНАЛЬНЫХ ТРАДИЦИЙ

МАРИНЕ МАВИСАКАЛЯН

Е.Тнтесян (1834-1881) вошел в историю армянской музыки как композитор, музыковед, педагог, музыкально-общественный деятель, яркий представитель константинопольской школы церковного искусства и завершитель докомитасовской эпохи в армянском музыкознании. Многогранное творческое наследие Е.Тнтесяна представляет несомненный интерес и для исследователей истории армянской музыкальной эстетики.

В статье раскрывается роль Е.Тнтесяна как связующего звена между средневековой и современной армянской музыкально-эстетической мыслью.

Ключевые слова – Е.Тнтесян, национальная музыка, воздействие музыки, вкус, эстетическое воспитание.

Рассматривая историю армянской музыкально-эстетической мысли в аспекте единства национальной традиции, нельзя обойти вниманием незаурядную и, на наш взгляд, по сей день недостаточно изученную фигуру *Էջիւ Կոմիտաս* (1834-1881) – композитора, музыковеда, педагога, музыкально-общественного деятеля, упоминаемого Н.Тагмизяном в качестве одного из «ярких представителей константинопольской школы церковного искусства»¹.

Исследователями научного наследия Е.Тнтесяна справедливо отмечается «подытоживающая» роль последнего как завершителя «докомитасовской» эпохи в армянском музыкознании. Так, Р.Атаян, характеризуя книгу «Նվաճող երգիչ Կոմիտասը և եկեղեցիք...» (Константинополь, 1874), где собраны опубликованные Е.Тнтесяном в 60-70-х гг. в периодической печати («Ժամանակ», «Սեդրու», «Մալիս», «Սիրոն» и др.) статьи, пишет: «[այն] ամփոփում է հայ տեսական երաժշտագիտության մինչևկոմիտասյան շրջանի կարևորագույն նվաճումները»²:

Вместе с тем необходимо, на наш взгляд, сделать больший акцент не столько на «завершающей», сколько на «связующей» - между древней и новой армянской мыслью о музыке – функции, выполняемой константинопольским

¹ Тагмизян Н. Теория музыки в древней Армении. Ереван, 1977, стр. 9.

² Մալիսյան Ռ., Տնտեսյան Եղիա, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 38:

музыкантом, - по крайней мере, в интересующей нас области музыкальной эстетики.

В музыкально-эстетических высказываниях Е.Тнтесяна весьма интересным образом перекрещиваются древность и современность: установки, идущие из глубины веков, как бы «встречаются» здесь с тенденциями, характерными для музыкальной эстетики нового времени, в первую очередь, разумеется, для периода, в который протекала деятельность музыканта, а именно, второй половины XIX века.

Значительный интерес в этом смысле представляет статья «Ազգային երաժշտութիւն», опубликованная в 1867г. в журнале «Сион», в дальнейшем она была включена автором в вышеупомянутый сборник «Նվարազիր...»³.

С одной стороны, бесспорная принадлежность статьи к XIX-XXвв. (точнее, поскольку речь идет о музыкальном искусстве - II половине XIX-XXвв.) определена уже ее названием, носящем на себе яркий отпечаток эпохи, в которой проблема национального становится одной из ключевых, и столь же нехарактерным (если не сказать – чуждым) для средних веков.

Вместе с тем здесь – хотя и в совершенно новом ракурсе, а именно, с точки зрения вышеуказанной проблемы национального – находит свое преломление одна из важнейших проблем армянского средневековья – «вопрос соотношения духовного и светского начал в искусстве»⁴.

В своих рассуждениях о национальном Е.Тнтесян фактически противопоставляет светскую музыку церковной⁵, лишь в последней (несмотря на ее весьма неудовлетворительное современное состояние) находя т.н. «национальный вкус» («... հոն միայն կրցանք գտնել թիչ շատ ընդհանուր ազգային

³ **Տնտեսյան Ե.**, Նվարազիր երգոց Հայաստանյայցու և եկեղեցւոյ, 2-րդ տպագր., Ստամբուլ, 1933:

⁴ Музыкальная эстетика стран Востока. Москва, 1967, стр. 330.

⁵ Принципиально важно, однако, что указанное противостояние лежит, в отличие от предшествующих эпох, уже не в области идеологии, а, преимущественно, в области музыкального языка. Суть вопроса, таким образом, из традиционной плоскости «божественное - мирское», «праведное-греховное» и т.п. переносится в соотношение «национальное [звучание, мелодика, вкус] – чужеродное». Иначе говоря, церковная и светская музыка сопоставляются у Е.Тнтесяна уже в том же ракурсе, что позже у Комитаса – крестьянская и городская.

եղանակներ և ազգային ճաշակ»⁶. Как отмечает музыковед, «մեր այլ չկրնալով պայտռ ոչ Էրզրումի համբաւաւոր *քէմէնչէն* ազգային քնար, և ոչ այլ Վանի հանրածանօթ եղանակն ու պարը ազգային երգ համարել, ուստի ազգային երաժշտութիւն մը միայն եկեղեցական շարականին մէջ պէտք է որոնենք, ուր կը գտնենք բաւական ճոխ եղանակներու հաւաքում մը, որք թէւ արեւելեան ուրիշ եղանակաց նման և անոր մէկ ճիւղն են, այլ իրենց վերջաւորութեամբը, դարձուածներովը, դասաւորութեամբը և ուրիշ յատկութիւններովը մասնավոր ազգային եղանակներ են...»⁷.

Приоритет, отдаваемый Е.Тнтесяном церковной музыке, напрямую связан не только с представлением о ней как о единственной носительнице национальной музыкальной традиции, но и – в свете идеи о музыкальном искусстве как сильнейшем средстве воздействия на людей («ժողովորդի մը կոշտութիւնը կրթելու զօրաւոր միջոց»⁸) – с осознанием значительности ее этико-воспитательного потенциала, обусловленной как собственными, имманентными возможностями музыки, так и спецификой самого института церкви, в особенности в условиях современной Тнтесяну армянской действительности. По справедливому замечанию Е.Тнтесяна, «...ազգին պիտեան վիճակին մէջ եկեղեցիէ զատ կեդրոն մ'ալ չկայ, ուր հաւաքուին ամեն կարգի ժողովորդք, և ուր տեղ միայն կարելի է կանոնաւոր երաժշտութեան գեղեցիկ ճաշակը ընդհանրութեան մէջ տարածել...»⁹.

Отмечая как «известную истину», что музыка обладает огромной силой воздействия («իւր ներգործութիւնը խիստ ազդու [է]»¹⁰), и вслед за средневековыми мыслителями апеллируя все к тем же мифам об Орфее и царе Давиде, Е.Тнтесян различает два типа воздействия музыки на «душу и сердце» человека:

1) «պարզ ու վսեմ, որ մարդոյս սիրտը կը կրթէ և կ'ազնուացընէ»¹¹ - именно этой цели призвана, по Е.Тнтесяну, служить церковная музыка. В этой связи музыковед ссылается на Нерсеса Ламбронаци, указывавшего, что музыка должна оберегать человеческие мысли от сатанинских происков («հե-

⁶ **Տնտեսյան Ե.**, Նկարագիր երգոց Հայաստանյայցս ս.եկեղեցվո, 2-րդ տպագր., էջ 44:

⁷ Там же, стр. 42.

⁸ Там же, стр. 38.

⁹ Там же, стр. 54.

¹⁰ Там же, стр. 38.

¹¹ Там же, стр. 44.

նացուցանել լսողներուն մտքէն սատանայական խորհրդոց արկածները»), плотских вожделений («մարմնական գրադմանց յիշատակները»), подготавливать слушателя к восприятию божественного откровения («ընդոստոցեալ զարթուցանել և մաքրել պատրաստել մեր միտքը առ բարձրագոյն տեսութիւնս») и т.п;

2) «թոյլ և մեղկ, որ կա՛մ կը մեղկացընէ զմարդ և կա՛մ բարքը մոլեգին կ’նէ»¹², - как отмечает автор, связанные с вышеупомянутым типом воздействия отрицательные тенденции (главным образом, инородного происхождения) проникли и в церковную музыку, нуждающуюся в серьезной ревизии.

Непосредственная связь вышеприведенных рассуждений о силе и характере воздействия музыки с армянской средневековой музыкально-эстетической традицией, на наш взгляд, более чем очевидна: в первом случае это *анахтовский* тезис о «великой силе воздействия музыки», во втором – отголоски *керакановского* тройного деления искусства про принципу «добродетельности», правда, в усеченном варианте – без категории «среднего искусства» (в остальном же, первый тип воздействия, без сомнения, соответствует «доброму», второй – «злomu» искусству).

Высказывания о воспитательном воздействии музыки, в частности, церковной – одна из тех сфер музыкально-эстетического наследия Е.Тнтесяна, где наиболее интересным образом переплелись прошлое и настоящее. Суммируя относящиеся к данной проблеме мысли музыковеда, можно выделить, по крайней мере, два основных направления воспитательной, «облагораживающей» функции церковной музыки:

1) вышеупомянутое «отвращение от происков дьявола» и т.п.;

2) привитие «вкуса» (здесь Е.Тнтесян употребляет следующие выражения: «национальный вкус», «национальный музыкальный вкус», «вкус пре-красной музыки»).

Итак, с одной стороны, мы, очевидно, имеем дело с типично средневековым осмыслением воспитательной силы музыки – прежде всего как одного из средств для привития христианской этики: не случайно Е.Тнтесян ссылается в этой связи на Нерсеса Ламбронаци (XIIIв.) – одного из средневековых армянских церковных идеологов ортодоксального направления.

¹² Там же.

Между тем, во втором из условно выделенных нами «направлений» обращает на себя внимание не менее многозначительный факт употребления Е.Тнтесяном понятия «*в к у с*», представляющего собой, в особенности в характерном сочетании «вкус прекрасной музыки» («գեղեցիկ երաժշտութեան ճաշակ») чисто *эстетическую* категорию.

Таким образом, автор вполне определенно затрагивает уже сферу *эстетического воспитания*, выступая, соответственно, в качестве одного из провозвестников новых тенденций в армянской музыкальной эстетике.

В целом, в рассуждениях Е.Тнтесяна о национальной музыке можно разграничить две области – теоретическую и практическую.

Первая область – это общие мысли музыканта о национальном, многие из которых представляют значительный интерес, при этом, заметим, в отличие от близких к ним по смыслу высказываний более изученных армянских авторов позднейших десятилетий, по сей день незаслуженно пребывая в тени. Одновременно здесь обнаруживается и характерная для Е.Тнтесяна связь со средневековой армянской музыкально-эстетической традицией.

Так, в частности, в следующем высказывании Е.Тнтесяна нетрудно, на наш взгляд, проследить нити, ведущие, с одной стороны, к Комитасу, с другой – к Григору Нарекаци (в последнем случае мы имеем в виду рассуждения средневекового музыканта о «нравопоказательности» музыки): «... ինչպէս որ մարդկային ազգին լեզունն, ընկերական ու քաղաքական վիճակը և կրօնական համոզումը զանազան ազգաց մէջ տարբեր եղած է, նոյնպէս և երաժշտութիւնն ալ այլևայլ տարբեր դաշնակներ ու ձայնից դասաւորութիւններ ունեցած է, ազգի մը յառաջադիմութեան, զգացման և մինչեւ անգամ բնական երկրին հանգամանացն համեմատ: Այսպէս որ ազգ մը ո՛րչափ կիրթ ճաշակ, փափով զգացում և վառ երեւակայութիւն, նույնչափ ալ կանոնաւոր ու գեղեցիկ երաժշտութիւն ունեցած է. և ընդհակառակն՝ ազգ մը ո՛րչափ յետադէմ, կոշտ ու անզգայ կամ մեղկ ու թոյլ եղած է, այնչափ ալ անդաշնակ և անկանոն կամ մեղկ ու թոյլ երաժշտութիւն մը ունեցած: Հետեւաբար ազգի մը երաժշտութիւնը՝ անոր հոգւոյն և զգացման պատկերն է»¹³.

Столь же показательны, что задолго до комитасовских рассуждений о национальном звучании, национальной манере пения Е.Тнтесян использует понятие «*երաժշտական ազգային հնչիւն*». Раскрывая его суть, Е.Тнтесян

¹³ Там же, стр. 39.

отмечает: «...ըլոր արեւելցոց ընտանի և շատ տեղ մայրենի օրորներու յատկացած և արարերէն հիծազ կոչուած եղանակով երգ մը՝ երբ Յոյն մը կամ Հրեայ մը երգէ, իրեն ազգային արտասանութիւնը և կոկորդային կամ ռնգային եայլն երաժշտական հնչիւնն այնպէս մը կը հնչէ, թէև ոչ դիտմամբ, որ լսողը անմիջապէս կ'իմանայ իրեն ինչ ազգէ ըլլալը»¹⁴. Кроме того, Е.Тнтесян привлекает внимание и к следующему факту: «...իրենց երաժշտական հնչիւնն ամենէն անելի պահել կրցող ազգերն, իրենց լեզուին արտասանութիւնը՝ հետեւաբար իրենց ազգային ամեն յատկութիւնները պահողներն են»¹⁵.

Как видно из вышеизложенного, речь идет все о той же национальной манере пения¹⁶, рассматриваемой Е.Тнтесяном в тесной связи с национальным произношением и имеющей, по справедливому замечанию музыковеда, значение одного из носителей и гарантов сохранности национального своеобразия.

Не менее интересна вторая – практическая – область содержания статьи – так сказать, тнтесяновское «что делать?», – в наиболее общем плане его можно охарактеризовать как своеобразный проект распространения в армянском народе «вкуса прекрасной музыки».

Выражая глубокую озабоченность нынешним состоянием армянской музыкальной культуры, музыковед выдвигает целый ряд предложений по его развитию.

Существенно важно, что, обращая, как уже неоднократно упоминалось, особое внимание на церковную музыку и очищение ее от чужеродных элементов, Е.Тнтесян отнюдь не признает за этой ветвью музыкального искусства монополии в привитии народу «вкуса прекрасной музыки»: по мнению музыковеда, в этом деле большую роль призвана сыграть национальная, в особенности же «семейная» песня. Однако, как отмечает автор статьи, созданные по сей день песни не в состоянии выйти за «официальные» рамки учебных заведений и найти дорогу к семейному быту. Главная проблема здесь – в отсутствии песен, отражающих современное бытие нации во всей его многогранности, соответствующих национальному вкусу и, что немаловажно, легкоусваиваемых. Неслучайно этот вакуум заполнен чужеродными мелодиями, что

¹⁴ Там же, стр. 43.

¹⁵ Там же, стр. 43.

¹⁶ Кстати, и Е.Тнтесян, и Комитас единодушны и в выражении озабоченности по поводу утраты оной армянами Константинополя и «подчиненных ему епархий».

объясняется, по мнению Е.Тнтесяна, отнюдь не отсутствием патриотизма в армянском народе. Соответственно, решение проблемы заключается в следующем: «...առանց ամեն օտար եղանակաց կապկորէն նմանելու, արեւելեան այնպիսի եղանակները պէտք է ընտրել, որք մեր ազգին ընդունակութեանը յարմար ըլլալով՝ նաև երոսպական դաշնակի ալ կը յարմարին, և ասոնց վերայ պէտք է նուագել դիրընտել ու սահուն ոճերով հայերէն երգեր, որ ընդհանուր ժողովուրդին հակելի կ'լլան»¹⁷:

Наконец, в комплексе предлагаемых автором мер по возрождению национальной музыки упоминается и музыкальное образование: «... գրաւոր երաժշտութիւնը՝ հանդերձ տեսական գիտութեամբը, և չափերուն (ամանակի) գործնական կանոնները եթէ կարելի է գոնէ ամեն երաժիշտ դասատուներու ուսցընելու փոյթ տանիլ»¹⁸.

«Այս կերպով, - заключает Е.Тнтесян, - ժողովրդեան մէջ կրնայ ընդհանրանալ գեղեցիկ երաժշտութեան ճաշակը, և թերեւս օր մը գտնուի հանճար մը՝ որ ազգային երաժշտութեան նոր ոգի և կենդանութիւն տայ...»¹⁹ (Интересно, что последние слова музыканта – имея в виду появление в не столь отдаленном будущем гигантской фигуры Комитаса – оказались в известном смысле пророческими).

Итак, описанные выше некоторые особенности музыкально-эстетических воззрений Е.Тнтесяна, в известной степени восполняющих «недостающее звено» между древностью и современностью, позволяют, на наш взгляд, сделать вывод о небезосновательности рассмотрения армянской музыкально-эстетической мысли с момента ее зарождения и до наших дней в качестве явления, обладающего, как минимум, определенными моментами преемственности и единства.

¹⁷ Там же, стр. 54.

¹⁸ Там же, стр. 54-55.

¹⁹ Там же, стр. 55.

Ե.ՏՆՏԵՍՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՄԱՐԻՆԵ ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆ

Ե.Տնտեսյանը (1834-1881) հայ երաժշտության պատմության մեջ է մտել որպես կոմպոզիտոր, երաժշտագետ, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, Կ.Պոլսի դպրոցի վառ ներկայացուցիչ և հայ երաժշտագիտության նախակոմիտասյան շրջանի եզրափակող: Նրա բազմակողմանի ստեղծագործական ժառանգությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև հայ երաժշտական գեղագիտության պատմության ուսումնասիրողների համար:

Հոդվածում բացահայտվում է Ե.Տնտեսյանի դերը որպես կապող օղակի՝ միջնադարյան և ժամանակակից հայ երաժշտական գեղագիտության միջև:

Բանալի բառեր – Ե. Տնտեսյան, ազգային երաժշտություն, երաժշտության ազդեցություն, ճաշակ, գեղագիտական դաստիարակություն:

EGHIA DNDESYAN'S AESTHETICS OF MUSIC FROM THE PROSPECTIVE OF CULTURAL HERITAGE

MARINE MAVISAKALYAN

Eghia Dndesyan (1834-1881) is represented as a composer, musicologist, educator, and a prominent music and public figure in the history of Armenian music. An outstanding representative of the Constantinople School of Armenian Music and the last musician who reviewed and analyzed the Armenian music of the pre-Komitasian period. His rich, versatile creative heritage is also of great interest to the investigators of the history of aesthetics of Armenian music.

Mavisakalyan in this article reveals the role of Dndesyan in relating the aesthetics of Armenian medieval music to the contemporary.

Key words – Eghia Dndesyan, national music, the impact of music, taste, aesthetical education.

XII-XIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԱԼԱԼՅԱՆ

Հոդվածում ներկայացված են XII-XIII դարերում Լոռի-Գուգարքում կառուցված հայկական քաղկեդոնիկ գմբեթավոր, ինչպես նաև վրացական մի խումբ եկեղեցիների ճարտարապետական առանձնահատկություններն ու ծագումնաբանությունը: Երկմույթ այս կառույցների նախատիպը Ակոռիի հունադավան եկեղեցին է՝ կառուցված VII դարում, որի հորինվածքն առաջին անգամ կրկնվել է XII դարում Աքորիի Բգավոր եկեղեցում: Այս խմբի ամենանշանավոր շինությունը Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի կողմից կառուցված Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցին է, որտեղ արտացոլված է հայ քաղկեդոնականների ստեղծագործության էությունը: XII-XIII դարերում երկաթնակ հայտերը Հյուսիսային Հայաստանում ստեղծում են յուրահատուկ ճարտարապետական ոճ, որն ինքնատիպ երևույթ է միջնադարյան արվեստում:

Քանայի բառեր – երկմույթ գմբեթավոր եկեղեցիներ, Ակոռի, Աքորի Բգավոր, Պղնձահանքի Ս. Աստվածածին, հայ քաղկեդոնականներ, Իվանե Զաքարյան Երկայնաբազուկ:

XII-XIII դարերում Հայաստանում և Վրաստանում՝ հիմնականում Քուռ գետից հարավ ընկած տարածքներում, հանդես է գալիս երկմույթ գմբեթավոր եկեղեցիների մի խումբ, որն արդյունք է տարածաշրջանում հայ քաղկեդոնականների շինարարական գործունեության: Մինչ այդ տարբեր ժամանակահատվածներում նմանատիպ՝ զույգ ազատ կանգնած մույթերով սակավաթիվ հորինվածքներ տարերայնորեն կառուցվում են երկու երկրների տարբեր մասերում:

Հայաստանում երկմույթ գմբեթավոր տիպն առաջին անգամ իրականացվել է դեռևս VII դարում Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի կողմից կառուցված հունադավան եկեղեցում, որն էլ փաստորեն քննարկվող հորինվածքի առաջին օրինակն է ինչպես հայկական, այնպես էլ վրացական ճարտարապետության մեջ (գծ.1)¹: Վերջինս էլ հետագայում՝ XII-XIII դարերում, դարձել է երկաթնակ հայերի եկեղեցական գմբեթավոր կառույցների հիմնական հորինվածքը²:

¹ Стржиговский Й. Архитектура армян и Европа. Том I, Ереван, 2011, стр. 189, 190.

² Զալալյան Ա., Հայաստանի և Վրաստանի երկմույթ գմբեթավոր եկեղեցիների տիպի ծագումնաբանությունը, «ՎԷԼ», 2014, հ. 3, էջ 125-134:

Ի տարբերություն տարածված գմբեթավոր դահլիճ տիպի, որտեղ գերիշխող է կենտրոնական գմբեթատակ տարածքը, իսկ փակ անկյունային մասերը, որտեղ տեղադրված են լինում ավանդատները, ամբողջ ներքին տարածությանը տալիս են խաչաձև հորինվածք, երկմույթ գմբեթավոր կառույցները լուծված են առանձին կանգնած մույթերով, որոնց շնորհիվ եկեղեցիների արևմտյան անկյունային բաց հատվածները ձուլվում են հիմնական ներքին ծավալին: Գմբեթը փաստորեն հենվում է չորս մույթերի վրա, որոնցից երկուսը կանգնած են ազատ, իսկ մյուս երկուսը համատեղված են Ավագ խորանի արևմտյան պատի հետ: Առանձին կանգնած մույթերը և նրանցից տարածվող կամարներն այս տաճարների հորինվածք են ներմուծում բազիլիկ կառույցներին բնորոշ տարրեր: Եկեղեցիների ներքին տարածությունը փաստորեն բաժանվում է երեք նավերի: Քաղկեդոնիկ եկեղեցիներում կենտրոնական նավի լայնությունը որպես կանոն ավելի փոքր է, քան գմբեթավոր դահլիճ տիպի կառույցներում, այստեղից էլ առաջինների եզրային նավերի առավել մեծ չափերը: Այս երևույթը, արևմտյան զույգ ավանդատների բացակայությունը, ինչպես նաև ցածրադիր բեմը քաղկեդոնիկ եկեղեցիներում պետք է բացատրել ծիսակարգի անհրաժեշտությամբ:

Հայաստանում քննարկվող հորինվածքը ներկայացված է Աքորիի Բգավոր, Պղնձահանքի Ս. Աստվածածին, Խուճապի վանքի և Կիրանց վանքի եկեղեցիներով (գծ.2): Հատկանշական է, որ նույնպես քաղկեդոնիկ՝ Բերդավանքի ավերված եկեղեցին ներկայացրել է գմբեթավոր դահլիճ տիպը:

Հայկական քաղկեդոնիկ գմբեթավոր կառույցների հետ համատեղ պետք է դիտարկել նաև այժմյան Վրաստանի տարածքում պահպանված նույնատիպ եկեղեցիները՝ տեղադրված Քուռ գետի աջափնյակում: Այս և հայաստանյան հուշարձաններին միավորում է հատակագծային ու ծավալատարածական լուծումների, դեկորատիվ հնարքների կիրառման ընդհանրությունը: Բետանիայի, Քվատախեվի, Փիտարեթի, Ծուղոլուղաշենի քարաշեն, Տիմոթեսուբանիի ու Կինցվիսիի աղյուսաշեն եկեղեցիները XII դարի վերջի և XIII դարի սկզբի կառույցներ են (գծ.3): Սրանք, սերտորեն կապված լինելով նախորդ շրջանի (XI դարի սկիզբ – XII դարի 70-ական թվականներ) վրացական հուշարձանների հետ (Սամթավիսի, Սամթավրո, Գելաթի, Իղորտա, Տիգվա և այլն), մի շարք հատկանիշներով զգալիորեն զատվում են վերջիններից (գծ.4): Հետաքրքիր է, որ այս տիպին պատկանող եկեղեցիներ Քուռ գետի աջափնյա-

կից բացի Վրաստանի այլ տարածքներում համարյա թե չեն հանդիպում³:

Ընդհանրապես X-XI դարերում հայկական և վրացական եկեղեցական ճարտարապետության մեջ նկատելի է կառույցների չափերի փոքրացման, հորինվածքների պարզեցման, ներքին տարածքի հստակեցման, միասնական ծավալի ձևավորման միտում: Սկսում է փոքրանալ և հետագայում իսպառ վերանում է նախաբեմի հատվածը: Եկեղեցիների գմբեթատակ տարածքը մոտենում է Ավագ խորանին, արևելյան մույթերը միաձուլվում կամ հավում են Ավագ խորանի հարթությանը: Արդյունքում գմբեթավոր դահլիճ տիպը հաճախ ստանում է խաչաձև հորինվածք, շնորհիվ արևմտյան ավանդատների⁴:

Նույն երևույթն առկա է նաև վրացական ճարտարապետության մեջ՝ այն տարբերությամբ, որ նախկինում քառամույթ տաճարների արևմտյան մույթերը մնում են ազատ կանգնած, իսկ արևելյանները հավում են Ավագ խորանի հարթությանը: Արդյունքում երևան են գալիս հայկական գմբեթավոր դահլիճ տիպին բավական մոտ հորինվածքներ: Հետագայում, ինչպես նշվեց, երկմույթ գմբեթավոր մի խումբ եկեղեցիներ են կառուցվում սկսած XII դարի վերջին տասնամյակներից մինչև XIII դարի սկիզբը: Առավել լայն տարածում են ստանում երկմույթ կառույցներն ու շ միջնադարում: Զարգացած միջնադարում քննարկվող հորինվածքի ոչ մեծաքանակ լինելը պետք է բացատրել այն հանգամանքով, որ X դարից հետո հայկական ճարտարապետության մեջ լայն տարածում է գտնում գմբեթավոր դահլիճ տիպը:

Վրացական ճարտարապետության մեջ քառամույթ գմբեթավոր եկեղեցիներում գմբեթակիր արևելյան մույթերի, գմբեթատակ տարածքի տեղաշարժի միտումը դեպի արևելք առաջին անգամ երևան է գալիս Սամթավիսիի տաճարում (1030թ.), երևույթ, որ հայկական ճարտարապետության մեջ առկա է դեռևս 1001թ. կառուցված Անիի Մայր տաճարում: Հետագայում Սամթավրոյի եկեղեցում արևելյան մույթերն արդեն հավում են Ավագ խորանի եզրային հարթությանը: Տիգվայում (1152թ.) և Իղորտայում (1172թ.) մույթերը տեղադրված են Ավագ խորանի հարթության մեջ, սակայն ոչ թե միաձուլվում են վերջինիս, այլ հիմնականում պահպանել են ազատ կանգնած մույթերի հատույթները դեպի աղոթասրահ՝ ավանդատների դռների բացակայության և Ավագ խորան նայող

³ **Закарая П.** Грузинская центрально-купольная архитектура 12-13 вв. Тбилиси, 1987, стр. 247-248.

⁴ **Якобсон А.** Закономерности в развитии средневековой архитектуры IX-XV вв. Ленинград, 1987, стр. 154-202.

բացվածքների հաշվին: Գելաթիում (1130թ.) արդեն արևելյան մույթերը միաձուլված են Ավագ խորանի երկայնական պատերին:

Վրացական ճարտարապետության մեջ զույգ ազատ կանգնած մույթերով առաջին գմբեթավոր շինությունը XI դարի 30-ական թվականներին կառուցված Սամթավրոյի եկեղեցին է, որտեղ արևելյան մույթերը վերածվել են որմնամույթերի և հավում են Ավագ խորանի հարթությանը: Բազմաթիվ վերակառուցումների ենթարկված այս շինությունն իր հորինվածքով բավական մոտ է Վահանավանքի (911թ.) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Երկու կառույցներում էլ մույթերի հպման արդյունքում արևելյան ավանդատների առջև առաջանում են խորշեր: Երևույթն առկա է նաև Ժամանակի հայկական գմբեթավոր դահլիճ տիպի այլ եկեղեցիներում՝ Սանահին (996թ.), Բջնի (1031թ.): Սամթավրոյում պահպանված է նաև հորինվածքի սիմետրիկությունը. գմբեթը տեղադրված է կառույցի երկայնական առանցքով:

1130թ. Դավիթ Շինարարի կողմից կառուցված Գելաթիի տաճարի հատակագծային հորինվածքն աղերսվում է հայկական գմբեթավոր դահլիճ տիպին, այն տարբերությամբ, որ արևմտյան անկյունային սենյակներն աղթասարահին են կապվում կամարային բացվածքով: Այստեղ, ինչպես Սամթավրոյի եկեղեցում, գմբեթատակ տարածքը տեղադրված է լայնական առանցքով:

Իզորտայի (1172թ.) եկեղեցու ճարտարապետը փաստորեն նույնությամբ կրկնել է Սամթավիսիի հորինվածքը. նույն են հատակագծային համաչափությունները, նույն է արտաքին ճոխ դեկորը: Տարբերությունը միայն գմբեթատակ տարածքի տեղաշարժն է դեպի Ավագ խորան: Այստեղ, սակայն, արևելյան մույթերն ամբողջությամբ չեն միաձուլվում վերջինիս ծավալին, և հատակագծում համարյա պահպանվել է քառամույթ հորինվածքը: Նույն մոտեցումն է առկա նաև մինչ այդ կառուցված Տիգվայի եկեղեցում (1152թ.): Այստեղ, սակայն, ի տարբերություն Իզորտայի, ընդլայնված է արևմտյան հատվածը, որտեղ տեղադրված է եկեղեցու կառուցող Դավիթ Շինարարի դուստր Թամարի օթյակը: Եկեղեցին լուծված է զուսպ, առանց ճոխ դեկորատիվ հարդարանքի: Ուշադրության է արժանի Ավագ խորանի վրա բացվող մեկ պատուհանը, ինչը հազվադեպ է Ժամանակի վրացական ճարտարապետության մեջ: Եվ չնայած տարբերություններին՝ Տիգվայում և Իզորտայում ականատես ենք նույն մոտեցմանը՝ քառամույթ գմբեթատակ տարածքի տեղաշարժին դեպի Ավագ խորան, որտեղ արևելյան ավանդատները տարանջատված չեն դռներով և միաձուլվում են աղթասարահին: Իզորտայում պահպանված է կառույցի սիմետրիկությունը, սակայն Տիգվայում, ինչպես նշվեց, մեծացված է արևմտյան հատվածը:

Այսպիսով, VII-XII դարերում Հայաստանում և Վրաստանում կառուցվում են մի շարք երկմույթ գմբեթավոր շինություններ: Եկեղեցիները փոքրաթիվ են, իրականացված տարերային, տեղադրված իրարից բավական հեռու: Սխալ կլինի կառույցները համարել Ակոռիի՝ VII դարի եկեղեցու հորինվածքի կրկնության և զարգացման օրինակներ, քանի որ վերջիններից յուրաքանչյուրը լուծված է յուրովի: Զույգ ազատ կանգնած մույթերի առաջացումն այստեղ առավելապես պայմանավորված է X դարից սկսված հայ և վրացական ճարտարապետության մեջ առկա, վերը նշված քառամույթ հուշարձանների ձևափոխման, նաև գմբեթավոր դահլիճի հորինվածքի առաջացման ու զարգացման միտումներով: Ընդհանուրն այս կառույցներում ճարտարապետների՝ հատակագծային փոփոխությունների պարագայում երկայնական ուղղությամբ գմբեթատակ տարածքի առանցքային դիրքի պահպանման ձգտումն է: Վրացական օրինակներում՝ նաև նախորդ շրջանի ճարտարապետությանը բնորոշ ճոխ հարդարանքն է:

XII դարի վերջի և XIII դարի սկզբի հայկական քաղկեդոնիկ և վրացական երկմույթ եկեղեցիների քննարկվող խումբը, ի տարբերություն նախորդ ներկայացված օրինակների, առանձնանում է հատակագծային ու ծավալատարածական, համաչափական ու դեկորատիվ լուծումների ընդհանրությամբ:

Նշենք այն առանձնահատկությունները, որոնք միավորում են հուշարձանների այս խումբը:

1. Եկեղեցիները կառուցվել են նույն ժամանակահատվածում՝ մոտ երեք տասնամյակի ընթացքում:
2. Հուշարձանները տեղադրված են միմյանց բավական մոտ, նույն տարածաշրջանում՝ հիմնականում Զաքարյաններին պատկանող և վերջինիս հարող շրջաններում, Քուռ գետից հարավ և այլ տարածքներում նմանատիպ հորինվածքներ չեն հանդիպում:
3. Կառույցներն ունեն համարյա նույն հատակագծային չափերը, բացառությամբ Պղնձահանքի Ս.Աստվածածնի, որը զգալիորեն մեծ է մյուսներից:
4. Նույնն են եկեղեցիների հատակագծային ուղղանկյունների կողմերի հարաբերությունները:
5. Ճակատները լուծված են զուսպ, առանց ճոխ դեկորատիվ հարդարանքի:
6. Եկեղեցիները երկայնական ուղղությամբ ունեն ասիմետրիկ լուծում. գմբեթի առանցքը տեղաշարժված է դեպի արևելք:

XI-XIII դարերում ուժեղանում է վրացական կողմնորոշման քաղկեդոնականությունը Հայաստանում: Ճիշտ է, մինչ այդ էլ Հայաստանի տարածքում գոյություն են ունեցել վրացական ուղղվածության քաղկեդոնական համայնքներ: Վերջինները վրաց կաթողիկոսին համարում էին իրենց հոգևոր առաջնորդը: Մասնավորապես այդ են վկայում հիմնականում Կյուրիկյաններին պատկանող տարածքներում XI դարից պահպանված վրացերեն արձանագրությունները (Վանա վանք, Կուդթան, Շահնագար)⁵: Այս ազդեցության ուժեղացումն առնչվում է XII-XIII դարերում վրացական պետության հզորացման հետ: Երկաթնակությունն առավել տարածված է եղել Հյուսիսային Հայաստանում, որը կապված էր վրացական արքունիքից հայ իշխանական տների վասալական կախվածության հետ:

Երկմույթ գմբեթավոր եկեղեցիների խմբի երևան գալը տարածաշրջանում հայ քաղկեդոնականների գործունեության արդյունք է: Եվ քանի որ նույն հատակագծային հորինվածքը տարբեր մեկնաբանություններով ներկայացված է գրեթե բոլոր կառույցներում և կրկնում է Ակոռիի VII դարի եկեղեցու օրինակը, ապա առանձնակի կարևորվում է Աքորիի Բգավորի դերը այս տիպի ձևավորման մեջ: Բգավոր և Ակոռիի VII դարի եկեղեցիների հատակագծերի համադրումը ցույց է տալիս, որ երկայնական և լայնական մասնահատումները, կողմերի հարաբերություններն իրականացված են նույն սկզբունքով ու համամասնություններով (զձ.5):

Կիրառված է հայկական ճարտարապետության մեջ տարածված հարմոնիկ չափման համակարգը՝ հիմնված «ոսկե հատման» հարաբերությունների վրա: Երկու եկեղեցիներում էլ գմբեթատակ քառակուսին տեղաշարժված է լայնական առանցքից դեպի արևելք, որի արդյունքն է երկայնական ճակատների ասիմետրիկ լուծումը և մույթերի դեպի արևելք տեղաշարժի պարագայում՝ ներքին գավթի մակերեսի մեծացումը: Ե՛վ VII դարում, և՛ քննարկվող ժամանակահատվածում երկաթնակ հայերը խնդիր են ունեցել զատելու դեռևս դավանափոխ չեղած հավատացյալներին՝ դրա վկայությունն է եկեղեցու արևմտյան հատվածի մեծացումը և արտաքին դռների տեղադրությունը: Հատկանշական են ոչ միայն Ակոռիի եկեղեցու հորինվածքի, այլ նաև Մասեացուն գավառի Ակոռի տեղանվան կրկնությունն ու տեղափոխումը նոր միջավայր՝ «Աքորի» ձևով: Նշենք, որ «Ակոռի» և «Աքորի» տարբերակները տարբեր ժա-

⁵ Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 137-162:

մանակներում կիրառվել են երկու բնակավայրերում էլ⁶:

Ուշադրության է արժանի նաև Աքորիի եկեղեցու անվանումը՝ Բգավոր: Քանի որ չկան ո՛չ պատմական, ո՛չ մատենագրական և ո՛չ էլ վիմագրական տվյալներ ու տեղեկություններ, ուստի կարելի է ենթադրել, որ մեզ հասած անունը «Բագավորի» տառադարձված տարբերակն է (հիշենք Բագավան, Բագարան, Բագառիճ և այլն): Այստեղ արմատը «բագ» բառն է, որը ստուգաբանվում է որպես «աստված», «ժառանգություն», նաև «նորընծա»⁷: Այստեղից կարելի է ենթադրել, որ հայ քաղկեդոնականները, կրկնելով ու տեղափոխելով Ակոռիի VII դարի եկեղեցու հորինվածքն ու տեղանունը, այն կոչել են Աքորի Բագավոր, նույնն է՝ Աքորի ժառանգավոր, այսինքն՝ Նորընծա Աքորի (Ակոռի):

Հյուսիսային Հայաստանի տարածքում մեզ հասած բազմաթիվ ու բազմապիսի ճարտարապետական կառույցները՝ որպես երկաթնակ հայերի մշակության ու կրոնական գործունեության արտահայտություն, պետք է անպայմանորեն դիտարկել ժամանակի գրական ու որմնանկարչական հուշարձանների հետ համատեղ: Հայտնի է, որ հայ քաղկեդոնականներն իրենց աստվածաբանական աշխատություններում օգտվել են հայ հեղինակներից՝ իրենց համարելով ազգային գաղափարների կրողներ ու ժառանգորդներ⁸: Որմնանկարչական արվեստում ակնառու են հայկական մանրանկարչության ավանդների կիրառումը, ազգային թեմաների ընդգրկումը⁹: Նույն երևույթը պարզորոշ երևում է ճարտարապետական հուշարձաններում: Հավատարիմ հայկական ճարտարապետության մեջ ընդունված՝ նախորդ դարերում ստեղծված ձևերի ու հորինվածքների կրկնությանը՝ հայ քաղկեդոնականները փաստորեն նոր դավանանքի տաճարի տիպ են ընտրում VII դարում կառուցված Ակոռիի հունադավան եկեղեցին: Այսպիսով, Աքորիի Բգավորը պետք է համարել քննարկվող խմբի առաջին՝ ամենավաղ կառուցված օրինակը, որի հորինվածքն էլ տարբեր ձևափոխություններով ու մեկնաբանություններով կրկնվում է մյուս բոլոր կառույցներում:

Անկասկած, երկմույթ զմբեթավոր եկեղեցիների խմբի ամենանշանավոր

⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 141, 142:

⁷ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 155:

⁸ **Մուրադյան Պ.**, Հայ քաղկեդոնականների մշակության գործունեությունը XI-XII դարերում, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, Երևան, 1978:

⁹ **Лидов А.** Искусство армян халкидонитов // Историко-филологический журнал, 1990, N 1, стр. 74-77.

հուշարձանը Պղնձահանքի Ս.Աստվածածինն է: Հիմքում ունենալով զույգ ազատ կանգնած գմբեթավոր տիպը, մասնավորապես VII դարի Ակոռիի և Աքորիի Բզավոր եկեղեցիները, Պղնձահանքի ճարտարապետը համադրել է այն գմբեթավոր դահլիճ տիպի հետ՝ արդյունքում ստանալով յուրահատուկ մի հորինվածք, որն արտահայտվում է հայ քաղկեդոնականների ստեղծագործության ողջ էությունը:

XI-XIII դարերը պատմական այն ժամանակահատվածն էր, երբ միաբնակ հոգևորականության շարունակվող ավանդական անհանդուրժողականության պայմաններում հայ քաղկեդոնականները հնարավորություն ստացան ազատորեն ծավալելու իրենց գրական, մշակութային, շինարարական, նաև քաղաքական գործունեությունը: Լինելով երկաթնակության հետևորդներ՝ հայ քաղկեդոնականները ապրում և ստեղծագործում էին այնպիսի միջավայրում, որտեղ վրացական մշակութային ազդեցության հետ մեկտեղ իր զարգացումն ու ծաղկումն էր ապրում հայկական ճարտարապետությունը: Կյանքի կոչվելով հիմնականում հայ ավանդական ճարտարապետական դպրոցն անցած վարպետների կողմից՝ քաղկեդոնիկ կառույցները բնականաբար կրում են երկաթնակ պատվիրատուների առաջադրած ծիսական, գաղափարական, գեղարվեստական ներգործության պահանջների դրոշմը: Գտնվելով միաբնակ հայկական հաստատություններով հարուստ մի տարածաշրջանում, որտեղ հատկապես սուր ու անզիջում էր պայքարը երկաթնակության դեմ և չէր ընդունվում քաղկեդոնականության կողմից առաջադրվող դավանաբանական և ոչ մի տեսակետ. պաշտամունքային այս նոր կառույցները, հակադրվելով այստեղ արմատացած միաբնակությանը, խնդիր ունեին ճարտարապետության լեզվով հնարավորինս հաստատել քաղկեդոնականության իրենց պատկերացումները:

Ստեղծվում է ճարտարապետական մի յուրահատուկ ոճ, որը, հիմքում ունենալով հայկական ավանդական կառուցողական սկզբունքներն ու համաչափական համակարգը, սնվում է նաև վրացական ճարտարապետական ձևերից ու տարրերից: Հարևան ժողովուրդների ճարտարապետական դպրոցներին բնորոշ ձևերն ու հորինվածքները, սակայն, տարբեր հուշարձաններում հանդես են գալիս տարբեր հարաբերակցությամբ, ինչը հետևանք է հուշարձանների տեղադրությանը քաղկեդոնականության ունեցած ազդեցության տարբեր ոլորտներում, կախված է նաև ստեղծագործողի անհատականությունից, կտիտորի ճաշակից:

Դավանաբանական խնդիրներից ելնելով՝ հայ քաղկեդոնականները բնականաբար իրենց ստեղծագործությամբ հակադրվում էին միաբնակ հայե-

րին: Սակայն վառ պահելով ազգային ինքնագիտակցությունը՝ նրանք իրենց գործունեությամբ պահպանում էին շինարարական ավանդույթները, որ ժառանգել էին իրենց նախնիներից՝ զուգորդելով դրանք քաղկեդոնիկ դավանանքի պատկերացումներով թելադրված խնդիրներին ու պահանջներին: Չի բացառվում նաև, որ նույն ճարտարապետները մասնակցել են ժամանակի միաբնակ կառույցների իրականացմանը՝ ելնելով այն փաստից, որ քաղկեդոնականություն դավանող շատ պատվիրատուներ հովանավորել են ինչպես երկաթե, այնպես էլ միաբնակ շինությունները: Պղնձահանքի ճարտարապետը, անկասկած, տիրապետել է ժամանակի միաբնակ կառույցներում կիրառվող համաչափական համակարգին, օգտվել է հայկական հուշարձաններում տարածված դեկորատիվ հարդարանքի տարրերից՝ վարպետորեն համադրելով վերջինները վրացական ճարտարապետության մեջ կիրառվող հիմնականում բուսական զարդանախշերի հետ: Արդյունքում ստեղծվել են նաև նոր դեկորատիվ հորինվածքներ, որոնք մինչ այդ չէին հանդիպում ո՛չ հայկական, ո՛չ էլ վրացական ճարտարապետության մեջ¹⁰: Պղնձահանքի եկեղեցու ճակատները լուծված են հայկական ճարտարապետությանը բնորոշ հարթ, դեկորատիվ հարդարանքով չճանրաբեռնված մակերեսներով, որոնց վրա առանձնանում են միաբնակ կառույցներում տարածված շքամուտքերի տիպեր՝ մշակված երկրաչափական զարդանախշերով, զուգորդված վրացական ճարտարապետությանը բնորոշ բուսական դեկորատիվ տարրերով¹¹: Ս. Աստվածածին եկեղեցում մեկ այլ լուծում բնորոշ է միաբնակ՝ գմբեթավոր դահլիճ տիպի կառույցներին: Այստեղ արևելյան և արևմտյան ավանդատների ծածկերը սկսվում են անմիջապես կենտրոնական ճակտոնի եզրային ստորին նիշերից՝ կազմելով վերջինի լանջերի շարունակությունը: Արևելյան և արևմտյան ճակատներն ընկալվում են առավել ամբողջական, ի տարբերություն վրացական հուշարձանների, որոնց վրա կենտրոնական նավը հիմնականում առանձնանում ու բարձրանում է ընդհանուր ճակատային մակերեսից: Եվ վերջապես, եռանկյունաձև հատույթի արևելյան խորշերը տեղադրված են նույն համաչափությամբ, ինչ գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիներում:


Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետության մեջ

¹⁰ **Ջալալյան Ա.**, Երկաթե կառույցների հիմնական գաղափարների արտացոլումը XII-XIII դարերի քաղկեդոնիկ եկեղեցիների հարդարանքում, Հայ արվեստի հարցեր, հ.1, Երևան, 2006, էջ 266-276:

¹¹ **Շмерлинг Р.** Постройка моларет-ухуцеса царя Георгия Блистательного в сел. Даба Боржомского района // ARS GEORGICA, Тбилиси, 1948, N2, стр. 118, 119.

արտացոլված են հայ քաղկեդոնականների, մասնավորապես շինության կառուցող Իվանե Զաքարյան Երկայնաբազուկի՝ սեփական պատմության ու մշակույթի իմացությունը, նվիրվածությունն ավանդույթներին, ինչի վառ ապացույցն է նաև Պղնձահանքի եկեղեցու հովհարաձև վեղարը, երևույթ՝ բնորոշ հայկական ճարտարապետությանը¹²: Հատկանշական է, որ Իվանեի եղբոր՝ Զաքարե Ամիրսպասալարի կողմից կառուցված Հառիճավանքի միաբնակ Ս. Աստվածածինը ևս պատկանում է հովհարաձև վեղարով, ինչը բնորոշ է ժամանակի հայկական իշխանական տների գլխավոր եկեղեցիներին (Ամբերդ, Հովհաննավանք, Գանձասար)¹³:




Լոռի-Գուգարքում, այսպիսով, VII-VIII դարերում հայ քաղկեդոնականների շինարարական գործունեության արդյունքում ստեղծվում է ճարտարապետական յուրահատուկ ոճ, որը պետք է դիտարկել որպես միջնադարյան մշակույթի ինքնատիպ երևույթ: Երկաբնակ հայերը, իրենց ստեղծագործություններում համադրելով հարևան ժողովուրդների ժառանգությունն ու ավանդույթները, նպաստել են մշակույթների մերձեցմանն ու փոխներթափանցմանը:




ՊՅԸ.1 Ավուրիի VII դարի եկեղեցու հատակագիծ

¹² Ղազարյան Ա., Զարնջայի եկեղեցին և հովհարաձև վեղարները, Անի 3-4, Երևան, 1992, էջ 46-77, 90, եկեղեցու վերակազմությունը՝ Հ. Սանամյանի:

¹³ Զալալյան Ա., Հառիճի հուշարձանախումբը, «Լրաբեր», 1986, հ. 2, էջ 85-87:





ՊՃ. 5 Ագուրի VII դարի և Ագուրի Բզավոր եկեղեցիների համաչափական վերլուծություն

АРХИТЕКТУРА АРМЯНСКИХ ХАЛКИДОНИТСКИХ КУПОЛЬНЫХ ЦЕРКВЕЙ XII-XIII ВЕКОВ

АЛЕКСАНДР ДЖАЛАЛЯН

В статье представлены архитектурные особенности и генеология армянских купольных халкидонитских церквей Лори Аугарка, а также группы грузинских памятников XII-XIII вв. Прототипом этих купольных построек с двумя свободно стоящими колоннами является армянская православная церковь VII века Акори. Композиция последней была повторена в церкви XII века Акори Агавор. Самой значительной постройкой этой группы памятников является церковь Св. Богородицы Пгндзаанка, построенная Иване Долгоруким Закарян в XII веке, где отражена вся сущность творчества армян-халкидонитов. В XII-XIII веках армяне диофизиты создали в Северной Армении особенный архитектурный стиль, являющийся своеобразным явлением средневекового искусства.

Ключевые слова – купольные церкви с двумя свободно стоящими колоннами, Акори, Акори Агавор, церковь Св. Богородицы Пгндзаанка, армяне халкидониты, Иване Долгорукий Закарян.

ARMENIAN CHALCEDONIAN DOMED CHURCHES ARCHITECTURE IN THE XII-XIII CENTURIES

ALEKSANDER JALALYAN

This article presents the architectural features and the origin of the Armenian Chalcedonian domed churches of the XII – XIII centuries in Lori Gugark as well as a number of Georgian churches. The prototype of these domed churches with double-pillar structures is the Greek church of Akory built in the VII century, whose design was for the first time repeated in the XII century Bgavor church in Akory. The most prominent construction of this type of designs is The Holy Virgin Church in Pghndzahank built by Ivane Zakarian. The Holy Virgin Church discloses the essence of the creativity of the Armenian Chalcedonian mind. In the XII -XIII centuries, the diophysit Armenians in the northern regions of Armenia have created a singular architectural style which is as such considered unique in medieval art.

Key words – domed churches with double pillars, Akori, Akori Bgavor, The Holy Virgin Church in Pghndzahank, Armenian Chalcedonian, Ivane Zakarian.

О НЕКОТОРЫХ ТЕНДЕНЦИЯХ В ТВОРЧЕСТВЕ СОВРЕМЕННЫХ АРМЯНСКИХ ХУДОЖНИКОВ

МАРИНА СТЕПАНЯН¹

После крушения СССР Армения, как и все остальные республики, перешла на рыночную экономику. Наиболее чувствительными к этой перемене оказались люди искусства, призванные отражать дух и моральные нормы в сознании человека.

Радикальные жизненные перемены заставили художников пересмотреть содержательную программу своей творческой деятельности, которая становится более сложной, многозначной и разнонаправленной. Но при всем стремлении нащупать новую образную систему армянские художники тем не менее остаются связанными с традициями нашего национального искусства, которое всегда откликалось активным образом на перемены в жизни и мировой культуре, оставаясь при этом открытыми для любого новаторства, которое со временем обретало национальное содержание.

Краткое обращение к творчеству некоторых современных художников обнаруживает панораму ярких индивидуальностей, каждая из которых решает проблемы, исходя из своих творческих особенностей.

Ключевые слова – современные армянские художники, кризис сюжетной картины, пересмотр содержательной программы, Р. Абовян, А. Самуелян, Р. Элибекян, С. Галенц, Т. Мурадян, В. Румелян, С. Амалбашян, В. Галстян, А. Акопян и др.

После краха СССР Армения, как и все остальные республики Союза, оказалась в неизвестном, неизведанном, откровенно враждебном мире, где царил непонятная нам рыночная экономика. Хозяйство республики было полностью разрушено и разграблено. Советские люди в одночасье, потеряв почву под ногами, почувствовали себя незащищенными, покинутыми, обманутыми. Все, что обеспечивало уверенность в завтрашнем дне, исчезло. Об этом будут еще долго писать, разбираться в причинах этой поистине глобальной катастрофы. Но есть одна область наиболее чувствительная к потере того, что позволяло занятым в этой сфере людям жить в советское время обособленной от материальных забот жизнью, руководствуясь высокими и очень серьезными проблемами. Это были люди науки и искусства. Остав-

¹ Институт искусств НАН РА, старший научный сотрудник “Национальное бюро экспертиз” (ГНКО) НАН РА, эксперт-искусствовед.

ленные на произвол судьбы без поддержки государства, они почувствовали на себе дыхание безысходности. Художники переживают растерянность, сильное разочарование в новых формируемых условиях, а прежние идеологические ориентиры были отменены. Наступает кризис сюжетной картины. Художники теряют интерес к прошлой сюжетно-смысловой и идейно-тематической стороне творчества, не могут разобраться в новых законах мироздания. Вот отчего мир их произведений становится субъективным, нервным, чувствительным. Художники руководствуются голосом чувств, когда не срабатывают в качестве мерил ценности такого порядка, как верность долгу, защита государственных интересов и т. д. Моральные нормы, укоренившиеся в сознании советского человека, рухнули. Нужно выстраивать новые, более сложные отношения с обществом, с миром, где уже царит хаос, возникают кризисы.

В соответствии с этими радикальными жизненными переменами в творчестве художников происходит невольный пересмотр содержательной программы, которая становится сложной, многозначной, разнонаправленной, словом, плюралистичной. Художники переключаются на мир воображаемый, ассоциативный, виртуальный, со сложной символической образной системой. Но как бы они ни пытались откеститься от внешнего мира, который им кажется лишь помехой в творческом процессе, по сути дела все новые, даже самые фантастические образные структуры, возникающие в их работах, опосредовано, а порой и напрямую связаны с древними традициями нашего искусства. Даже в творчестве такого сложного, утонченноинтеллектуального мастера, как Рубен Абовян всегда ощущается пристрастие к драме жизни, к ее скрытым радостям и неразрешимым проблемам. Каждое произведение Р. Абовяна – это попытка разобраться в загадочном несоответствии поэзии и грубой реальности. Художник для этого изобрел язык плавного скольжения и лавирования между этими понятиями. Осуществляя с помощью этого языка сложные творческие замыслы, Р. Абовян вкладывает в них свой жизненный опыт с его перегруженным интеллектуальным и эмоциональным багажом, который осваивается автором с чувством уважительной и благородной иронии. И поэтому на его полотнах возникает нечто небывалое. Его зрелое творчество строится на изощренной переключке с искусством предыдущих веков, которое с точки зрения сегодняшней жизни оборачивается совсем иным смыслом. Остроумие, непроясненная горечь, мягкий лиризм, насмешливая мажорность

удерживают внимание зрителя, вовлекая его в эту игру, заставляя его улавливать волны смысла, исходящие от его полотен.

Уже в 70–90 годы прошлого века, когда со всей наглядностью в композициях перестает преобладать сюжетная обусловленность и наблюдается приверженность к определенным мотивам, в армянском искусстве начинает активно эксплуатироваться театральная тема, с помощью которой художники пытались заявить о своей независимости, духовной свободе. Многозначность этой темы позволяла ей внедряться и во все виды изобразительного искусства (живопись, скульптура, графика, декоративное искусство). К числу таких художников относится Роберт Элибекян, преданный теме театра до сих пор. Казалось, он отвергает старые творческие принципы армянской школы живописи и стремится к новым, неизведанным впечатлениям, когда художник чувствует пьянящую радость от своих открытий и увлекает за собой зрителя. А на деле его мир счастья вырос из среды, которую он покинул в юности, где витал и еще долго будет витать дух неповторимого А. А. Бажбеук-Меликяна, указывающего многим художникам путь к этой поэтической, полной любви, несмотря на все внешние трудности, жизни, которую нужно искать внутри себя. Работы Р. Элибекяна помогали и помогают преодолевать ежеминутный негатив нашей действительности, но художник делает ставку на чистые человеческие чувства, которые помогают пережить отчаяние и напоминают о том, что даже в самых невыносимых условиях всегда есть место земным мечтам о счастье, даже если оно существует лишь в его собственном театре нежных человеческих взаимоотношений, навеянных фрагонаровским временем, где пластика героев и героинь, нежная и плавная, подчинена сценическим канонам.

Изучение разных систем образности свидетельствует о том, что обращение к той или иной теме, мотиву, стилю или направлению порой выглядит как поиск своей ниши, своего убежища, откуда можно наблюдать перемены и осмысливать их в иной идейно-содержательной концепции, где излишне говорить о морально-этическом идеале, оставшимся в нашем недавнем прошлом.

Художники нередко пытаются выразить неподдающиеся логическому осмыслению новые явления реальной жизни, не отказываясь отражать их с помощью испытанных, традиционных изобразительных приемов. Испытанные тысячелетиями, они далеко не исчерпали свои потенциальные возможности

для выражения самых глубоких субъективных откровений. Художники, подчас владеющие мастерством рисунка, умеют создавать в своих композициях некую преувеличенную реальность, где все элементы обладают формальным совершенством в полном соответствии с классическими правилами построения композиций, но где отдельные объекты и смыслы их взаимоотношений способны выходить из-под контроля земной жизненной логики. Такое усложненное образное мышление заставляет задумываться о сюрпризах мироздания. Так в виртуозно выполненных рисунках Арутюна Самуэляна подчас царит некий поэтический реализм, где объекты обладают четко выраженной предметной формой, но в его композициях они приобретают новую окраску, новый смысл, как например, достижения сегодняшней бытовой цивилизации в одной из его работ превращаются в агрессивный мусор, заполняющий все вокруг, не оставляя места человеку, распространяясь во всем обозримом пространстве до самого горизонта.

Запечатлеть свой внутренний чувственный мир – такая направленность творческих поисков становится источником многообразных идей, находок. В погоне за сущностью самой вещи, художник, словно отчаявшись, предлагает нам лишь порожденный ею некий магический эффект. Так Саро Галенц строит свои композиции из несуществующих в природе предметов, но занимаясь формотворчеством, он придает им геометрический или органический характер, где эти новые формы, похожие на реальные предметы, живут своей жизнью, обретая способность чувствовать, дышать, взаимодействовать наподобие живых существ. И в итоге они подчиняются воле художника и идее произведения.

Говоря о кризисе сюжетной картины, мы замечаем, что художники переосмысливают это понятие в понятие мотива, которое шире по смыслу, где его можно оценивать по нравственным законам, наполняя композиции философскими размышлениями. Тарон Мурадян создает образы выступающие в самых нелепых одеждах, взятых из разных времен, стилей и гардеробов, верхом на ослах, козлах, рыбах и прочих передвижных средствах. Композиции обладают странной гармонией, которая сперва вызывает улыбку, а затем заставляет задуматься: а нет ли в них скрытого смысла, когда в нарушение всех законов красоты и эстетической логики нас постигает абсурд, пошлость, которые если к ним привыкнуть, убивают вкус, дезориентируют общество. За кажущейся дурашливостью, наивностью художник просто показывает как

можно легко отбросить духовный опыт человечества и сквозь смешную алогичность скатиться к низменно комичному.

Художники, столь долго мечтавшие о свободе и словно нашедшие ее сегодня, тем не менее приходят к мысли, что искусство обязательно опирается на духовный опыт человечества в широком смысле этого слова без оглядки на какие-либо доктрины. В своих композициях, следуя развернутым программам, каждый выбирает свою направленность образной концепции. Поиски художественной истины в современном сложном и противоречивом мире стимулируют интеллектуальную сторону творчества. Для пластического воплощения творческого замысла такие художники опять-таки обращаются к реальному бытию, обогащая свой метод новыми образными гранями, акцентируя свои эмоциональные и интуитивные порывы. Таких художников немало (А. Амалбашян, В. Овсепян, Г. Казанчян и др.), усложненно образное мышление которых ориентировано не на массового зрителя, хотя главная мысль художников так или иначе высказывается через своеобразный ситуационный характер композиции. В итоге подготовленный зритель способен уловить желание и цель художника передать некий импульс или направление, связанные с образной структурой произведения.

В 60-е годы прошлого века в нашу живопись прочно вошел тип такой экспрессивной образности, как абстракционизм, где преобладающим приемом становится декоративный тип отражения эмоциональной реакции художника на происходящее вокруг него. Не исключено, что порой такие произведения могут выглядеть бессодержательной забавой или сводиться лишь к любованию чистой формой. Свет, цвет, ритм, плоскостность, объемность и т. д. обретают вдруг самостоятельный смысл. Однако заложенные в этих изобразительных средствах качества, заявляя о своей автономности, способны выражать самые разнообразные эмоциональные оттенки, не прибегая к фигуративности, которую абстракционисты отбрасывают как ненужное, вспомогательное средство. Такие композиции способны передавать драматическое состояние души художника, находящегося в состоянии бурного взаимоотношения с жизнью, его окружающей. Подобные художники имеют свой индивидуальный почерк, выражаемый в способе нанесения мазков. При всей своей субъективности их художественное мышление развивается в пределах реальной пространственно-временной модели мира, где очевидно национальное, этническое сознание художника. Не наше ли бурное, полное резких

поворотов время отражается в кипящих, экспрессивных, насыщенных яркостью и страстью полотнах В. Румеляна, где порывистость и ускоренность мазка становится его главным выразительным средством? Живопись преданного этому жанру художника Альберта Акоюна обладает совсем иным характером, в котором присутствует подход умозрительного, интеллектуального и эмоционального порядка, где каждый из этих подходов развивается в пределах общей строго организованной вертикальной системы. Тончайшая линейная вязь органически впитывается живописной структурой его продуманных мазков с их конструктивной прозрачностью и пространственностью. Стилиевая цельность его работ таит в себе витальное ощущение мира и его таинственную поэтичность.

Когда к абстракции обращается Ваагн Галстян, в его полотнах ощущается программная концепция мягкого перехода от образно-фигуративной системы к декоративно-поэтической интонации, где пятна шевелятся, растут, развиваются, демонстрируя тягу к превращению во что-то живое и одушевленное.

Аналогичная органическая связь наблюдается в творчестве Гагика Казанчяна, когда он от фигуративности переходил к абстракции. У Казанчяна нет наэлектризованной страстями ожесточенности Румеляна, нет чисто армянской колоритной пасторальности В. Галстяна. В композициях Г. Казанчяна формы, будто не лишённые реальной плоти или какого-либо объема, подчинены невидимой силе. Она определяет их положение в пространстве, заполненном каким-то белым светом, приглушающим или способствующим членению форм и интенсивной звучности цветов...

Художники-абстракционисты при всей своей кажущейся отвлеченности продолжают жить в пространстве реального мира, ощущая переменчивую стихию общего движения и соподчиненность частей его ладу.

А вот в композициях Рубена Григоряна чувство реальности, весомости, объемности изображаемых предметов преобладает настолько, что, кажется, каждый из них в отдельности стремится завладеть вниманием зрителя к своей значимости. Художник, фиксируя красоту каждой части изображаемого объекта, обращается не столько к нашей пассивной созерцательности, сколько к интеллекту зрителя, заставляя его думать и мыслить, чтобы приблизиться к ускользающей от нас сущностной основе жизни. Однако исполненные с вир-

туозным мастерством композиции, их сокровенный смысл и текст порой остаются нерасшифрованными.

В контексте сегодняшней жизни традиционные жанры переживают потрясение исторической драмы, донося до зрителя то, что порождено личным опытом художников. Язык, рассказывающий о событиях текущего момента становится выразительным, сложным, который воспринимается как “реализм после авангарда”. Таковы полотна многих авторов, которые не отказываются от событийного пересказа, вдумчиво и углубленно формируют новые векторы эволюции реалистической стилистики (Т. Барханаджян, Т. Магулян, С. Амалбашян и др.)...

Изобразительное искусство и лучшие ее представители в эпоху глубокого исторического слома ищут способ художественно доносить живое ощущение времени нашей сегодняшней национальной истории до современного зрителя и будущих поколений. Однако, хаос, царящий в искусстве, будет длиться столько времени пока общество не осознает своей цели национального масштаба.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԻՆԱ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԱՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը, ինչպես և մնացած հանրապետությունները անցան շուկայական տնտեսության: Այս փոփոխությունների հանդեպ ամենազգայուն ոլորտների թվում հայտնվեց արվեստը, որը կոչված է արտահայտել հոգևոր և բարոյական սկզբունքները մարդկային գիտակցության մեջ: Կյանքի արմատական փոփոխությունները ստիպեցին նկարիչներին վերանայել ստեղծագործական ծրագրերի բովանդակությունը, որը դառնում է ավելի բարդ, բազմանշանակալից և բազմաոճ: Սակայն այս նոր կերպարային համակարգի որոնումներին, այնուամենայնիվ, ակտիվորեն մասնակցում են և հայկական արվեստի ավանդույթները, որոնք իրենց հերթին միշտ բաց էին նորարարությունների համար, որոնք ժամանակի ընթացքում ստանում էին ազգային բովանդակություն:

Հոգվածում համառոտ անդրադառնում ենք վառ անհատականություն ունեցող մի քանի նկարիչների ստեղծագործություններին, որոնցից յուրաքանչ-

յուրը լուծում է առաջացած հարցերը՝ ելնելով իր ստեղծագործական առանձնահատկություններից:

Բանալի բաներ – ժամանակակից հայ նկարիչներ, սյուժետային նկարի ճգնաժամ, բովանդակային ծրագրի վերանայում, Ռ.Աբովյան, Հ.Սամուելյան, Ռ.Էլիբեկյան, Ս.Գալենց, Տ.Մուրադյան, Վ.Ռումելյան, Ս.Համալբաշյան, Վ.Գալստյան, Հ.Հակոբյան և այլք:

ARTISTIC TRENDS OF CONTEMPORARY ARMENIAN PAINTERS

MARINA STEPANYAN

After the collapse of the USSR, Armenia, as well as the rest of the former republics of the USSR, shifted toward a market oriented economy. One of the most sensitive spheres to these changes was art, a creative activity expressing the spiritual and moral principles of human consciousness. These radical changes that were taking place forced the artists to reconsider the substance of their creative programs, which was getting more complex, multifaceted and multi-styled. The traditions of Armenian art are, however, actively associated, within the search for a new image scheme. Nevertheless, these traditions, in their turn, are always open to innovations and are with time acquiring national substance.

Stepanyan, in this article, briefly presents the works of several ingenious painters. Each painter comes up with solutions to problems his creative features have posed.

Key words – contemporary Armenian artists, crisis of plot illustrations, reconsider the programs' substance, R. Abovyan, H.Samuelyan, R. Eleibekyan, S. Galents, T. Muradyan, V.Rumelian, S.Hamalbashyan, V. Galstyan, H. Hakobyan and others.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐՎՀԱՄՅԱՆ Արուայակ – Ավետիս Ահարոնյանի «Իմ բանդը» հուշագրությունը «Դրոշակի» գրական բաժնում	3
ԳԱԼՏՅԱՆ Անի – Գոթական վեպի նմանակումն ու ծաղրանմանակումը Էդգար Պոյի նովելներում	12
ԳԻԼԱՎՅԱՆ Մելինե – Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության հարցերը Սերո Խանզադյանի ստեղծագործություններում	21
ԽՈՋՈՅԱՆ Յուլյա, ԱԹԱՆԵՍՅԱՆ Աշխեն – Ա. Գրինը՝ հոգեբանական արձակի վարպետ	29
ՀԱԿՈՔՅԱՆ Անահիտ – Երկատվածության կոնցեպտը Ռ.Լ. Սթիվենսոնի Խ. Լ. Բորխեսի պատմվածքներում	40
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գոհար – Սիփանա քաջերը ընդդեմ նահանջի	46

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հասմիկ, ԿՈՒՔԱՆՅԱՆ Աննա – Համընդհանուրի և ազգայինի դրսևորումները «աստված» բաղադրիչով դարձվածքներում (համեմատական քննություն իսպաներենում և հայերենում)	55
ԵՊԻՍԿՈՂՈՍՅԱՆ Դավիթ – Հնչերանգը՝ որպես հորդորական աստվածների չնշոյթավորված չափորոշիչ	64
ԹԱՂՎԱԵԻ ԷԼԱԿԵ – Գունանուններով կազմված տեղանուններ Իսֆահանի նահանգում	69
ԹՈՎՄԱՍՅԱՆ Հրանուշ – Ցուցայնությունը՝ որպես խոսույթի և տեքստի բաղադրիչների համավերաբերության միջոց եվ կանխենթադրույթի խթան ..	77
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Թամարա – Ստուգաբանություն արդիական մոտեցմամբ – 2	86
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լուսինե – Ճանաչողական փոխանունությունը տարբեր տեսությունների դիտանկյունից	93

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐՎՀԱՄՅԱՆ Հրանտ – Մտահուզիչ հարցեր.....	101
ԱԶԻՉՅԱՆ Խաչիկ – Եգիպտոսի կառավարման համակարգի առանձնահատկությունները Նապոլեոն Բոնապարտի արշավանքի ժամանակաշրջանում	115
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Վահան – Հայոց կաթողիկոսության դիվանագիտական ձեռնարկումները XII դարի 80-ական թվականների կեսերին	125
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Վահան – Անտիոքի առումը Լևոն արքայի կողմից (1216 թ.). արաբական աղբյուրների վկայությունները	133

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆՅԱՆ Մագդա - ՀՀ և ԱՀ խորհրդարանական դիվանագիտության փորձը. ձեռքբերումներ և զարգացման հեռանկարներ 144

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄՈԼԼԱՅԻ Նասրին - Ամուսնական հարաբերությունների և ամուսնության տևողության փոփոխությունները ժամանակակից իրանական ընտանիքում և խնդրի հետազոտման աստիճանը 155

ՆԵՐՄԻՍՅԱՆ Սոնա - Յանցային հարաբերությունների առանձնահատկությունները Բեյրութի հայերի շրջանում 167

ՏԱՆԱԶՅԱՆ Լուսինե - Սոցիալական փոփոխությունները Լոս Անջելեսի հայերի շրջանում (ըստ հետազոտության տվյալների) 174

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՂԱԶԱՆՉՅԱՆ Լիլիթ - Անձի իրավական դրության ընդհանուր սոցիալական երաշխիքների էությունը 181

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հարություն - Արդարադատության դեմ բռնությամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական հատկանիշները և որակման առանձնահատկությունները 190

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հայկ - Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների բովանդակային առանձնահատկությունները 202

ՍԱՐԳՅԱՆ Վարդգես - Անձի անվտանգությունը որպես ընդհանուր իրավական հասկացություն 209

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՅՅԱՆ Արարատ - Ծովանկարի բացառիկ վարպետը (Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին) 220

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարտին - Երևանի փողոցների ու դրանց հարակից կառույցների նախագծման ու արտաքին ձևավորման խնդիրներն ու բարելավման հնարավորություններն ըստ ճարտարապետական կոմպոզիցիայի հիմնական մեթոդների 242

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Շուշանիկ - Վարդան Աճեմյան. հինգ ոռմանս Վ. Տերյանի և Գ. Մահարու խոսքերով 250

ՄԱՎԻՍԱՔԱՆՅԱՆ Մարինա - Ե.Տնտեսյանի երաժշտական գեղագիտությունը ազգային ավանդույթների ժառանգորդության տեսանկյունից 256

ԶԱԼԼԱՅԱՆ Ալեքսանդր - XII-XIII դարերի հայկական քաղկեդոնիկ գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետությունը 264

ՍՏԵՓԱՆՅԱՆ Մարինա - Ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործության որոշ միտումների մասին 277

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

АБРААМЯН Арусяк – Мемуары Аветиса Агароняна "Моя тюрьма" в литературном разделе газеты "Дрошак"	3
ГАЛСТЯН АНИ – Подражание готическому роману и пародия на него в новеллах Эдгара По	12
ГИЛАВЯН Мелине – Вопросы патриотического воспитания молодого поколения в произведениях Серо Ханзадяна	21
ХОДЖОЯН Юлия, АТАНЕСЯН Ашхен – А.Грин – мастер психологической прозы	29
АКОПЯН Анаит – Концепция раздвоения личности в рассказах Р.Л. Стивенсона и Х.Л. Борхеса	40
АРУТЮНЯН Гоар – Храбрецы Сипана против отступления	46

ЯЗЫКОЗНАНИЕ

БАГДАСАРЯН Асмик, КУБАНИЯН Анна – Проявление универсального и национального в фразеологических единицах с компонентом "бог" (сравнительный анализ в армянском и испанском языках)	55
ЕПИСКОПОСЯН Давид – Интонация как немаркированный стандарт побудительных изречений	64
ТАХВАЕИ Элахе – Топонимы, образованные от названий цвета в провинции Исфахан	69
ТОВМАСЯН Грануш – Дейкис в анафорической функции и как активатор пресуппозиций	77
АРУТЮНЯН Тамара – Современный подход к этимологии армянского языка -2	86
АРУТЮНЯН Лусине – Когнитивная метонимия в свете разных теорий.....	93

ИСТОРИОГРАФИЯ

АБРААМЯН Грант – Вопросы, вызывающие тревогу	101
АЗИЗЯН Хачик – Особенности системы управления Египта во времена экспедиции Наполеона Бонапарта	115
ТЕР-ГЕВОНДЯН Ваан – Дипломатические шаги армянского католикосата в середине 80-ых годов XII столетия	125
ТЕР-ГЕВОНДЯН Ваан – Взятие Антиохии царем Левоном (1216 г.): свидетельства арабских источников	133

ПОЛИТОЛОГИЯ

АРСЕНЯН Магда – Опыт парламентской дипломатии Армении и республики Арцах: достижения и перспективы развития	144
--	-----

СОЦИОЛОГИЯ

МОЛЛАИ Насрин – Изменения в брачных отношениях и в продолжительности брака в современной иранской семье и уровень исследования проблемы	155
НЕРСИСЯН Сона – Особенности сетевых отношений среди бейрутских армян	167
ТАНАДЖЯН Лусине – Социальные изменения среди армян Лос-Анджелеса (по данным исследования)	174

ЮРИСПРУДЕНЦИЯ

КАЗАНЧЯН Лилит – Сущность общих социальных гарантий правового положения личности	181
МАНУКЯН Арутюн – Уголовно-правовые черты и особенности квалификации преступлений против правосудия, совершенных насильем	190
ПЕТРОСЯН Гайк – Особенности преступлений против государственной службы	202
САРГСЯН Вардгес – Безопасность личности как общее правовое понятие	209

ИСКУССТВОЗНАНИЕ И АРХИТЕКТУРА

АГАСЯН Арарат – Непревзойденный мастер морского пейзажа (К 200-летию со дня рождения И.К. Айвазовского)	220
АРУТЮНЯН Мартин – Задачи и возможности усовершенствования проектировки и внешнего дизайна улиц Еревана и близлежащих сооружений согласно основным методам архитектурной композиции	242
ОВАННИСЯН Шушаник – Вардан Аджемян: пять романсов на слова В. Терьяна и Г. Маари	250
МАВИСАКАЛЯН Марине – Музыкальная эстетика Е.Тнтесяна в аспекте преемственности национальных традиций	256
ДЖАЛАЛЯН АЛЕКСАНДР – Архитектура армянских халкидонитских купольных церквей XII-XIII веков	264
СТЕПАНЯН Марина – О некоторых тенденциях в творчестве современных армянских художников	277

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Ռուսերեն տեքստերի խմբագիր՝ արվ. թեկնածու Մարգարիտա Քամայան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կոլյումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, (374 10) 54 62 60, 54 49 82, 62.38.63 (տպարան)
Էլ. Փոստ՝ info@asoghik.am